1858 . — *Տ. Մատթէոս Արքեպիսկոպոս , նախկին Պատրիարք Կ. Պոլսոյ , էջմիածնայ կաթողիկոս կ'ընտրուի :*

Մայիս 19

1890 . — *Մկրտիչ աղա Սանասարեանց , հիմնադիր Սանասարեան վարժարանին , կը վախճանի Բարիզի մէջ :*

Մայիս 20

1799 . — *Մնունդ Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանի , որ գրած է էջմիածնայ եւ շրջակայ գաւառներուն տեղագրութիւնը :*

1851. — Վաղամեռ բանաստեղծ Պետրոս Դուրեան կը ծնի Սկիւտարի մէջ :

Մայիս 22

1891. — Գրիգոր Բաղրուպանեան, հունգարահայ երեւելի բժիշկ, կը վախճանի : Ծնած էր 1830ին, Եղիսաբեթուպոլիսի մէջ :

Մայիս 24

1834. — Յարութիւն վարդապետ Ալամզարեան, ուստահայ բանաստեղծ, ուսուցիչ, տեսուչ Ներսէսեան վարժարանի, կը վախճանի Նոր Նախիջեւան : Ծնած էր 1796ին :

1860. — Պատրիարքարանի ժողովը կ'ընդունի Պատրիարքարանի Օրէնքը՝ որ յետոյ բարեփոխուելով, 1863ին կը վաւերանայ Կոյս . կառավարութենէն :

1870. — Տեղի կ'ունենայ Բերայի մեծ հրդեհը՝ ուր կ'այրի Բերայի Հայոց Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ կալուածներուն մեծ մասը :

Մայիս 25

1802. — Դանիէլ Կաթողիկոս կ'օծուի Իււջ Քիլիսէի մէջ, Աղթամարայ Կարապետ Կաթողիկոսէն . 15 եպիսկոպոսներ, 28 վարդապետներ եւ 28 քահանաներ կը մասնակցին օծման արարողութեան :

Մայիս 26

1886. — Առաքել Ալթուն Տիւրքի որ Խասգիւղի հայ թատրոնը հիմնած է 1850ին՝ քանի մը ընկերներով, ու յետոյ Բերայի Արեւելեան թատրոնը, կը վախճանի Կ. Պոլսոյ մէջ : Ծնած էր 1840ին՝ Եգիպտոս :

Մայիս 27

1891. — Յակոբ Պարոնեան, տաղանդաւոր երգիծարանգրագէտ, կը վախճանի Կ. Պոլիս՝ Օրթագիւղ : Ծնած էր 1842ին :

Մայիս 28

1878. — Իզմիրի Արշալոյսին խմբագիր Ղուկաս Պալղա-
զարեան կը վախճանի . 38 տարի իր թերթը յարատեւ կերպով
հրատարակած է :

Մայիս 29

1859. — Մագսուտ ամիրա Սարիմեան , սեղանաւոր , կը
վախճանի Կ . Պոլիս , Գաաղղիւղ :



Յունիս 1

1816. — Պէլժ հայագէտ Ֆէլիքս Նեւ կը ծնի Պէլճիգա-
յի մէջ :

1855. — Արծիւ ամսաթերթը կը սկսի հրատարակուիլ
Պոլիս եւ յետոյ կը փոխադրուի Վարազ :

1857. — Տէրոյէնց կը սկսի հրատարակել Երեւակ հանդէ-
սը՝ Կ . Պոլսոյ մէջ :

Յունիս 2

1891. — Մահ նշանաւոր դերասան եւ բանաստեղծ Պեա-
րոս Աղամեանի , որ 1849ին ծնած էր Էնկիւրիի մէջ :

Յունիս 3

1837. — Պերճ Պաօշեանց , ռուսահայ ծանօթ վիպագիր ,
կը ծնի Երեւանայ մօտ , Աշտարակ գիւղը :

1845. — Քիթապճի Մարգար , Պոլսոյ հայ գրավաճառնե-
րուն նահապետը , կը վախճանի . Մնած էր 1799ին :

1854. — Երկրագործութեան դասախօսութիւն կը հաս-
տատուի Հիւանդանոցի ճեմարանին մէջ , ուսուցչութեամբ Կրի-
նեօնի հողագործական վարժարանէն վկայեալ Յակոբ Ամաս-
եանի :

1877. — Սարգիս Վ. Թէոդորեան, որ գրած է Մուրատեան վարժարանի պատմութիւնը, կը վախճանի Բարիզ եւ կը թաղուի Բէռ Լաշէզի դերեզմանատունը, Մնած էր 1783ին, Բաղէշի մէջ :

Յունիս 4

1889. — Երեւանի թեմական հոգեւոր դպրոցին յիսնամեայ յորեկեանը տեղի կ'ունենայ :

Յունիս 6

1820. — Արմաշու վանքին վերաշինութիւնը կ'աւարտի Գարագոջեան Պօղոս արքեպիսկոպոսի ջանքով :

Յունիս 7

1886. — Նիկողոս Թիւլպէնտեան, աշխատակից Օրագիրի եւ յետոյ խմբագիր Լրագիրի, կը մեռնի Կ. Պոլսոյ մէջ, 45 տարեկան :

Յունիս 9

1847. — Նեսէս Ե. Աշտարակեցի Կաթողիկոսը կ'օծուի :

1855. — Կ. Պոլսոյ մէջ կը մեռնի Ֆիզիքա Պօղոս Պատուելի, բնագէտ եւ բնազանցագէտ. իր ժամանակին փիլիսոփայի համբաւ ունեցած է : Մնած էր 1788ին, Գըրգաղաճի մէջ :

Յունիս 10

1858. — Մեսրոպ Թաղեաղեան, հեղինակ եւ խմբագիր, կը մեռնի Պարսկաստանի Շիրազ քաղաքը, Մնած էր 1803ին :

Յունիս 11

1733. — Մահ Յովհաննէս եպիսկոպոս Երուսաղէմացիի (Հաննա վարդապետ), ժամանակագիր եւ նկարիչ, Գրած է իր ժամանակին անցքերը եւ նկարած է կրօնական պատկերներ :

1846. — Մուրատեան վարժարանը Բատուայէն կը փոխադրուի Բարիզ :

1856. — Մահատեօի Ճանիկ ամիրա Փափազեան, սեղանաւորներու արհեստապետ, 80 տարեկան կը վախճանի եւ կը թաղուի Կ. Պոլիս Օրթազիւղի մէջ :

Յունիս 13

1705. — Մահ նահապետ Եղեոացի Կաթողիկոսին՝ որ 1693ին ընարուած էր :

Յունիս 14

1791. — Ռափայէլեան վարժարանի հիմնադիրը, Եզուարդ Ռափայէլ Ղարամեան, կը վախճանի առազաստանաւի մը մէջ, Հնդկաստանէն Լոնտոն եկած ատեն : Ծնած էր Նոր Զուղա : 1734 ին :

Յունիս 17

1847. — Եւրոպա հանդէսին առաջին թիւը կը սկսի հրատարակուիլ Վիեննայի Մխիթարեանց ձեռքով :

1869. — Բացում թիֆլիսի Ս. Գայիանեանց աղջկանց վարժարանին :

Յունիս 18

1858. — Մատթէոս Պատրիարք Կաթողիկոս կ'ընարուի :

1881. — Մալէզեան Յովսէփ Պատուելի, հայկարան, ծանօթ ուսուցիչ, կը վախճանի 80 տարեկան :

Յունիս 19

1847. — Հէնրի Գէլզեր, գերման հայագէտ, կը ծնի Պէրլինի մէջ :

1848. — Հ. Հիւսլշման, գերման հայագէտ, կը ծնի Բրուսիոյ մէջ :

1858. — Հովեան Նիկողոս աղա, երկար տարիներ Սասգիւղի Ներսէսեան վարժարանին հոգարարձու, կը մեռնի 62 տարեկան եւ կը թաղուի Սասգիւղ :

Յունիս 20

1833. — Մահ Հ. Ղուկաս Ինճիճեան վարդապետի, աշխարհագիր, հնախօս եւ քերթող, միարան Վենետիկի Մխի-

Թարեանց : Ունի բազմաթիւ երկասիրութիւններ : Ծնած էր 1758ին :

1840. — Երկրաշարժ Մասիս լեռան շրջակաները , որու միջոցին Մասիսի կողերէն վիժած էր լրահասակ կարմրագոյն վէմ մը գահավիժելով , կը կորզէ իր հիմունքէն Ս. Յակոբայ վանքը՝ որ կը թաւալի Ակոռի գիւղին վրայ եւ հիմնայատակ կը կործանէ զայն :

Յունիս 21

1817. — Միրզայեան Մանուկ պէյ կը վախճանի :

Յունիս 22

1888. — Յովհաննէս Տէրոյէնց Պատուելին , կրօնագէտ , լեզուագէտ , բազմաթիւ երկասիրութեանց հեղինակ , խմբագիր , կը վախճանի Սկիւտար , ուր կը թաղուի : Ծնած էր 1800ին :

Յունիս 23

1876. — Պուքրէշի ազգային հաստատութեանց բարերար Կարապետ Անոյշեան կը վախճանի :

Յունիս 24

1858. — Սէրվէրեան Յովհաննէս ամիրա , արքունի ճարտարագետ , ուսումնասէր եւ բարեգործ , կը վախճանի Կ. Պոլսոյ մէջ , 72 տարեկան : Ծինած է Գուգկուհնճուքի եկեղեցին ու գպրոցը , եւ հոգացած Սկիւտարի Ճեմարանին շինութեան ծախքին մեծ մասը :

Յունիս 27

1865. — Բարիզի նորահաստատ առժամեայ մատուոին մէջ առաջին սլատարագը կը մատուցուի Տ. Յովհաննէս Հիւնքեարպէյէնեանի կողմէ :

Յունիս 30

1873. — Յովհաննէս եպիսկոպոս Սեթեան , որ Ճեմարանի վէճերուն միջոցին կսկսաժնեբուն ջերմ կուսակիցը եղած

է, 1858ին Կ. Պոլսոյ Պատրիարքական Տեղապահ, քանիցս անդամ Հոգեւոր եւ Կրօնական Ժողովներու, կը վախճանի՝ եւ կը թաղուի Գուզկուհնճուքի Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ:



Յուլիս 1

1844. — Աստուածատուր Պատրիարք Կ. Պոլսոյ կը հրաժարի, եւ իրեն յաջորդ կ'ընտրուի Մատթէոս Պատրիարք:

1849. — Ուսուցնասեռ լրագիրը կը սկսի հրատարակուիլ Սինկափուրի մէջ (Հնդկաստան):

Յուլիս 4

1832. — Մահ Սէն-Մարթէն Փրանսացի հայագէտին, որ ծնած էր 1791ին:

1847. — Յակոբ Չէլէպի Տիւղեան, արքունի ոսկերչապետ, ապա Փողերանոցի տեսուչ, կը վախճանի: Իր յորդորանքով եւ ձեռնառուութեամբ հրատարակուած է Եւրոպա հանդէսը: Ծնած էր 1793 Յունուար 3ին:

Յուլիս 5

1781. — Ծնունդ Միւհէնտիս Գէորգի, չափագէտ ու տոմարագէտ, որ Ադրիանուպոլսեցի Պօղոս Պատրիարքի օրով, դարուս սկիզբները, Յունաց Պատրիարքարանին տոմարագէտներուն հետ յաջողած է համաձայնութիւն գոյացնել եւ վերջ տալ Ծռագատկի անպատեհութեանց:

1846. — Տէրոյէնցի եւ Մկրտիչ Աղաթօնի խմբագրած շաբաթաթերթը կը սկսի հրատարակուիլ Կ. Պոլսոյ մէջ:

1889. — Սրբուհի Մայրապետ Գալֆայեան, որ 1865ին հիմնած է Խասգիւղի Որբանոցը, կը վախճանի: Ծնած էր 1822ին, Կ. Պոլիս, Գարթալ գիւղը:

Յուլիս 6

1820 . — Հ. Ղեւոնդ Ալիշան , Մխիթարեան բազմարդիւն միարան , պատմագէտ , բանասէր , բանաստեղծ , մատենագիր , կը ծնի Կ . Պոլսոյ մէջ :

1881 . — Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութիւնը կը հիմնուի Թիֆլիզ :

Յուլիս 8

1756 . — Մահ գերման հայագէտ Յովհան Շրէտերի : Ծնած էր 1680ին :

Յուլիս 10

1711 . — Տաղերգու Աւետիք Պատրիարք կը վախճանի Բարիզի մէջ , եւ կը թաղուի Սէն-Սիւլբիս եկեղեցւոյ դամբարանին մէջ : Ծնած էր Երզնկայ , 1657 ին :

Յուլիս 15

1860 . — Մ . Գ . Տէյլրմէնճեան կը սկսի Պոլսոյ մէջ հրատարակել Արեւելեան Դար երկշարաթաթերթը :

Յուլիս 16

1835 . — Եփրեմ Կաթողիկոս , հրատարեալ , կը վախճանի Էջմիածնայ մէջ :

1887 . — Մահ եւրոպացի արեւելագէտ Յովհաննէս Հանուշի , որ հրատարակած է ուսումնասիրութիւն մը Լեհահայոց լեզուին վրայ :

Յուլիս 17

1817 . — Ծնունդ նշանաւոր հայ նկարիչ Յովհաննէս Այվազովսքիի :

1841 . — Մեծ հրդեհ Իզմիրի մէջ , ուր կ'այրին Ս . Ստեփաննոս եկեղեցին եւ ազգային վարժարանը :

1884. — Մահ Տիկին Նազլը վահանի, գործօն խնամակալուհի Օրթագիւղի Հոփոսիմեանց վարժարանին եւ մայր՝ հայ գրագիտուհի Տիկին Սրբուհի Տիւսարի :

Յուլիս 18

1764: — Յովհաննէս Արքեպիսկոպոս Նալեան, որ 20 տարի պատրիարքութիւն ըրած է Կ. Պոլսոյ մէջ, կը վախճանի եւ կը թաղուի Բանկալթիի գերեզմանատունը : Ունի կրօնական երկասիրութիւններ :

Յուլիս 20

1856. — Խաչատուր Պարտիզպանեան, ծանօթ ուսուցիչ, լեզուագէտ, չափագէտ, կը վախճանի Կ. Պոլիս : Ծնած էր 1809 Նոյեմբեր 24ին :

Յուլիս 21

1891. — Քրիստոսաուր Ղազարոսեան, հիմնադիր եւ երկար տարիներ անձնուէր ուսուցիչ Ղալաթիոյ կիրակնօրեայ վարժարանին, հոգարար Ս.զգ. Հիւանդանոցի, անդամ Պատրիարքարանի Ժողովներու, կը վախճանի Կ. Պոլսոյ մէջ :

Յուլիս 24

1842. — Տատեան Յովհաննէս պէյի խնդիրքով, Երջանկայիչատակ Սուլթան Ապտ-Իւլ-Մէճիա Կայսրը կը բարեհաճի հրամայել որ օրական 15 օխա միսի պետական պարէն յատկանայ Ա.զգ. Հիւանդանոցին :

Յուլիս 26

1780. — Երեւանցի Սիմէօն կաթողիկոս, նորոգիչ Տօնացոյցին եւ մատենագիր, կը վախճանի. ընտրուած էր 1763 ին :

1817. — Կոստանդնուպոլսեցի Յովհաննէս Պատրիարք կը վախճանի Սկիւտար :

1882. — Հ. Արսէն Սիւքրեան, երիտասարդ վարդապե-

տը , միաբան Վենետիկի Մխիթարեանց , հմուտ հայկաբան , լիզուազէտ , պատմազէտ , կը վախճանի :

Յուլիս 29

1846 . — Պետրոս ամիրա Եուսուֆ , սեղանաւոր եւ Եգիպտոսի փոխարքային Թրիէստէի գործակալ , բարերար եւ մեկենաս , կը մեռնի Կօրիձայի մէջ եւ կը թաղուի Իզմիր , ուր ծնած էր 1780ին :

Յուլիս 30

1844 . — Ասորոց Եղիա Կաթողիկոսը կը պատարագէ Բերայի Հայոց եկեղեցիին մէջ՝ հայ եկեղեցական արարողութեամբ , եւ Մատթէոս Պատրիարք այդ եկեղեցւոյն կից մատուռը կը յատկացնէ Ասորոց , որոնք այն ատեն եկեղեցի չունէին դեռ Կ. Պոլսոյ մէջ :

Յուլիս 31

1801 . — Ծնունդ դերման հայազէտ Բէզէրմանի , որ մեռած է 1876ին :

1850 . — Մահ Կ. Պոլսոյ հրաժարեալ Կարապետ Պատրիարքի , որ թաղուած է Սկիւտար :

1869 . — Իգնատիոս եպիսկոպոս Կ'ընարօի Պատրիարք Կ. Պոլսոյ եւ քանի մը օր ետքը կը վախճանի :



Օգոստոս 1

1812 . — Դիսակ Բիւզանդեան կը սկսի հրատարակուիլ ձեռամբ Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան :

1864 . — Արմաշու Միաբանութիւնը կը սկսի հրատարակել Յոյս հանդէսը :

Օգոստոս 2

1873. — Մսեր Մազիսարոս Մսերեանց, հմուտ աստուածարան՝ որ 25 տարի կրօնագիտութիւն զաստիսօսած է Լազարեան Ճեմարանի մէջ, հեղինակած է շատ մը կարեւոր երկեր, եւ խմբագրած Ճոսփաղ հանդէսը, կը մեռնի Մոսքուայի մէջ : Ծնած էր 1808ին՝ Իզմիր :

1887. — Հրդեհ Սկիւտարի մէջ, ուր կ'այրին Ս. Կարապետ եկեղեցին եւ Ճեմարանը :

Օգոստոս 5

1760. — Մուրատեան վարժարանի հիմնադիր Սամուէլ Մուրատ կը ծնի Եւդոկիոյ մէջ :

1825. — Արմաշու վանքին վանահայր եւ նորոգիչ Պօղոս արքեպիսկոպոս Գարագոջեան կը վախճանի :

Օգոստոս 7

1890. — Ղալաթիոյ Ազգ. Մատենադարանին հիմնադիր Յակոբ Արշակ կը վախճանի :

1893. — Տիգրան Կիւմիւշկէրաան, գործօն հոգարարձու Ազգ. Հիւանդանոցին, կը վախճանի Բարիզի մէջ :

Օգոստոս 10

1840. — Ղուկաս Պալղազարեան կը սկսի հրատարակել Իզմիրի Արշաշոյս լրագիրը :

1860. — Զարմայր Մսերեանց Մոսքուայի մէջ կը սկսի հրատարակել Համբաւարեր անուն երկչարաթաթերթը :

Օգոստոս 13

1771. — Ներսէս Ե. Աշտարակեցի Կաթողիկոսը կը ծնի Երեւանայ մօտ, Աշտարակ գիւղին մէջ, Մեռած է 1857ին :

1819. — Ծնունդ առևտահայ կրօնագէտ Պետրոս Շանշեանցի, որ մեռած է 1889ին :

Օգոստոս 14

1834. — Մուրատեան վարժարանը կը հիմնուի Բատուայի մէջ, ուրկէ Բարիզ փոխադրուեցաւ 1846ին :

1864. — Եսայի վարդապետ Կարապետեան կ'ընտրուի Երուսաղէմի Պատրիարք : Այդ աթոռը չորս տարիէ ի վեր թափուր մնացած էր «ներսէն դուրսէն» ի վէճերուն հետեւանքով :

1878. — Սիմօն Միքայէլեան, քանակագէտ, ուսուցիչ եւ հեղինակ, կը վախճանի 52 տարեկան :

1887. — Գրիգոր Օտեան կը վախճանի Բարիզի մէջ : Ծնած էր 1834 Հոկտեմբեր 14ին :

1898. — Գալուստ Կոստանդեան, Իզմիրցի հայ գիտունը, կը վախճանի Իզմիրի մէջ :

Օգոստոս 15

1899. — Գրիգորիս Արքեպիսկոպոս Ալէաթճեան, կը վախճանի Սկիւտար : Ծնած էր 1840 ին :

Օգոստոս 18

1826. — Մեծ հրդեհ Կ. Պոլսոյ մէջ, ուր այրեցաւ Գում Գափուի մայր եկեղեցին եւ Ազգ. Պատրիարքարանը : Այս հրդեհէն այրեցան Պատրիարքարանի հին արձանագրութիւնները եւ ուրիշ հին ու թանկագին ձեռագիրներ :

1888. — Եէտի Գուլէի Ազգ. Հիւանդանոցի նոր շէնքին հիմնարկէքը տեղի կ'ունենայ հանդիսաւոր կերպով :

Օգոստոս 19

1851. — Միքայէլ Արքեպիսկոպոս Սալլանթեան, երբեմն միարան Անտոնեան միարանութեան, տեսուչ Մոսքուայի Լազարեան Ճեմարանին, աստուածաբանութեան ուսուցիչ եւ տաղանդաւոր հեղինակ, կը վախճանի :

Օգոստոս 20

1898. — Դրեանց, Հայոց առաջին կատակերգակ գերասանը, կը վախճանի Կովկասի մէջ: Ծնած էր Կ. Պոլիս, 1840ին:

Օգոստոս 21

1898. — Ն. Կ. Վեհափառութիւն ՍՈՒՂԹԱՆ ԱՊՏ-ԻԻՂ-ՀԱՄԻՏ ԽԱՆ Բ. ի բարձրագոյն Իրատէով, Ազգ. Հիւանդանոցի միտի պարէնը օրական 51 օխայէ կը բարձրանայ 150 օխայի եւ հացի պարէնն ալ 340 օխայէն 600 օխայի:

Օգոստոս 22

1865. — Մահ Մաաթէոս Բ. Կաթողիկոսի, աստուածաբան եւ մատենագիր, որ ծնած էր 1802ին Կ. Պոլսոյ մէջ: Բարեկարգեց էջմիածնայ մատենագարանը:

1880. — Մահ Ֆրանսացի նշանաւոր հայագէտ Պրոսէի, որ բազմաթիւ ֆրանսերէն գրուածներ ունի հայ լեզուի եւ հընարխոսութեան վրայ: Ծնած էր 1802 Յունուար 24ին:

Օգոստոս 23

1830. — Ֆրանսացի նշանաւոր հայագէտ Լը Վայեան աը Ֆլորիսլալ՝ հայ լեզուի ուսուցիչ կը կարգուի Բարիզի Արեւելեան Լեզուներու վարժարանին:

Օգոստոս 24

1862. — Մահ Յովսէփ Էֆէնտիեանցի, որ 60,000 բուսլլի կտակած է Թիֆլիսի Ներսէսեան վարժարանին:

Օգոստոս 25

1860. — Առաջին Կրօնական ժողովը եւ առաջին Բաղաքական ժողովը կ'ընարուին Պատրիարքարանի մէջ:

Օգոստոս 26

1836. — Կ. Պոլսոյ ամիրաներէն ոմանք հաւաքուելով Պատրիարքարան, ժողով կը զուժարեն Ստեփաննոս «Աղաւնի»

Պատրիարքի նախագահութեամբ եւ կ'որոշեն հիմնել Ակիւտարի Ճեմարանը :

Օգոստոս 27

1717. — Վենետիկի Մերակոյտը Մխիթարեան Միաբանութեան կը նուիրէ Վենետիկի Ս. Ղազար կղզին :

Օգոստոս 29

1865. — Կարապետ վարդապետ Շահնազարեան , պատմագէտ հեղինակ եւ հրատարակիչ , կը վախճանի Խասգիւղ (Կ. Պոլիս) , եւ կը թաղուի գիւղին գերեզմանատունը :

1865. — Մաղաքեան Տ. Ստեփաննոս Արքեպիսկոպոս , առաջնորդ Նիկոմիդիոյ եւ վանահայր Արմաշու վանքին՝ ուր տպարան հաստատած է , 1861էն 1863 Պատրիարքական Տեղապահ , կը վախճանի Պարտիզակի մէջ : Ծնած էր 1801ին :

1885. — Մահ Երուսաղէմի Պատրիարք Եսայի Արքեպիսկոպոսի , որուն յաջորդած է Տ. Յարութիւն Պատրիարք Վեհապետեան :

Օգոստոս 31

1812. — Մահտեսի Առաքէլ Տատեան բարեգործ ամիրան , առաջին վառօդապետ , կը վախճանի Կ. Պոլսոյ մէջ : Ծնած էր 1753 Դեկտեմբեր 20 ին :



Սեպտեմբեր 1

1861. — Գարրիէլ Յ. Երանեան եւ Նիկողոս Ս. Թաշճեան ծանօթ երաժիշտները կը սկսին հրատարակել Կ. Պոլսոյ մէջ Քնար երաժշտական երկչարաթաթերթը :

1886. — Ղալաթիոյ Կեղրոնական վարժարանին դասախօսութիւնները կը սկսին :

Սեպտեմբեր 2

1837. — Բացում Երեւանայ Հայոց Հոգեւոր Թեմական դպրոցին :

Սեպտեմբեր 4

1831 . — Կարապետ Պատրիարք Կ. Պոլսոյ կը հրատարի եւ իրեն կը յաջորդէ Ստեփաննոս « Աղաւնի » Պատրիարք :

1869 . — Մկրտիչ Արքեպիսկոպոս Խրիմեան , այժմ Կաթողիկոս Ամենայն Հայոց , Կ. Պոլսոյ Պատրիարք կ'ընտրուի :

Սեպտեմբեր 5

1855 . — Ռուսահայ պատմագէտ եւ բանասէր , պետական խորհրդական Կարապետ Եզեանց կը ծնի :

Սեպտեմբեր 7

1857 . — Արմենակ Հայկունի կը սկսի հրատարակել թատերական շաբաթաթերթ մը Կ. Պոլսոյ մէջ :

1891 . — Յակոբ փաշա , ելմտագէտ , նախարար Կոյս . Անձնական Գանձուն , կը վախճանի 60 տարեկան :

Սեպտեմբեր 8

1860 . — Անտօն Ճէփահիրճեան կը սկսի հրատարակել , Կ. Պոլսոյ մէջ , Սեր երկշաբաթաթերթը :

Սեպտեմբեր 9

1872 . — Կ. Պոլսոյ նախկին Պատրիարք Պօղոս Արքեպիսկոպոս Թաքթաքեան կը վախճանի Իզմիրի մէջ 78 տարեկան :

1885 . — Նիկողոս Թաշճեան , երաժշտագէտ , կը վախճանի :

Սեպտեմբեր 10

1898 . — Մահ Բրօֆէսօր Անդրէաս Արժրունիի , ռուսահայ գիտուն , որ հանքաբանութիւն դասախօսած է գերման համալսարաններու մէջ եւ ունի 50է աւելի գիտական աշխատասիրութիւններ , գլխաւորաբար գերմաներէն : Ծնած էր 1847 Նոյեմբեր 15ին , Մոսկուայի մէջ :

Սեպտեմբեր 11

1836 . — Բացում Վենետիկի Ռափայէլեան վարժարանին :

1848. — Մահ վենետիկի Մխիթարեան միարան Հ. Եղիա Քովմանի, հայկարան, հելլէնագէտ եւ թարգմանիչ, Մնած էր 1777ին :

Սեպտեմբեր 13

1838. — Հանդիսաւոր բացում Սկիւտարի Ճեմարանին, որ հիմնուած է նախաձեռնութեամբ Կարապետ Պալեան եւ Սէրվէրեան Յովհաննէս ճարտարապետ ամիրաներուն :

Սեպտեմբեր 15

1840. — Կ. Պոլսոյ Յակօբոս Պատրիարքը կը հրատարի եւ Ստեփաննոս « Աղաւնի » լիբրատին Պատրիարք կ'ընտրուի :

1855. — Յարութիւն Սըվաճեան կը սկսի հրատարակել Մեղուն, որ Հայոց առաջին պատկերազարդ ծաղրաթերթը եղած եւ մեծ յաջողութիւն գտած է :

Սեպտեմբեր 16

1715. — Յովհաննէս Կոլոտ Կ. Պոլսոյ Պատրիարք կ'ընտրուի : Երուսաղէմի Պատրիարք Գրիգոր Շղթայակիրի հետ աշխատած է Երուսաղէմի վանքին պարտքը վճարելու . պաշտօնավարած է քառօրյ դարէ աւելի, վախճանելով 1741ին :

1822. — Տօքթոր Յովսէփ Շիշմանեան (Մերենց) կը ծնի Կ. Պոլսոյ մէջ :

Սեպտեմբեր 17

1858. — Տօքթոր Անդրէաս Փոփովիչ, հմուտ բժիշկ, հեղինակ առողջապահութեան վրայ հրատարակուած խնամուած աշխատասիրութեան մը, կը վախճանի Խասգիւղ : Մնած էր Սուչօվա, 1803ին :

1866. — Տ. Գէորգ Արքեպիսկոպոս, նախկին Պատրիարք Կ. Պոլսոյ, կ'ընտրուի Կաթողիկոս Էջմիածնայ մէջ :

Սեպտեմբեր 18

1889. — Բացում Արմաշու Դպրեվանքին :

Սեպտեմբեր 19

1841. — Ստեփաննոս «Աղաւնի», որ երկրորդ անգամ
Կ. Պոլսոյ Պատրիարք եղած էր, կը հրատարի եւ իրեն կը յա-
ջորդէ Ասատուածատուր Պատրիարք :

Սեպտեմբեր 20

1893. — Էսսեան եղբայրներուն Բերայի մէջ կառուցած
վարժարանին հիմնարկէքը կը կատարուի կրօնական հանդէսով :

Սեպտեմբեր 26

1893. — Ն. Օծութիւն Տ. Մկրտիչ Ա. Կաթողիկոս կ'օծ-
ուի Էջմիածնայ մէջ :

Սեպտեմբեր 27

1888. — Արմաշու վանքին վարժարանը, հիւրանոցը եւ
ուրիշ շինութիւններ կ'այրին :

Սեպտեմբեր 29

1888. — Ամենապատիւ Տ. Խորէն Արքեպիսկոպոս Աշըղ-
եան Կ. Պոլսոյ Պատրիարք կ'ընտրուի :

Սեպտեմբեր 30

1889. — Յովհաննէս քահանայ Մավեան Արմաշեցի, հայ-
կաբան, արդիւնաւոր ուսուցիչ, կը վախճանի Արմաշի մէջ :
Թողած է քանի մը երկասիրութիւններ, մեծ մասը ձեռագիր :
Մնած էր 1813ին :

Հոկտեմբեր 1

1846. — Վերաբացում Սկիւտարի Ճեմարանին, որ փա-
կուած էր 1841ին :

1848. — Մատթէոս Պատրիարք կը հրատարի Կ. Պոլսոյ
Պատրիարքական աթոռէն :

1881 . — Բացում էրզրումի Սանասարեան վարժարանին :

Հոկտեմբեր 2

1729 . — Ունեցի կարապետ կաթողիկոս կը վախճանի :

1827 . — Էջմիածին կ'անցնի Պարսիկներէն Ռուսաց իշխանութեան տակ :

1897 . — Մահ Տոքթ. Սէրվիչէնի , որ երկար ատեն ազգեցիկ ձայն ունեցած է Պատրիարքարանի ժողովներուն մէջ : Ունի բժշկական աշխատասիրութիւններ : Ծնած էր 1815ին , կ. Պոլսոյ մէջ :

Հոկտեմբեր 3

1841 . — Փակում Սկիւտարի Ճեմարանին :

Հոկտեմբեր 5

1868 . — Մահ Տոքթ. Բարունակ պէյ Ֆէրուհիանի , բըժիշկ , գրագէտ , անգամ եւ քանիցս ատենապետ Պատրիարքարանի ժողովներուն : Իր ժամանակին զարգացած Հայերէն մէկը եղած է կ. Պոլսոյ մէջ :

Հոկտեմբեր 6

1838 . — Վիեննայի Մխիթարեանց վանքին հիմնարկութիւնը տեղի կ'ունենայ :

Հոկտեմբեր 7

1848 . — Յակոբ Արքեպիսկոպոս , առաջնորդ Եւզոկիոյ , կը վերընարուի Պատրիարք կ. Պոլսոյ :

1858 . — Յակոբ Պատրիարք , տասը տարուան պաշտօնավարութենէ ետքը , ծերութեան պատճառաւ կը հրաժարի , եւ Պրուսայի առաջնորդ Գէորգ Արքեպիսկոպոս կ. Պոլսոյ Պատրիարք կ'ընարուի :

Հոկտեմբեր 8

1830 . — Եփրեմ կաթողիկոս Չորագեղցի , որ 1809ին ընտրուած էր եւ յաջորդած Դանիէլի , վերջնապէս կը հրաժարի :

Հոկտեմբեր 9

1808. — Դանիէլ Կաթողիկոս կը վախճանի էջմիածնայ մէջ .

1873. — Կ. Պոլսոյ Պատրիարք Մկրտիչ Արքեպիսկոպոս Խրիմեան, հիմայ Կաթողիկոս ամենայն Հայոց, վերջնապէս կը հրատարի իր Պատրիարքական պաշտօնէն .

Հոկտեմբեր 10

1725. — Աստուածատուր Կաթողիկոս կը վախճանի Օշական գիւղին մէջ, լուսնին խաւարումը գիտած պահուն տանիքէ մը վար իյնալով : Ընարուած էր 1715ին .

Հոկտեմբեր 12

1858. — Բացում Խալիպեան ուսումնարանին՝ Թէոդոսիոյ մէջ (Խրիմ), հայազգի վաճառական Պ. Յարութիւն Խալիպեանի նպաստով :

Հոկտեմբեր 13

1862. — Գարրիէլ Երանեան, հմուտ երաժիշտ, որ Նիկողոս Թաշճեանի հետ հրատարակած է Քնար երաժշտական հանդէսը, կը վախճանի 35 տարեկան .

Հոկտեմբեր 14

1865. — Մահ Յակոբ Կրճիկեանի որ ծնած էր 1806ին . 1847ին ընարուած էր Լօղոֆէք (քարտուղար Գերագոյն Ժողովի) . քաղաքագէտ, լեզուագէտ՝ իր ժամանակին կարեւոր դէմքերէն մէկը եղած է :

Հոկտեմբեր 15

1863. — Կ. Պոլսոյ Պատրիարք կ'ընարուի Իզմիրի առաջնորդ Թագթագեան Պօղոս Արքեպիսկոպոս :

Հոկտեմբեր 16

1794. — Հայերէն առաջին թերթը, Ազդարար, կը սկսի

հրատարակուի Մատրասի մէջ, խմբագրութեամբ Տ. Յարութիւն Շմաւոնեան Շիրազեցի Աւագ քահանային, որ 1789ին տպարան մը հաստատած էր հոն :

1874. — Էջմիածնայ նորաշէն ճեմարանը մէջէն կը բռնկի եւ շէնքը մասամբ կ'այրի :

Հոկտեմբեր 17

1884. — Յովհաննէս Չամիչ, անտեսագէտ եւ ելմտագէտ, որ Թուրքիոյ Հանրային Շինութեանց նախարար եղած է, կը վախճանի :

Հոկտեմբեր 20

1886. — Ճանիկ Նազըճեան, երիտասարդ բանաստեղծ, որ գրած է Քրանսերէն քերթուածներ, կը վախճանի Կ. Պոլսոյ մէջ 27 տարեկան :

Հոկտեմբեր 21

1827. — Ծնունդ գերման հմուտ հայագէտ Բ. Տըլակառաի :

1882. — Մահ Տոքթ. Յ. Քեաթիպեանի, բարեգործ եւ հմուտ բժիշկ վկայեալ Բարիզէ : Երկար տարիներ առաջնակարգ զիրք ունեցած է Պոլսոյ բժշկական դասուն մէջ :

Հոկտեմբեր 22

1853. — Գերագոյն ժողովը կ'ընտրէ առաջին Ուսումնական Խորհուրդը, որուն անգամակցած են Օտեան, Ռուսիան, Նիկողոս Պալեան, Խաչատուր Պարտիզպանեան, եւ այլն :

Հոկտեմբեր 24

1801. — Մահ Յովհաննէս Լազարեանցի, որ շինած է Բեդերսպուրկի մէջ երկու հայ եկեղեցիներ եւ կտակած է երկու հարիւր հազար թուղլի՝ Մոսկուայի մէջ ճեմարան մը հիմնելու համար :

1862. — Գրիգոր Օտեանի հայրը, Օտեան Պօղոս աղա, որ 75,000 դրուշ կտակած է Գարակէօմրիւկի եկեղեցւոյն, ուսումնասէր եւ բարեգործ մարդ, կը վախճանի 70 տարեկան :

Հոկտեմբեր 25

1866. — Արմենակ Հայկունի, ծանօթ հեղինակ եւ խումբագիր, կը վախճանի Կ. Պոլսոյ մէջ :

Հոկտեմբեր 26

1861. — Տ. Սարգիս Արքեպիսկոպոս կը հրատարի Կ. Պոլսոյ Պատրիարքութենէն :

1884. — Մահ Ներսէս Պատրիարք Վարժապետեանի, որ ծնած էր 1837ին :

Հոկտեմբեր 27

1823. — Ադրիանուպոլսեցի Պօղոս Պատրիարք Կ. Պոլսոյ կը հրատարի :

Հոկտեմբեր 30

1840. — Խաչատուր Ոսկանեան կը սկսի հրատարակել Կ. Պոլսոյ մէջ Ազդարար Բիւզանդեանը :

1875. — Յակոբ Պալեան, ճարտարապետ, արուեստագէտ եւ մեկենաս հայ թատրոնին, կը վախճանի Բարիզի մէջ :

Հոկտեմբեր 31

1880. — Տօքթ. Ներսէս Մեղպուրեան, նախ ուսուցիչ՝ յետոյ բժիշկ, կը վախճանի 40 տարեկան : Գրած է քերթուածներ :

1892. — Վենետիկի Միարաններէն Հ. Աբրահամ Վ. Ծարեան, որ բազմաթիւ գործեր թարգմանած է գրաբարի, կը վախճանի Վենետիկ՝ 74 տարեկան :



Նոյեմբեր 1

1869. — Եփրատ լրագիրը, որուն աշխատակցած է Յակոբ Պարոնեան, կը սկսի հրատարակուիլ Կ. Պոլսոյ մէջ :

Նոյեմբեր 3

1847. — Կայսերական Իրատէով Հայ-Բողոքականները կը ճանչցուին իբր անջատ հասարակութիւն :

1862. — Մինէճի Անդրանիկ ազա, Սամաթիոյ Սահակեան եւ Նունեսն վարժարաններուն անխոնջ հոգաբարձուն, որուն ջանքով ի լոյս ելած է Բուրասան Ս. Սահակեան հանդէսը, կը վախճանի 58 տարեկան :

Նոյեմբեր 4

1704. — Մահ Անդրէաս Ակոլութ նշանաւոր արեւելագէտին, որ հայ լեզուն ու սուլմասիրող առաջին գերմանացին եղած է :

1892. — Տ. Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյ, լեզուագէտ, բանաստեղծ եւ մատենագիր, կը վախճանի :

Նոյեմբեր 6

1862. — Կ. Պոլսոյ նախկին Պատրիարք Յակոբ Արքեպիսկոպոս, որ ուխտի գացած էր Երուսաղէմ, հոն կը վախճանի 82 տարեկան :

1896. — Ամենապատիւ Տ. Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան Կ. Պոլսոյ Պատրիարք կ'ընտրուի :

1897. — Մահ Փորթուզալ Միքայէլ փաշայի, Կայս. Անձնական Գանձուն նախարար, հմուտ ելմտագէտ, անտեսագէտ եւ բանասէր :

Նոյեմբեր 8

1877. — Մարիամեան-Յովնանեան ազջկանց վարժարանը կը բացուի Թիֆլիս, Յովհաննէս Յովնանեանի ծախքով :

Նոյեմբեր 11

1734. — Արրահամ Բ. Կաթողիկոս Խոջարեցի, որ նորոգած է էջմիածնայ վանքը, կը վախճանի:

1880. — Տիկին Կատարինէ Լազարեանց որ 70,000 ռուպլի նուիրած է Լազարեան ճեմարանին եւ Բեղերսպուրկի ու Մոսկուայի հայ եկեղեցիներուն, կը վախճանի Բեղերսպուրկի մէջ: Ծնած էր 1809ին:

Նոյեմբեր 12

1854. — Վենետիկի Մխիթարեան Միարանութենէն Հ. Յարութիւն Աւգերեան, լեզուագէտ, կը վախճանի: Ծնած էր 1774 ին:

Նոյեմբեր 13

1842. — Քսանրեօթը կսկսաճնորու ժողովը կը հրատարի վերջնապէս եւ Ամիրաներու ձեռքը կ'անցնի նորէն Պատրիարքարանի վարչութիւնը:

Նոյեմբեր 14

1779. — Հինադրութիւն նոր Նախիջեւանի՝ Ղրիմէն գաղթող Հայերու ձեռքով:

1809. — Խաչատուր Պարտիզպանեան, բազմարդիւն ուսուցիչ, կը ծնի Կ. Պոլիս, Սկիւտարի մէջ:

Նոյեմբեր 15

1775. — Զմիւռնիոյ Մեսրոպեան վարժարանը կը հաստատուի:

1851. — Մխիթարեան Միարաններէն Հ. Մինաս Վ. Բժըշկեան, որ ունի սլաւոնական եւ լեզուագիտական աշխատութիւններ, կը վախճանի: Ծնած էր 1777ին:

1866. — Արքունի ճարտարապետ Կարապետ ամիրա Պալեան, Հիւանդանոցի բարերար, որ նշանաւոր հանդիսացած է ազգին մատուցած իր ծառայութիւններով եւ իր բարեգործ կեանքով, կը վախճանի:

1881. — Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութիւնը կը հիմնուի :

1883. — Յովսէփ Իզմիրեանց , որ հաստատած է Սահակ-Մեսրոպեան մրցանակը , եւ նշանաւոր եղած է իր բարեգործ կեանքով , կը վախճանի :

Նոյեմբեր 17

1850. — Մահ Աղեքսանդր Ռափայէլ Ղարամեանի , հընդ-կահայ վաճառական , որ զաւակն էր Ռափայէլեան վարժարանի հիմնադրին :

1861. — Մահ ուսահայ հրատարակիչ Գէորգ Ախվէր-տեանցի :

1892. — Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանց , գործու-նեայ եկեղեցական եւ իսկատիպ գրագէտ , կը վախճանի Ազգ-Հիւանդանոցին մէջ 52 տարեկան :

Նոյեմբեր 18

1823. — Մահ վենետիկի Միսիթարեան Միարանութեան անդամ , հնախօս եւ լեզուագէտ Հ. Միքայէլ Վ. Չամչեանի , որ ծնած էր 1738ին :

1891. — Մահ հայ փորագրիչ եւ տպագրիչ , ճարտար ա-րուեստագէտ Յովհաննէս Միւհէնտիսեանի : Ծնած էր 1810 Փետրուար 21ին :

Նոյեմբեր 19

1847. — Կ. Պոլիս , Օրթաքէօյի մէջ կը հաստատուի վեր-ձանութեան Թանգարանը , որուն նպատակն էր ընթերցանու-թիւնը տարածել ժողովրդին մէջ :

1863. — Տատեան Պօղոս պէյ , արքունի վառօդապետ , բարերար Ազգ. Հիւանդանոցի , կը մեռնի Բարիզի մէջ եւ Պո-լիս բերուելով կը թաղուի Գում Գարուի Մայր Եկեղեցւոյն գաւիթը :

Նոյեմբեր 20

1821. — Թիֆլիսի մէջ կը հիմնուի Ներսէսեան վարժա-

րանը , որ այսօր հնագոյնն է երկրորդական կրթութիւն տուող հայ վարժարաններուն մէջ :

Նոյեմբեր 22

1714 . — Մահ Աղեքսանդր Ջուղայեցի կաթողիկոսին , որ ընտրուած էր 1706ին :

1827 . — Ծնունդ Մխիթարեան միաբան Հ. Գարեգին Վ. Զարպհանէլեանի , որ ուսումնասիրութիւններ հրատարակած է հին հայ գրականութեան վրայ :

Նոյեմբեր 23

1735 . — Լազարեան ճեմարանի հիմնադիր Յովնաննէս Լազարեանց կը ծնի Ջուղայի մէջ :

1890 . — Աղաթօն Մկրտիչ , լեզուագէտ , խմբագիր , Պատրիարքարանի գործօն ժողովական , կը վախճանի Միտիլիի մէջ , 70 տարեկան :

Նոյեմբեր 24

1836 . — Ծնունդ Տ. Մելքիսեղեկ Արքեպիսկոպոս Մուրատեանցի , կրօնագէտ եւ մատենագիր :

Նոյեմբեր 25

1842 . — Միքայէլ Լորիս-Մէլիքօֆ , ռուսահայ դիւանագէտ , կը ծնի :

Նոյեմբեր 26

1876 . — Եղուարդ Արքեպիսկոպոս Հիւրմիւզ , Վենետիկի Մխիթարեան միաբան , տաղանդաւոր գրագէտ եւ տաղաչափ , կը վախճանի : Ծնած էր 1799ին :

Նոյեմբեր 27

1858 . — Հ. Ռափայէլ Վ. Թրեանց , լեզուագէտ եւ գիտուն , Վենետիկի Մխիթարեան , կը վախճանի Բարիզի մէջ :

Նոյեմբեր 28

1773. — Կաղզուանցի Չաքարիա Արքեպիսկոպոս Փոքուզեան Պատրիարք կ'ընտրուի Կ. Պոլսոյ :

Նոյեմբեր 29


1868. — Մահ Մկրտիչ Պէշիքթաշլեանի , բանաստեղծ եւ թատերագիր : Ծնած էր 1827ին :

1876. — Մահ Տոքթ. Նահապետ Ռուսինեանի , լեզուագէտ , գրագէտ եւ ինքնատիպ հեղինակ : Գործօն անդամներէն եղած է Պատրիարքարանի ժողովներուն :

Նոյեմբեր 30

1859. — Նիկողոս Զօրայեան , մատենագիր , տնտեսագէտ , գրագէտ եւ ուսուցիչ , կը վախճանի : Ծնած էր 1821ին :

1881. — Մահ Բաստամեան Վահան ուսանայ վարդապետին , օրէնագէտ , բանասէր , որ լուրջ ուսումնասիրութիւններ ըրած է հայ ամուսնական օրէնքներուն վրայ :



Դեկտեմբեր 3

1883. — Համբարձում Իփէքճեան , ուսանայ ուսուցիչ , որ ունի մանկավարժական գրուածներ , կը վախճանի Կ. Պոլսոյ մէջ , 45 տարեկան :

1889. — Տոքթ. Վիչէն Օրմանեան , եղբայր Կ. Պոլսոյ Պատրիարք Օրմանեան Արքագանի , հմուտ եւ խղճամիտ բժշկապետ Նէտի Գուլէի Հիւանդանոցին , որուն բժշկական ճիւղը բարեկարգած է , կը վախճանի 45 տարեկան :

1894. — Տոքթ. Տիգրան փաշա Փէշտիմալճեան , հմուտ բժիշկ , որ թողած է բժշկական գրուածներ , կը մեռնի 57 տարեկան :

Գեկեմբեր 4

- 1870 . — Թէոգոսիոյ Խաչիպեան վարժարանը կը փակուի :
1892 . — Յրանսացի հայագէտ Գ. Շրուժպֆ կը վախճանի :

Գեկեմբեր 5

1826 . — Հմուտ հայագէտ Շահան Զրպեա , Ներսէս Աշտարակեցիի հրաւերով , Թիֆլիս կու գայ իբր ուսուցիչ Ներսէսեան վարժարանին :

Գեկեմբեր 6

1882 . — Մահ Գէորգ Դ. Կաթողիկոսի՝ էջմիածնայ մէջ :

Գեկեմբեր 7

1885 . — Ամենապատիւ Տ. Յարութիւն Արքեպիսկոպոս վեհապետեան , Պատրիարք Կ. Պոլսոյ , Երուսաղէմի Պատրիարք կ'ընտրուի , երկու տիպոսները շմիացնելու պայմանաւ :

1888 . — Տիգրան Մանավեան , հայ ուսուցիչ եւ գրող , կը վախճանի Կ. Պոլսոյ մէջ , 47 տարեկան :

1898 . — Յարութիւն Թիւլեան (Միւսիւ Բասգալ) , ծանօթ քանակագէտ եւ բազմարդիւն ուսուցիչ , կը վախճանի Կ. Պոլսոյ մէջ : Ծնած էր 1832 Ապրիլ 22ին :

Գեկեմբեր 9

1834 . — Ծնունդ Գրիգոր Օտեանի , Սկիւտարի մէջ :

1838 . — Սկիւտարի Ճեմարանը կը բացուի :

1871 . — Խաչատուր Լազարեանց , Ռուսիոյ պետական խորհրդական բարեգործ հայազգին , որ մեծ գումարներ նուիրած է իր հօր եւ հօրեղբոր հիմնած Լազարեան ճեմարանին , կը վախճանի Բեդերսպուրկի մէջ : Ծնած էր 1789 Յունիս 1ին :

1881 . — Մահ Քրանսացի հայագէտ Էտուառ Տիւլօռիէի : Ծնած էր 1807ին :

Գեկեմբեր 10

1860 . — Պետրոս Խորասանճեան , որ քաջալերող եղած է հայ լրագրութեան , Պատրիարքարանի ժողովներու անդամ եւ հմուտ տաճկագէտ , կը վախճանի 51 տարեկան :

Գեկեմբեր 11

1798. — Շահան Զրպետ հայ լեզուի դասախօսութեան կը սկսի Բարիզի Արեւելեան լեզուներու վարժարանին մէջ :

Գեկեմբեր 12

1840. — Գարեգին Եպիսկոպոս Սրուանձտեանց կը ծնի Վանայ մէջ :

1841. — Պաշտօնապէս կը հաստատուի 27 Խանաֆներու ժողովը՝ որ կոչուած էր վարել Պատրիարքարանի գործերը :

1866. — Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան անդամ Հ. Արսէն Վ. Բագրատունի, նշանաւոր հայկարան, տաղաչափ, լեզուագէտ եւ մատենագիր, կը վախճանի :

Գեկեմբեր 13

1890. — Մահ ուստահայ բրոֆէսէօր Մկրտիչ Էմինի, պատմագէտ, բանասէր : Ունի կարեւոր երկասիրութիւններ՝ հայերէն եւ ռուսերէն :

Գեկեմբեր 14

1826. — Մահ Արէլ Արքեպիսկոպոս Մխիթարեանի որ ունի կրօնական երկասիրութիւններ :

Գեկեմբեր 15

1815. — Ադրիանուպոլսեցի Պօղոս Պատրիարքին կը յաջորդէ Աբրահամ Պատրիարք :

Գեկեմբեր 18

1879. — Մահ արեւելագէտ Մորթմանի :

Գեկեմբեր 19

1772. — Յակոբ Շահան Զրպետ, ուսուցիչ եւ բանասէր, կը ծնի Ուրֆայի մէջ :

1878. — Մանուկ աղա Մնակեան, որ հայ վարժարանի մը հիմնարկութեան համար կարեւոր գումար մը կտակած է, կը

վախճանի եւ կը թաղուի Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցին , որուն շինութեան համար ալ 500 ոսկի կտակած էր :

Գեկեմբեր 20

1753 . — Ծնունդ Առաքել ամիրա Տատեանի , արքունի վառօդապետ :

1892 . — Հ. Սերովբէ Վ. Տէրվիշեան , վիեննայի Մխիթարեան միաբանութեան անդամ , հմուտ բանասէր եւ լեզուաբան , կը մեռնի Կ. Պոլսոյ մէջ : Ծնած էր 1846 Յունվ. 10ին :

Գեկեմբեր 22

1835 . — Հ. Մանուէլ Վ. Զախջախեան , վենեաիկի Մխիթարեան միաբանութեան անդամ , մատենագիր , բանաստեղծ եւ լեզուագէտ , կը վախճանի :

1887 . — Իզմիրցի հայ բարերար Յովհաննէս Սպարթալեան , որ իր եղբօր՝ Յակոբ Սպարթալեանի հետ նորէն կառուցած է Իզմիրի Ազգ. Հիւանդանոցը , կը վախճանի : Ծնած էր 1831 Յունուար 10ին :

Գեկեմբեր 23

1860 . — Ազգ. Հիւանդանոցի Տիկնանց առաջին Խնամակալութիւնը , որուն գլխաւոր գործիչն էր Տիկին Էպրու Երամեան , կը կազմուի :

Գեկեմբեր 24

1837 . — Մահ Փէշաբազեան Գրիգոր վարժապետի , հայկարան , կրօնագէտ , բանաստեղծ եւ մատենագիր : Ծնած էր 1773 ին :

1860 . — Մահ Երուսաղէմի Տ. Յովհաննէս Պատրիարքին , որուն յաջորդին ընտրութեան առթիւ ծագեցաւ « ներսէն դուրսէն » ի վէճը :

Գեկեմբեր 25

1868 . — Յարութիւն Տէաէեան , Իզմիրցի տպարանապետ , խմբագիր , հեղինակ եւ թարգմանիչ , կը մեռնի 28 տարեկան :

Դեկտեմբեր 27

1799. — Մահ Ղուկաս Կարնեցի Կաթողիկոսին , որ ընտրուած էր 1780ին :

Դեկտեմբեր 28

1882. — Հ. Յովսէփ Վ. Գաթրճեան , միաբան վիեննայի Մխիթարեանց , հմուտ մատենագիր , կը վախճանի :

Դեկտեմբեր 29

1843. — Մահ Պօղոս պէյ Նուսուֆի , որ վարած է պետական կարեւոր պաշտօններ՝ Եգիպտոսի մէջ : Ծնած էր 1768 ին :

1894. — Տ. Յովհաննէս Հիւնքեարպէյէնեան , նախկին ուսուցիչ , լեզուագէտ՝ որ զբաղած է հայ բառերու ստուգարանութեամբ , կը վախճանի : Ծնած էր 1818 Նոյեմբեր 25ին :

Դեկտեմբեր 31

1779. — Եղուարդ Ռափայէլ Ղարամեան , հնդկահայ վաճառական , կարեւոր գումար մը կը կտակէ , որով կը հիմնուի Ռափայէլեան վարժարանը :

1882. — Իզմիրցի հայ բարերար Յակոբ Սպարթալեան , որ իր եղբօր՝ Յովհաննէս Սպարթալեանի հետ նորէն կառուցած է Իզմիրի Ազգ. Հիւանդանոցը (հիմնուած 1801ին) , կը վախճանի : Ծնած էր 1825 Հոկտեմբեր 26ին :



ԺԱՄԱՆԱԿՆ ՈՒ ՏՈՄԱՐԸ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ի Ն Ջ Ա Փ Ը

ՕՐ ԵՒ ԻՐ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ . — Բնական ամէնէն ուշագրաւ երեւոյթը լոյսի եւ խաւարի , ցորեկուան ու գիշերի պարբերական յաջորդութիւնն է : Յորեկն ու գիշերը միութեան մը կէսերը նկատուելով , միասին կազմեցին Օրը , որ կամայական կերպով բաժնուած է 24 հաւասար մասերու՝ որոնք կը կոչուին Ժամ : Նոյնպէս ժամը բաժնուեցաւ 60 վայրկեաններու , որովհետեւ 60 թիւը ամէնէն զիւրաւ բաժանական թիւերէն մէկն է . վայրկեանն ալ բաժնուեցաւ 60 երկվայրկեանի . իսկ երկվայրկեանը կը բաժնուի 100 մասերու :

Ոմանք օրուան սկիզբ նկատած են արեւին ծագումը , ոմանք կէս օրը , ոմանք արեւին մարը մտնելը , եւ ոմանք ալ կէս գիշերը . ամէնէն ընդհանուրը եղած էր արեւին մուտքը նկատել իրր օրուան սկզբնաւորութիւնն : Հիմա եւրոպական ազգերու մէջ բուն օրը կը սկսի կէս գիշերին : Այս վերջին սովորութիւնը արեւելքի մէջ ալ ընդունուած է եւ այնպէս սկըսուած է նկատուիլ եկեղեցական արարողութեանց մէջ ալ , թէպէտ եկեղեցական օրը արեւուն մարը մտնելէն կը սկսէր : Իսկ կիրամուտքն ու նախատօնակը իրր կիրակիի կամ տօնի նախապատրաստութիւն նկատուած են :

ԱՄԻՍ ԵՒ ԻՐ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ . — Ինչպէս արեւը կը ճշդէ օրուան չափը , նոյնպէս լուսինը կը ճշդէ ամսուան չափը : Լուսինը՝ մօտաւորապէս $29\frac{1}{2}$ օրուան մէջ կանոնաւոր շրջան մը կ'ընէ երկրին շուրջը , ուստի սովորական նկատուեցաւ ամիսը երեսուն օր հաշուել : Ամիսը բաժնուեցաւ չորս քառորդի , որոնք մօտաւորապէս հիմ կազմեցին Եօրնեակի , որ կը կոչուի նաեւ Շաքար : Այդ անունը կապուած է Ս . Գրքին եւ

Արարչագործութեան պատմութեան հետ, եւ եօթնեակին վերջին օրը կոչուած է Շաբաթ, որ կը նշանակէ երբայեցերէն հանգիստ: Շաբաթ օրը հիմ բռնուելով, յաջորդ օրերը կոչուեցան Միաշաբաթ (որ Քրիստոնէութենէ ետքը կոչուեցաւ Կիրակի), Երկուշաբթի, Երեքշաբթի, Չորեքշաբթի, Հինգշաբթի. իսկ Շաբաթին նախընթաց օրը կոչուեցաւ Ուրբաթ:

ՏԱՐԻ. — Ժամ, օր, եօթնեակ, ամիս՝ ժամանակի մանր չափեր են. հարկ էր աւելի մեծ չափ մը սահմանել, Դիտուեցաւ որ բնութիւնը որոշ ժամանակամիջոցներու մէջ պարբերական փոփոխութիւններ կը կրէ. ծառերն ու տունկերը կը կանանչնան, կը ծաղկին, կը պտղաբերին, եւ կը չորնան. օդը կը տաքնայ եւ կը ցրտանայ: Այս գիտողութիւնները եւ երկնքի զննութիւնը ցոյց տուին թէ որոշեալ ժամանակի մը մէջ նոյն երեւոյթներն են որ կը կրկնուին. այսպէս, կազմուեցաւ աստղաբաշխական Տարին որ հողագնդին արեւին շուրջ կատարած շրջանն է, զոր հիները արեւին հողագնդին շուրջը կատարած շրջանը կը կարծէին, ինչպէս Ամիսը՝ լուսնին հողագնդին շուրջը կատարած շրջանն է եւ Օրը՝ երկրին իր առանցքին վրայ կատարած շրջանը: Աստղաբաշխները հաշուած են թէ երկիրը արեւին շուրջը շրջան մը կ'ընէ 365 օրուան, 5 ժամուան, 48 վայրկեանի, 47 երկվայրկեանի եւ 33 եռվայրկեանի մէջ:

Չ Ա Ն Ա Չ Ա Ն Տ Ո Մ Ա Ր Ն Ե Ր

Տարբեր ժամանակներու եւ տարբեր երկիրներու մէջ ընդունուած են այլ եւ այլ տոմարական գրութիւններ՝ որոնցմէ կարեւորները ամփոփ կերպով կը ներկայացնենք հոս:

ՅՈՒՂԵԱՆ ՏՈՄԱՐ. — Հռոմուլոսի ժամանակ (754 Ն. Ք.) տարին 10 ամիսէ կը բաղկանար եւ 304 օրէ: Առաջին ամիսն էր Մարտ՝ որուն կը յաջորդէին Ապրիլ, Մայիս, Յունիս, Կուիկտիլիս, Սեփտիլիս, Սեպտեմբեր, Հոկտեմբեր, Նոյեմ-

քեր, Դեկտեմբեր: Նուսա Պոմպիլիոս (716 Ն. Ք.) երկու ամիս աւելցուց տարւոյն վրայ՝ Յունուար եւ Փետրուար ամիսները, տարին վերածելով 355 օրուան: Պակաս օրերը լրացնելու համար, յատուկ յաւելուածական ամիս մը կը կցուէր:

Յուլիոս Կեսար, ուրիշ գիտուններու խորհրդակցութեամբ ընդունեցաւ տարին 365¹/₄ օր հաշուելու սկզբունքը: Այս սկըզբունքով, տարին պիտի ունենար 365 օր, եւ ամէն չորս տարին անգամ մը 366 օր, աւելցած չորս քառորդ օրերու բարդումով: Այս տարիները կոչուեցան Նասիանց:

Յուլիոս չփոփոխեց Նուսայի 12 ամիսներուն շարքն ու անունները. միայն կարգ մը ամիսներու վրայ յաւելումներ ըրաւ, որով Յունուար, Մարտ, Մայիս, Կուինտիլիս (զոր ինք Յուլիսի փոխեց իր անունով), Սէքստիլիս (զոր իր յաջորդը՝ Օգոստոս կայսր, Օգոստոսի փոխեց), Հոկտեմբեր եւ Դեկտեմբեր ունեցան 31ական օր. Ապրիլ, Յունիս, Սեպտեմբեր, Նոյեմբեր 30ական օր. իսկ Փետրուար 28 օր սովորական տարիներու եւ 29 օր նահանջ տարիներու մէջ: Յուլիական տոմարը որ գործադրութեան գրուիլ սկսաւ Քրիստոսէ 45 տարի առաջ, շատ ընդհանրացաւ իր գիւրըմբռնելի եւ կանոնաւոր ընթացքին համար: Այդ տոմարը մինչեւ հիմա կը գործածուի Հայոց, Յունաց, Ռուսաց եւ ուրիշ արեւելեան ժողովուրդներու մէջ: Նոյնպէս Օսմանեան կառավարութիւնը նոյն գրութիւնը ընդունած է դարուս առաջին կէսին մէջ իր ելմտական տարւոյն համար:

ԳՐԻԳՈՐԵԱՆ ՏՈՄԱՐ. — Յուլեան տոմարը, չորս տարին անգամ մը նահանջ տարի մը ընդունելով, աստղաբաշխական հաշիւներուն բոլորովին համաձայն չէր ընթանար, այնպէս որ ժՁ դարուն վերջերը, աստղաբաշխական տարւոյն եւ Յուլեան տոմարի տարւոյն միջեւ տասը օրուան տարբերութիւն մը գոյացած էր: Զանազան գիտնականներու առաջարկութեամբ Գրիգոր ժԳ. Պապը որոշեց 1582 Հոկտեմբերին սկիզբը, Հոկտեմբեր 4ին վրայ 10 օր աւելցնել, եւ Հոկտեմբեր 5ը եղաւ Հոկտեմբեր 15:

Ըստ Գրիգորեան տոմարին, դարազուտի տարիները չորս

տարին անգամ մը միայն նահանջ են եւ երեք տարի յաջորդաբար նահանջ չեն, մինչդեռ Յուլեան տոմարը առանց բացառութեան ամէն չորս տարին անգամ մը նահանջ կը նկատէ: Գրիգորեան տոմարին համաձայն, 1600ը նահանջ էր, 1700ը, 1800ը, 1900ը նահանջ չեն եւ 2000ը դարձեալ նահանջ պիտի ըլլայ, եւ այսպէս յաջորդաբար նահանջ պիտի ըլլան դարագլուխի այն տարիները միայն որոնք 4ով բաժանական են: Յուլեան տոմարին եւ Գրիգորեան տոմարին միջեւ եղած տարբերութիւնը 1582 էն 1700 տասը օր մնաց, 1700 էն 1800՝ տասներմէկ օր եղաւ, 1800 էն 1900 տասերկու օր, իսկ 1900էն 2100՝ տասերեք օր պիտի ըլլայ, որովհետեւ 2000 տարին նահանջ է, ինչպէս ըսինք, երկու տոմարներուն հաշուով ալ:

Յառաջիկայ 1900 Մարտ մէկին Գրիգորեան տոմարը ցոյց պիտի աւայ Մարտ 14, որովհետեւ այս վերջին տոմարին համեմատ, յառաջիկայ տարին նահանջ չէ եւ Փետրուարը պիտի հաշուուի 28 օր, մինչդեռ ըստ Յուլիական տոմարի նահանջ է եւ Փետրուարը պիտի ունենայ 29 օր:

Գրիգորեան տոմարը ընդունեցան 1582ին Իտալիա, Ֆրանսա, Սպանիա եւ Պելճիզա, 1584ին Աւստրիոյ եւ Գերմանիոյ հռոմէադաւան դաւառները, 1700ին Բրուսիա եւ Հոլանտա. իսկ Անգլիա 1752ին միայն:

ՀՐԷԱԿԱՆ ՏՈՄԱՐ. — Հրէական տոմարը լուսնին եւ արեւին շրջաններուն վրայ կարգադրուած է: Տարին բաժնուած է լուսնային ամիսներու՝ 29 կամ 30 օրերով: Սովորական կանոնաւոր տարին կը բաղկանայ 12 ամիսէ, այսինքն ունի 354 օր կամ օր մը աւելի կամ օր մը պակաս: Նահանջ տարիները ունին մէկ աւելեաց ամիս եւ կը բաղկանան 13 ամիսէ, այսինքն 384 օրէ, կամ օր մը աւելի կամ օր մը պակաս: Տարիները կը յաջորդեն իրարու անա՛նկ կարգով մը որ 19 տարուան շրջանէ մը ետքը հրէական տարին արեգակնային տարուոյն միեւնոյն կէտին վրայ կը գտնուի:

ԱՐԱԲԱԿԱՆ ՏՈՄԱՐ. — Արաբական տոմարին հիմն է լուսնային տարին՝ որ բաղկացած է հետեւեալ 12 ամիսներէն.

Մուհարրէմ	30 օր	Բէճէպ	30 օր
Սէֆէր	29 »	Շապան	29 »
Բէպի իւլ էվլէլ	30 »	Բամազան	30 »
» » ախրր	29 »	Շէվլալ	29 »
Ճէմազի իւլ էվլէլ	30 »	Զիլգատէ	30 »
» » ախրր	29 »	Զիլհիճճէ	29 »

Արարական տարին երբեմն 354 օր ունի եւ երբեմն 355 օրէ կը բաղկանայ : Արարացիք ունեցած են նաեւ արեգակնային տարւոյ հաշիւ մը եւ տարին բաժնուած է երկու մասերու՝ որոնք Գասըմ եւ Խըսրէշէկզ կը կոչուին : Գասըմը միշտ Հոկտեմբեր 26ին կը հանդիպի (Յուլեան տոմար) եւ կը տեւէ 179 օր, իսկ նահանջ տարիները 180 օր : Խըսրէշէկզը Ապրիլ 23ին կը հանդիպի եւ կը տեւէ 186 օր :

50—60 տարի առաջ, Օսմանեան կայսրութեան մէջ ընդունուած է նաեւ, միայն ելմտական գործառնութեանց համար, արեգակնային տարին՝ Յուլեան Տոմարին համաձայն : Տարբերութիւնը սա է միայն, որ տարին՝ փոխանակ Յունուարէն սկսելու, Մարտէն կը սկսի :

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՒ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՏՈՄԱՐ. — Եգիպտական տոմարը կը հաշուուէր 365 օր : Պարսկական տոմարն ալ կ'ընդունէր Եգիպտականին պէս 365 օր, այսինքն 30 օրէ բաղկացած 12 ամիս եւ 5 « աւելեաց » օրեր : այս վերջինը Զրադաշտական կոչուած թուականն էր, որ սկսած է Քրիստոսէ 400 տարի առաջ եւ շարունակուած է մինչեւ 651 (Յ. Ք.), որ է Արարական տոմարին Պարսից մէջ հաստատուելու տարին : Զրադաշտի տոմարը կը գործածուի դեռ հնդկարնակ Փարսիներու մէջ :

ՀԱՅՈՑ ՏՈՄԱՐ. — Հին հայ տոմարն ալ արեգակնային եղած է, 12 երեսնօրեայ ամիսներով, եւ հինգ աւելեաց օրերով՝ եգիպտականին եւ պարսկականին պէս : Ըստ այդ տոմարին, 1460 տարին մէկ շրջան կը հաշուուէր եւ շրջանին վերջը 1461րդ շրջանն սարի մը աւելցուելով, տարեկան քառօրդ օրուան սխալը կ'ուղղուէր : Այդ 12 ամիսներն էին :

Նաւասարդ	30 օր	Մեհեկան	30 օր
Հոռի	30 »	Արեգ	30 »
Սահմի	30 »	Ահեկան	30 »
Տրէ	30 »	Մարերի	30 »
Քաղոց	30 »	Մարգաց	30 »
Արաց	30 »	Հրոտից	30 »
Աւելեաց		5 օր	

Քրիստոսի 552 թուին, Հայոց համար նոր տոմարական ուղղութեամբ թուական մը սկսաւ, զատկական Հինգհարիւրեակի հաստատութեամբ: Նոյն թուականի կաթողիկոսն էր Ներսէս Բարգրեւանդացին, բայց որովհետեւ Մովսէս կաթողիկոս Եղիվարդեցին եղաւ այդ տոմարական հաշիւը գործարողը՝ 574ին, անոր համար Մովսէսի անունով կոչուած է նորոգութիւնն ալ, թուականն ալ:

Հայոց այդ տոմարական թուականը 551 տարուան տարբերութիւն ունի Քրիստոսի թուականէն, այնպէս որ Քրիստոսի ո՛ր եւ է մէկ թուականին համապատասխանող Հայոց տոմարական թուականը գտնելու համար պէտք է զեղչել անկէ 551 թիւը:

Մովսէս կաթողիկոսի այս տոմարական նորոգութենէն Հինգհարիւրեակ մը, այսինքն 532 տարի ետքը՝ 1084ին՝ Յովհաննէս Վարդապետ Սարկաւազ երկրորդ նորոգութիւն մը կ'ընէ հայ տոմարին, եւ կ'ընդունի նահանջի գրութիւնը, չորս տարին անգամ մը փոխանակ հինգի՝ վեց աւելեաց օրեր սահմանելով: Այս գրութիւնը կոչուեցաւ Սարկաւազադիւր տոմար:

Երրորդ նորոգութիւն մը եղած է 1616ին, Սարկաւազադիւր տոմարէն 532 տարի ետքը՝ Զուղայի մէջ, բայց ընդհանրացած չէ: Այդ թուականը կոչուեցաւ Ազարիայի քուակաւն:

Շրջանի զուլս տարւոյ Նաւասարդի առաջին օրը կը գուգադիպի Յուլեան տոմարի Օգոստոս 11ին:

ՔՐԻՍՏՈՍԻ ԹՈՒԱԿԱՆ. — Քրիստոնեայ ազգերու ընդունած միջազգային թուականն է Քրիստոսի թուականը, որուն 1900րդ տարին կը թեւակոխենք: Այդ թուականին առաջին տարին կը

համարուէր Քրիստոսի ծննդեան տարին . Դիոնիսիոս Սկիւթացին Զ. դարուն մէջ ճշգրտած է զայն՝ Քրիստոսի 1 թուականը Հռոմի հաստատութեան 754րդ տարին ենթադրելով . սակայն յետագայ ժամանակագիրները հաստատեցին թէ Քրիստոս ծնած պէտք է ըլլայ կամ Հռոմի 750 տարւոյ Յունվար 6ին , կամ , ըստ ուրիշներու , 749 տարւոյ Դեկտեմբեր 25ին : Այս կերպով , պէտք է ըսել թէ Քրիստոսի թուականը հաշուուած է Քրիստոսի ծնունդէն չորս տարի ետքը սկսելով :



ՏՈՄԱՐԱԿԱՆ ՀԱՇԻՒՆԵՐ

Տումարական հաշիւներուն գլխաւոր տարրերը կը կազմեն ԻՃՆԵԼՏԱՍՆԵՐԵԿԻԿԸ , ՎԵՐԱՊԻՐԸ , ՍՕՐՆԵՐԵԿԻԿԸ , ՏԱՐԵԳԻՐԸ :

ԻՆՆԵԼՏԱՍՆԵՐԵԿԻԿ . — Իննեւտասներեակը առաջին տարրն է որ կը ծառայէ տումարական գործողութեանց : Լուսնային տարւոյն սկզբնաւորութիւնը 19 տարին անգամ մը արեգակնային տարւոյն սկզբնաւորութեան կը զուգագիպի : Այս 19 տարուան շրջանը՝ զոր , կ'ըսեն թէ , Չինացիները 3000 տարիէ ի վեր գրտած էին արդէն , գիտուեցաւ նաեւ Մեթոն ավեմնացի աստղաբաշխէն՝ Քրիստոսէ 432 տարի առաջ : Այս գիտունը հաստատեց թէ 19 տարի անցնելէ ետքը , նոր լուսինները արեգակնային տարւոյն միեւնոյն օրերը կը հանդիպին , եւ երբ լուսինը իր 235րդ շրջանը կ'աւարտէ , արեւն ալ կ'աւարտէ 19 շրջան : Մեթոնի գիւտը իր ժամանակին մեծ ազմուկ հանեց եւ Իննեւտասներեակին թիւերը Աթենասայ տաճարին վրայ գրոշմուեցան ոսկեղէն տառերով . ատկէ կը մնայ Ոսկեթիւ անունը՝ զոր ստացած է Իննեւտասներեակը :

Մեր տումարական շրջանը այնպէ՛ս կ'ենթադրէ որ Քրիստոսի թուականին առաջին տարին Իննեւտասներեակի մը 19րդ կամ վերջին տարին եղած է , եւ Քրիստոսի երկրորդ տարիէն կը սկսի Իննեւտասներեակի նոր շրջան մը : Ուստի , հարկ է

Քրիստոսի ո՛ր եւ է թուականէն 1 հանել, յետոյ 19ի բաժնել, լրացեալ բոլոր տասնըինը տարուան շրջանները ջնջել, եւ մնացորդը կը ցուցնէ թէ նոր սկսած շրջանին քանի՛երորդ տարին է՝ կամ ուրիշ բառերով, թէ Խննեւտասներեակը ի՛նչ է՝ Օրինակ. — $1900 - 1 = 1899 : 19 = 99$ եւ կ'աւելնայ 18՝ որ այս տարւոյ Խննեւտասներեակն է: Եթէ բաժանումին մընացորդը ըլլայ 0, Խննեւտասներեակը կ'ըլլայ 19:

ՎԵՐԱԴԻՐ. — Վերադիր կը կոչուին տարւոյ մը վերջին լուսնին սկզբնաւորութեան եւ հետեւեալ տարւոյն Յունուար 1ին միջեւ գտնուած օրերը. այսպէս, 1900 տարւոյ Վերադիրն է 9, ինչ որ կը նշանակէ թէ 1900 տարւոյ Յունուար 1ը կը զուգադիպի լուսնային ամսուն իններորդ օրուան: Վերադիրներու տարբերութեան հիմն է 11 օրը, արեգակնային տարին 365 եւ լուսնային տարին 354 օր հաշուելով: Երբ երկու շրջաններ ի միասին սկսին, արեգակնային տարւոյն վերջը 11 օրուան նոր լուսին մը կը մնայ անաւարտ:

Վերադիրները 19 հատ են եւ այդ տարիներու շրջանին վերջանալուն կը կրկնուին: Ըստ մեր տոմարին, Քրիստոսի 2 թուականը Վերադիրներու շրջանին գլուխը նկատուած է: Վերադիրներու ցուցակն է հետեւեալը.

1/ 2	2/ 13	3/ 24	4/ 5	5/ 16
6/ 27	7/ 8	8/ 19	9/ 30	10/ 11
11/ 22	12/ 3	13/ 14	14/ 25	15/ 6
16/ 17	17/ 28	18/ 9	19/ 21	—

Ո՛ր եւ է տարւոյ Վերադիրը գտնելու համար պէտք է նախ գտնել Խննեւտասներեակը եւ Վերադիրներու շրջանին մէջ նախիկ շրջանին թիւին պատասխանող Վերադիրը. այսպէս, 1900

տարւոյ իննեւտասներեակն է 18. ցուցակին մէջ 18րդ վերադիրն է 9. ուրեմն 1900 տարւոյ վերադիրն է 9.

ԵՕԹՆԵՐԵԱԿԻ. — Եօթներեակի նպատակն է եօթնեակի օրերը համրել, որոշել կամ գտնել. արեգակնային շրջան կը կոչուի 28 տարուան շրջան մը, որմէ ետքը տարին կը սկսի շաբթուան ճիշդ այն օրը՝ ուր 28 տարի առաջ սկսած էր. Յուլեան դրութեան սովորական տարին 365 եւ նահանջը 366 օր հաշուելով, դիտելի է թէ սովորական տարիներու մէջ կը մաննն 52 եօթնեակ, եւ մէկ օր կ'աւելնայ. նահանջ տարիներուն մէջ կը մաննն 52 եօթնեակ եւ երկու օր կ'աւելնայ. եւ այսպէս, սովորական տարիները կը վերջանան ա՛յն օրով որով կը սկսին եւ նահանջ տարիները կը վերջանան իրենց սկսած օրուան հետեւեալ օրով: Եթէ միշտ մէկ օր ըլլար տարբերութիւնը, եօթը տարիէն շրջանը պիտի նորոգուէր. բայց քանի որ չորս տարին անգամ մը օրուան մը յաւելում կայ, հետեւաբար եօթը անգամ չորս տարի, այսինքն 28 տարի անցնելու է որ շրջանը լրանայ:

Քսանրութը Եօթներեակներուն աղիւսակն է հետեւեալը.

1/ Ա	2/ Բ	3/ Գ	4/ ԴԵ
5/ Զ	6/ Է	7/ Ա	8/ ԲԳ
9/ Դ	10/ Ե	11/ Զ	12/ ԷԱ
13/ Բ	14/ Գ	15/ Դ	16/ ԵԶ
17/ Է	18/ Ա	19/ Բ	20/ ԳԴ
21/ Ե	22/ Զ	23/ Է	24/ ԱԲ
25/ Գ	26/ Դ	27/ Ե	28/ ԶԷ

Շրջանի գլուխ առնուած է Ա թուագիրը որ նոյն տարւոյ
Եօթներեակն է , այսինքն կը ներկայացնէ նոյն տարւոյ բոլոր
կիրակիները . երկրորդ տարին Եօթներեակն է Բ որ կը ներկա-
յացնէ այդ տարւոյն բոլոր կիրակիները . երրորդ տարինն է Գ .
չորրորդ տարին որ նահանջ կ'ըլլայ , ունի երկու Եօթներեակ՝
Գ եւ Ե , որովհետեւ նահանջ տարւոյն մէջ Յունուար եւ Փետ-
րուար ամիսներուն կիրակին Գ Եօթներեակով , իսկ Մարտէն
սկսեալ բոլոր կիրակիները Ե Եօթներեակով կը վարին . Հե-
տեւեալ տարին Եօթներեակն է Զ , եւ յաջորդաբար շորս տա-
րին անգամ մը կրկին Եօթներեակ գործածուելով կը հասնինք
28րդ (Զ է) Եօթներեակին՝ որմէ ետքը նորէն կը սկսի Եօթ-
ներեակներու նոր շրջան մը .

Ո՛ր եւ է տարւոյ Եօթներեակը գտնելու համար ա՛ն Քրիս-
տոսի թուականը , աւելցո՛ւր 4 , բաժնէ 28ով . մնացորդը ի՛նչ
թիւ ալ որ ըլլայ , վերոյիշեալ Եօթներեակներու Յուլյակին մէջ
այդ թիւին քով նշանակուած թուագիրը նոյն տարւոյն Եօթ-
ներեակն է .

Օրինակներ . — $1870 + 4 = 1874 : 28 = 66$, եւ մնացորդն է
26 . աղիւսակին 26րդ թուագիրն է Գ՝ որ է 1870 տարւոյ Եօթ-
ներեակը .

$1900 + 4 = 1904 : 28 = 67$, եւ մնացորդն է 0 կամ 28 . ա-
ղիւսակին 28րդ թուագիրն է Զ է , որ է 1900 տարւոյ Եօթ-
ներեակը .

Դիտելու է որ ըստ մեր տոմարին , Ա Եօթներեակ ունե-
ցող տարիներուն առաջին օրը կ'ըլլայ միշտ Երկուշաբթի , Բ
Եօթներեակ ունեցողներուն՝ Երեքշաբթի , Գ Եօթներեակ ու-
նեցողներուն՝ Չորեքշաբթի , Դ Եօթներեակ ունեցողներուն՝
Հինգշաբթի , Ե Եօթներեակ ունեցողներուն՝ Ուրբաթ , Զ Եօթ-
ներեակ ունեցողներուն՝ Շաբաթ եւ է Եօթներեակ ունեցող-
ներուն՝ Կիրակի .

ԿԻՎՆԱԿ . — Կրկնակը կը ծառայէ որ եւ իցէ տարւոյ որ եւ
է ամսաթիւին օրը գտնելու . Ամէն ամիս կը պարունակէ
չորս Եօթնեակ եւ քանի մը օր կ'աւելնայ . այդ աւելցած օրե-

որը միւս ամսուան Կրկնակը կը կազմեն, Կրկնակները փոփոխական են ամսէ ամիս, ինչպէս կ'երեւայ հետեւեալ ցուցակէն .

Ամիս	Կրկնակ	Ամսաթիւ	Եօթնեակ	Եօթնեակներու օրեր	Մնացորդ
Յունուար	0	31	4	28	3
Փետրուար	3	28	4	28	3
Մարտ	3	31	4	28	6
Ապրիլ	6	30	5	35	1
Մայիս	1	31	4	28	4
Յունիս	4	30	4	28	6
Յուլիս	6	31	5	35	2
Օգոստոս	2	31	4	28	5
Սեպտեմբեր	5	30	5	35	0
Հոկտեմբեր	0	31	4	28	3
Նոյեմբեր	3	30	4	28	5
Դեկտեմբեր	5	31	5	35	1

Ո եւ է տարւոյ մը մէկ ամսաթիւին եօթնեակին ո՛ր օրը պատահիլը գտնելու համար ա՛ն նոյն տարւոյն Եօթներեակը, ուզուած ամիսին Կրկնակը, ուզուած Ամսաթիւը, եւ գումարէ՛ . արդիւնքէն զեղչէ՛ 7երը . մնացորդը եօթնեակին օրը կը ցուցնէ . Այսպէս, եթէ ուզենք հասկնալ թէ 1899ի Յունիս 3ը շարժուն ո՛ր օրուան հանդիպած է, կ'առնենք 5 (Ե) թիւը, որ 1899ի Եօթներեակն է, կ'աւելցնենք Յունիսի Կրկնակը՝ որ է 4, Ամսաթիւը՝ որ է 3, գումար 12 . կը զեղչենք 7, կը մընայ 5՝ որ կը նշանակէ Հինգշաբթի . Եթէ մնացորդը ըլլար 6՝ պիտի նշանակէր Ուրբաթ, 0՝ Շաբաթ, 1՝ Կիրակի, 2՝ Երկուշաբթի, 3՝ Երեքշաբթի, 4՝ Չորեքշաբթի . Այս կանոնը կը յար-

մարի նաև նահանջ տարիներուն, միայն թէ այդ տարիներուն մէջ Մարտ 1էն սկսեալ Եօթներեակի երկրորդ տառը պէտք է առնել :

Օրինակ . — 1884 Յունիս 3ը ինչ օր ըսալը գտնելու համար կ'առնենք Ա, որովհետև 1884ի Եօթներեակին է Է Ա, կ'աւելցնենք Յունիսի Կրկնակը՝ որ է 4, Անսարիւր՝ որ է 3, եւ կ'առնենանք 8 . կը զեղչենք 7, կը մնայ 1, այսինքն կիրակի :

ՁԱՏԿԱԿԱՆ ՀԱՇԻԻ . — Ձատկի օրը կը հանդիպի, ըստ Յուլեան Տոմարին, գարնան գիշերահաւասարին կամ գիշերահաւասարէն ետքի լուսնի լրման յաջորդող կիրակիին . ըստ այս հաշուոյն, Մարտ 21ին գիշերահաւասար կը նկատուի, ինչպէս էր նիկիոյ ժողովին գումարման տարին : Այսպէս, Ձատիկը կրնայ պատահիլ Մարտ 22էն մինչեւ Ապրիլ 25 :

ՏԱՐԵԳԻՐ . — Ձատկի օրուան այս զանազան փոփոխութիւնները ամփոփ կերպով ցոյց տալու համար, հարկ եղած դիւրութիւնները կ'ընձեռէ Տարեգիրը : Մարտ 22էն մինչեւ Ապրիլ 25, 35 տարբեր օրերու կրնայ հանդիպիլ Ձատիկը, եւ Մարտ 22էն սկսեալ մինչեւ ապրիլ 25, այբուբենի առաջին 35 տառերը կարգով ցոյց կու տան Ձատկի օրերը : Այսպէս, Ա տարեգիրը ցոյց կու տայ Մարտ 22ի Ձատիկը, Բ ը՛ Մարտ 23ի Ձատիկը, Գ ը՛ Մարտ 24ի Ձատիկը, այսպէս յաջորդաբար մինչեւ Փ որ այբուբենի 35րդ տառն է, եւ ցոյց կու տայ Ապրիլ 25ի Ձատիկը :

Տարեգիրը կը դորձածուի Տօնացոյցի ցանկերուն մէջ Ձատկի օրը ցոյց տալու համար :

ՀԻՆԳՀԱՐԻԻՐԵԱԿ . — 532 տարին անգամ մը Ձատկի օրերու, այսինքն Տարեգիրներու շրջանը կը նորոգուի . ուրիշ խօսքով, 532 տարին անգամ մը, Ձատկի օրերը կը սկսին նոյն կարգով յաջորդել իրարու . ասոր պատճառն է իննեւտասներեակի 19 եւ Եօթներեակի 28 շրջաններուն զանազան հանդիպումները . 19 բազմապատկելով 28ի հետ, կ'առնենանք արդարեւ 532 : Մեր Տօնացոյցին համեմատ, 552 թուականին սկսաւ ա-

առջին Հինգհարիւրեակը . երկրորդը սկսաւ 532 տարի ետքը ,
այսինքն 1084ին , առիթ տալով « Սարկաւապագիր » տումարին .
երրորդը 1616ին , առիթ տալով Ազարիայի կամ « Նոր Զուգա-
յի » տումարին . չորրորդը պիտի սկսի 2148ին :

ՊԱՐԶԱՏՈՄԱՐ . — 1774ին , Սիմէոն Կաթողիկոս ձեռնար-
կեց հաստատուն Տօնացոյց մը կազմել , որուն տպագրութիւնը
աւարտեցաւ 1775 Ապրիլ 7ին , եւ գործադրութեան դրուեցաւ
1777ին : Սիմէոն Կաթողիկոս , հիմնուելով Տարեգիրներու դրու-
թեան վրայ , աշխատեցաւ ըստ իւրաքանչիւր Տարեգրի բոլոր
տարեկան տօները կարգադրել . պատրաստեց Հինգհարիւրեակի
ամբողջական ցուցակն ալ , որով ունեցանք մշտնջենական Օ-
րացոյց մը : Իր Տօնացոյցը՝ որուն մէջ փոփոխած էր մինչեւ
նոյն ատեն գործածուած Տօնացոյցին ինչ ինչ կէտերը , շնորհու-
նուեցաւ Կաղզուանցի Զաքարիա Կ. Պոլսոյ Պատրիարքին կող-
մէ , բայց Դանիէլ Պատրիարք 1799ին յաջորդելով Զաքարիա
Պատրիարքին , հրամայեց անոր գործադրութիւնը :

ԶԱՅՆԻԻՏ . — Սիմէոն Կաթողիկոս իր Տօնացոյցին մէջ
նկատողութեան առած է նաեւ Զայնգիւտը , Զայնը Հայ . Եկե-
ղեցւոյ յատուկ կարգադրութիւն մըն է , եւ եկեղեցական ասաց-
ուածքներու շարքը եւ երգեցողութեան եզանակը կը կանո-
նաւորէ : Զայն ըսուածները ութը հատ են եւ երկու կարգի կը
բաժնուին . Զայն եւ Կողմ : Ասոնք են . ԱԶ (առաջին ձայն) ,
ԱԿ (առաջին կողմ) . ԲԶ (երկրորդ ձայն) , ԲԿ (աւագ կողմ) ,
ԳԶ (երրորդ ձայն) , ԳԿ (վառ ձայն) , ԴԶ (չորրորդ ձայն) , ԴԿ
(վերջ ձայն) : Այս ութը ձայները իրարու կը յաջորդեն եօթ-
նեակներու պէս , սա տարբերութեամբ որ տարուէ տարի շրջ-
թայաչար չեն շարունակուիր , այլ իւրաքանչիւր տարի նորէն կը
սկսին Բուն Բարեկենդանի օրը եւ կը յաջորդեն իրարու կանո-
նաւորապէս մինչեւ յաջորդ տարւոյն Բուն Բարեկենդանը : Զայ-
ները երկու զասերու (*) վրայ կը քալեն փոփոխակի , եւ հետե-

(*) Դաս կը նշանակէ հոս եկեղեցւոյ պաշտօնէութեան կէս առ կէս
երկու խումբի բաժանումը , որոնք փոխն ի փոխ կը կատարեն ամէն եր-
գեցողութիւնները եւ աղօթքները :

ւարար, բոլոր ձայնները՝ աձ, բձ, գձ, դձ մէկ դասին եւ բո-
լոր կողմերը՝ ակ, բկ, գկ, դկ միւս դասին կ'իյնան: Այլ որպէս
զի մշտատեւ նոյն շման, իւրաքանչիւր Բուն Բարեկենդանին՝
դասերն ալ կը փոփոխուին, այնպէս որ մէկ տարի ձայնները
ունեցող դասը, միւս տարի կողմերը ունենայ: Երբ Քրիստոսի
Թուականը զոյգ թիւ է ձայները աջակողմեան դասուն են, իսկ
երբ թուականը անզոյգ թիւ է ձայները ձախակողմեան դասուն
են: Աջակողմեան դասը եկեղեցւոյ հիւսիսակողմն է, իբր թէ
աւագ սեղանը անձ մը ըլլար եւ ժողովրդեան դարձած կենար: 1900
տարւոյ Բուն Բարեկենդանէն սկսելով ձայները աջակող-
մեան դասին պիտի անցնին, մինչ 1900ի կազանդին ձախակող-
մեան դասին էին:

Իւրաքանչիւր տարւոյ օրերուն ձայները դանելու համար
ցուցակ մը կայ համանման Եօթներեակի ցուցակին, այն գըլ-
խաւոր տարբերութեամբ, որ Չայնգիւար ոչ թէ Յունվար 1է
այլ Բուն Բարեկենդանի օրէն կը սկսի դորձածուիլ եւ կը տեւէ
մինչեւ միւս Բուն Բարեկենդանը, 365 օրերէ նուազ կամ ա-
ւելի ժամանակով, ըստ որում Բուն Բարեկենդանը աւելի
կանուխ կամ ուշ կու գայ նախընթաց տարւոյ համեմատու-
թեամբ:

ՀԱՅ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՏՕՆԱՑՈՅՑԸ

Հայ. Եկեղեցւոյ մէջ արեգակնային ամսաթուով կատար-
ուած տօները սակաւաթիւ ըլլալով, ընդ ամէնը տասներչորս օր
կը հանդիպին եւ հետեւեալներն են.

Յունիվ. 5. — Ճրագալոյց Մննդեան կամ Աստուածայայտ-
նութեան.

» 6. — Մնունդ կամ Աստուածայայտնութիւն.

» 7-13. — Աստուածայայտնութեան հետեւող եօթը
օրերը.

Փետր. 14. — Տեառնընդառաջ.

Ապրիլ	7.	—	Աւետու մ Ս.	Աստուածածնի .
Սեպտ.	8.	—	Ծնունդ	»
Նոյեմ.	21.	—	Ընծայում	»
Դեկտ.	9.	—	Յղութիւն	»

ԵՅԹՆԵԱԿԻ ԴՐՈՒԹԻՒՆ. — Վերոյիշեալ օրերէն զատ տարւոյն մնացեալ բոլոր օրերը եօթնեակի հաշուով իրարու կը յաջորդեն, Եօթնեակի զրութեան հիմնական սկզբունքին համաձայն ամէն կիրակի օր Յարութեան պատուոյն համար տէրունական (*) է, եւ այդ օրերը սուրբերու յիշատակ չի տօնուի: Ուրբաթ եւ չորեքշաբթի օրերը պահքի եւ ապաշխարութեան օր են, եւ թէեւ այդ օրերը ի հարկին տէրունական տօն մը կը բնայ կատարուիլ, սակայն սուրբերու յիշատակը չի տօնուի: Իսկ երկուշաբթի, երեքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ օրերը սուրբերու յիշատակը կը տօնուի, եթէ չզուգադիպի տէրունի տօնի մը եւ կամ ապաշխարութեան պահքի մը: Այդ սկզբունքին համաձայն բովանդակ տարւոյն մէջ 122 օր միայն սուրբերու յիշատակ կը կատարէ Հայ. Եկեղեցին. եւ այս է պատճառը որ շատ անգամ միեւնոյն օրը շատ մը սուրբերու յիշատակը միասին կը տօնուի:

Հայ. Եկեղեցւոյ մէջ տօնուած սուրբերը ընդհանրապէս մինչեւ Ե. դար կը հասնին, բացառութիւն կը կազմեն սակաւաթիւ ազգային վարդապետներ եւ վկաներ:

ԶԱՏԿԱԿԱՆ ՀԱՇԻՒ. — Ինչպէս բացատրեցինք արդէն, Զատկին օրը փոփոխական է եւ կրնայ հանդիպիլ Մարտ 22 էն մինչեւ Ապրիլ 25:

ԶԱՏԿԻՆ ՀԵՏ ԿԱՊՈՒԱԾ ՄԱՅԵՐ. — Զատկէն եօթը շաբաթ առաջ Բուն Բարեկենդան է. հայ տոմարը այդ եօթը եօթնեակներէն (Մեծ Պահքի միջոց) առաջ կը հաշուէ երեք կիրակի ալ, զոր կը կոչէ Առաջաւորաց Բարեկենդան. այսպէս,

(*) Տէրունական են բոլոր Տնօրինութեանց տօները, Խաչի եւ Եկեղեցւոյ եւ Աստուածածնի տօներ:

Չատկէն գէպ ի ետեւ՝ Չատկին հետ կապուած կ'ըլլան տասը ամբողջ շաբաթներ :

Իսկ Չատկէն ետքը , Չատկին հետ կապուած են եօթը շաբաթներ՝ (Յինանց միջոց) մինչեւ Հոգեգալուստ , եւ անկէ ալ եօթը շաբաթներ եւս՝ մինչեւ Վարդավառ , ընդամէնը տասներջորս շաբաթ : Հետեւաբար , Առաջաւորաց Բարեկենդանէն մինչեւ Վարդավառ ամբողջ 24 եօթնեակներու միջոցը Չատկի փոփոխութեանց հետ ետ եւ առաջ կը քալէ . իսկ ինք իր մէջ անփոփոխ ձեւ մը ունի՝ հաստատուն կերպով իրարու կապուած 168 օրերու շարքով՝ որոնք իրարու կը յաջորդեն առանց ամսաթիւերէն կախում ունենալու : Այս 24 եօթնեակներուն մէջ կ'իյնան կարգ մը տօներ ու յիշատակներ :

ՉԱՏԿԷՆ ԱՆԿԱԽ ՄԱՍԵՐ. — Տարւոյն այն մասը, որ Չատկէն անկախ է , իր մէջ ստորաբաժանումներ ունի քանի մը հաստատուն կէտերու կապուած :

Առաջին կէտը Վերափոխման տօնն է որ կը կատարուի Օգոստոս 15ին կամ անոր մօտ կիրակիին , այնպէս որ Օգոստոս 12էն մինչեւ Օգոստոս 18ի օրերուն մէջ հանդիպող կիրակին Վերափոխման տօնն է :

Երկրորդ կէտը Խաչվերացն է , որ Սեպտեմբեր 14ի մերձաւորացոյն կիրակիին կը տօնուի . այսինքն , Սեպտեմբեր 11էն մինչեւ Սեպտեմբեր 17 հանդիպող կիրակին :

Երրորդ կէտը Յիսնակաց Բարեկենդանն է . այսինքն , Նոյեմբեր 18ին մերձաւոր կամ Նոյեմբեր 15էն մինչեւ 21 հանդիպող կիրակին :

Չորրորդ կէտն է Ծնունդը կամ Աստուածայայանութեան տօնը՝ որ հաստատուն է Յունվար 6ին եւ իր Ութօրէքովը կը հասնի Յունվար 13ին :

Վերափոխումէն մինչեւ Խաչվերաց չորս կամ հինգ եօթնեակ է . Խաչվերացէն Յիսնակ ինը կամ տասը եօթնեակ եւ Յիսնակէն Աստուածայայանութիւն եօթը կամ ութը եօթնեակ : Այս մասն ալ իր մէջ հաստատուն տօներու կարգ մը ունի , որոնք պատահական մանր փոփոխութիւններ կրնան կրել :

ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐՈՒ ՄԻՋԵՒ . — Զատկին կապուած եւ Զատկէն անկախ մասերուն միջեւ գտնուած միջոցը յատկացուած է կարգ մը սուրբերու յիշատակին , սակայն որովհետեւ Առաջաւորաց Բարեկենդանը կրնայ մինչեւ Յունվար 11 ելլել կամ Վարդավառի տօնը մինչեւ Օգոստոս 11 իջնել , երկու մասերը փոխադարձաբար կ'աճին կամ կը նուազին , եւ կը պատահի որ այդ միջոցին յատկացուած սուրբերու յիշատակները կամ Վարդավառէն ետ կամ Առաջաւորացէն առաջ փոխադրուին . այս է պատճառը որ նոյն սուրբերու յիշատակները երբեմն ձմեռը եւ երբեմն ամառը կը կատարուին :

ՏՈՄԱՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ . — Այս բացատրութիւններէն կը հասկցուի թէ Հայ. Եկեղեցւոյ տոմարը պէտք ունի տարուէ տարի կազմուելու եւ կարգադրուելու : Սիմոն Ա. Երեւանցի կաթողիկոս , Տօնացոյցը բարեփոխելով 1774ին , բոլոր տարեգիրներուն համեմատ պէտք եղած փոփոխութիւնները նախապէս կարգադրեց եւ հրատարակեց , ինչ որ կը կազմէ Տօնացոյցին երկրորդ հատորը : Եթէ տարուէ տարի շինուած համաձեւ օրացոյցներ ալ չըլլան , կարելի է Տօնացոյցին միջոցաւ տօներու փոփոխութիւնները ճշդել :

ՕՐԵՐՈՒ ԲԱՇԽՈՒՄ . — Տօնացոյցին մէջ նշանակուած ատէրունի օրերն են հետեւեալները .

Ծննդեան կամ Աստուածայայտնութեան տօնն ու Ճրագալոյցը	0r
Ծնունդ կամ Աստուածայայտնութեան ետքի կիրակիները , միջին հաշուով	9
Առաջաւորաց կիրակիները	3
Մեծ Պահքի կիրակիները	3
Մեծ Պահքի կիրակիները	6
Տեառնընդառաջի եւ Աւետման տօները	2
Աւագ շարաթը՝ Ղազարու յարութենէն	8
Զատիկ , Յինունք եւ Հոգեգալուստ	56
Հոգեգալստեան կիրակիներ	6
Վարդավառի տօն եւ Նաւակատիք	4
» կիրակիներ , միջին հաշուով	3
Վերափոխման տօն եւ Նաւակատիք	10
» կիրակիներ , միջին հաշուով	3
Խաչի տօն եւ Նաւակատիք	8
» կիրակիներ , միջին հաշուով	10
Աստուածածնի ծննդեան , Ընծայման եւ Յղութեան տօներ	3
Յիսնակաց կիրակիներ , միջին հաշուով	6
	140

Տօնացոյցին մէջ նշանակուած տարեկան սուրբերու յիշատակներու օրերն են , միացումները եւ տեղափոխութիւնները նկատի չառնելով .

Աստուածայայտնութենէն ետքը	0r
Առաջաւորաց միջոցին	12
Մեծ Պահքի մէջ	9
Հոգեգալստեան մէջոցին	5
Վարդավառի	20
»	10
Վերափոխման	9
»	33
Խաչի	24
»	
Յիսնակաց	122

Նոյնպէս Տօնացոյցին մէջ նշանակուած տարեկան ապաշխարութեան պահքի օրերն են .

	Օր
Աստուածայայտնութենէն ետքը Դշ. եւ Ուր. միջին հաշուով	6
Առաջաւորաց շարաթապահք	5
» միջոցին Դշ. եւ Ուր.	4
Մեծ Պահքի շարաթապահքեր	30
Հոգեգալստեան միջոցին Դշ. եւ Ուր.	10
Վարդավառի շարաթապահք	5
» միջոցին Դշ. եւ Ուր. միջին հաշուով	6
Վերափոխման շարաթապահք	5
» միջոցին Դշ. եւ Ուր. միջին հաշուով	6
Խաչի շարաթապահք	5
» միջոցին Դշ. եւ Ուր. միջին հաշուով	16
Յիանակաց շարաթապահք	5
» միջոցին Դշ. եւ Ուր. միջին հաշուով	12
Աստուածայայտնութեան շարաթապահք	5
	<hr/>
	120

Թէեւ այս կերպով համագումարը 382 օր կ'ըլլայ, սակայն ասոնցմէ հինգը հաստատուն տօներ են, որոնք միւս օրերուն կը խառնուին, եւ մնացեալ յաւելուածական 12 կամ 11 օրերը փոփոխական միջոցներու մէջ փոփոխակի կը զեղչուին :

ՊԱՀՔԻ ՕՐԷՆՔ. — Իւրաքանչիւր եօթնեակի պահքի օրերն են չորեքշաբթին՝ ի պատիւ Մարդեղութեան, եւ ուրբաթը՝ ի պատիւ Խաչելութեան :

Նախնական սովորութեամբ՝ Զատիկը մինչեւ 50 օր եւ Մնունդը մինչեւ 8 օր տէրունի տօն ըլլալնուն, շարունակեալ ուտիք ալ էին. իսկ միւս տէրունի տօները կիրակիի կը փոխադրուէին, եւ այսպէս՝ տէրունի տօն պահքի օր չէր հանդիպեր, ի բաց առեալ Մեծ Պահքը, երբ տէրունի տօներ աւել-

ցան եւ Հոգեգալուստ , Վերափոխում եւ Խաչվերաց՝ Ութօրէք
ունեցան , եւ Տեառնընդառաջի ու Աւետման տօները Ծնուն-
դէն բաժնուեցան , եւ վերջին ատեններու մէջ Ս. Աստուա-
ծածնի Ծննդեան , Ընծայման եւ Յղութեան տօներ հաստատ-
ուեցան , պահքի խափանման կանոնը այս տէրունիներուն վրայ
չտարածուեցաւ , եւ սկսան պահքով տէրունի տօներ կատարուիլ :
Միւս կողմէ , Մեծ Պահքէ զատ շարաթապահքեր հաստատուե-
ցան եւ Ներսէս Բ. Բագրեւանդացի կաթողիկոսին ժամանակ
Դուինի ժողովը (555 Յ. Ք.) որոշեց իւրաքանչիւր ամիս մէջ
մէկ շարաթ պահք պահել . այդ 12 շարաթներէն երկուքը Մեծ
Պահքի հետ կը խառնուին , եւ Մարտ ու Ապրիլ ամիսներուն կը
յարմարին : Յունուար եւ Փետրուար ամիսներուն կը յար-
մարին Ծնունդի եւ Առաջաւորաց (Ս. Սարգսի) շարաթապահ-
քերը : Իսկ Չատկէ ետքի ութը ամիսներուն շարաթապահքերն
են Նդիական , Ս. Լուսաւորչի , Վարդավառի , Վերափոխման ,
Խաչվերացի , Վարդայ Խաչի , Յիսնակաց եւ Ս. Յակոբի պահ-
քերը :

Տարւոյն մէջ պահեցողութեամբ հանդերձ կատարուած տէ-
րունիները հետեւեալներն են .

		Օր
Մեծ պահքի կիրակիներ	Պահիք	5
Ծաղկազարդ եւ Աւագ Ծարաթ	»	7
Աւագ Ծարաթ օր	Նաւակասիք	1
Համբարձումէն ետքը	Պահիք	3
Հոգեգալստեան շարաթը	»	5
Տապանակի տօն	Նաւակասիք	1
Շողակաթի »	»	1
Վերափոխման իննօրէքին	Պահիք	2
Խաչի նաւակատիքի տօն	Նաւակասիք	1
» եօթնօրէքին	Պահիք	2
Աստուածայայտնութեան պահքի մէջի կի- րակին	»	1
Աստուածայայտնութեան ճրագալոյցը . . .	Նաւակասիք	1
		30

Ասոնցմէ զատ, ըստ պատահման, Տեառնընդառաջին եւ Ս. Աստուածածնի Աւետման, Մոնղեան, Ընծայման եւ Յղութեան տօներն ալ եթէ ԴՂ. կամ Ուր. օր կամ թէ Մեծ Պահքի եւ կամ շարաթապահքի մէջ հանդիպին, պահքը չեն խափաներ:

Իսկ սուրբերու յիշատակին զուգադիպող պահքի օրերն ալ հետեւեալներն են.

	Օր
Մեծ Պահքի շարաթ օրեր	5
Ս. Լուսաւորչի շարաթապահքին	3
Վարագայ Խաչի »	3
Ս. Յակոբայ »	3
Աստուածայայտնութեան պահքի Շք. օրը	1
	<hr/> 15

Այս պահեցողութեան օրերն ալ նախապէս յիշուած 120 օրերուն հետ գումարելով, իւրաքանչիւր տարի 135 օր պահեցողութիւն կը հրամայէ Հայ. Եկեղեցին:

ՀՐԱՄԱՅՈՒԱԾ ՏՕՆԵՐ. — Հին ժամանակներու մէջ աւելի սակաւաթիւ էին տօները, որոնց մէկ մասը նորագոյն ժամանակներու մէջ հաստատուած է: Հիմայ, 52 կիրակիէն զատ հետեւեալ տէրունի օրերը կը տօնուին.

- Ծնունդ կամ Աստուածայայտնութեան տօն. — Յունվար 6.
- » » » » Բ. օր. — Յուլի. 7.
- » » » » Ը. » . — » 13.
- Տեառնընդառաջ. — Փետր. 14.
- Աւետում Ս. Աստուածածնի. — Ապրիլ 7.
- Աւագ Հինգշաբթի. — Մեծ Պահքի. Է. ԵՂ.
- Չատկի Բ. օր. — Յինանց Ա. ԲՂ.
- » Գ. » — » Ա. ԳՂ.
- Համբարձում. — Յինանց Զ. ԵՂ.
- Ս. Լուսաւորչի Գիւտ նշխարաց. — Հոգեգալստեան Գ. Շք.
- Վարդավառի Բ. օր. — Վարդավառի Ա. ԲՂ.

Վերափոխման Բ. օր. — Վերափոխման Ա. Բ₂.

Ծնունդ Ս. Աստուածածնի. — Սեպտ. 8.

Խաչվերացի Բ. օր. — Խաչի Ա. Բ₂.

Ընծայում Ս. Աստուածածնի. — Նոյեմբ. 21.

Յզութիւն » » . — Դեկտ. 9.

Ասոնցմէ զատ կան քանի մը սուրբերու յիշատակներ՝ որոնք կովկասի կողմը իբր հրամայեալ տօն կը պահուին, իսկ Կ. Պոլսոյ կողմը կամաւոր են։ Այդ տօներն են.

Ս. Լուսաւորչի մուան ի վիրապ. — Մեծ Պահքի Ե. Ծր.

» » ելն ի վիրապէ. — Հոգեգալստեան Ա. Ծր.

Ս. Թաղէոս առաքեալ եւ Ս. Սանդուխտ. — Վրդվռի. Ա. Ծր.

Ս. Առաջին Լուսաւորիչը. — Յիսնակաց Ա. Ծր.

Իբր բարեպաշտական տօներ՝ տեղ տեղ կը պահուին հետեւեալներն ալ.

Ս. Վարդանեանք. — Առաջաւորաց Գ. Ե₂.

Ս. Թարգմանիչք. — Հոգեգալստեան Դ. Ե₂.

Ս. Հրեշտակապետք. — Խաչի Ը. Ծր.

Ամենայն Սրբոց. — Խաչի Է. կամ Ժ. Ծր.

Չորս Աւագ տօներ. — Դեկտեմբերի վերջերը.

ՀԱՐՄԵՒԻՒ ՕՐԵՐ. — Եկեղեցական կանոնները կ'արգիլեն հարսնիք ընել բոլոր տարւոյն մէջ հանդիպող տէրունի օրերուն եւ պահքի օրերուն, որով հարսնիք կատարելու համար կը մնան բոլոր սուրբերու տօները, որոնք պահքի չեն զուգադիպիր. Այսպէս, բոլոր Մեծ Պահքի միջոցին հարսնիք չ'ըլլար պահքի պատճառաւ. Չատկէն մինչեւ Հոգեգալստեան ութօրէքը հարսնիք չ'ըլլար տէրունի տօներուն պատճառաւ. Օրացոյցին մէջ Կիրակիի մը առջեւ գրուած «հարսնիք» բառը կը նշանակէ թէ նոյն շաբթուն հանդիպող Երկուշաբթի, Երեքշաբթի, Հինգշաբթի եւ Շաբաթ օրերը հարսնիք տեղի կրնայ ունենալ, բայց ո՛չ Կիրակին, որ տէրունի է, ոչ ալ Ուրբաթ եւ Չորեքշաբթի, պահքի պատճառաւ. Աստուածածնայ տօնին իններորդ օրը, թէեւ Երկուշաբթի, հարսնիք չ'ըլլար. բայց յաջորդ Երեքշաբթին կրնայ ըլլալ. Նոյնպէս, այս տարի Տեառնընդառաջը Երկուշաբթի հանդիպելուն, թէեւ նոյն օրը հարսնիք չ'ըլլար, բայց յաջորդ Երեքշաբթին կրնայ ըլլալ.

Տ Ո Մ Ա Ր Է Տ Ո Մ Ա Ր

Շատ անգամ Արարական թուականի մը համապատասխանող Յուլիական թուականը գտնելու, եւ կամ՝ փոխադարձաբար Յուլիական թուականի մը համապատասխանող Արարական թուական մը գտնելու համար մեծ դժուարութեանց կը բաղխին պէտք ունեցողները։ Այդպիսիներու օգտակար ըլլալ կը յուսանք ներկայացնելով հոս իրենց այդ թուականները ճշգրտու պարզ եղանակ մը որ քանի մը թուարանական դիւրին գործողութիւններ կատարելէ ուրիշ ո եւ է յոգնութիւն չպիտի պատճառէ իրենց։

ՅՈՒԼԻԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆ ՄԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆԻ ՄԸ ՎԵՐԱԾԵԼ. — Այս գործնական հաշուին դիտական բացատրութիւնը աւելորդ կը նկատենք տալ հոս, որովհետեւ հարկ պիտի ըլլայ երկար մեկնութեանց ձեռնարկել։ Ուստի կը բաւականանանք ըսելով միայն թէ այդ հաշուին հիմ բռնուած է սա պարագան թէ 622 տարւոյն Յուլիս 16ը կը համապատասխանէ Արարական թուականին առաջին տարւոյն Մուհարրէմ 1ին։

Ահա այդ հաշիւը .

Չեղչեցէ՛ք փնտռուած Յուլիական թուականէն 622 թիւը եւ պիտի ունենաք թիւ մը զոր Ա. պիտի կոչենք։

Ա.ը բազմապատկեցէ՛ք 365ով եւ պիտի ունենաք թիւ մը զոր Բ. պիտի կոչենք։

Ա.ին աւելցուցէ՛ք 1, բաժնեցէ՛ք 4ով եւ քանորդը աւելցուցէ՛ք Բ.ին, Բ.ին վրայ աւելցուցէք նաեւ առաջարկուած Յուլիական տարւոյն Տարեթիւը (*), զեղչեցէ՛ք 196 եւ պիտի ունենաք թիւ մը՝ զոր պիտի կոչենք Գ.։

Բաժնեցէ՛ք Գ.ը 10,631ով, եւ պիտի ունենաք քանորդ մը՝ զոր պիտի կոչենք Դ., եւ մնացորդ մը՝ զոր պիտի կոչենք Ե.։

(*) Տարեթիւ կը կոչենք այն թիւը՝ որ կը ներկայացնէ փնտռուած թուականին ամսաթիւին՝ Յուլիական տարւոյն քանի՛եւորդ օրը ըլլալը, ինչ որ անմիջապէս կարելի է ճշգրտել I աղիւսակին դիմելով։

Գ.ն բազմապատկեցէ՛ք 30ով եւ պիտի ունենաք թիւ մը զոր 2. պիտի կոչենք :

Յետոյ դիմեցէ՛ք III աղիւսակին , եւ եթէ Ե.ը 0 է կամ աւելի՛ մինչեւ 354 , 2.ին աւելցուցէք 1 , եթէ 354 է կամ աւելի՛ մինչեւ 709 , աւելցուցէք 2.ին 2 , եւ եթէ 709 է կամ աւելի՛ մինչեւ 1063 , աւելցուցէք 2.ին 3 , եւ այսպէս յաջորդաբար ըստ III աղիւսակին : Այսպէս պիտի ունենաք այն Արարական տարին՝ որուն մէջ կ'իջնայ փնտռուած Յուլիական թուականը :

Իսկ ամսաթիւը գտնելու համար բազդատեցէք Ե.ը III աղիւսակին 0, 354, 709 , եւ այլն թիւերուն , եւ անոնցմէ որուն որ հաւասար կամ որմէ որ աւելի ըլլայ , զեղչեցէ՛ք այդ թիւը Ե.էն եւ մնացեալը ցոյց պիտի տայ Արարական տարեթիւը : Դիմեցէ՛ք այն ատեն II աղիւսակին , եւ պիտի գտնէք թէ այդ տարեթիւը ո՛ր ամսուան եւ ո՛ր ամսաթիւին կը համապատասխանէ : Դիտելի է սակայն որ երբ տարեթիւը 0 ըլլայ , կը համապատասխանէ նախորդ տարիին վերջին օրուան :

Օրինակ . — Արեւմտեան պատմագիրները Քրիստոսի 1453 թուականին Մայիս 29ին կը դնեն կ. Պոլսոյ առումը՝ Օսմանեան յաղթական բանակին կողմէ , եւ արեւելեան պատմագիրները կը նշանակեն Հիճրէթի 857 տարւոյն 10 Ճէմազի իւլ էվվէլը . տեսնենք այս երկու թուականները կը համապատասխանեն իրարու :

Յուլիական 1453 թուականէն զեղչենք 622 , եւ արդիւնքը՝ 831 , պիտի կազմէ Ա. թիւը :

Ա.ը բազմապատկենք 365ով , եւ արդիւնքը՝ 303,315 , պիտի կազմէ Բ. թիւը :

Ա.ին աւելցնենք 1 եւ կ'ուեննանք 832 , զոր կը բաժնենք 4ով եւ կ'ուեննանք 208 քանորդ : Այդ քանորդը կ'աւելցնենք Բ.ին , որուն կ'աւելցնենք նաեւ Յուլիական տարւոյն տարեթիւը՝ որ է 149 (*), եւ այսպէս կ'ուեննանք 303,672 թիւը :

(*) Արդարեւ , ըստ I աղիւսակին , Մայիս 29 կը համապատասխանէ 149 տարեթիւին :

ուրկէ հանելով 196, արդիւնքը՝ 303,476, կ'ըլլայ Գ.ը :

Բաժնենք Գ.ը 10,631ով եւ իբր քանորդ պիտի ունենանք 28՝ որ պիտի կազմէ Գ.ն, եւ իբր մնացորդ 5808, որ Ե.ը պիտի ըլլայ :

Բազմապատկենք Գ.ն 30ով, ու պիտի ունենանք 840 թիւը՝ զոր պիտի կոչենք 2. :

Դիմելով III աղիւսակին, կը տեսնենք թէ 5808 թիւը, այսինքն Ե.ը, 17ին համապատասխանող 5670 թիւէն կ'անցնի եւ պակաս է 18ին համապատասխանող 6024 թիւէն. հետեւաբար, կ'աւելցնենք 17ը 840ին, այսինքն 2.ին եւ արդիւնքը՝ 857, կը ներկայացնէ Արարական տարին՝ որուն մէջ կ'իյնայ առաջարկուած Յուլիական թուականը :

Իսկ Արարական ամսաթիւը գտնելու համար կը զեղչենք Ե.էն՝ այսինքն 5808էն՝ 5670, եւ մնացորդը 138՝ տարեթիւն է, զոր III աղիւսակէն քննելով պիտի տեսնենք թէ կը համապատասխանէ Ճէմազի իւլ էվվէլ 20ին :

ԱՐԱԲԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆ ՄԸ ՅՈՒԼԻԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆԻ ՄԸ ՎԵՐԱԾԵԼ. — Բաժնեցէ՛ք առաջարկուած Արարական թուականը 30ով եւ քանորդ մը պիտի ունենաք զոր Ա. պիտի կոչենք, ու մնացորդ մը՝ զոր պիտի կոչենք Բ. : Դիտելի է սակայն որ երբ մնացորդը 0 ըլլայ, Ա.ը հաւասար է քանորդին՝ պակաս 1, եւ Բ.ը 30 է :

Բազմապատկեցէ՛ք Ա.ը 10,631ով, աւելցուցէ՛ք Բ.ին համապատասխանող թիւը՝ ըստ III աղիւսակին, աւելցուցէ՛ք նաեւ 196 եւ առաջարկուած Արարական թուականին տարեթիւը, ու պիտի ունենաք թիւ մը՝ զոր պիտի կոչենք Գ. :

Բաժնեցէ՛ք Գ.ը 1461ով եւ պիտի ունենաք քանորդ մը՝ զոր պիտի կոչենք Դ. , եւ մնացորդ մը՝ զոր պիտի կոչենք Ե. :

Բազմապատկեցէ՛ք Գ.ն 4ով, աւելցուցէ՛ք 621, եւ պիտի ունենաք թիւ մը՝ զոր 2. պիտի կոչենք. յետոյ դիմեցէք IV աղիւսակին եւ եթէ Ե.ը 0 է կամ աւելի՝ մինչեւ 365, 2.ին աւելցուցէք 1, եթէ 365 է կամ աւելի՝ մինչեւ 730, 2.ին աւելցուցէք 2, եւ այսպէս յաջորդաբար :

Այս կերպով պիտի ունենաք այն Յուլիական տարին՝ ու

որուն մէջ կ'իյնայ առաջարկուած Արարական թուականը :

Իսկ ամսաթիւը գտնելու համար զեղչեցէ՛ք Ե.էն IV աղիւսակին 0, 365, 730 եւ 1096 չորս թիւերէն մէկը՝ որո՛ւն որ հաւասար կամ որմէ՛ որ աւելի ըլլայ Ե.ը, եւ պիտի ունենանք արդէն գտնուած Յուլիական տարւոյն մէջ այն տարեթիւը՝ որ կը համապատասխանէ առաջարկուած Արարական թուականին : Դիտելի է սակայն թէ երբ տարեթիւը 0 ըլլայ, կը համապատասխանէ նախորդ տարիին վերջին օրուան :

Դիմեցէ՛ք I աղիւսակին, եւ ձեռք բերուած տարեթիւին համապատասխանող ամսաթիւը պիտի ներկայացնէ առաջարկուած Արարական թուականը :

Օրինակ. — Սեւաստարօլ գրաւուած է Արարական 1271 տարւոյն Զիւհիճճէ 25ին, ո՞րն է համապատասխանող Յուլիական թուականը :

Բաժնենք 1271ը 30ով եւ պիտի ունենանք իրր քանորդ 42, այսինքն Ա.ը, եւ մնացորդ 11, այսինքն Բ.ը :

Բազմապատկենք Ա.ը 10,631ով, աւելցնենք 3544 թիւը՝ որ ըստ III աղիւսակին կը համապատասխանէ 11ին, աւելցընենք նաեւ 196, ինչպէս նաեւ 350՝ որ 25 Զիւհիճճէին համապատասխանող տարեթիւն է ըստ II աղիւսակին, եւ պիտի ունենանք 450,592, այսինքն Գ.ը :

Բաժնենք Գ.ը 1461ով, եւ պիտի ունենանք Գ. քանորդը՝ որ է 308 եւ Ե. մնացորդը՝ որ է 604 :

Բազմապատկենք Գ.ն 4ով եւ կ'ունենանք 1232, որուն կ'աւելցնենք 621 եւ կ'ունենանք 1853, այսինքն Զ.ն : Քանի որ Ե.ը՝ այսինքն 604ը IV աղիւսակին 365 թիւէն աւելի է, աւելցնենք Զ.ին 2 եւ գումարը՝ 1855, կը ներկայացնէ այն Յուլիական տարին՝ որուն մէջ կ'իյնայ առաջարկուած Արարական թուականը :

Իսկ Յուլիական ամսաթիւը գտնելու համար, զեղչենք Ե.էն 365 թիւը, եւ մնացորդը՝ 239, տարեթիւն է Յուլիական տարւոյն, այսինքն Օգոստոս 27՝ զոր զիւրաւ պիտի գտնենք, զիմելով I աղիւսակին :

Այս հաշիւները մէկ կամ երկու օրուան տարբերութիւն մը կը ցուցնեն երբեմն :

Ա. Ղ. Ի Ի Ս Ա. Կ. Ի

ՅՈՒՆԱՆ ԵՒ ԳՐԻԳՈՐԵԱՆ ՏԱՐԵԹԻՒՆԵՐ

Սմաթիւ		ՅՈՒՆՎ.		ՓԵՏՐ.		ՍԱՐՏ		ԱՊՐԻԼ		ՄԱՅԻՍ		ՅՈՒՆԻՍ					
Տարեթիւ		Տարեթիւ		Տարեթիւ		Տարեթիւ		Տարեթիւ		Տարեթիւ		Տարեթիւ					
Սմաթիւ	Սմաթիւ	Սմաթիւ	Սմաթիւ	Սմաթիւ	Սմաթիւ	Սմաթիւ	Սմաթիւ	Սմաթիւ	Սմաթիւ	Սմաթիւ	Սմաթիւ	Սմաթիւ	Սմաթիւ				
Սմաթիւ	Սմաթիւ	Սմաթիւ	Սմաթիւ	Սմաթիւ	Սմաթիւ	Սմաթիւ	Սմաթիւ	Սմաթիւ	Սմաթիւ	Սմաթիւ	Սմաթիւ	Սմաթիւ	Սմաթիւ				
1	1	1	1	32	32	1	60	61	1	91	92	1	121	122	1	152	153
2	2	2	2	33	33	2	61	62	2	92	93	2	122	123	2	153	154
3	3	3	3	34	34	3	62	63	3	93	94	3	123	124	3	154	155
4	4	4	4	35	35	4	63	64	4	94	95	4	124	125	4	155	156
5	5	5	5	36	36	5	64	65	5	95	96	5	125	126	5	156	157
6	6	6	6	37	37	6	65	66	6	96	97	6	126	127	6	157	158
7	7	7	7	38	38	7	66	67	7	97	98	7	127	128	7	158	159
8	8	8	8	39	39	8	67	68	8	98	99	8	128	129	8	159	160
9	9	9	9	40	40	9	68	69	9	99	100	9	129	130	9	160	161
10	10	10	10	41	41	10	69	70	10	100	101	10	130	131	10	161	162
11	11	11	11	42	42	11	70	71	11	101	102	11	131	132	11	162	163
12	12	12	12	43	43	12	71	72	12	102	103	12	132	133	12	163	164
13	13	13	13	44	44	13	72	73	13	103	104	13	133	134	13	164	165
14	14	14	14	45	45	14	73	74	14	104	105	14	134	135	14	165	166
15	15	15	15	46	46	15	74	75	15	105	106	15	135	136	15	166	167
16	16	16	16	47	47	16	75	76	16	106	107	16	136	137	16	167	168
17	17	17	17	48	48	17	76	77	17	107	108	17	137	138	17	168	169
18	18	18	18	49	49	18	77	78	18	108	109	18	138	139	18	169	170
19	19	19	19	50	50	19	78	79	19	109	110	19	139	140	19	170	171
20	20	20	20	51	51	20	79	80	20	110	111	20	140	141	20	171	172
21	21	21	21	52	52	21	80	81	21	111	112	21	141	142	21	172	173
22	22	22	22	53	53	22	81	82	22	112	113	22	142	143	22	173	174
23	23	23	23	54	54	23	82	83	23	113	114	23	143	144	23	174	175
24	24	24	24	55	55	24	83	84	24	114	115	24	144	145	24	175	176
25	25	25	25	56	56	25	84	85	25	115	116	25	145	146	25	176	177
26	26	26	26	57	57	26	85	86	26	116	117	26	146	147	26	177	178
27	27	27	27	58	58	27	86	87	27	117	118	27	147	148	27	178	179
28	28	28	28	59	59	28	87	88	28	118	119	28	148	149	28	179	180
29	29	29	29	—	60	29	88	89	29	119	120	29	149	150	29	180	181
30	30	30	30			30	89	90	30	120	121	30	150	151	30	181	182
31	31	31	31			31	90	91	31			31	151	152			

Ա. Գ. Ի. Ի. Ս. Ա. Կ. Ի

ՅՈՒՆԵԱՆ ԵՒ ԳՐԻԴՈՐԵԱՆ ՏԱՐԵԹԻՒԵՐ

Ամսաթիվ	ՅՈՒՆԻՍ		Ամսաթիվ	ՕԳՈՍՏՈՍ		Ամսաթիվ	ՍԵՊՏԵՄ.		Ամսաթիվ	ՀՈԿՏԵՄ.		Ամսաթիվ	ՆՈՅԵՄ.		Ամսաթիվ	ԴԵԿՏԵՄ.	
	Ամսաթիվ	Ս.Գ.Ի.Ի.		Ամսաթիվ	Ս.Գ.Ի.Ի.		Ամսաթիվ	Ս.Գ.Ի.Ի.		Ամսաթիվ	Ս.Գ.Ի.Ի.		Ամսաթիվ	Ս.Գ.Ի.Ի.		Ամսաթիվ	Ս.Գ.Ի.Ի.
1	182	183	1	213	214	1	244	245	1	274	275	1	305	306	1	335	336
2	183	184	2	214	215	2	245	246	2	275	276	2	306	307	2	336	337
3	184	185	3	215	216	3	246	247	3	276	277	3	307	308	3	337	338
4	185	186	4	216	217	4	247	248	4	277	278	4	308	309	4	338	339
5	186	187	5	217	218	5	248	249	5	278	279	5	309	310	5	339	340
6	187	188	6	218	219	6	249	250	6	279	280	6	310	311	6	340	341
7	188	189	7	219	220	7	250	251	7	280	281	7	311	312	7	341	342
8	189	190	8	220	221	8	251	252	8	281	282	8	312	313	8	342	343
9	190	191	9	221	222	9	252	253	9	282	283	9	313	314	9	343	344
10	191	192	10	222	223	10	253	254	10	283	284	10	314	315	10	344	345
11	192	193	11	223	224	11	254	255	11	284	285	11	315	316	11	345	346
12	193	194	12	224	225	12	255	256	12	285	286	12	316	317	12	346	347
13	194	195	13	225	226	13	256	257	13	286	287	13	317	318	13	347	348
14	195	196	14	226	227	14	257	258	14	287	288	14	318	319	14	348	349
15	196	197	15	227	228	15	258	259	15	288	289	15	319	320	15	349	350
16	197	198	16	228	229	16	259	260	16	289	290	16	320	321	16	350	351
17	198	199	17	229	230	17	260	261	17	290	291	17	321	322	17	351	352
18	199	200	18	230	231	18	261	262	18	291	292	18	322	323	18	352	353
19	200	201	19	231	232	19	262	263	19	292	293	19	323	324	19	353	354
20	201	202	20	232	233	20	263	264	20	293	294	20	324	325	20	354	355
21	202	203	21	233	234	21	264	265	21	294	295	21	325	326	21	355	356
22	203	204	22	234	335	22	265	266	22	295	296	22	326	327	22	356	357
23	204	205	23	235	236	23	266	267	23	296	297	23	327	328	23	357	358
24	205	206	24	236	237	24	267	268	24	297	298	24	328	329	24	358	359
25	206	207	25	237	238	25	268	269	25	298	299	25	329	330	25	359	360
26	207	208	26	238	239	26	269	270	26	299	300	26	330	331	26	360	361
27	208	209	27	239	240	27	270	271	27	300	301	27	331	332	27	361	362
28	209	210	28	240	241	28	271	272	28	301	302	28	332	333	28	362	363
29	210	211	29	241	242	29	272	273	29	302	303	29	333	334	29	363	364
30	211	212	30	242	243	30	273	274	30	303	304	30	334	335	30	364	365
31	212	213	31	243	244				30	304	305				31	365	366

ԱՂԻՏՈՒԿ ԻԻ

Ա Ր Ա Բ Ա Կ Ա Ն Տ Ա Ր Ե Թ Ի Ր Ե Ր

Ա Մ Ս Ս Թ Ի Ի	Անհարրէմ	Սէմեր	Քէպի-իւլ-Էլզէլ	Քէպի-իւլ-Ախեր	Ճէմազի-իւլ-Էլզէլ	Ճէմազի-իւլ-Ախեր	Քէնէպ	Շարաբ	Քամազան	Շէլզալ	Չիլզան	Չիլզան
1	1	31	60	90	119	149	178	208	237	267	296	326
2	2	32	64	94	120	150	179	209	238	268	297	327
3	3	33	62	92	121	151	180	210	239	269	298	328
4	4	34	63	93	122	152	181	211	240	270	299	329
5	5	35	64	94	123	153	182	212	241	271	300	330
6	6	36	65	95	124	154	183	213	242	272	301	331
7	7	37	66	96	125	155	184	214	243	273	302	332
8	8	38	67	97	126	156	185	215	244	274	303	333
9	9	39	68	98	127	157	186	216	245	275	304	334
10	10	40	69	99	128	158	187	217	246	276	305	335
11	11	41	70	100	129	159	188	218	247	277	306	336
12	12	42	71	101	130	160	189	219	248	278	307	337
13	13	43	72	102	131	161	190	220	249	279	308	338
14	14	44	73	103	132	162	191	221	250	280	309	339
15	15	45	74	104	133	163	192	222	251	281	310	340
16	16	46	75	105	134	164	193	223	252	282	311	341
17	17	47	76	106	135	165	194	224	253	283	312	342
18	18	48	77	107	136	166	195	225	254	284	313	343
19	19	49	78	108	137	167	196	226	255	285	314	344
20	20	50	79	109	138	168	197	227	256	286	315	345
21	21	51	80	110	139	169	198	228	257	287	316	346
22	22	52	81	111	140	170	199	229	258	288	317	347
23	23	53	82	112	141	171	200	230	259	289	318	348
24	24	54	83	113	142	172	201	231	260	290	319	349
25	25	55	84	114	143	173	202	232	261	291	320	350
26	26	56	85	115	144	174	203	233	262	292	321	351
27	27	57	86	116	145	175	204	234	263	293	322	352
28	28	58	87	117	146	176	205	235	264	294	323	353
29	29	59	88	118	147	177	206	236	265	295	324	354
30	30		89		148		207		266		325	355

U. 2. 1. 1. 0. 0. 4 III.

1	0	46	5345
2	354	47	5670
3	709	48	6024
4	1063	49	6379
5	1417	20	6733
6	1772	21	7087
7	2126	22	7442
8	2481	23	7796
9	2835	24	8150
10	3189	25	8505
11	3544	26	8859
12	3898	27	9214
13	4252	28	9568
14	4607	29	9922
15	4961	30	10277

U. 2. 1. 1. 0. 0. 4 IV.

1	0
2	363
3	730
4	1096

Ե Է Տ Ի Գ Ո Ւ Լ Է Ի

ԱՂԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻՆ

ԱՆՑԵԱԼԸ ԵՒ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ



Հ Ի Մ Ն Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Եէտի Գուլէի Աղգ. Հիւանդանոցէն առաջ ունեցած ենք, Բերայի Ս. Յարութիւն եկեղեցւոյն եւ Նառլը Գարուի Ս. Յովհաննէս եկեղեցւոյն քով, հիւանդներու եւ յիմարներու յատուկ շէնքեր: Պէզճեան Յարութիւն ամիրա այդ շէնքերուն անյարմարութիւնը տեսնելով, 1832 ին ձեռնարկեց կառուցանել նոր Հիւանդանոց մը Եէտի Գուլէէ դուրս, Գազըր Չէշմէ արուարձանին մէջ: Շինութեան ծախքին մեծ մասը հայթայթուեցաւ Պէզճեանի կողմէ, թէեւ ուրիշ նուիրատուներ ալ գանուեցան: Հիւանդանոցի գլխաւոր մասերուն, եւ Ս. Փրկիչ եկեղեցւոյն շինութիւնը աւարտած էր 1833ին: Հիւանդանոցի ճարտարապետները եղած են Կարապետ ամիրա Պալեան եւ իր քեռայրը Յովհաննէս ամիրա Սէրվէրեան: Միքայէլ ամիրա Փիշմիշեան ստանձնած էր շինութեան ընդհանուր վերակացութիւնը եւ շինութեան առօրեայ գործողութեանց կը հսկէր Եազըճը Պօղոս աղա, Գրիգոր Օտեանի հայրը, Տ. Ստեփաննոս «Աղաւնի» Պատրիարք, որ 1831ին յաջորդած էր Տ. Կարապետ Պատրիարքին: Հիւանդանոցին պաշտօնական բացումը կատարած է 1834 ին, հիմնադրին՝ Պէզճեան Յարութիւն ամիրայի մահէն ետքը՝ որ տեղի ունեցած է 3 Յունուար 1834ին: Այս միջոցներուն շինուեցաւ Ս. Յակոբ վանքը Չէշթին Պուրնու՝ յատկապէս հնաախտէ բժնուողներուն համար:

Մ Ի Ի Թ Է Վ Է Լ Լ Ի Ն Ե Ր Ո Ւ Շ Ր Ջ Ա Ն

Միքայէլ ամիրա Փիշմիշեան Միշքեվեշի (վերաանուշ) կարգուելով Հիւանդանոցին, 1834էն սկսեալ վեց եօթը տարի կը վարէ այդ պաշտօնը: Այդ միջոցին Հիւանդանոցը բաւական բարեկարգ վիճակ ունեցած է:

Ճեմարանին առթիւ ծագած վէճերուն ատեն (1839 — 1844), Միքայէլ ամիրա Փիշմիշեան, նեղանալով իր մատակարարութիւնը քննադատող Ճանիկ ամիրայի վարմունքէն, կը հրաժարի: Իրեն կը յաջորդէ նախ Ղազար աղա, յետոյ Միսաք ամիրա, որոնց մատակարարութիւնը գոհացուցիչ եղած չէ: Վառօդապետ Պօղոս պէյ Տատեան վերջին Միւթէվէլին կ'ըլլայ Հիւանդանոցին:

Պօղոս պէյ, Միւթէվէլի ընտրուելէն քիչ ետքը, իր կողմէ կը կարգէ հինգ նազրը (հոգաբարձու), որոնք 1844 — 45ին պաշտօնի կոչուելով կը մնան մինչեւ 1848: Այդ միջոցին Հիւանդանոցի մէջ կը գանուէին 300 — 350 պատասպարեալ: Հոգաբարձութեան մէջ ամէնէն գործօն գերը ունէր Սարգիս աղա Գափամաճեան, որ Պօղոս պէյի աներորդին էր եւ Միւթէվէլիի փոխանորդ:

Պօղոս պէյ եւ իր հօրեղբայրը, Յովհաննէս պէյ, գլխաւոր բարերարները եղած են Հիւանդանոցին, Յարութիւն Պէզճեան եւ Կարապետ Պալեան ամիրաներուն հետ: Պօղոս պէյ 1844ին Հիւանդանոցին նուիրած է իր ընտանիքին յատկացուած օրական տասը օխա միսի պարէնը, որուն փոխարէնը ցարդ կը ստացուի Կայս. Կառավարութենէն եւ հիմա կը ներկայացնէ ամսական 1854¹/₄ զրուշի գումար մը: Իսկ Յովհաննէս պէյ պատճառ եղած է որ 1843 Յուլիս 24ին օրական 15 օխա միսի եւ 1845 Ապրիլ 9ին 37¹/₂ օխա հացի պետական պարէն յատկանայ Հիւանդանոցին:

Պօղոս պէյի Միւթէվէլիութեան ժամանակ Հիւանդանոցը բարեկարգ վիճակ ունեցած է: Այդ միջոցին Տատեանները շատ նուիրատուութիւններ քրած են Հիւանդանոցին, եւ կ'ըսուի թէ իրենց նպաստները կը հասնէին տարեկան 50 — 60,000 զրուշի:

1846—47ին ալ Հիւանդանոցին կը կապուին նշանաուքի հասոյթները, որոնք մինչեւ այն ատեն Պատրիարքին կը յատկանային. նոյնպէս անցադրատան հասոյթները, 1848ին, Պօղոս պէյի հրատարմամբ, վերջ կը գտնէ նաեւ Միւթէվէլլիութեան շրջանը:

ԳԵՐԱԳՈՅՆ ԺՈՂՈՎԷՆ ԸՆՏՐՈՒԱԾ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆՑ ՇՐՋԱՆ

1847 Մայիս 9ին, Մատթէոս Պատրիարքի օրով ընարուած էին Ազգային Հոգևոր եւ Գերագոյն Ժողովները, Այս վերջինը ունէր 20 անդամ, որոնց մէջ կը գտնուէին ժամանակին նշանաւոր ամիրաները եւ Խնկաժներու պետերը. 1848էն մինչեւ 1856ի վերջերը՝ Գերագոյն Ժողովը կառավարեց Ազգ. Հիւանդանոցը՝ հոգարարձութեանց ձեռքով:

Պօղոս պէյի հրատարումէն ետքը, 1848ին կազմուած առաջին Հոգարարձութիւնը կը բաղկանար 14 անդամէ, որոնց մէջ ամէնէն աւելի գործօն դեր ունեցան Պետրոս Թիրեաքեան եւ Քրիստոստուր Ղազարոսեան: Այս Հոգարարձութիւնը պաշտօնավարեց մինչեւ 1852:

Այս Հոգարարձութեան առաջին գործը կ'ըլլայ Որբանոցի դպրոցը վերակազմել Հիւանդանոցին մէջ, նոյն միջոցին Սկիւտարի Ճեմարանը որ 1846 Հոկտեմբեր 1ին վերարացուած էր, դժուարութեամբ կը մատակարարուէր, որովհետեւ Երուսաղէմի վանքէն յատկացուած տարեկան նպաստը զեղչուած էր: Գերագոյն Ժողովը որոշեց միացնել Ճեմարանը եւ Հիւանդանոցի վարժարանը, որով Ճեմարանի մատենադարանն ու գոյքերը Ազգ. Հիւանդանոց փոխադրուեցան 1850 ին: Որբանոցի կրթարանը՝ Ճեմարան անունով, Պոլսոյ Հայոց ամէնէն կարեւոր կրթական հաստատութիւնը դարձաւ այդ թուականներուն: Այս հաստատութեան յատկացաւ Երուսաղէմատան 50,000 դրուչի տարեկան նպաստը, որ վճարուած է մինչեւ 1862, թէեւ ոչ կանոնաւորապէս:

1851ին, 60,000 դրուշ ծախքով, յիմարներու յատուկ 5—6 նոր սենեակներ կը շինուին: Նոյն տարին Հոգարարձութիւնը կը ձեռնարկէ սորվեցնել Որբանոցի սաներուն կօշկակարութեան եւ դերձակութեան արհեստները, որոնք յաջող արդիւնք չեն ունենար: 1851ին կը բացուի Հիւանդանոցին մէջ Վարժապետանոց մըն ալ ուր 15—16 անձեր կրօնային դաստիարակութիւն մը կը ստանան. տարի մը ետքը այս հաստատութիւնը կը փակուի, որովհետեւ Հիւանդանոցին պիւտճէն խանդարուած եւ 1000 ոսկեոյ պարտք մը գոյացած էր:

Գերագոյն ժողովէն կարգեալ այս առաջին Հոգարարձութիւնը 1852ին պաշտօնէ դադրեցաւ եւ նոյն տարուոյ Ապրիլին ընտրուեցաւ նոր Հոգարարձութիւն մը, որուն ատենապետն էր Նշան աղա Փիշմիշեան: Այս Հոգարարձութիւնը՝ որ պաշտօնավարեց երկու տարի, ծախքերը զեղչեց եւ ջանաց հաւասարակշռել ելեւմուտքը:

1854ի Յունուարին կազմուեցաւ նոր Հոգարարձութիւն մը որուն ամէնէն ազգեցիկ անդամն էր Թազուր աղա Նշանեան, աներձագ Փիշմիշեան Նշան աղայի: Այս Հոգարարձութեան օրով երկրագործական ուսման դասախօսութիւն հաստատուած է Հիւանդանոցի Ճեմարանին բարձրագոյն դասին մէջ, որ կը բազկանար 40 ուսանողէ: Այս դասը յանձնուած էր հանգուցեալ Յակոբ էֆէնաի Ամասեանի, որ միեւնոյն ատեն ընդհանուր անօրէն էր վարժարանին: Դասախօսութիւնը տեսական եւ գործնական էր միանգամայն: Կարապետ ամիրա Պալեան 1000 ոսկիի չափ նպաստեց այս միջոցին Ազգ. Հիւանդանոցի վարժարանին, ազգին մէջ երկրագործութեան ուսումը ծաւալելու ջերմ փափագող ըլլալով: Երկու տարի միայն կարելի եղաւ այս դասախօսութիւնները շարունակել տալ, եւ նիւթական միջոցներու չգոյութիւնը վերջ տուաւ այս ձեռնարկին:

1855ին Հիւանդանոցին վիճակը շատ խեղճ էր. ասոր պատճառն էր Խրիմի պատերազմին հետեւանքով ուտեստներուն սուղնալը: Հոգարարձուներուն մեծ մասը հրաժարած էր: Անոնցմէ մէկը՝ Հայրապետ Սապոնճեան, Վանցի վաճառական մը, միջոց մը մինակ մատակարարեց Հիւանդանոցը:

1856ին կը կազմուի նոր Հոգարարձութիւն մը, որ բաւա-

կան բարեկարգ մատակարարութիւն մը կ'ունենայ : Տատեան Յովհաննէս եւ Պօղոս պէյերը , ինչպէս նաեւ կարապետ ամիրա Պալեան , նիւթական կարեւոր նուիրատուութիւններ կ'ընեն այս Հոգարարձութեան օրով :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՇՐՋԱՆ

1856 ի վերջերը Հիւանդանոցի մատակարարութիւնը կը յանձնուի նոյն տարին կազմուած Տնտեսական Խորհուրդին , որ Հիւանդանոցի սնտուկին վրայ ծանրացած 400 ոսկւոյ չափ պարտքը կը վճարէ հանդանակութեամբ , եւ 1859 ին պաշտօնի կը կոչուի նոր Տնտեսական Խորհուրդ մը , որ կը պաշտօնավարէ մինչեւ Մարտ 1860 : Այդ երեք տարուան միջոցին (1856—1859) մասնաւոր խնամք կը տարուէր ձեւարանին :

1858 - 59ին Հիւանդանոցին յարակից Ս. Յակոբայ վանքին մէջ կը բացուէր նաեւ Ժառանգաւորաց վարժարան մը , որուն նպատակն էր վարդապետներ հասցնել , եւ որ 1860ին փակուեցաւ : Այս առթիւ Ս. Յակոբայ եկեղեցին նորոգուեցաւ , գիշերօթիկ վարժարանի յատուկ մասեր շինուեցան , եւ Հիւանդանոցին մէջ նորոգութիւններ տեղի ունեցան 180,000 զրուշի չափ ծախքով , զոր նուիրեցին կարապետ ամիրա Պալեան եւ Պօղոս պէյ Տատեան :

Թէեւ դպրոցական պէտքերուն հոգ կը տարուէր քիչ շատ , սակայն Հիւանդանոցին ներքին վիճակը դժացուցիչ չէր : Մանաւանդ 1859ին վերջերը եւ 1860ի սկիզբները թէ՛ Գերագոյն Ժողովին մէջ եւ թէ՛ լրագիրներու միջոցաւ դանդաւ կը յայտնուէր Հիւանդանոցի մատակարարութեան դէմ : Պատասպարեալներութիւր հասած էր 700ի . արտասովոր ծախքեր տեղի կ'ունենային եւ Հիւանդանոցը պարտքի տակ կը մնար :

Գերագոյն Ժողովը , 1860 ի Մարտին պարսաւելով Տնտեսական Խորհուրդը , լիազօր մարմին մը կը կարգէր Հիւանդանոցին վիճակը քննելու եւ բարեկարգութիւններ ի գործ դնելու պաշտօնով . կը կարգէր առժամանակեայ յանձնաժողով մըն ալ՝ Հիւանդանոցի մատակարարութեան համար :

Երկու ամիս ետքը, Մայիս 24 ին, կ'ընտրուէր առժամեայ Քաղաքական Ժողով մը, որուն ատենապետն էր Մկրտիչ էֆ. Աղաթօն. այդ առժամեայ Քաղաքական Ժողովին՝ նոյն տարուան Օգոստոս 26 ին յաջորդեց օրինական առաջին Քաղաքական Ժողովը, ատենապետութեամբ Գրիգոր էֆ. Մարկոսեանի: Այս երկու Ժողովներն ալ Հիւանդանոցին համար ընտրեցին Հոգաբարձութիւններ, բայց ոչ ոք ուզեց պաշտօն ընդունիլ:

Առժամեայ յանձնաժողովին մատակարարութիւնը տեւեց ինը ամիս (Մարտէն Նոյեմբեր 1860): Այդ միջոցին Հիւանդանոցին վիճակը խղճալի էր: Յունուար ամսէն ի վեր պաշտօնեաներուն ամսական չէր վճարուած. հազիւ օրական հացի ապահովութիւն կար. պարէնի, վառելիքի, հազուատի պէտքերը բախտին ձգուած էին: Այդ տարւոյն վերջը, Հիւանդանոցը ունէր 501,882 զրուշի պարտք՝ թղթադրամ, ոսկին 150—160 զրուշէն:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆՑ ՇՐՋԱՆ

Այս վիճակին մէջ էր Հիւանդանոցը, երբ 1860 Նոյեմբերին կազմուեցաւ Հոգաբարձութիւն մը, որուն ատենապետն էր Աստուածատուր Զունդ, գլխաւոր գործակից ունենալով Շեխեան Ղուկաս աղան: Այս Հոգաբարձութիւնը թէեւ եօթը ամիս միայն պաշտօնավարեց, բայց արդիւնաւոր եղաւ: Ճեմարանի աշակերտներուն թիւը զեղչեց, պարզ նախակրթարանի վերածեց զայն, եւ արհեստներ մտցուց հոն, մեծ խնայողութիւններ ընելով: Հիւանդանոցի պատասպարեալներուն եւ պաշտօնեաներուն թիւը պակսեցուց եւ Հիւանդանոցին ելեւմուտքը կարգի դրաւ: Ուտեստի, հազուատի եւ մաքրութեան խնամք տարաւ եւ բարեկարգեց Հիւանդարանը՝ որ ողորմելի վիճակի մէջ էր:

Այս Հոգաբարձութեան նախաձեռնութեամբ էր որ կազմուեցաւ Տիկնանց Խնամակալութիւն մը, որուն կը մասնակցէին ժամանակին գլխաւոր կիները: Այս տիկիները շարաթը

անգամ մը կ'այցելէին Հիւանդանոցը եւ կը հակէին անոր մաք-
րութեան : Անոնց ջանքով բոլոր պատասպարեալները ունեցան
նոր ճերմակեղէններ եւ զգեստներ : Այս Խնամակալութիւնը
շատ օգտակար եղաւ : Անդամուհիները իրենց մէջ կը հաւա-
քէին ամէն տարի 30—40,000 դրուշի գումար մը եւ կը յատ-
կացնէին ճերմակեղէններու, անկողիններու եւ զգեստներու
ներոգութեան : Իրենց մէջ ամէնէն դործօն դեր ունէր Տիկին
Էպրու Երամեան, որուն Բարիզ հաստատուելովը Խնամակա-
լութիւնը կազմալուծուեցաւ 1865—66ին :

Ա. Զունդի Հոգաբարձութեան օրովն էր որ նշանաւորի
հասոյթին կէսը Պատրիարքարանի յատկացուեցաւ եւ Երուսա-
ղէմի վանքը դադրեցուց իր տարեկան 50,000 դրուշի նպաս-
տը, «ներսէն դուրսէն» ի վէճին հետեւանքով :

Այս գործունեայ Հոգաբարձութիւնը հրաժարեցաւ 1861
Մայիսին եւ երկար ժամանակ կարելի չեղաւ յաջորդ մը գտնել
իրեն : Տնտեսական Խորհրդին անգամ Պատուելի Գալուստ Տ.
Պօղոսեան ստանձնեց առժամեայ մատակարարութիւնը, Մոմ-
ճեան Մկրտիչ աղայի հետ՝ որ Հիւանդանոցի ելեւմտից գրա-
գիրն ու գանձապեան էր : Պատուելի Գալուստ եւ ուրիշներ
Օգնական Ընկերոջիւնը կազմեցին Հիւանդանոցին համար :
Այս ընկերութիւնը գործի սկսաւ 1862 Յունվարին, եւ խղճա-
միտ կերպով աշխատեցաւ Հիւանդանոցի օգտին : 1862 Ապրիլ
15ին Ընկերութիւնը հրաժարեցաւ, եւ որովհետեւ կարելի չե-
ղաւ յաջորդ մը գտնել որ ստանձնէր իր հոգը, Ընկերութիւնը
իր մէջէն 27 անդամներէ բաղկացեալ Հոգաբարձութիւն մը
գրաւ, որ մինչեւ 1863 Յունուարի վերջը շարունակեց Հիւան-
դանոցի մատակարարութիւնը : Օգնական Ընկերոջիւնը խոս-
տացած էր պարտք չթողուլ իր մատակարարութենէն եւ այս
խոստումը բռնեց : Իր կարգած Յանձնաժողովն ալ առանց ո՛ր
եւ է պարտք թողու մեկնեցաւ :

1863 Փետրուարէն մինչեւ Նոյեմբեր, Հիւանդանոցը կա-
ռավարուեցաւ Պատրիարքարանի պաշտօնեաներուն ձեռքով,
եւ այդ թուականին ընտրուեցաւ երկրորդ օրինական Հոգա-
բարձութիւնը որ երեք ամիս ետքը վերակազմուեցաւ, Ա.
Զունդի ատենապետութեան տակ :

1863—64ի Հոգաբարձութեան օրով, հակառակ զանազան նաւիրատուութեանց, կարելի չեղաւ հաւասարակշռել Հիւանդանոցի պիււճէն եւ 1864ի Սեպտեմբերին Հոգաբարձութիւնը հրաժարեցաւ, չկրնալով ստանալ Պատրիարքարանէն՝ 20,000 դրուշի որոշեալ նպաստը:

1864ի Նոյեմբերին կ'ընտրուի Հոգաբարձութիւն մը որուն ատենապետն էր Միրիճան ամիրա Փափազեան: Այս Հոգաբարձութիւնը կը պաշտօնավարէ մինչեւ Մայիս 1865:

1865 Յունիսին կը կարգուի նոր Հոգաբարձութիւն մը, Տոքթոր Գ. Մոզեանի ատենապետութեամբ: Այս միջոցին Հիւանդանոցը շատ խեղճ վիճակ ունի. պաշտօնեաներու ամսականները ամիսներով անվճար կը մնան. փայտէ, ածուխէ եւ նոյն իսկ օրական անհրաժեշտ պիտոյքէ զուրկ է Ազգին Տունը:

1865 տարւոյն մէջ է որ Հիւանդանոցի ընդհանուր նորոգութիւնը շատ զգալի կը դառնայ եւ Տնտեսական Խորհրդի ատենապետը, Նշան աղա Նորիկեան, յանձն կ'առնէ կատարել այդ նորոգութիւնը՝ առանց պարտք թողուլու եւ կը յաջողի ալ, հաւաքելով 223,591 դրուշի գումար մը, որուն մեծ մասը կը նուիրեն բարեսէր ազգայիններ:

1866ի սկիզբը կ'ընտրուի նոր Հոգաբարձութիւն մը, որուն ատենապետը եղած է Միրան աղա Պահչէգափուլեան: Այս Հոգաբարձութեան մասնակցած է նաեւ Տոքթ. Պ. Մատթէոսեան որ ջանացած է բարւոքումներ մտցնել տալ Հիւանդարանին մէջ, թէեւ վեց ամիսէն հրաժարած է, տեսնելով որ հիւանդներուն ամէնէն տարրական պէտքերն անգամ գոհացնել կարելի չէր ըլլար:

1866ին Բ. Դանէն կարգուած Խառն Ժողովին ատենապետ Գրիգոր էֆ. Մարկոսեան պատրաստեց Հիւանդանոցի կանոնագիր մը եւ Հոգաբարձութեան ուղղեալ վարչական Հրահանգ մը, որոնց մէջ օգտակար անօրինութիւններ կային, թէեւ անգործադրելի մնացին: Հիւանդանոցի վիճակը հետզհետէ վատթարացաւ եւ 1867ի Զատիկին միջոցները պատասպարեալները սովորական մէկ տեսակ կերակուրն ալ չէին գտներ 24 ժամուան մէջ: Պատմուեցաւ նոյն իսկ թէ գիշեր մը բոլոր պատրասպարեալները անօթի մնացած էին: Այս լուրը ընդհանուր

յուզում պատճառեց եւ Հոգարարձութիւնը ստիպուեցաւ հրա-
ժարիլ :

Տասնըջորս բարեսիրտ անձեր 1867ի Մայիս 15ին ինքնա-
բերարար ստանձնեցին Հիւանդանոցի մատակարարութիւնը ,
սակայն հազիւ 50 օր կրցան դիմանալ : Իրենց մէջ կը գտնուէր
Մանգուռեկի էփեարի խմբագրապետ Կարապետ էֆ. Փանոսեան
եւ Ամերիկայէն նոր վերադարձած բժիշկ մը , Տոքթ. Կարապետ
Պալուստեան , որոնք կ'ուզէին իրենց վրայ առնել Հիւանդա-
նոցին բոլոր հոգը , աւանձին գործելու պայմանաւ : Նախ Վար-
չութիւնը կը մերժէր , բայց երբ յետոյ Փանոսեան իր թերթին
միջոցաւ կը յայտարարէր թէ պատրաստ է իր պատասխանա-
տուութեան տակ բարեկարգել Հիւանդանոցը , վճարել բոլոր
պարտքերը , հոգալ Պատրիարքարանի ծախքերը , Վարչութիւ-
նը՝ ազգային սնտուկին անձուկ վիճակէն շուարած , տեղի կու-
տար , եւ Պօղոս Պատրիարք 1867 Յուլիսին պաշտօնական յայ-
տարարութեամբ մը կը ծանուցանէր վիճակային առաջնորդնե-
րուն եւ Պոլսոյ Թաղական Խորհուրդներուն թէ Հիւանդանոցի
նիւթական եւ բարոյական մատակարարութիւնը եւ Պատրիար-
քարանի ելեւմուտքին տեսչութիւնը յանձնուած է Մանգուռեկի
խմբագրին բացարձակ անօրէնութեան :

Փանոսեան եօթը ամիս վարեց այս պաշտօնը եւ 1868
Փետրուարի սկիզբը ստիպուեցաւ իր հրաժարականը մատուցա-
նել , չկարենալով հաւասարակշռութիւն հաստատել ծախքին
եւ հասոյթին միջեւ : Իր պաշտօնավարութեան սկիզբնե-
րը , Փանոսեան՝ չնորհիւ իր յօդուածներուն՝ կրցաւ ժողովուր-
դին ուշադրութիւնը դարձնել դէպ ի Հիւանդանոց եւ յաջողե-
ցաւ բաւական նուիրատուութիւն ձեռք բերել : Փանոսեան
մտցուց Հիւանդանոցին մէջ կարգ մը բարւոքումներ , ինչպէս
Միսիսիսիսեանի եւ Փաշախաշի բարձումը , յիմարներուն համար
խաւիզօղի վերջնական հաստատութիւնը , խոհանոցին բարե-
կարգումը , Հիւանդանոցին ներքին վիճակին վրայ ամսական
տեղեկագիրներու հրատարակումը , եւայլն , եւայլն . ձեռնար-
կեց շէնք մը կառուցանել իրր յաւելուած Որբանոցին , յիմար-
ներու համար նոր սենեակներ շինել տուաւ , եւ իր ջանքով էր
որ Կայս. Կառավարութիւնը բարեհաճեցաւ այդ միջոցին միսի

պետական պարէնը 15 օխայէն 30 ի եւ հացն ալ 37 1/2 օխայէն 75 օխայի բարձրացնել : Սակայն իր մեծագոյն սխալը եղաւ 1867ի Հոկտեմբերին Եւրոպա մեկնելը , եւրոպական հայ գաղթականութիւններէ նուէր հաւաքելու համար , թէեւ կարծողներ եղան թէ Փանոսեան օգուտ կը քաղէր այս առթէն՝ Եւրոպան տեսնելու եւ Բարիզի Արուեստահանդէսը այցելելու համար : Այս բացակայութեան միջոցին Հիւանդանոցի հոգը մնաց Տօքթ. Փալուստեանի վրայ , որ անկարող էր այդ ծանր բեռը տանելու : Նուիրատուութիւնները դադրեցան եւ երբ 1868ի Յունուարին Մանգուռէի խմբագիրը դարձաւ Պոլիս , արդէն իր ստանձնած գործին վիճակը յուսահատական էր : Փետրուար 2ին Փանոսեան կը մատուցանէր իր հրատարականը որ կ'ընդունուէր Սառն ժողովէն՝ որուն ատենապետը , Տօքթոր Սերվիչէն էֆէնտի , չափազանց դժգոհ էր Փանոսեանի վարմունքէն :

Փանոսեան Բարեկենդանի օրերուն՝ Հիւանդանոցէն կը քաշուէր , թողլով զայն 1000 ոսկիէ աւելի պարտքով , ամենախեղճ վիճակի մէջ : Սենեքերիմ Մանուկեան , Մկրտիչ Աղաթօն եւ Սաչիկ Ալեանազեան էֆէնտիները , այդ դժուար կացութեան մէջ կ'ընդունէին Հոգաբարձութեան պաշտօնը :

Այդ միջոցին Սէրվիչէն էֆ. մեծ եռանդ ցոյց կու տար Հիւանդանոցի բարեկարգութեան գործին համար : Իր ատենապետած վարչութիւնը կ'որոշէր զատել Անառականոցը եւ Դպրոցը հիւանդանոցէն : Սկզբամբ ընդունած էր նաեւ թէ Հիւանդանոցը պէտք է պարունակէ միայն հիւանդներ , յիմարներ , ապուշներ , անօք ծերեր եւ անկարներ , զատ բաժանումներով իսկ Որբանոցը պէտք է ըլլար որբերու առժամեայ պատասպարան , որդեգրութեան արուելու կամ ժառանգաւորաց վարժարան ունեցող վանքերը զրկուելու պայմանաւ :

Շնորհիւ Սերվիչէն էֆէնտիի աջակցութեան , Սենեքերիմ էֆ. Մանուկեանի ատենապետած առաջին Հոգաբարձութեան օրով , որ պաշտօնավարեց չորս ու կէս տարի (1868 Փետրուարէն 1872 Սեպտ.) , Հիւանդանոցին հացի պետական պարէնը կը բարձրանայ օրական 75 օխայէն 200 օխայի , միսը 30 օխամնալով միշտ : Բանի մը բացառիկ հասոյթներու շնորհիւ Հո-

գարարձութիւնը կը յաջողի 11 խանութներով հասութարեր քասաժ մը կառուցանել տալ Ղալաթիա, Վանցի Ալիքսան ազա կարապետեանի նուիրած հողին վրայ:

Հիւանդանոցի վիճակը կը սկսի բարւոքիլ այս միջոցին: Որբանոցի քարուկիր յաւելուածին շինութիւնը կ'աւարտի, Հիւանդանոցին մէջ նորոգութիւններ կ'ըլլան, ելեւմուտքը կը կանոնաւորուի եւ հասոյթի առաւելութիւն մըն ալ կը գոյանայ ամէն տարի: Այս Հոգարարձութեան հողին եղած է Սենեքերիմ էֆ. Մանուկեան:

1872 Սեպտեմբերէն մինչեւ 1874 պաշտօնավարեց Հոգարարձութիւն մը, որուն ատենապետը եղաւ նախ Գէորգ Զարգարեան եւ վերջերն ալ Տոգթոր Գ. Մողեան, իրենց հետ ունենալով «Սամաթիացի խումբ»ը:

1874 Օգոստոսին, 72ի Հոգարարձութիւնը հրաժարեցաւ, եւ Ազգ. Վարչութիւնը կազմեց նոր Հոգարարձութիւն մը, որուն ատենապետը եւ գլխաւոր գործիչն էր դարձեալ Սենեքերիմ էֆ. Մանուկեան: Այս Հոգարարձութեան օրով աւելի խընամք տարուեցաւ Հիւանդարանին ու Յիմարանոցին, քան Որբանոցի դպրոցին, եւ Սենեքերիմ էֆ. յաջողեցաւ արտասովոր հասոյթի աղբիւրներ գտնել, ինչպէս պարահանդէս, հանգանակութիւն, եւ այլն:

Այս Հոգարարձութեան յաջորդեց 1878 Նոյեմբեր 16ին Միքայէլ էֆ. Յակոբեանի ատենապետած Հոգարարձութիւնը, որ Հիւանդանոցի տարեկան բացը գոցելու համար հանգանակութեան ձեռնարկեց, մէկ կողմ թողլով պարահանդէս տալու սովորութիւնը:

1880ի վերջերը ելմտական նախարարութիւնը գաղբեցուց հացի եւ միսի պարէնը, ինչպէս նաեւ Տատեան Պօղոս պէյէն թողուած միսին փոխարէն վճարուող ամսաթոշակը, սակայն շնորհեւ մեր Օգոստափառ կայսեր, ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏԻԻԼ ՀԱՄԻՏ ԽԱՆ Բ. ի բարձրագոյն իրատէին, գաղբած պարէնը շարունակուիլ սկսաւ 1882 Մարտէն:

1882էն սկսեալ Օրացոյցի հրատարակութեան ձեռնարկուեցաւ Հոգարարձութեան կողմէ, ինչ որ հասոյթի նոր աղբիւր մը եղաւ:

1878ի բազմարդիւն Հոգաբարձութեան օրով Հիւանդանոցի, Որբանոցի եւ Սոհանոցի վիճակը բարւոքուեցաւ, Որբանոցի համար դպրոցական նոր շէնք մը կառուցուեցաւ, եւ փորձուեցաւ հաստատել նորէն արհեստարան մը, մումաշինութեան վրայ աւելցուելով կօշկակարութիւն եւ ատաղձագործութիւն: Նոյնպէս Ս. Յակոբայ վանքին մատուոքը նորոգուեցաւ Վսեմ. Պալեան Սարգիս պէյի ծախքով:

Այս Հոգաբարձութիւնը 1882ին վերջը իր քառամեայ տեղեկագիրը ներկայացուց Ազգ. Վարչութեան. այն ատեն հետեւեալ անդամները մնացած էին պաշտօնի վրայ.

- | | | |
|--------------|--------|--------------------------|
| Միքայէլ | էֆէնտի | Յակոբեան, Ա.սեւնապէս |
| Յովակիմ | » | Ֆէնէրճեան, Ա.սեւնադպիր |
| Տիգրան | » | Կիւմիւշկէրտան, Գաւնձապէս |
| Յովհաննէս | » | Էսաեան |
| Մհր. Սերովբէ | » | Կիւլպէնկեան |

Ազգ. Վարչութիւնը քառամեայ նոր շրջանի մը համար վերահաստատեց այս անդամներէն բաղկացեալ Հոգաբարձութիւնը, որ նոր բարւոքումներ մտցուց հիւանդարանի բաժնին մէջ, — որուն 1880 է ի վեր բժշկապետն էր հանգուցեալ Տոգթ. Վիշէն էֆ. Օրմանեան, — մասնաւոր խնամք տարաւ Որբանոցին ու Աղքատանոցին, եւ աւելցուց Հիւանդանոցի հասոյթները:

1886 Փետրուար 10ին Հոգաբարձութեան գործունեայ անդամներէն Մհր. Սերովբէ էֆ. Կիւլպէնկեան կը վախճանէր եւ կը թաղուէր Հիւանդանոցին մէջ, եւ իր օրդին՝ Պատրիկ էֆ. Կիւլպէնկեան կ'անդամակցէր Հոգաբարձութեան՝ 1886 Մայիսին:

1887 Յունուար 1ին Հոգաբարձութիւնը իր երկրորդ տեղեկագրով մանրամասն տեղեկութիւններ կու տար Հիւանդանոցի ընդհանուր վիճակին վրայ: Ասկէ զատ Հոգաբարձութիւնը պատրաստել տուած էր «Պատմութիւն Ս. Փրկչի Հիւանդանոցին Հայոց ի Կ. Պօլիս» գործը, որ այս հաստատութեան 60 տարուան պատմութիւնը կը ներկայացնէ վաւերագիրներու վրայ հիմնուած եւ որմէ քաղած ենք հոս մինչեւ 1886 տրուած տեղեկութիւնները: Ուշագրաւ էր նաեւ Հիւանդարանի մասին ներկայացուած այն ընդարձակ տեղեկագիրը զոր պատրաստած

է Հիւանդանոցի բժշկապետ Տոբթ. Վ. Օրմանեան : Հոգարար-
 ձութիւնը , յայանելէ յետոյ թէ իր ութամեայ պաշտօնավա-
 րութեան միջոցին 1500 ոսկիէ աւելի ծախք ըրած էր Հիւան-
 դանոցի շէնքին մասնակի նորոգութեանց համար , կը յայ-
 տարարէր թէ հարկ է վերաշինել զայն : Այս վերաշինու-
 թեան համար 25 – 30,000 ոսկիի ծախքով կառուցուելիք քա-
 րուկիր շէնքի մը ծրագիրը պատրաստուած եւ ընդունուած էր
 արդէն Հոգարարձութեան կողմէ :

Հոգարարձութիւնը , որ 1887ի սկիզբն ալ վերահաստատ-
 ուած էր իր պաշտօնին մէջ՝ երրորդ անգամ ըլլալով , 1888 Օ-
 գոստոսին սկսած է Հիւանդանոցի վերաշինութիւնը որ ար-
 տօնուած էր կայս. Իրատէով :

Յովհաննէս էֆ. Էսսեան 1887ին եւ Յովակիմ էֆ. Ֆէ-
 նէրճեան 1888ին հրաժարած ըլլալով , Հոգարարձութիւնը 1891
 Դեկտեմբեր 2ին վերակազմուեցաւ հետեւեալ կերպով .

Միքայէլ	էֆէնտի	Յակոբեան ,	Ա.սեկնապէս
Ալիքսան	»	Խորասանճեան ,	Ա.սեկնադպիր
Տիգրան	»	Կիւմիւշկէբտան ,	Գաւնձապէս
Վսեմ. Արիկ	»	Ունճեան	
Բարսեղ	»	Սթամպօլլեան	
Տոբթ. Յակոբ	»	Պէկեան	
»	Յովհաննէս	»	Թապիպեան
	Պատրիկ	»	Կիւլպէնկեան
	Սարգիս	»	Թաշճեան

Վսեմ. Արիկ էֆ. Ունճեան հրաժարած ըլլալով , իրեն յա-
 ջորդած է Յարութիւն էֆ. Մոստիշեան :

Այս Հոգարարձութեան պաշտօնավարութեան միջոցին է
 որ , 1892 Օգոստոս 31ին , մեր Օգոստափառ Սուլթանին բարձ-
 րագոյն Իրատէով Հիւանդանոցի պետական պարէնի նպաստը
 բարձրացած է օրական 200 օխա հացէն 400 օխա հացի եւ 30
 օխա միսէն 60 օխա միսի :

Այս Հոգարարձութեան անդամները հետզհետէ հրաժարե-
 լով կամ վախճանելով , 1894 Փետրուար 1ին մնացած են միայն
 Սարգիս էֆ. Թաշճեան , Յարութիւն էֆ. Մոստիշեան եւ Բար-

սեղ էֆ. Իսթամպուլիեան : Հոգաբարձութիւնը թէև վերակազմուած, սակայն նորընտիր անդամները իրենց յանձնուած պաշտօնը չեն ստանձնած կամ շուտով հրաժարած են, եւ Սարգիս էֆ. Թաշճեան 1894 Մայիսէն մինչև 1895 Յունուարի վերջը առանձին պաշտօնավարած է :

Այս միջոցին հասոյթի երկու նոր ազբիւրներ մտածուած են եւ բաւական զոհացուցիչ արդիւնք ունեցած : Առաջինն է Հիւանդանոցի օգտին վաճառուած սիկառի թուղթը, որ 1894 էն մինչև 1898ի վերջը արտադրած է 250,600³/₄ դրուշ, եւ երկրորդը՝ յուղարկաւորութեանց առթիւ « փոխան ծաղկեպսակի » եղած նուիրատուութիւնները, որոնք, 1894էն մինչև 1898ի վերջը արտադրած են 87,227 դրուշ :

1894ին կազմուեցաւ Տիկնանց նոր Խնամակալութիւն մը, հետեւեալ կերպով .

- Տիկին Երանուհի Յակոբեան, Ա.սեկնապետ
- » Մաննիկ Տալուաեան, Ա.սեկնադպիր
- » Աղաւնի Գազազեան
- » Արեգնազ Գարամանեան
- » Բրարիոն Աղասեան
- » Երանուհի Կիւմիւշկէրտան
- » Լիւսի Շապուրօֆ
- » Մաքրուհի Պէշիքթաշլեան
- » Յուստիանէ Տիլպէր

Այս Խնամակալութիւնը, հետեւելով 1860ին կազմուած Տիկնանց Խնամակալութեան օրինակին, փութաց խիտն նոր ճերմակեղէններ պատրաստել Հիւանդանոցի պատասպարեալներուն համար : Խնամակալուհիները փոխն ի փոխ այցելեցին Հիւանդանոցը, մխիթարելով պատասպարեալները, մօտէն քննելով անոնց պէտքերը եւ հարկ եղած միջոցները առաջարկելով կերակուրներու մաքրութեան եւ Հիւանդանոցի ընդհանուր բարեկարգութեան մասին :

1895 Փետրուարին ընտրուեցաւ նոր Հոգաբարձութիւն մը, որ երկու տարի պաշտօնավարեց հետեւեալ կազմութեամբ .

	Մանուկ	էֆէնտի	Արղըեան , Ա.սեևապէս
	Յակոբ	»	Պապիկեան , Ա.սեևադպիր
	Գալուստ	»	Համբարձումեան , Գաւնձապէս
	Գրիգոր	»	Ալեանագեան
	Գրիգոր	»	Էվրէնեան
Տոբթ.	Նիկողոս	»	Էսմէրեան
	Պօղոս	»	Աստարճեան
	Տիգրան	»	Մանուկեան
Տոբթ.	Տիգրան	»	Պապաեան

Այս Հոգարարձութեան օրով, 1895 ասրւոյն մէջ Կիւլպէնկեան եղբայրները, իրենց վաղամեռիկ եղբօր՝ Յովհաննէս Կիւլպէնկեանի յիշատակին՝ 500 Օսմ. ոսկի նուիրեցին, եւ Ս. Յակոբայ վանքը նորոգուելով՝ Որբանոցի տղաքը հոն փոխադրուեցան, որովհետեւ Հիւանդանոցի շէնքը շատ անձուկ կուգար անոնց :

Ուրիշ նորութիւն մը մտածուեցաւ եւ գործադրուեցաւ այս միջոցին . Հիւանդանոցի մէջ սկսան անձնուիրարար ծառայել չորս մայրապետներ, որոնք մեծապէս օգտակար եղան, փոյթեռանդ խնամք տանելով պատուապարեալներուն :

1897ի սկիզբները որոշուեցաւ մէյ մէկ գանձանակ պահել բարեկեցիկ տուներու մէջ, յօգուտ Ա.զգ. Հիւանդանոցի . այս մասին կանոնագիր մըն ալ պատրաստուելով վաւերացուեցաւ Ա.զգ. վարչութեանէն :

1897ի Յունուարին Հիւանդանոցի Հոգարարձութեան անդամներէն ոմանք վախճանած եւ ոմանք հրաժարած ըլլալով, Հոգարարձութիւնը վերակազմուեցաւ հետեւեալ կերպով .

	Տիգրան	էֆէնտի	Մանուկեան , Ա.սեևապէս
	Գրիգոր	»	Ալեանագեան , Ա.սեևադպիր
	Գալուստ	»	Համբարձումեան , Գաւնձապէս
	Գրիգոր	»	Էվրէնեան
	Սաշիկ	»	Սօրասանճեան
	Յովհաննէս	»	Պառաւեան
Տոբթ.	Յակոբ	»	Սիմոնօֆ
	Նշան	»	Ղուկասեան
Տոբթ.	Տիգրան	»	Պապաեան

Այս Հոգաբարձութեան պաշտօնավարութեան միջոցին, 1897 Մարտ 1ին, Կայս. Կառավարութիւնը ընդհանուր կերպով ձեռք առնուած որոշման մը հետեւանքով Հիւանդանոցին տրուած հացի եւ միսի պետական պարէնը զեղչեց 15.0/0, որով 400 օխա հացը 340ի, եւ 60 օխա միսը 51ի իջաւ:

1897ի Հոգաբարձութիւնը նոյն տարւոյ Հոկտեմբեր 21ին հրատարած ըլլալով, Ազգ. Վարչութիւնը քանիցս կազմեց Հոգաբարձութիւններ, որոնց անդամները հրատարեցան առանց պաշտօն ընդունելու: Վերջապէս Վարչական Յանձնաժողով մը ստանձնեց Հիւանդանոցի հոգը՝ առժամեայ կերպով, Այս Յանձնաժողովին անդամներն էին:

- | | |
|-----------------------|----------------------------|
| Էլիաս Էֆէնարի Չայեան, | Ա.Տեկուպէս |
| Կարապետ » | Քիւրքճիխանլեան, Ա.Տեկուպիտ |
| Սեպուհ » | Տէմիրճիպաշեան, Գաւնձապէս |
| Տոքթ. Կոմիտաս » | Օրմանեան |
| » Միքայէլ » | Խօրասանճեան |
| Մկրտիչ » | Ասասեան |

Այս Յանձնաժողովը գործադրութեան դրաւ 1897ի Հոգաբարձութեան « Առանին գանձանակներու մասին պատրաստած կանոնագիրը, եւ այդ գանձանակները 1 Յուլիսէ մինչեւ 1 Դեկտեմբեր 1898, վեցամսեայ ժամանակամիջոցի մէջ արտադրեցին 23,814 1/2 դրուշի հասոյթ մը:

Այս Վարչական Յանձնաժողովին օրով է որ Պատրիարքարանը դիմումներ ըրաւ Կայս. Կառավարութեան՝ Հիւանդանոցին հացի եւ միսի պետական պարէնին յաւելման համար:

ԱՐԴԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ

Ազգ. Հիւանդանոցին արդի Հոգաբարձութիւնը, որ ընտրուած է 1898 Օգոստոս 4 ին, հետեւեալ կերպով կազմուած է:

Պատրիկ Էֆէնտի	Կիւլպէնկեան ,	Ա.սէնապէս
Գրիգոր	»	Ալեանաքեան , Ա.սէնադպիր
Գառնիկ	»	Համբարձումեան , Գաւնձապէս
Տոքթ. Արրահամ	»	Նազարեան
Գրիգոր	»	Էվրէնեան
Գրիգոր	»	Կիւմիւշկէրտան
Տոքթ. Միքայէլ	»	Խօրասանճեան
Յակոբ	»	Սթամպուլեան
Տիգրան	»	Մանուկեան

Այս Հոգարարձութեան պաշտօնավարութեան առաջին օրերուն , Օգոստոս 21ին , Օգոստոսիան ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏԻԻԼ ՀԱՄԻՏ ԽԱՆ Բ. բարեհաճեցաւ հրամայել որ Հիւանդանոցին տրուած պետական պարէնը բարձրանայ 340 օխա հացէն 600 օխա հացի եւ 51 օխա միսէն 150 օխա միսի :

Այս յաւելումը Հիւանդանոցին ելմտական վիճակին բարւոքման համար էական դեր մը ունեցաւ , շնորհիւ Վեհ. Սուլթանին :

Հոգարարձութիւնը վերակազմեց իսկոյն Տիկնանց Խնամակալութիւնը հետեւեալ կերպով .

- Տիկին Աղաւնի Գազազեան
- » Աննիկ Համամճեան
- » Բրաբիօն Աղասեան
- » Երանուհի Կիւմիւշկէրտան
- » Էլիզա Տէր-Յարութիւնեան
- » Իսկուհի Փափազեան
- » Յուստիանէ Տիլպէր

Տիկնանց Խնամակալութիւնը՝ աջակցութեամբ Հոմ վարժարանի չրջանաւարտ հայ աշակերտուհիներուն , նուագահանդէս մը կազմակերպեց , որմէ գոյացաւ 625 ոսկի եւ 52 դրուշ ոսկեդրամ : Խնամակալուհիները մտադիր են տարին անգամ մը նմանօրինակ նուագահանդէս մը կազմակերպել , որով հասոյթի նոր ազրիւր մը ապահովուած է Հիւանդանոցին :

Հոգարարձութիւնը փութաց Որբանոցի մէջ կարգ մը շի-

նութիւններ կատարել, ինչպէս ննջարանի յաւելում, ճեմիշ-
ներու տեղափոխութիւն, եւն Որբանոցի պարտէզին մէջ կառու-
ցուեցան քանի մը խանութներ՝ կօշկի արհեստարանի յատուկ
նոյնպէս Ս. Յակոբայ վանքի եկեղեցին՝ որ վնասուած էր երկ-
րաշարժէն՝ նորոգուեցաւ: Բոլոր այս շինութեանց համար՝ ո-
րոնց ճարտարապետութիւնը անձնուիրարար կատարեց Գրիգոր
էֆ. Մելիատսեան, 28,854 դրուշի ծախք գնաց որուն մէկ մասը
հոգացուեցաւ Աստուածատուր Զունդի կտակած 2500 Ֆրան-
քի գումարով:

Հոգարարձութիւնը՝ նկատելով որ յիմարներու թիւը հետ-
ըզհետէ կ'աճի եւ յիմարանոցը չի բաւեր զանոնք պատասպարե-
լու, որոշեց ապուշարանի շէնքին վրայ յաւելում մը ընել: Այս
յաւելումական շէնքին մէջ պիտի պատասպարուին միայն ա'յն
յիմարները՝ որոնց բժշկուիլը անհնար նկատուած է բժիշկնե-
րուն կողմէ, յիմարանոցը յատկացնելով միայն դարմանի կա-
րօտ յիմարներու: 300 — 350 ոսկի ծախքով գլուխ ելլելիք
այս յաւելումական շէնքին ճարտարապետութիւնը ստանձնած
է անձնուիրարար Ստեփան էֆ. Համամճեան:

Հոգարարձութիւնը ի գլուխ հանած է նաեւ ուրիշ կարե-
ւոր շինութիւն մը, որուն պէտքը երկար ատենէ ի վեր զգալի
եղած էր Հիւանդանոցին մէջ: 1860ին ատենները Այվատեան
Յովհաննէս աղա մէկ մասուրա եւ Փափազեան Միրիճան ա-
միրա կէս մասուրա անոյշ ջուր յատկացուցած էին Հիւանդա-
նոցին: Այդ ջուրէն ցարդ չէր օգտուեր Հիւանդանոցը, որով-
հետեւ ճամբաներու շինութիւնը՝ թէեւ քանիցս նախկին Հո-
գարարձութեանց հոգածութեան առարկայ դարձած, սակայն
կարելի չէր եղած յաջողցնել: Արդի Հոգարարձութիւնը վերջ-
նապէս ի գլուխ հանեց այս շինութիւնը, 1300 մէթր երկարու-
թեամբ երկաթ խողովակներ շինել եւ զետեղել տալով, այնպէս
որ այսօր Հիւանդանոցի պատասպարեալները անոյշ ջուրի առա-
ւելութիւնները կը վայելեն: Ասկէ զատ, Հոգարարձութիւնը՝
Հիւանդանոցի բոլոր յարկերուն մէջ թէ՛ տաք եւ թէ՛ պաղ ջուր
վազցնելու համար ճամբաներ եւ ծորակներ, ինչպէս նաեւ այ-
րերու եւ կիններու յատուկ տաշի սենեակներ շինել տուաւ, եւ
բոլոր յարկերը քեչեֆօնով միացուց Տնօրէնութեան սենեակին

հետ : Այս բոլոր շինութեանց ծախքը եղաւ մօտաւորապէս 1300 ոսկւոյ գումար մը , զոր հանգանակելու համար Ս. Պատրիարք Հայրը ժապաւինեալ տոմար մը տուած է Հոգարարձութեան :

Հիւանդանոցը ունի հիմայ ատաղձագործի , թիթեղագործի , ոստայնանկի , երկաթագործի արհեստարաններ , որոնց իւրաքանչիւրին մէջ 2—3 աշակերտներ արհեստով կը պարապին :

ՈՐԲԱՆՈՅՑ . — Հոգարարձութիւնը յատուկ Խնամակալութեան մը միջոցաւ՝ որ կը բաղկանայ Լեւոն Բանիկեան , Պօղոս Քէրէստէճեան եւ Պետրոս Կարապետեան էֆէնտիներէն , եւ որուն կ'ատենապետէ Հոգարարձութեան Ատենադպիր Գրիգոր էֆ. Ալեանաքեան , կը վարէ Որբանոցի ուսումնական եւ արհեստական վարչութիւնը :

Որբանոցը՝ որ հաստատուած է Ս. Յակոբայ վանքին մէջ , ունի Տարրական Նախակրթարան մը , Տարրական Դասընթացքի Ա. եւ Բ. , Միջին Դասընթացքի Ա. եւ Բ. ու Բարձրագոյն Դասընթացքի Ա. կարգերով : Նախակրթարանին մէջ կը կիրարկուի դասարանական դրութիւնը , վեց մնայուն ուսուցիչներով եւ մէկ տեսուչով , ինչպէս նաեւ Կրօնագիտութեան , Թուրքերէնի եւ Գեղագրութեան այցելու դասատուներով : Ասոնցմէ զատ կան նաեւ վեց այր եւ երկու կին երկրորդական պաշտօնեաներ :

Որբանոցը ունի նաեւ արհեստանոց մը , ուր այժմ կ'աւանդուի կօշկակարութեան ճիւղը , ամէն օր՝ որոշեալ ժամերու մէջ . 12 որբեր կը պարապին այս արհեստին . մօտերս պիտի հաստատուի նաեւ դերձակութեան ճիւղը :

Մանչերու Որբանոցը ունի 185 աշակերտներ (Յուլիս 1899) :

Ս. Յակոբայ վանքին մէջ հաստատուած այս Որբանոցէն զատ , Հիւանդանոցի Կանանոցի բաժնին մէջ կայ նաեւ 100ի մօտ երկսեռ մանուկներու Որբանոց մը , որուն ուսումնական վարչութիւնը յանձնուած է ընդհանուր դաստիարակուհիի մը՝ Որբանոցի տեսչին վերին հսկողութեան տակ : Այս Որբանոցը ունի յատուկ ծրագիր մը , ուր մեծագոյն բաժինը կը գրաւեն ձեռագործի եւ ձեւի ճիւղերը :

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՆՈՐ ՇԷՆՔԸ. — Ըսինք արդէն թէ Միքայէլ էֆ. Յակոբեանի ատենապետած Հոգարարձութիւնը 1886ին պատրաստած էր շինութեան ծրագիր մը՝ եւ 25—30,000 ոսկի կը հաշուուէր շինութեան ընդհանուր ծախքը: Ըստ պատրաստուած յատակագծին, 5257 քառակուսի մէթրի վրայ պիտի կառուցուէին Հիւանդանոցին եւ իր յարակից մասերուն նոր շէնքերը: 1888ի Օգոստոսին ձեռնարկուած է այս շինութեան՝ որուն հոգը ստանձնած է Միքայէլ էֆ. Յակոբեանի ատենապետած Շինութեան Յանձնաժողովը: Միքայէլ էֆ. Յակոբեանէ զատ, որ միանգամայն գանձապետն է Յանձնաժողովին, Վսեմ. Արիկ էֆ. Ունճեան եւ հանգուցեալ Մկրտիչ Ֆրէնկեան զբաղեցան գլխաւորաբար շինութեան գործով:

Մինչեւ ցարդ կառուցուած են 3690 քառակուսի մէթր տարածութեան վրայ, հետեւեալ շինութիւնները.

1. Յիմարանոցը, որուն վերին յարկը առժամաբար Հիւանդանոցանի վերածուած է եւ ստորին յարկն ալ Մուսարանի յատկացուած:

2. Մերանոցը եւ Կանանոցը, ուր կը գտնուին նաեւ կանանց Հիւանդանոցը եւ Յիմարանոցը, ինչպէս նաեւ երկսեռ մանուկներու Որբանոցը:

3. Լուացարանը եւ Բաղնիքը, որոնց վրայի յարկը հաստատուած է Հանդերձարանը:

4. Խոհանոցը:

5. 6. — Պատեօսարանը որ պիտի պարունակէ Տեօրեկուքեան Սեկեակը, Դիւանասունը, Դեղարանը, Բժիշկներու սեկեակներ եւ Դահլիճը: Իսկ Հիւրանոցը, Հիւանդանոցի դուռն ու երկու քովերը պաշտօնեաներու յատկացուած սենեակները շինուելու վրայ են:

Ըստ շինութեան ծրագրին, կը մնայ դեռ կառուցուելիք 1587 քառակուսի մէթր տարածութեան վրայ Հիւանդանոցը եւ Ս. Փրկիչ եկեղեցին:

Յիմարանոցին, Մերանոցին, Կանանոցին, Լուացարանին, Բաղնիքին ու Սոհանոցին կառուցումէն ետքը, զբամական անձ-

կութեան պատճառաւ շինութիւնները պահ մը դադրեցան : Յետոյ Միքայէլ էֆ. Յակոբեանի ջանքով պարբերաբար տեղի ունեցան երկրաշարժի հետեւանքով կարեւոր նկատուած նորագութիւնները, եւ կառուցուեցաւ Ապուշարանը : Տարիէ մը ի վեր ձեռնարկուած է Պաշտօնարանի յատուկ եւ յարակից սենեակներու շինութեան, որուն հսկողութիւնը կը կատարէ Միքայէլ էֆ. Յակոբեան : Հիմայ Հիւանդանոցի հին շէնքէն կանգուն կը մնան միայն Ս. Փրկչի եկեղեցին եւ Դեղարանը :

ՀԻՒՍՆԳԱՆՈՅԻ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐԸ

Գրասենեակի պաշտօնեաներ

Գամիկ Հիւնքեարպէյէնաի . — Գործակաւսար .
Մագսուտ Ա. Խիւտապերաի . — Համարակալ :

Հիւանդանոցի պաշտօնեաներ

Վարդան Վարդապետ Բրօխորոնեան . — Հոգեւոր պաշտօնեայ .
Մելքոն Հալաճեան . — Տնօրէն Հիւանդանոցի .
Տօքթ. Միհրան Զարգարեան . — Վիրաբոյժ-բժիշկ .
» Նազարէթ Տաղաւարեան . — Այցեչու բժիշկ ներքին
հիւանդուքեանց .
» Մօնճէրի . — Յիւսարաբոյժ բժիշկ .
» Մկրտիչ Բարաղամեան . — Ներքին բժիշկ .
» Գրիգոր Խորխոսունի . — » » .
» Արշակ Գաղազեան . — » » .
Յարութիւն Ֆերհատեան . — Դեղագործ :

Որբանոցի պաշտօնեաներ

Տօքթ. Գարրիէլ Նահապետեան . — Այցեչու բժիշկ .
Յակոբ Նիկողոսեան . — Տեսուչ .
Օր. Բուբուլ Զայեան . — Ընդհ. դաստիարակչուհի Աղջկանց
Որբանոցի :

Հ Ա Ս Ո Յ Թ Ի Ա Ղ Բ Ի Ի Ր Ն Ե Ր

Աւելորդ չենք նկատեր հոս գաղափար մը առաջ քանի մը հասոյթի աղբիւրներու վրայ, Հիւանդանոցի պատմութեան հրատարակութեան թուականէն ետքի տարիներուն հաշիւներէն քաղելով, Անոնք որ նախորդ տարիներուն վրայ կ'ուզեն գաղափար ստանալ, կրնան դիմել այդ գրքին, եւ 1886ի Հոգարարձութեան Տեղեկագրին, ուր մանրամասն կերպով ներկայացուած են, մինչեւ 1886, Հիւանդանոցի բոլոր հաշիւները:

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ. — Այս Խնամակալութիւնը՝ որ Ազգ. Վարչութեան որոշմամբ ստանձնած է նախկին Սովետոց Յանձնաժողովէն մնացած ազգային սեփականութեանց մատակարարութիւնը, գաւառներէն եկած որբերուն արհեստական կրթութեան համար յատկացուցած է Հիւանդանոցին ամսական 50 ոսկւոյ գումար մը, որ 1897 Յունիս ամիսէն ի վեր կանոնաւորապէս կը վճարուի Հիւանդանոցի Հոգարարձութեան:

ՄՈՄԱՐԱՆԻ ԶՈՒՏ ՇԱՀ. — 1889էն մինչեւ 1898ի վերջը, Մոմարանէն գոյացած գումար շահը կ'երեւայ հետեւեալ ցուցակէն:

1889	Յունուար 1էն մինչեւ Դեկտ. ի վերջը,	12	ամսուան հասոյթ	30744.25			
1890	»	»	»	42335.25			
1891	»	»	Նոյ. 15	»	28836.75		
1891	Նոյ. 16էն	»	92 Դեկտ.ի վերջը,	13 ¹ / ₂	»	40697.37 ¹ / ₂	
1893	Յունուար 1էն	»	»	12	»	34969.25	
1894	»	»	»	12	»	38083.50	
1895	»	»	»	12	»	31498.75	
1896	»	»	97 Ապրիլի	»	16	»	27352.25
1897	Մայիս	»	» 98	»	12	»	10499.—
1898	»	»	» Դեկտ. ի	»	8	»	46048.—
						304064.37 ¹ / ₂	

ՍԻԿԱՌԻ ԹՈՒՂԹ . — 1894էն մինչեւ 1898ի վերջը սիկառի
թուղթէն գոյացած է .

1894 ին	43971.50
1895 »	53779.75
1896 »	57239.50
1897 »	54353.—
1898 »	44257.—
	<hr/>
	250600.75

ՓՈՒՍԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ . — Այս հասոյթը 1894էն մինչեւ
1898ի վերջը հետեւեալ արդիւնքը ունեցած է .

1894 ին	43603
1895 »	20943
1896 »	44269
1897 »	46970.50
1898 »	24474.50
	<hr/>
	87227.—

ՕՐԱՑՈՅՑ . — Ահաւասիկ Օրացոյցի վաճառման տասերեք
տարուան հաշուեցոյցը .

ՕՐԱՑՈՅՑԻ ՀԱՍՈՅԹ

ՏՊՈՒԱԾ ՕՐԱՑՈՅՑ		ԵՄԽՈՒԱԾ ՕՐԱՑՈՅՑ		ԳՈՅԱՅԱԾ ՀԱՍՈՅԹ
	ՊԱՐԶ	ԸՆԴԱՐՁԱԿ	ՊԱՐԶ	ԸՆԴԱՐՁԱԿ
1887.	30.000		27,443	27803. 50
1888	32.000		30,706	26233. 25
1889	31.403		30.048	25411. —
1890	31.831		28,740	25813. 25
1891	31.405		24 451	25044. 50
1892	32.650		31.660	25377. 50
1893	33.447	8000	24.200	4275 20669. 75
1894	32.000	6000	30,024	4606 17552. 25
1895	31.000	6000	17.432	3675 11213. —
1896		9515		4200 6950. —
1897	20.130		18,785	17032. —
1898	28.560	6220	25,392	3640 27778. 75
1899	15.230	5033	13.837	3385 16773. 50
				273652. 25

ԲԱՂԴԱՏԱԿԱՆ

Հետևեալ Բաղդաստիկան Յուշակները որոշ գաղա
րոքեան, եղևմտսփին, ինչպես նաև շնորհմամբ, ա

ԵՐԿՈՏԱՄԱՆԱՄԵԱՅ ԲԱ

ՆԻԻԹԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԵԱՆ

	1887	1888	1889	1890
Հաց ֆաօ	99265	103713	109471	115699
Միս »	15504	15636	12836	12708
Պանիր »	1529	1392	1612	1318
Բրինձ »	4193	4610	5052	5365
Իւղ »	858	827	1090	1024
Չէք »	1794	1937	2008	2047
Լուրիս չոր »	4618	3752	2641	3393
Շաֆար »	1547	1486	1357	2051
Սուրճ »	475	476	526	454
Զիբապսուղ »	1442	1558	2255	1211
Սոխ »	5725	4935	7580	8896
Բարաքէս »	1977	1930	1991	2252
Մախարանիա »	477	568	493	335
Աղ »	1399	1481	1430	1545
Կար »	6930	8357	7524	11283
Ծխախոտ »	497	499	441	457
Անառ »	1955	1885	1655	2052
Ածուխ »	21450	24640	18380	22463
Հանձանուխ »	39642	37734	29849	37424
Բարիւղ »	1925	1917	1742	2036
Բանօտարեղէն »	14790	12423	14044	14847
Ընդեղէն »	1660	2444	2170	2647
Փայտ չէֆի	674	880	522	812
Սպարմաչէք հաս	1200	1359	2175	2335
Հաւկիթ »	8211	7697	9163	9195
Բարիլեան »	12400	15551	14195	13870

ՅՈՒՑԱԿՆԵՐ

Վար մի կու սան Հիւանդանոցի նիւթական մասակարա-
մակում կամ մեռած հիւանդներու քիսին վրայ:

ՂԴԱՏԱԿԱՆ ՅՈՒՑՄԱ

Ս. ՓՐԿԶԻ ԱԶԳ. ՀԻԻԱՆԴԱՆՈՑԻՆ

1891	1892	1893	1894	1895	1896	1897	1898
108265	137119	122869	125829	143361	154455	152236	166967
13301	19081	17542	24969	25350	23183	25796	30170
1521	1505	1702	1434	1495	1538	1255	1420
5401	6462	7338	6492	6119	6460	7099	7440
1098	1263	1384	1658	2115	1764	2368	2264
1823	1684	1253	1585	1560	1350	1944	2462
2827	4999	4260	3843	3903	4899	6903	7964
1660	2069	2299	3403	5124	3887	4220	5703
177	616	636	616	589	620	639	607
1200	1918	1842	1335	1309	1087	1459	1632
5399	6135	6721	6475	9559	5936	9342	4632
2202	6925	8403	9920	6152	8814	10237	10951
368	212	735	835	1669	1412	1867	1680
1234	1588	1544	1530	1652	1780	2053	2201
14498	16821	16507	15350	19747	22926	22694	21380
456	633	534	469	458	472	467	482
2021	2659	2207	2552	2839	2409	2931	2508
15750	26477	24119	32180	23800	36969	28200	24873
40946	46271	30745	24399	21680	27248	24675	36468
3064	5707	4959	4571	5576	5181	5463	5710
14506	16272	11184	15797	25497	29678	29791	23792
3433	4510	2721	4027	4438	3644	4498	5512
1059	1175	1071	1644	1301	1574	2121	1766
2000	2709	2492	2582	1301	1138	1751	1997
11045	13127	12061	18079	14293	17649	20931	20531
20035	15349	8200	10618	11985	14236	36613	22816

ՅԻՆԱՄԵԱՅ ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱՑՈՅՑ ԱԶԳ. ՇԻՒԱՆԴԱՆՈՅԻ

Տարի	Միջոց ամիս	Հատոյթ	Ծախս	Տարբերութիւն	Հիւանդ	Թիմար	Ծեր	Աշակերտ	Պարսօճեայ	Համոզուեալ
1849	12 ամիս	314430	314730	- 300	25-35			100		330-380
1850	"	314460	315160	- 700	30-40			100		350-400
1851	"	484228	494178	- 9950	40-50			100-200		400-500
1852	"	396778	503817	- 107039	40-50			250-150		550-450
1853	"	357677	421595	- 63918	25-35			150-100		450-350
1854	"	392433	429476	- 37043	25-35			100		400-350
1855	"	433208	426965	+ 6243	25-35			80		350
1856	"	612583	519489	+ 93094	25-35			100-130		350-400
1857	"	654499	692391	- 37892	25-35			130-150		380-400
1858	"	863634	867497	- 3863	30-40			200-250		450-550
1859	"	766808	973828	- 207020	30-40			250-300		550-650
1860	"	592178	812875	- 220697	40-50			300-200		650-550
1861	"	535918	761647	- 225729	30-40			150-200		500
1862	"	736444	742170	- 5726	30-35			100		400
1863	"	440198	481092	- 40894	20-30			100		350
1864 Յունվ.	16 ամիս	530341	586678	- 56337	50-60			120-150		400-450
g 1865 Մյու.										
1865 Մյու.	12 "	390097	427832	- 37735	40-50			120-150		400-450
g 1866 "	12 "	494591	494591	=	120-60			100		450-350
1866 Մյու.										
g 1867 "	7 "	481749	377381	+ 104368	60-70			100		400-430
1867 Յու.										
g 1868 Փետր.	11 ամիս	490308	456719	+ 33589	48-78			80-90		330
1868 Փետր.										
g 1869 Յունվ.	12 ամիս	642842	640763	+ 2079	53			90		350

1870	"	571181	528926	+ 42255	70			100		380
1871	"	555923	532298	+ 23625	80-63			100-120		380-450
1872 Յունվ.	8 ամիս	394276	382352	+ 11924	60			130		410
g 1872 Սեպտ.										
1872 Սեպտ.	23 "	1232596	1183016	+ 49579	60-77			100-65		410-450
g 1874 Օգոս.										
1874 Օգոս.	21 "	1314873	1094862	+ 220011	97-114			70-170		430-475
g 1876 Մյու.										
1876 Մյու.	24 "	1818732	1666685	+ 152047	105-94			170-200		450-500
g 1878 Մյու.										
1878 Նոյ.	25 1/2 "	1640189	1376695	+ 264494	115-70			150-190		480-535
g 1881 Յունվ.										
1881	12 ամիս	600488	596083	+ 4404	68			180		520
1882		"	634889	624280	+ 10608	75			180	
1883	"	726773	651543	+ 75240	102			220		590
1884	"	845412	619273	+ 226129	103			270		610
1885	"	868786	643198	+ 225588	109			250		670
1886	"	796679	668536	+ 128143	85			230		600
1887	"	816597	50 678509	+ 138088	50 104	127	115	206	33	585
1888	"	741823	75 673583	+ 68240	25 124	143	105	174	42	588
1889	"	736304	73 667276	+ 69028	75 115	156	111	175	43	600
1890	"	774920	25 792606	62 1/2 - 17686	37 1/2 128	184	108	184	47	651
1891 Յունվ. 15	10 1/2 "	640677	37 1/2 1122427	87 1/2 - 481750	50 145	186	104	192	52	679
1891 Նոյ. 15	13 1/2 "	972849	87 1/2 862860	37 1/2 + 109989	50 153	207	117	220	70	767
g 1892 Դեկտ.										
1892	12 ամիս	998094	926832	25 + 71261	75 155	218	124	214	65	776
1893										
1894	"	976082	908821	+ 67241	487	239	144	144	74	788
1895	"	937045	37 1/2 940511	35 - 3465	97 1/2 152	239	112	217	73	793
1896 Յունվ.	16 ամիս	1349664	1284376	25 + 65287	75 188	249	153	243	70	903
g 1897 Մյու.										
1897 Մյու.	12 "	1050836	1045033	50 + 5802	50 141	267	176	250	66	900
g 1898 Ապր.	8 "	822583	736016	75 + 86566	25 138	271	176	318	81	984
1898 Մյու. Գեղ.										

Ք Ա Ռ Ա Ս Ն Ա Մ Ե Ա Յ Ց ՈՒ Ց Ա Կ

Ա. ՓԻԿՁԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ ԸՆԴՈՒՆՈՒԱԾ ՀԻՒԱՆԳՆԵՐՈՒ

Տարի	I Յուճվ. ներկայ հիւանդներ	Ընդունում		Գումար	Արձակում	Ծեռած	Մեռելներու համեմատութիւն առ 100
		դուրսէն	ներսէն				
1859	31	190		221	108	72	40. 00
1860	41	135		176	109	40	26. 84
1861	27	195		222	124	73	37. 05
1862	25	198		223	150	60	28. 57
1863	13	205		218	126	70	35. 71
1864	22	343		365	218	104	32. 30
1865	43	431		474	141	213	60. 17
1866	120	222		342	193	97	33. 45
1867	52	242	33	327	267	38	12. 46
1868	22	323		345	206	86	29. 45
1869	53	421		474	293	111	27. 47
1870	70	527		597	379	155	29. 02
1871	63	644		707	367	280	43. 27
1872	60	593		653	433	155	26. 36
1873	65	564	146	775	510	189	27. 04
1874	76	565		641	402	142	26. 10
1875	97	730	176	1003	690	199	22. 39
1876	114	762	307	1183	874	204	19. 00
1877	105	828	346	1279	954	231	19. 49
1878	94	1205	285	1584	1135	334	22. 73
1879	115	943		1058	785	203	20. 54
1880	70	887		957	759	130	14. 62
1881	68	689	353	1110	878	157	15. 16
1882	75	809	450	1334	1053	188	15. 14
1883	93	1046	428	1567	1280	187	12. 74
1884	100	1083	359	1542	1242	202	13. 98
1885	98	1064	341	1503	1195	223	15. 72
1886	85	1034	348	1467	1135	228	16. 72
1887	104	1119	263	1486	1094	268	19. 67
1888	124	1563	297	1984	1527	342	18. 29
1889	115	1935	324	2374	1927	319	14. 20
1890	128	1677	417	2222	1739	338	16. 27
1891	145	2280	323	2748	2220	375	14. 45
1892	153	2298	379	2830	2328	347	12. 97
1893	155	2834	546	3535	2902	446	13. 39
1894	187	2362	545	3094	2533	409	13. 90
1895	152	2687	433	3272	2704	380	12. 32
1896	188	2173	429	2790	2247	402	15. 19
1897	141	1277	555	1973	1532	303	16. 51
1898	138	1103	379	1620	1178	283	19. 37



ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՄԻՐԱ ՊԵՉՃԵԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՄԻՐԱ ՊԷՉՃԵԱՆ

Ա. Ղ. Ղ. Հիւանդանոցի հիմնադիրը ծնած է 1771 ապրիլ 10ին, Եէնի Գարու, Հայրն էր Կարսեցի վաճառական Մահաեսի Պողոս աղա Պէղծի, որ 1768ին ատենները Պոլիս եկած էր եւ կը զբաղէր կտաւի վաճառականութեամբ:

Պէղծեան՝ իր մանկութեան տարիները՝ հետեւեցաւ Մայր Վարժարանի դասերուն, ուր հազիւ նախնական կրթութիւն մը ստացած, 1783ին շուկայ ելաւ՝ մետաքսի առեւտուրով զբաղելու: Քիչ ատենէն, շնորհիւ իր ուշիմ ու խոհական գործունէութեան, յաջողութիւն գտաւ, եւ իրր մետաքսի վաճառական անուն մը շինեց: 1802ին Տիւզեան Յովհաննէս Չէլէպի Տէրութենէն ստանձնած ըլլալով մետաքսի մաքսին վարձակալութիւնը, այդ գործին վերակացու կարգեց Պէղծեանը, որ հաւատարմօրէն ծառայեց Տիւզեան գերդաստանին: Յովհաննէս Չէլէպի այնչա՛փ վստահութիւն ունէր անոր վրայ որ Տիւզեան տան ընդհանուր վերակացու կարգած էր զայն:


1819 Սեպտեմբեր 5ին Պէղծեանին յանձնուեցաւ Արքունի Փողերանոցի վերատեսչութեան պաշտօնը, զոր տասը տարիէ աւելի ժամանակամիջոց մը վարեց: Յարութիւն ամիրա, իր պաշտօնավարութեան միջոցին հաւատարմօրէն ծառայեց Կայս. Կառավարութեան եւ արժանացաւ մեր Օգոստոսփառ Սուլթանին մեծ Հօր՝ Երջանկայիշատակ Սուլթան Մահմուտի բարձր շնորհներուն:

Պէղծեանի բարեգործութեանց զալով, երկար է անոնց շարքը: Կարելի է ըսել թէ վերջին դարերուն մէջ ո՛չ մէկ հայ իրեն չափ խնամք տարած է եկեղեցական, կրթական եւ բարեգործական հայ հաստատութեանց բարգաւաճման: Ո՛չ միայն Եէտի Գուլէի Ա. Ղ. Ղ. Հիւանդանոցին հիմնադիրն ու բարերարը եղած է, այլ իր ջանքով ու նիւթական օգնութեամբ կառուցած է Մայր Եկեղեցին, Պատրիարքարանը եւ Պէղծեան Ուսումնարանը, Գուլ Գարուի դրսի Ս. Յարութիւն Եկեղեցին՝ որուն շինութիւնը իր մահէն շատ ետքը՝ 1855ին աւարտեցաւ իր կտակած գումարով, Գուլ Գարուի դուրսը մանչերու եւ աղջիկներու յատուկ երկու դպրոց՝ զորս իր ծախքով կանգնած

է ի յիշատակ իր հօր՝ Պէզճի Պօղոսի եւ իր մօր՝ Վառվառեայի : Պէզճեան այդ վերջին երկու վարժարաններուն ծախքը մշտնջենապէս ապահովելու համար 250,000 դրուշ տուած է Մայր Եկեղեցւոյ , ի հաշիւ անոր շինութեան պարտքին որպէս զի տարուէ տարի քսակը երկու դրուշէն ամսական 1000 դրուշ վճարուի այդ վարժարաններուն : 1824ին Օրթագիւղ հաստատելով իր բնակութիւնը, տեղւոյն Ս. Աստուածածին Եկեղեցւոյն հարիւր հազար դրուշի պարտքը իր քսակէն վճարած է . ինք աւարտած նոյնպէս Արքունի Նաւարանին մէջ կառուցուած Ս. Յարութիւն Եկեղեցւոյն շինութիւնը , որուն Եկեղեցական զարգերն ու անօթները հոգացած է , ինչպէս ուրիշ շատ մը Եկեղեցիներունը : Ինք է որ հիմնած է Բերայի մէջ ազջկանց ասեղնագործութեան վարժարան մը , որուն տարիներ ետքը պիտի յաջորդէր արզի Արուեստանոցը : Նորոգած է Մայր Եկեղեցւոյ Ս. Լուսաւորիչ վարժարանը , Գարթալի դպրոցն ու Եկեղեցին՝ որուն շրջափակին մէջ աղբիւր մը կառուցանել տուած է : Չանաք Գալէի եւ Կէլիպօլուի Եկեղեցիներուն ըրած օգնութիւններէն զատ , իր շնորհիւ վճարուած են Էտիրնէի եւ Մալկարայի հայ Եկեղեցիներուն պարտքերը :

1829ին Պոլսոյ աղքատներուն նուիրած է 100,000 դրուշ , եւ իր նախաձեռնութեամբ է որ հաստատուած է՝ 1832ին , Տնանկաց Մատակարարութիւնը , 36 անդամներով , որոնք վեց կարգի բաժնուած էին : Արզի Աղքատախնամներուն գաղափարն էր որ կը յղանար Պէզճեան , եւ այդ հաստատութիւնը մեծ մխիթարութիւն մը կու տար ժամանակին բոլոր հայ կարօտեալներուն :

Կրօնասէր , աղքատասէր , դպրոցասէր , ամիրան մեծ սէր ունէր նաեւ հայ գրականութեան վրայ : Իր ժամանակակից ամիրաններուն մէջ չի կար մէկը որ այնքան մտերիմ ըլլար իրեն , որքան Գրիգոր Պատուելի Փէշտիմալճեան , իր ատենին Պոլսեցի հայ գրագէտներուն ամէնէն հմուտն ու նշանաւորը : Անոր խորհրդովն էր որ տպագրել տուաւ Գէորգ Պատուելիի Պարսկահայ Բառգիրքը : Պէզճեան սատարած է նաեւ Հայկազեան Բառգրիկ տպագրութեան , որ այնքան օգտակար եղած է հայ լեզուի մշակման եւ զարգացման տեսակէտով :



ՅՈՎՀԱՆՆԵՍ ՊԷՅ ՏԱՏԵԱՆ

Արհաւնի Վարդապետ

Պէզճեան՝ Պատրիարքարանի գործերուն մէջ իր ժամանակին ամէնէն ազդեցիկ անձնաւորութիւնը եղած է : Իր ջանքով է որ 1830ին ձեռք բերուած է Կայս. Հրովարտակ մը՝ որ կ'ապահովէ Երուսաղէմի Ս. Փրկիչ վանքին Հայոց սեփականութիւն ըլլալը : 1820ի Հրաւեր Սիրոյի միաբանական ձեռնարկին մէջ ինք եղած է գլխաւոր դերակատարներէն մէկը , թէեւ այդ բանը շատ սուղի նստած է իրեն :

Պէզճեան՝ իրր պետական պաշտօնեայ եւ իրր հայ , գիտցած է կատարել իր պարտքը : Ժրաջան , աշալուրջ , հանճարեղ , յաջողած է գրեթէ իր բոլոր ձեռնարկներուն մէջ , իր ազգակիցներուն պատկառանք ու սէր ազդելով եւ իր օրինակովը հրաւիրելով զանոնք բարեգործութեան : Այնպէս որ իր մահը , որ պատահեցաւ 1834 Յունուար 3ին , ճշմարիտ սուգ մը եղաւ ազգին համար , եւ ցաւ պատճառեց կառավարական շրջանակներու մէջ ալ , ուր այնքան մաքուր համբաւ մը չինած եւ այնքան սիրուած էր :

Կայսերական արտօնագրով Պէզճեան Յարութիւն ամիրա թաղուած է Մայր Եկեղեցին , որուն մէջ իր կենդանութեանը ինք իսկ շինել տուած էր իր գերեզմանը :

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԷՅ ՏԱՏԵԱՆ

Դարուս ամէնէն նշանաւոր Հայերէն մէկը եղած է Յովհաննէս պէյ Տատեան : Իր խելքով եւ յարատեւութեամբ յաջողած է Օսմանեան կառավարութեան օգտակար ծառայութիւններ մատուցանել , գործնապէս աշխատելով մանաւանդ մեքենագիտական ճիւղին : Հմուտ , համեստ , անվհատ աշխատող , գիտցած է իր ժամանակին պետական անձնաւորութեանց մէջ կարեւոր դիրք մը գրաւել , արժանանալ բարձրագոյն գնահատման , եւ ասով Հիւանդանոցին ու ազգին մատուցած է մեծ ծառայութիւններ :

Յովհաննէս պէյ Տատեան ծնած է Կ. Պոլիս , Ազատըր գիւ-

դը . 1798 Փետրուար 14ին . Չորս օր ետքը , Փետրուար 18ին . մկրտուած է Փիլիպոս գիւղը՝ Ս . Նշան եկեղեցին , ձեռամբ Տ . Պօղոս Քահանայի որ Կաղզուանցի Չաքարիա Պատրիարքին եղբորորդին ու կենսագիրն է :

Յովհաննէս պէյի հայրն էր Տատ Առաքէլ ամիրա , որ 1753ին ծնած էր Ակնայ Կամարակապ գիւղը՝ հին գերդաստանէ մը , եւ Պոլիս գալով , շնորհիւ իր ճարտարութեան . 1795ին Վառօդապետ կարգուած էր : Ուսումնասէր , շնթերցասէր եւ բարեպաշտ , բաւական խնամք տարած է իր զաւակներուն կրթութեան : Յովհաննէս իր մանկութեան առաջին տարիները Այնորկի գիւղը (Ազապը) յոյն քահանայէ մը կ'ուսնէր յունարէն . նոյն միջոցին հայերէնի սկսած էր Նշաստաճեան Գրիգոր անուն ուսեալ անձէ մը , որ Վենետիկի մէջ Մխիթարեաններէն սորված էր գրաբարն ու իտալերէնը եւ գիտէր նաեւ քիչ շատ ֆրանսերէն ու լատիներէն : Նշաստաճեան Գրիգոր Առաքէլ ամիրայի ծառայութեան մօտ էր հայերէնի թարգմանելու համար եւրոպական Հանրագիտարանէ մը Ամիրային մասնագիտութեան վերաբերեալ կարգ մը գիտելիքներ : Նշաստաճեան առանց մեծ բան մը սորվեցնելու իր աշակերտին , կը մեռնի 1809ին եւ անոր կը յաջորդէ Սամաթիացի Տիրացու Յակոբ վարժապետ , քաջ հայագէտ , որմէ Յովհաննէս Տատեան կ'ուսնի հայ լեզուն՝ զոր բաւական աղէկ կը գրէր , ինչպէս նաեւ թուարանութիւն , որուն մէջ շատ յաջող եղած է ետքը : 1811 ին , Մխիթարեանց աշակերտներէն Չամչեան Պ . Սահակէն ալ սկսած է սորվիլ ֆրանսերէն :

Տատ Առաքէլ ամիրա 1812ին վախճանելով , 1813ին Յովհաննէս Տատեան կը մանէ վառօդարանի ծառայութեան , իր եղբորը՝ Սիմօն Տատեանի քով , որ հօրը մահէն ետքը վառօդապետ ընտրուած էր :

Յովհաննէս Պէյ կ'աշխատի մեքենաներուն խելք հասցնելու , վառօդարանի վարպետ Սիվրի Խաչատուր Քէհրայէն եւ ճարտար մեքենագործ Բալուցի Ուստա Ղուկասէն օգտուելով : Այդ միջոցին կ'աշխատի նաեւ գծագրութեան , աշխարհադրութեան եւ կը թարգմանէ ֆրանսերէնէ իր ճիւղին վերաբերեալ կարգ մը գիտելիքներ : 1820ին վերատեսուչ կը կարգուի Պէյ-

գօզի թղթաշինութեան գործարանին, զոր կը թողու երկու տարի ետքը : 1826ին վերջը էյուպի մանածի գործարանին տեսուչ կ'ըլլայ . այս գործարանը հաստատած էր Առաքէլ անուն շայ մը, որ Վիեննայի մէջ ուսած էր մանածի մեքենաներուն շինութիւնը եւ գործածութիւնը : Այս գործը կը թողու 1829 Դեկտեմբերին : Նոյն միջոցին կը շինէ հրացանին երկաթները ծակելու մեքենայ մը :

Իր եղբօր՝ Սիմօն ամիրա Տատեանի մահէն երեք օր ետքը, 1832 Մարտ 7ին, Կայս. Իրատէով Յովհաննէս պէյ Տատեան Ազապլըի վառօդարանին, եւ Սիմօն ամիրայի զաւակը, Պօղոս Պէյ Տատեան, Պոլսոյ Վառօդարանին վառօդապետ կ'ընտրուին :

Յովհաննէս Պէյ այս կարեւոր պաշտօնին կոչուելէ ետքը, աշխատեցաւ իր ճիւղին մէջ կատարելագործութիւններ մտցնելու, հետզհետէ նորագոյն ուսումնասիրութիւններ ընելով : 1835ին առաջին անգամ ցամաքի ճամբով Եւրոպա գնաց եւ այցելեց Ֆրանսա եւ Անգլիա : Ֆրանսայի մէջ աշխատեցաւ, տեսականապէս քիմիարանութեան եւ ուսումնասիրեց իր ճիւղին վերաբերեալ հաստատութիւնները թէ՛ Ֆրանսայի եւ թէ՛ մանաւանդ Անգլիոյ մէջ . եւ երբ 1836ին վերադարձաւ Պոլիս, հետը կը բերէր վկայականներ, որոնք կը հաստատէին թէ իր ժամանակը պարապ անցուցած չէր Եւրոպայի մէջ : Այդ միջոցին աշխատեցաւ տեղեկութիւններ առնել երկաթի ձուլարաններու եւ չուխայի գործարաններու գործիքներուն ու գործողութեան եղանակին վրայ :

Դարձին՝ նոր մեքենաներ հաստատեց եւ բոլորովին նոր դրութեամբ կազմակերպեց իրեն յանձնուած գործը : Ասկէ զատ, իր վերակացութեամբ կառուցուեցան նախ Պէյքօզի խաղախորդի գործարանը, Նիկոմիդիոյ չուխայի գործարանը, Հէրէքէի մետաքսեայ կերպասներու գործարանը, Զէյթուն Պուրնուի երկաթ ձուլելու գործարանը, եւ այլն, որոնց ուսումնասիրութեան եւ այս մասին հարկ եղած մեքենաները բերելու համար, Յովհաննէս Պէյ նորէն երկու անգամ Եւրոպա ճամբորդեց՝ 1842ին եւ 1847ին :

Այս համառօտ կենսագրութեան սահմանէն դուրս է մի առ

մի պատմել հոս Տատեան Յովհաննէս Պէյի գործունէութիւնը՝ այս ժամանակամիջոցին մէջ : Պէտք է բաւականանանք ըսելով թէ արժանացած է քանիցս Սուլթան Մահմուտի եւ Սուլթան Մէճիտի մեծ շնորհներուն , 1838ին՝ Իֆրիխարի պատուանշանին , եւ 1856ին՝ Ուշայի աստիճանին եւ Պեյութեան տիտղոսին :

Յովհաննէս Պէյ գնահատուեցաւ եւրոպական շրջանակներու մէջ ալ եւ պատուոյ անդամ ընտրեցին զինքը Բարիզի Քաջալերութեան Ընկերութիւնը (Société d'Encouragement) , Լոնտոնի եւ Էտիմպուրիի Ճարտարութեանց Բարգաւաճման Ընկերութիւնները , եւ Բարիզի Արեւելեան Ընկերութիւնը :

1856ին Յովհաննէս Պէյ անդամ ընտրուեցաւ Տէրութեան Բարձրագոյն Ատեանին (Ահիսեւմը Ասլիե) եւ 1857ին ալ Հասարակաց Կրթութեան Ժողովին (Մեհնիսը Մեարիֆ) :

Գալով ազգային շրջանակի մէջ իր ունեցած գերին , պէտք է ըսենք թէ ինչ որ բրած է Հիւանդանոցին համար այդ Հաստատութեան մեծագոյն բարերարներուն կարգը կը դասէ զինքը , եւ կ'արժէ որ այդ մասին տանք հոս նոր եւ մանրամասն տեղեկութիւններ , զորս քաղած ենք անտիպ վաւերագիրներէ :

1841ին Սէլվի Պրունի մէջ խաղախորդի գործարան մը շինելու ձեռնարկուած էր : Յովհաննէս Պէյին յանձնուեցաւ շոգեշարժ մեքենայ մը հաստատել այդ գործարանին մէջ եւ շինել կարգ մը գործիքներ , կաշի ձեծելու եւ ողորկելու մեքենաներ , եւ այլն : Յովհաննէս Պէյ 1841ին այդ գործիքները եւ մեքենաները վառօդարանին մէջ շինելու ձեռնարկեց եւ տարի մը ետքը աւարտեց : Անմիջապէս գործարանը բանեցուցին եւ գոհացուցիչ արդիւնք ունեցաւ : Սուլթան Մէճիտ Կայսրը Յուլիս 24ին եկաւ անձամբ քննել նորաչէն գործարանը եւ շատ գոհ մնաց արդիւնքէն : Նոյն օրը Յովհաննէս Պէյ տեսնելով որ Սուլթանը շատ գոհ մնացած է իր աշխատութենէն , Այի Նէճիպ փաշայի միջնորդութեամբ Մեծ Սպարքոս Բիղա փաշայի գիմեց , խնդրելով որ Հիւանդանոցին օրական 15 օխա միսի պետական պարէն մը կապուի : Բիղա փաշա այս խնդիրքը ներկայացուց Սուլթան Մէճիտի , որ հաւանեցաւ , եւ հրամայեց որ նոյն օրէն այդ պարէնը յատկանայ Ազգ. Հիւանդանոցին :

Կայսերական այս շնորհը մեծ ուրախութիւն պատճառեց ազգին : Քիչ ետքը , օրական 15 օխա միս ալ կը յատկանար Պետական Գանձէն՝ Յունաց Հիւանդանոցին :

Այս շնորհէն գրեթէ երեք տարի ետքն է որ հացի պարէնն ալ շնորհուած է , եւ ահա՛ ինչ պարագաներու մէջ : Յովհաննէս Պէյ՝ Եւրոպա ըրած երկրորդ ճամբորդութենէն ետքը , որու միջոցին պատիւ ունեցած էր ներկայանալու Ֆրանսայի թագաւոր Լուի-Ֆիլիբի , 1844ին սկիզբները Կ. Պոլիս հասած էր : Այդ միջոցին Իզմիտի մէջ չուխայի գործարան մը կը հաստատուէր , եւ այդ մասին հարկ եղած մեքենաները Յովհաննէս Պէյի ձեռքով բերուած էին Եւրոպայէն : Շէնքը՝ որուն ճարտարագետն էր Կարապետ ամիրա Պալեան , աւարտելով , Յովհաննէս Պէյ իսկոյն փութացած էր մեքենաները զետեղել տալ հոն , եւ չուխայի արտադրութեան սկսուած էր :

Սուլթան Մէճիտ , 1845 Ապրիլ 8ին այցելելով Իզմիտի գործարանը , շատ գոհ մնացած էր տեսած արդիւնքէն եւ իր բարձր գոհունակութիւնը բարեհաճած էր անձամբ յայտնել Յովհաննէս Պէյին : Նոյն իրիկունը , Իզմիտի մէջ , Յովհաննէս Պէյ ինչպէս նաեւ Կարապետ ամիրա Պալեան եւ Պօղոս պէյ Տատեան , Մեծ Եպարքոս Բիզա փաշային միջոցաւ դիմում կ'ընեն ն. Վեհափառութեան՝ պետական հացի պարէն մըն ալ յատկացնել Ազգ. Հիւանդանոցին , եւ հետեւեալ օրը՝ Ապրիլ 9ին , Սուլթան Մէճիտ կը բարեհաճի հրամայել որ օրական 37 $\frac{1}{2}$ օխա հացի պետական պարէն յատկանայ Ազգ. Հիւանդանոցին : Այս նոր շնորհին առթիւ , ի դիմաց ազգին՝ Աստուածատուր Պատրիարք շնորհակալութիւն մատոյց Երջանկայիչատակ Ինքնակալին : Այսպէս ահա Յովհաննէս Պէյի ջանքով Ազգ. Հիւանդանոցը կ'արժանանար պետական միսի եւ հացի այն կարեւոր նպաստին՝ որ բազմապատկուած է այսօր , շնորհիւ մեր բարեխնամ Ինքնակալ Օգոստափառ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ ԻԻԼ ՀԱՄԻՏ ԽԱՆԻ առատաձեռն նորանոր շնորհներուն :


Բարեպաշտ , ազքատասէր , տոհմասէր , Յովհաննէս Պէյ հետամուտ եղած է միշտ ազգին մէջ վառ պահելու կրօնքի , գրականութեան եւ կրթութեան սէրը : Հիմնած է Ազատլըի Ս. Աստուածածին եկեղեցին , Մաքրի գիւղի եկեղեցին , նոյն-

պէս Նարլը Գարուի վարժարանը: Գարոցներ հաստատած է Իզմիտի գաւառին մէջ: Անդամ եղած է 1847ի եւ 1853ի Գերագոյն Ժողովներուն: Նարլը Գարուի վէճերուն ատեն, իր եղբորորդիին՝ Պօղոս Պէյի եւ Կարապետ Պալեան ամիրայի հետ կենսաճիւղներուն կողմը բռնած է: Մխիթարեանց մեծ գումարներ նուիրած է հրատարակելու համար մատենագրական երկեր: Նոյնպէս տպել տուած է աշխարհագրական քարտէսներ եւ երկրագունտ մը, որոնք ազգային վարժարաններու մէջ աշխարհագրութեան ուսումը ծաւալելու մեծապէս նպաստեցին:

Իբր գիտուն եւ արհեստագէտ, Յովհաննէս Պէյ ունի գրաւոր անտիպ ուսումնասիրութիւն մը, իբր պատմագէտ, իր ժամանակին մէջ ամէնէն հմուտներէն եղած է, եւ ընդհանուր պատմութեան մասին իր թողած ժամանակագրական աշխատութիւնը, որ կը մնայ ձեռագիր, ապացոյց է թէ այդ ճիւղին աշխատած է մեծ եռանդով: Ունի կարգ մը ուրիշ գրուածներ ալ, ձեռագիր, որոնք հայլիներն են իր խոհական մտքին, կրօնասէր հոգիին եւ ազնիւ զգացումներուն:

Իր արժանիքներէն մէկը եղած է նաեւ, Կարապետ ամիրա Պալեանի պէս, խնամեալ կրթութիւն մը տալ իր զաւակներուն: Անոնցմէ անդրանիկը Սիսակ-Առաքէլ պէյ Տատեան, ճարտարագէտ, եւ կրտսերը՝ Գրիգոր պէյ Տատեան, վառօդարանի մէջ կարեւոր դեր մը ունեցած են, եւ առաջինը վառօդապետ եղած է իր հօրը մահէն ետքը: Երկրորդը՝ Ներսէս պէյ Տատեան, Եւրօպա կրթուած, երկրաչափութեան եւ մեքենագիտութեան աշխատած, լաւ Փրանսերէն ուսած եւ թողած է գրուածներ՝ Փրանսերէն ու հայերէն: Իսկ երրորդ որդին՝ Բարձր. Արթին փաշա Տատեան, Պետութեան եւ Ազգին մէջ իր այս օրուան ունեցած դիրքով արժանի զաւակը եղած է իր բարեպաշտ, սրամիտ եւ քաղաքագէտ հօրը:

Յովհաննէս պէյ Տատեան, վերջին տարիները, գործէ քաշուելով, ապրած է Պէյիթաշ, եւ իր հիւանդութիւնը դարմանելու համար 1868ին Վիէննա ըրած ուղեւորութենէն դառնալէն քիչ ետքը, 1869 Ապրիլ 18ին, Աւագ Ուրբաթ օրը կնքած է իր մահկանացուն:



ՊՕՂՈՍ ՊԷՅ ՏԱՏԵԱՆ

Արհունի վարդապետ

ՊՕՂՈՍ ՊԷՅ ՏԱՏԵԱՆ

Տատեան Սիւժն ամիրայի երկրորդ զաւակն է Պօղոս Պէյ, որ ծնած է 1800ին: Ինք թէեւ ունեցած չէ իր հօրեղբօրը Տատեան Յովհաննէս Պէյի տաղանդը, սակայն կրնայ նկատուիլ իր ժամանակին զարգացեալ Հայերէն մէկը:

1826ին Պոլսոյ վառօդարանն ալ յանձնուելով Սիւժն ամիրային, իր կողմէ փոխանորդ կարգուեցաւ որդին՝ Պօղոս Պէյը, որ հօրը մահէն ետքը այդ գործարանին վառօդապետ եղաւ: 1832ին եւ այդ պաշտօնը վարեց երկար տարիներ, յետոյ ստանձնելով նաեւ Ազատլըի ալ վառօդապետութեան պաշտօնը: Պօղոս Պէյ ալ հօրեղբօրը՝ Յովհաննէս Պէյի պէս իր ժամանակին պետական մարդոց բարեկամութիւնը վայելած եւ քանիցս արժանացած է բարձրագոյն գնահատման, 1856 Նոյեմբեր 29ին արժանանալով Ուլայի աստիճանին եւ Պէյութեան տիտղոսին: Երեք անգամ ալ Եւրոպա գացած է կառավարական գործերով եւ իրեն յանձնուած պաշտօնը հաւատարմօրէն կատարած ու վերադարձած է: Այդ ճամբորդութեանց մէկուն ատեն, 1855ին, պատիւ ունեցած է Բարիզի մէջ ներկայանալու Նաբօլէոն Գ. Կայսեր:

Ազգային շրջանակի մէջ իր ունեցած գործունէութիւնը մասնաւորապէս երեւան եկած է յօգուտ Հիւանդանոցին, որուն Միւրեմիկըիին եղած է 1844էն 1848: Այդ միջոցին անձամբ կ'երթայ եղեր յաճախ այցելել Ազգ. Հիւանդանոցը եւ հսկել անոր բարեկարգութեան: 1844ին՝ Հիւանդանոցին նուիրած է իր ընտանիքին յատկացուած 10 օխա միսի պետական պարէնը որուն փոխարէնը մինչեւ այսօր կը գանձուի: Ասկէ զատ, 1844էն 48, տարեկան 500 սկիի չափ գումար մը ծախսած է իր կողմէ, կ'ըսուի, այդ հաստատութեան պէտքերը հոգալու համար: Իր Միւթէվէլլիութեան ժամանակամիջոցը Հիւանդանոցի առաջին տարիներուն ամէնէն բարեկարգ ատենը եղած է:

Պօղոս պէյ՝ Հիւանդանոցի հիմնադրութեան ատենէն օգնած է այդ հաստատութեան: Այսպէս, ինք նուիրած է,


1833ին, Ս. Յակոբայ վանքին գեախնր՝ 10,000 կանգունի չափ, որուն վրայ կառուցուած է «Ժանտախտանոցը», ինչպէս կ'ըսուէր այն ժամանակ: Նոյնպէս կ'ըսուի թէ ինք նուիրած է Հիւանդանոցին զէմը գտնուած այդին՝ 1500 ոսկի ծախսելով:

1848ին հրաժարած է թէեւ Հիւանդանոցի մատակարարութեան մէջ գործօն գեր ունենալէ, սակայն զեռ ժամանակ մըն ալ Միւրթեվեղլի մնացած է այդ հաստատութեան: 1848—52ի Հոգարարձութեան միջոցին ընդարձակած է Ս. Յակոբայ մատուոը: 1858—59 ին, Ս. Յակոբայ վանքին մէջ գիշերօթիկ վարժարան մը հաստատելու նպատակով, Պօղոս Պէյ՝ կարապետ ամիրա Պալեանի հետ նուիրած է 180,000 դրուշի գումար մը որով վանքն ու մատուոը նորոգուած են:

Տատեան Պօղոս Պէյ Հիւանդանոցի պատասպարեալներուն համար հայրական խնամք մը ունեցած է միշտ: Ստեփան Փափազեան, որ Հիւանդանոցին մէջ առած էր իր նախնական կրթութիւնը, հետեւեալը կը գրէ Ժաւառնակ հանդէսին մէջ՝ Պօղոս Պէյի վրայ խօսելով. «Ազգային Հիւանդանոցի վրայ ունեցած երախտիքը անհնար է նկարագրել. հոն մենք ալ ժամանակին անձամբ վայելած ենք բարեյիշատակ Պէյին խնամքը եւ շնորհները. եւ Տէրը գիտէ ինչ մխիթարութեամբ եւ բերկրութեամբ կը լցուէր բոլոր աղքատաց սիրտը, երբ Պէյին ոտքը Փրկչի վանուց սեամէն ներս մտնէր: Բարեյիշատակ հանգուցեալը շատ անգամ երեկոյ ատեն հոն ի Փրկիչ կու գար, եւ գիշերն ի լոյս Ս. Եկեղեցւոյն մէջ անընդհատ աղօթիւք եւ սաղմոսերգութեամբ կ'անցընէր, եւ հետեւեալ առաւօտուն Ս. Հաղորդութիւն կ'առնոյր. եւ նոյն օրն ալ մեծ հացկերոյթ կ'ընէր, եւ մինչեւ երեկոյ ալ անձամբ բոլոր աղքատաց քով կ'երթար, անոնց ամէն մէկուն վիճակը կը տեղեկանար, կը մխիթարէր, կը յուսադրէր զանոնք, եւ անոնց աղօթքը կը խընդրէր: Աստուած ալ կը լսէր այն աղքատաց ձայնին, եւ օր ըստ օրէ աւելի կը ճոխացնէր զայն՝ իր Աջը անոր գերդաստանին վրայ հովանի ընելով: »

Պօղոս Պէյ՝ Ազգ. Հիւանդանոցին ըրած բարերարութիւններէն զատ, երկար միջոց մը 600 դրուշ ամսական յատկացուցած է Սամաթիոյ վարժարանին, հիմէն նորոգած է, 1845ին,





ԿԱՐԱՊԵՏ ԱՄԻՐԱ ՊԱԼԵԱՆ

Այ Սթէֆանոյի եկեղեցին զոր իր հայրը՝ Սիմօն ամիրա Տատեան կառուցած էր, օգնած է Ղալաթիոյ Ազգ. վարժարանին, եւայլն, եւայլն:

Պօղոս Պէյ մասնակցած է նաեւ Պատրիարքարանի գործերուն, եւ քանիցս Գերագոյն Ժողովին անդամակցած է:

Իր մահը տեղի ունեցած է 1863 Նոյեմբեր 19ին, Բարիզի մէջ, ուր գացած էր առողջութիւնը խնամելու: Մարմինը Պոլիս փոխադրուելով, ամփոփուած է Մայր Եկեղեցին:

Կ Ա Ր Ա Պ Ե Տ Ա Մ Ի Ր Ա Պ Ա Լ Ե Ա Ն

Արքունի ճարտարապետ Կարապետ ամիրա Պալեան ծնած է դարուս սկիզբները: Իր հայրն է Գրիգոր ամիրա Պալեան, իր ժամանակին ազգեցիկ Հայերէն, արքունի ճարտարապետ ան ալ: Գրիգոր ազա վախճանած ըլլալով 1832ին, Կարապետ ամիրա, թէեւ երիտասարդ, բայց վարժ արդէն ճարտարապետական արուեստին մէջ, անոր տեղ կ'ընարուի ճարտարապետ կայսերական սալատին, իր քեռայրին՝ Սէրվէրեան Յովհաննէս ամիրային հետ:

Իր արուեստին մէջ ցոյց տուած ճարտարութեան շնորհիւ, Կարապետ խաչփան արժանացաւ բարձրագոյն գնահատման, եւ ասով ստացաւ ազգին մէջ ալ առաջնակարգ դիրք: Բարեսիրտ ու զթած, հետամուտ եղաւ բարենպաստակ հաստատութեանց հաստատման եւ բարգաւաճման: Ուսումնասէր, ազգին մէջ դաստիարակութիւն տարածելու համար ջանք չխնայեց: Կրօնասէր, խստապահանջ եղաւ հաւատալիքներու մասին եւ աններող անոնց դէմ՝ որոնցմէ կը կասկածէր թէ չեն յարգեր Հայ. Եկեղեցւոյ աւանդութիւնները:

1832ին, երբ Պէզճեան ձեռնարկեց հիմնել Եէտի Գուլէի Ազգ. Հիւանդանոցը, իր գլխաւոր աջակիցն էր Կարապետ ամիրա որ Սէրվէրեան Յովհաննէս ամիրայի հետ ճարտարապետը եղաւ Հիւանդանոցի շէնքին: Քիչ ետքը, 1836ին, միշտ իր

քեռայրին՝ Յովհաննէս ամիրայի հետ գաղափարը ունեցաւ Սկիւտարի մէջ բարձրագոյն ուսումնարան մը հաստատելու, իրենց նախաձեռնութեամբ ժամանակին ամիրաները գումարուեցան Պատրիարքարան, Ստեփաննոս « Ազաւնի » Պատրիարքին նախագահութեան տակ, 1836 Օգոստոս 26ին, Այդ ժողովին մէջ որոշուեցաւ Սկիւտարի Երուսաղէմատան խարխուլ վանքը վերաշինելով բանալ Ճեմարանը, Ամիրաները յանձն առին Ճեմարանին տարեկան ծախքը հոգալ, եւ շինութեան ծախքին համար Երուսաղէմի վանքը վճարեց 200,000 դրուշ, Շէնքին հիմնարկութիւնը կատարուեցաւ Սեպտեմբեր 18ին եւ երկու տարի ետքը, Դեկտեմբեր 9 ին Ճեմարանը կը բացուէր :

Յայտնի է թէ Ճեմարանը ազգին առաջին բարձրագոյն վարժարանը եղաւ, մանկավարժական նոր սկզբունքներու համաձայն կառավարուած, եւ հասցուց զարգացած աշակերտներ : Ծանօթ են նաեւ այն վէճերը որոնց տեղի տուաւ այդ կրթական հաստատութիւնը եւ որոնց միջոցին Պալեան ամիրան եւնւաճներուն կողմը կը բռնէր միշտ :

1847ին Կարապետ ամիրա, աջակցելով վառօդապետ ամիրաներուն, Ճէզայիրլի Մկրտիչ ամիրային եւ Կրճիկեան Յակոբ Պէյին, գլխաւոր ջանադիրներէն մէկը եղաւ որ հաստատուի Հոգեւոր Ժողովը, ինչպէս նաեւ Գերագոյն Ժողովը՝ որուն կը մասնակցէին Էսկաֆներն ալ : 1847ի առաջին Գերագոյն Ժողովին գործօն անդամներէն մէկը եղաւ, քանիցս նորէն կոչուելով այդ պաշտօնին :

1854ին, ճարտարապետ ամիրան նախաձեռնութիւնը ունեցաւ երկրագործական դասեր հաստատել տալու Հիւանդանոցին մէջ, ուր փոխադրուած էր Սկիւտարի Ճեմարանը : Այս նպատակին իրագործման 1000 ոսկիի մօտ գումար մը յատկացուց, թէեւ այդ երկրագործական դասերը երկու տարի վերջը դադրած էին արդէն, առանց որ եւ է գործնական արդիւնք մը ունենալու :

1858ին, Փառանգաւորաց գիշերօթիկ վարժարան մը բացուեցաւ Հիւանդանոցին մօտ՝ Ս. Յակոբայ վանքին մէջ, Պալեան Կարապետ ամիրան եւ Պօղոս պէյ Տատեան այս առթիւ իրենց ծախքով նորոգեցին Ս. Յակոբայ եկեղեցին, գիշերօթիկ

վարժարանի յատուկ սրահ, սենեակներ, սեղանատուն շինուեցան եւ Հիւանդանոցին մէջ ալ նորոգութիւններ եղան: 1500 ոսկիի չափ ծախսուեցաւ այս շինութեանց: Պալեան ամիրան գլխաւոր պաշտպանն էր ժառանգաւորաց վարժարանին, որուն ծանօթերը գլխաւորաբար ինք կը հոգար: Այս ժառանգաւորաց վարժարանն ալ քիչ ատենէն կը փակուէր առանց արդիւնք մը ունենալու:

Ամիրան, 1859 Ապրիլ 12ին կտակ մը կը դրէր յաջողցնելու համար զարգացած երիտասարդներ հասցնելու իր այն ծրագիրը, զոր իր քառորդ դար մը ետքը Արմաշու Դպրեվանքը պիտի իրագործէր: Եալովայի մօտ իր ունեցած հասութարեր կալուածները կը կտակէր ազգին, գործածուելու համար ժառանգաւորաց վարժարանի մը պէտքերուն: Այս կտակը, 1861ին, իր կենդանութեան իսկ կը գործադրէր՝ ազգին թողլով այդ կալուածները, յատուկ յայտարարագրով, եւ անոր մատակարարութիւնը կը յանձնուէր Արմաշու Վանքին Միարանութեան: Բայց 1866ի սկիզբները Ամիրան վերջնապէս այդ կալուածներուն մատակարարութիւնը կը թողուր Երուսաղէմի վանքին, որ ցարդ կ'օգտուի անկէ:


Այս բարերարութիւններէն զատ, ճարտարապետ ամիրան իր բնակած թաղին՝ Պէշիքթաշի Ազգ. դպրոցին եւ ազքատներուն մեծ օգնութիւններ ըրած է, ինչպէս նաեւ Պէշիքթաշի եկեղեցւոյն՝ զոր կառուցանել տուած էր 1838ին:

Կրօնական խնդիրներու համար չափազանց նախանձախընդիր, կարապետ ամիրա իր շուրջը հաւաքած է միշտ կրօնագէտ անձեր: Այդ է պատճառը որ 1850ին Մատթէոս Պատրիարքի եւ Տէրոյէնցի հետ հակառակեցաւ գիտնական Շահնազարեան վարդապետին քարոզներուն, զորս հին աւանդութեանց հակառակ նկատեց, թէեւ յանիրաւի:

Իր մեծագոյն արժանիքներէն մէկը պիտի մնայ այն խնամեալ կրթութիւնը զոր տուաւ իր զաւակներուն: Անոնցմէ Նիկողոս Պալեան՝ յիսունական թուականներուն զարգացած նշանաւոր անձնաւորութիւններէն մէկն էր Պոլսոյ հայ ընկերութեան, ինչպէս իր եղբայրները՝ Սարգիս եւ Յակոբ Պէյերը, որոնց երկրորդը մեկենաս մը եղաւ հայ թատրոնին: Նիկողոս

ու Յակոբ Պալեան, երկուքն ալ վախճանած այսօր, իրենց հօր հետ թողած են ո՛չ միայն արուեստագէտի համբաւ, այլ եւ սիրելի անուն մը այն հասարակութեան համար՝ որուն կը պատկանէին, եւ որուն մտաւոր ու բարոյական զարգացման ջանք չխնայեցին բնաւ:

Կարապետ ամիրա Պալեան վախճանեցաւ 1866 Նոյեմբեր 15ին եւ թաղուեցաւ Պէշիքթաշի գերեզմանատունը:





ՏԷՐ ԽԱԶԱՏՈՒՐ ԱԻԱԳ ՔԱԶԱՆԱՅ ՏԷՐ ԳԱԲՐԵԷԼԵԱՆ + 1899

Սասարոյ Ազգային Հիւանդանոցի

Կ. ՊՈԼՍՈՅ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Պ Ո Ւ Մ Պ Ա Բ Ո Ւ

1. Մայր Եկեղեցի

Մայր Եկեղեցւոյ առաջին շինութեան թուականը ծանօթ չէ, բայց Երեմիա Չէլէպի իր Ժամանակագրութեան մէջ կը յիշատակէ թէ 1645ի հրդեհին այրած է այս եկեղեցին եւ անմիջապէս նորէն շինուած՝ Դաւիթ Պատրիարքի օրով եւ Տիվրիկցի Պօղոս վարդապետի ջանքով: 1718ի հրդեհին երկրորդ անգամ այրած է Մայր Եկեղեցին՝ Յովհաննէս Կոլոտ Պատրիարքի օրով եւ վերաշինուած է 1719ին: Այս շինութեան՝ Յովհաննէս Կոլոտ Պատրիարք եւ Գրիգոր Շղթայակիր Երուսաղէմի Պատրիարքը անձամբ աշխատած են գործաւորներուն հետ: 1819ին վերջերը, Ագրիանուպոլսեցի Պօղոս Պատրիարքի օրով, Մայր Եկեղեցին կը նորոգուի եւ 1820 Փետրուար 26ին երեք տաճարներուն օծումը տեղի կ'ունենայ մեծաշուք հանդէսով, որ կը տեւէ 15 ժամ: 1826 Օգոստոս 18ին Մայր Եկեղեցին նորէն կ'այրի, ինչպէս Պատրիարքարանն ալ: Յարութիւն ամիրա Պէզճեանի ջանքով, 1828 Փետրուար 10ին նոր հիմնագրութիւնը կ'ըլլայ, եւ կը տեւէ մինչեւ Սեպտեմբերի վերջը. կը շինուին երեք մեծ եկեղեցիներ ու երեք ալ մատուռներ, նոյնպէս եկեղեցւոյն դիմացը՝ Ազգ. Պատրիարքարանը եւ մօտն ալ Ուսումնարան մը: Այս շինութեանց 3,000,000 զրուշի չափ ծախք կ'երթայ, կ'ըսեն, որուն կէս միլիոնը Պէզճեան իր քսակէն հոգացած է: 1828 Հոկտեմբեր 14ին Մայր Եկեղեցւոյ օծումը տեղի ունեցած է հանդիսաւոր կերպով, մէջտեղի աւագ եկեղեցին յանուն Ս. Աստուածածնի՝ Վերափոխման, հիւսիսային կողմինը

յանուն Ս. Պաշի, եւ հարաւային կողմինը յանուն Որդւոցն Որոտման: Ահաւասիկ եկեղեցւոյն արդի արձանագրութիւնը .

« Ողորմութեամբն Աստուծոյ կառուցան Սուրբ տաճարքս արդեամբ ազգիս Հայոց ի Պատրիարքութեան Տեառն Կարապետի Արքեպիսկոպոսի, Յամի Տեառն 1828 Հոկտեմբեր 1 Տէր վարձատրեսցէ աստ եւ ի Յարութիւն կենաց զյատուկ պատճառ շինութեան սոցին հանդերձ կենդանեօք եւ ննջեցելովք, եւ զամենայն հոգարարձու Յարգելիսն, եւս եւ զհամայն նուիրամատոյց եւ ձրի աշխատաւոր բարեպաշտ ժողովուրդս: »

Գ Ո Ւ Մ Գ Ա Բ Ո Ւ Ի Դ Ո Ւ Բ Ս

2. Ս. Յարութիւն

Այս եկեղեցին կառուցուած է 1855ին, եւ կը կրէ հետեւեալ արձանագրութիւնը .

« Հիմնեցաւ Սուրբ Յարութեան տաճարս արդար կտակաւ Յարութիւն Ամիրայի Պէզճեան եւ աւարտեցաւ արդեամբք ազգիս Հայոց ի Հայրապետութեան Տ. Տ. Ներսիսի Սրբազան Կաթողիկոսի ամենայն Հայոց եւ ի Պատրիարքութեան Կ. Պոլսոյ Տ. Յակոբայ ազգասէր Արքեպիսկոպոսի, յամի Տեառն 1855 Դեկտեմբեր 14: »

Կ Է Տ Ի Ք Փ Ա Շ Ա

3. Ս. Յովհաննէս Աւետարանիչ

Այս եկեղեցին առաջին անգամ կառուցուած է 1849ին եւ Կէտիք Փաշայի հրգեհին այրելով, նորէն շինուած է 1876ին: Արձանագրութիւնն է հետեւեալը .

« Ողորմութեամբն Աստուծոյ կառուցաւ Սուրբ եկեղեցիս յանուն Սրբոյն Յօհաննու Աւետարանչի ի Պատրիարքութեան Տեառն Յակոբայ Արքեպիսկոպոսի յամի Տեառն 1849 ի Դեկտեմբերի 18: Իսկ եւ յետ հրկիզութեան նորոգ շինեցաւ ի Պատրիարքութեան Տեառն Ներսիսի Արքեպիսկոսի Վարժապետ-

եան ի 1876 Յունիսի 27, Կառուցման եւ նորոգ շինութեան Սուրբ Եկեղեցւոյս, ի փառս միոյն Աստուծոյ անձնուէր պատճառ նուիրամատոյց եւ ձրի աշխատաւոր բարեպաշտ Ազգայինք վարձատրութեան ի Տեառնէ մնալով յուսալից : »

Ե Լ Ն Ի Գ Ա Բ Ո Ի

4. Ս. Թաղէոս եւ Ս. Բարթողիմէոս առաքեալ

Մատթէոս Պատրիարք 1846 Ապրիլ 6ին կատարած է այս տաճարին հիմնարկութիւնը՝ Եէնի Գարուի մէջ, ուր չկար Հայոց եկեղեցի : Յունիս 9ին շինութիւնը աւարտելով, Յունիս 18ին Մատթէոս Պատրիարք կատարած է օծումը : Ահա եկեղեցւոյն վրայ գտնուած արձանագրութիւնը .

« Ողորմութեամբն Աստուծոյ կառուցաւ տաճարս այս Սուրբ՝ յանուն Սրբազան Առաքելոցն եւ առաջին Լուսաւորչաց մերոց Թաղէոսի եւ Բարթողիմէոսի ի Պատրիարքութեան Տ. Տ. Մատթէոսի Սրբազան Արքեպիսկոպոսի եւ ազգասէր Պատրիարքի Կ. Պոլսոյ, արդեամբք Աստուածասէր Ժողովրդեան : Յամի Փրկչին մերոյ 1846 Յունիս 9 : »

Ս Ա Մ Ա Թ Ի Ա

5. Ս. Գէորգ

Պոլսոյ հնագոյն եւ նշանաւորագոյն եկեղեցիներէն մէկն է աս : Յայտնի է թէ Կ. Պոլսոյ մէջ Հայոց բնակած առաջին թաղերէն եղած են Ղալաթիա եւ Սամատիա : Ս. Գէորգ եկեղեցին վաղեմի յունական եկեղեցի մըն է, որ ԺԶ. դարուն սկիզբները յանձնուեցաւ Հայոց . Ազգ. Պատրիարքարանը հոս կը գրտնուէր մինչեւ 1640ի ատենները : 1722ին Յովհաննէս Կոլոտ Պատրիարք եւ Գրիգոր Շղթայակիր՝ Երուսաղէմի Պատրիարքը նորոգեցին այս եկեղեցին, ճարտարապետութեամբ Արապ Օղլու Մելտոնին, որ արքունի ճարտարապետ էր այն ատենները : Յովհաննէս Կոլոտ Ս. Գէորգի կից տաճար մըն ալ կառոյց յա-

նուն Մ. Երրորդութեան : Կար նաև ասոնց կից ուրիշ տաճար մը՝ օծուած յանուն Ս. Աստուածածնիս Այս երեք եկեղեցիներն ալ այրեցան 1782 ի մեծ հրդեհին , սակայն 22 տարի ետքը , 1804ին , Կ. Պոլսեցի Յովհաննէս Պատրիարքի օրով Ս. Գէորգ նորէն շինուեցաւ : Հիմնարկութիւնը կատարուեցաւ նոյն տարուան Մարտ 5ին եւ օծումը Յուլիս 7ին : 1832ին նորոգուելէ ետքը , 1866ին Սամաթիոյ մեծ հրդեհին կրկին այրեցաւ այս եկեղեցին եւ հիմէն կառուցուեցաւ 1886—87ին , շնորհիւ Յակոբեան Միքայէլ եւ Յովհաննէս էֆէնտիներու նուիրատուութեան , Մնակեան կտակին եւ ժողովրդական հանգանակութեան : Օծումը տեղի ունեցաւ 1887 Փետրուար 8ին , ձեռամբ Տ. Յարութիւն Վեհապետեան Պատրիարքին : Եկեղեցոյն արձանագրութիւնն է հետեւեալը .

« Տաճարս Սրբոյն Գէորգայ , հրկիզեալ յամին 1866, ողորմութեամբն Աստուծոյ անդրէն կանգնեցաւ ի հիմանց ի Պատրիարքութեան Տ. Տ. Յարութիւն Սրբազան Արքեպիսկոպոսի Վեհապետեան , սկզբնաւորեալ ջանիւք հոգելոյս Պատրիարքին Տ. Տ. Ներսիսի Սրբազան Արքեպիսկոպոսի Վարժապետեան եւ լիաձեռն մասնակցութեամբ երկուց հարազատացն ազգասիրաց Միքայէլի եւ Յովհաննու Յակոբեան , որք պատճառ եղին շինութեանն , յօժարամիտ նուիրելով զերրորդ մասն ծախուց : Յիշատակ սոցա եւ համայն բարեպաշտ օժանդակողաց եւ աշխատաւորաց եղիցի յաւէրժ օրհնութեամբ : Յամի Տեառն 1887 Փետրուար 8 : Ծարտարապետութեամբ Նեմցէ Պետրոսի ՌՅԼԵ : »

ՍՍ.ՄԱԹԻԱ ԵՒՆԻ ՄԱՀԱԼԼԷ (ԱԼԹԸ ՄԷՐՄԷՐ)

6. Գլխադիր Ս. Յակոբ

Այս եկեղեցին շինուած է առաջին անգամ 1858ին , եւ օծումը տեղի ունեցած է նոյն տարին , Յուլիս 13ին , Յակոբ Պատրիարքի օրով : 1892ին այս եկեղեցին կրկին կառուցուած է մեծ մասամբ Բարսեղ էֆ. Յ. Ստամպոլլուեանի ծախքով : Ահաւասիկ կրկին արձանագրութիւնները .

« Ողորմութեամբն Աստուծոյ կառուցաւ Սուրբ Տաճարս այս, յանուն Գլխադիր Սրբազան առաքելոյն Յակոբայ, արդեամբ եւ աշխատութեամբ առաքինասէր ժողովրդոցս հայկազնեան, ի Հայրապետութեան Տ. Տ. Մատթէոսի Աստուածընտիր Կաթողիկոսի ամենայն Հայոց, եւ ի Պատրիարքութեան Կոստանդնուպոլսոյ Տ. Յակոբայ ազգասէր Սրբազան արքեպիսկոպոսի: 1858 Յուլիս 13: »

« Ի վերջոյ ի հիմանէ կառուցաւ Սուրբ Տաճարս այս, նախագահութեամբ Բարսեղ էֆ. Յ. Ստամպոլլուեանի եւ Ազնուաշուք Անգամոց Մասնախմբոյ, յերիս մասունս արդեամբ նորին Վսեմութեան Բարսեղ էֆ. ի եւ մնացեալ մի մասն բարեսէր Անձանց նուիրատուութեամբ, ի Հայրապետութեան Տ. Տ. Մակարայ Վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց, եւ ի Պատրիարքութեան Կոստանդնուպոլսոյ Տ. Խորենայ Աշրղեան Սրբազան Արքեպիսկոպոսի: 1892 Դեկտեմբեր 28: »

Ն Ա Ր Լ Ը Գ Ա Բ Ո Ի

7. Ս. Յովհաննէս Աւետարանիչ

1807ին կառուցուած է այս եկեղեցին, ուր կը գտնուէր արդէն Նարլը Գարուի Հիւանդանոցը՝ անցեալ դարուն մէջ հիմնուած: Ահա եկեղեցւոյն վրայ գտնուած արձանագրութիւնը, որմէ կը տեղեկանանք թէ որոնք եղած են այս եկեղեցւոյն կառուցման աշխատողները.

« Աստուծոյ անհուն ողորմութեամբն, ի Տեառն Դանիէլի Սրբազան Կաթողիկոսի Հայրապետութեան, եւ ի Տեառն Յովհաննէսի Արքեպիսկոպոսի Պատրիարքութեան, հրաշափայլս Տաճար՝ որ յԱնուն Սրբոյն Յովհաննու Աստուածաբան Աւետարանչի, ի ձեռն ջանից Ազնաւորեան Կարապետ Ամիրայի եւ Պաշպաղիրեան միւթէվէլի Մահտեսի Յովհաննէս Աղայի, եւ Խարամաճի Տաքեսեան Նազր Յովհաննէս Աղայի եւ Տիւլպէնտճի Պարոն Մկրտչի, եւ Տէր Ղուկաս վարժապետի, Եւս Քիւրքճի Մահտեսի Յարութիւնի, Ոսկերիչ Պարոն Պօղոս, Խալբախ-

ճի Պարոն Գարրիէլ եւ Պարոն Պօղոս, Պարոն Մերկերիոս եւ Քէրէսթէճի Պարոն Պետրոս՝ հոգետանս հոգարարձուաց աշխատութեամբ կառուցաւ ի յիշատակ իւրեանց, եւ համայն Ազգին, ի ՌՄԾԶին ։ »

Թ Օ Փ Գ Ա Բ Ո Ի

8. Ս. Նիկողայոս

Այս եկեղեցին հիմնուած է 1832ին, ինչպէս կ'երեւայ հետեւեալ արձանագրութենէն .

« Ողորմութեամբն Աստուծոյ կառուցաւ Սուրբ Տաճարս արդեամբք Ազգիս Հայոց ի Հայրապետութեան Տ. Տ. Եփրեմայ Սրբազան Կաթողիկոսի եւ ի Պատրիարքութեան Կ. Պօլսոյ Տ. Ստեփաննոսի Արքեպիսկոպոսի յամի Տեառն 1832 Յունիսի 4 ի փառս Աստուծոյ անձնուէր պատճառ շինութեան նուիրամատոյց եւ ձրիաշխատ Ազգայինքս մնալով յուսալից վարձատրութեան ի Տեառնէ ։ »

Գ Ա Ր Ա Կ Է Յ Օ Մ Ր Ի Ի Կ

9. Ս. Յովհան Ոսկերեացի

Այս եկեղեցին, նշանաւոր ուխտատեղի, շինուած է առաջին անգամ 1828—29ին, Կարապետ Պատրիարքի օրով եւ Պալատի Տ. Պաղտատար քահանային ջանքով. օծուճը կատարուած է 1829 Մայիս 7ին յանուն Ս. Յովհան Ոսկերեացիի ։ Եկեղեցին փոքր ըլլալուն, քսան տարիի չափ վերջը նորէն կառուցուցաւ Մատթէոս Պատրիարքի օրով, եւ շինութիւնը 1847 Հոկտեմբերի վերջը աւարտելով, եկեղեցին օծուեցաւ Նոյեմբեր 16ին ։ Ահա՛ արձանագրութիւնը .

« Նորոգ կառուցաւ հրաշագործ Սուրբ եկեղեցիս յանուն Սրբոյն Յովհաննու Ոսկերեացիի ի Խարակէօմրիւկ, ի Պատրիարքութեան Ամենապատիւ Տ. Մատթէոսի Սրբազան Արքե-

պիսկոպոսի, եւ ազգախնամ Յարգելեաց եւ ժրաջան աշխատա-
սիրութեամբ միութէվէլլի Արղուճան աղայի, եւ հոգարարձուաց
եւ համայն ժողովրդոց: Յամի Տեառն 1847 Հոկտեմբեր 30:»

Պ Ա. Լ. Ա. Թ.

10. Ա. Հրեցսակապէս

Այս եկեղեցին ալ, որ Պոլսոյ նշանաւոր հայ եկեղեցիներէն է, յունական տաճար մըն էր եւ Հայոց յանձնուեցաւ 1631 ին՝ ըստ Երուսաղէմի Գրիգոր «Պարոն Տէր» Պատրիարքի յիշատակարանին եւ 1636ին՝ ըստ Երեմիա Չէլէպիի ժամանակագրութեան: Եկեղեցին Հայոց յանձնուելուն պէս, նորոգուեցաւ շնորհիւ Երուսաղէմի Գրիգոր Պատրիարքին, Արիստակէս վարդապետի եւ Պօլպօլճի Տիւրիկցի Աստուածատուրին: 1729ին Ս. Հրեշտակապետ եկեղեցին այրելով, Յովհաննէս Կոլոտ Պատրիարք վերաշինեց զայն անմիջապէս, Սեղբոս ամիրայի ձեռնառութեամբ (*): 1835ին, Ստեփաննոս «Աղաւնի» Պատրիարքին օրով, վերջին անգամ նորոգուեցաւ այս եկեղեցին, ինչպէս կ'երեւայ հետեւեալ արձանագրութենէն.

«Ողորմութեամբն Աստուծոյ կառուցաւ Սուրբ Տաճարս արդեամբ ազգիս Հայոց ի Պատրիարքութեան Տեառն Ստեփաննոսի Արքեպիսկոպոսի: Յամի Տեառն 1835 Սեպտեմբերի 7:»

Է Յ Ո Ւ Պ

11. Ս. Եղիա

Այս եկեղեցին կը յիշուի ԺԸ. դարէն: Ժողովրդային հանգանակութեամբ նորոգուած է 1800ին եւ Դանիէլ Պատրիարքի

(*) 1660էն առաջ Կ.Պոլսոյ մէջ կը յիշատակուէին վեց եկեղեցիներ, որոնցմէ մէկն էր Ս. Հրեշտակապետ: Սամաթիոյ Ս. Գէորգէն, Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչէն եւ Գում Գաբուի Մայր եկեղեցիէն զոս կային նաեւ Չինիլի Համամի Ս. Սարգիս եկեղեցին եւ Հիսար Տիպիի Ս. Նիկողայոս եկեղեցին, որոնք այրեցան 1660ի հրդեհին:

օրով օծուձը կատարուած Մարտ 26ին : 1832ին հիմէն նորոգուած է Պէզճեան Յարութիւն ամիրայի քրոջ Մէրկէնեան Գէորգ աղայի կողակից տիկին Համասփիւռի ծախքով , ինչպէս կ'երեւայ հետեւեալ արձանագրութենէն .

« Ողորմութեամբն Աստուծոյ վայելչագեղ կառուցաւ Եկեղեցիս Սրբոյն Եղիայի Մարգարէի ի Պատրիարքութեան Տեառն Ստեփաննոսի Արքեպիսկոպոսի , յարդեանց միայն հարազատ քեռ Քրիստոսազօր Յարութիւն Ամիրայի Պէզճեան բարեպաշտունի Համասփիւռ Տիկնոջ՝ եւ պայծառածին զաւակաց նորա Նշան , Պօղոս , Սարգիս եւ Յովհաննէս Չէլէպեանց եւ Մարիամ Օրիորդին . ի յիշատակ ինքեանց եւ Ազգատոհմի իւրեանց , զորս Տէր վարձատրեսցէ յաշխարհի աստ եւ յարքայութեան իւրում ամէն : Յամի Տեառն 1832 Յուլիս 30 : »

Է Յ Ո Ի Պ

12. Ս. Աստուածածին

Այս եկեղեցին ալ կը յիշուի ԺԸ. դարէն : 1855ին հիմէն նորոգուած է հանգանակութեամբ : Արձանագրութիւն չունի :

Խ Ա Ս Ք Ի Ի Ղ

13. Ս. Ստեփաննոս

Խասգիւղի Հայերը նախ կը վերաբերէին Պալատութեմին : 1804ին Ս. Ստեփաննոս եկեղեցին կառուցուած էր արդէն : 1831ին նորէն շինուած է , ինչպէս ցոյց կուտայ սա արձանագրութիւնը .

« Ողորմութեամբն Աստուծոյ հրաշագեղ կառուցաւ եկեղեցիս Սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի՝ արդեամբք ազգիս Հայոց , ի Պատրիարքութեան Տեառն Կարապետի Արքեպիսկոպոսի . Տէր վարձատրեսցէ աստ եւ ի հանդերձելումն զյատուկ պատճառս շինութեան սորին հանդերձ կենդանեօք եւ ննջեցե-

լովք, եւս եւ գյարգելի հոգարարձուս եւ զհամայն նուիրամա-
տոյցս եւ զձրի աշխատաւոր եւ զբարեպաշտ ժողովուրդս : Յամի
Տեառն 1831 Յուլիսի 4. »

Գ Ա Ս Ը Մ Փ Ա Շ Ա

14. Ս. Յակոբ Մծբնայ

Գասըմ փաշայի մէջ մատուռ մը կառուցուած է 1811ին
եւ օծուած նոյն տարուան Սեպտեմբեր 29ին : Արդի եկեղեց-
ւոյն հողը գնած եւ նուիրած է Տոնիկ ամիրա, 1854ին Միսաք
ամիրա ձեռնարկած է հանգանակութեամբ կառուցանել զայն եւ
հազիւ հիմերը շինելով կիսաւարտ թողած է : Էքմէքճի պաշի
Նորատունկեան Յակոբ էֆ. ժողովուրդէն զրամ հանգանակե-
լով եւ ինքն ալ նպաստելով շարունակած եւ ամբողջացուցած
է եկեղեցւոյն շինութիւնը 1857ին :

Ղ Ա Լ Ա Թ Ի Ա

15. Ս. Լուսաւորիչ

Կ. Պոլսոյ արդի հայ եկեղեցիներուն հնագոյնն է ասիկա :
Հ. Ինճիճեան կը գրէ թէ Կոմս անուն հայ վաճառական մը
Խրիմի Քէֆէ քաղաքէն Պոլիս գալով, ձենովացիներէն 1391ին
գնեց հողը եւ 45 տարի ետքը, 1436ին, կառուցուեցաւ եկե-
ղեցին՝ որ կոչուեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորչի անուամբ : Աւետ
անունով դարբին մըն ալ կառուց Ս. Սեղանը : Այս եկեղեցւոյն
շինութեան բուն թուականը հին ձեռագրի մը մէջ ալ գրուած
է սապէս . « Ի թուին Փրկչի 1391, ի Հայրապետութեան Տեառն
Թէոդորոսի, ոմն վաճառական Կոզմո անուն Կաֆայէ եկեալ ի
Կ. Պոլիս, որ էր ընդ իշխանութեամբ Յունաց, հրաման տու-
եալ շինելոյ զեկեղեցի մի ի Ղալաթիա, կոչելով զանունն Սբ.
Լուսաւորիչ, եւ զմատուռ Սբ. Խաչին Աւետ ոմն դարբին շին-
եաց : » 1731 ի Ղալաթիոյ մեծ հրդեհին այս եկեղեցին այրե-

ցաւ : Յովհաննէս Կոլոտ Պատրիարք փութաց իսկոյն վերաշինութեան արտօնագիրը ձեռք բերել, եւ 1732 Գեկեղեցիներ 13ին հիմնադրութիւնը տեղի ունեցաւ : Եկեղեցին հիմէն շինուեցաւ Սարգիս Սալֆայի ձեռքով, կամարակապ եւ փառաւոր : Եկեղեցւոյն ներքին որմերը զարդարուեցան պատկերներով, զորս նկարեց Կեսարացի նկարիչ մը՝ Եսայեայ Մաղկարար : ասիկա եղբայրն էր ԺԼ. դարու մէջ նշանաւոր հայ նկարչի մը՝ որ կը կոչուէր Բարսեղ : Միջին տաճարին երկու քովերը շինուեցան նաեւ երկու փայտակերտ եկեղեցիներ : Այս եկեղեցին՝ որուն բակը թաղուեցաւ Յովհաննէս Կոլոտ Պատրիարք 1741ին, 1771 Փետրուար 7ի մեծ հրդեհին այրեցաւ ու միայն միջին քարաշէն տաճարը մնաց : 1799ի վերջերը եկեղեցին նորոգուեցաւ նորէն, Դանիէլ Պատրիարքի օրով : Իսկ Ստեփաննոս Պատրիարքի օրով, 1834ին, նորոգուած եւ օծուած հինգ եկեղեցիներէն մէկն էր նաեւ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչը՝ որուն վերջին նորոգութիւնը տեղի ունեցած է 1888ին : Ահաւասիկ ինչ որ գրուած է եկեղեցւոյն դրան վրայ :

« Տաճար Աստուծոյ

« Ի սկզբան կառուցաւ Սուրբ տաճարս յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի մերոյ ի հայրապետութեան Հայոց Տեառն Թէոփորոսի Սրբազան Կաթողիկոսի եւ ի Պատրիարքութեան Սրբոյ Երուսաղէմի Տեառն Եսայեայ Արքեպիսկոպոսի առաջնոյ դնեալ տեղիս Սրբոյ Տաճարիս ի Ճէնովացւոց Կոմս անուն բարեպաշտ վաճառականի ուրումն Քէֆէ քաղաքին Ղըրումու, յամի Տեառն 1436 :

« Յետ հրկիզմանն դարձեալ նորոգեցաւ ի հիմանց ի հայրապետութեան Տեառն Աստուածաբոյ Սրբազան Կաթողիկոսի, եւ ի Պատրիարքութեան Սրբոյ Երուսաղէմի Տ. Գրիգորի Շըղթայակրի, եւ ի Պատրիարքութեան Պօլսոյս Տեառն Յօհաննու Բաղիշեցւոյ Կօլօտի, Աշխատասիրութեամբ Սարգիս Սալֆայի . 1733 ի Ղալաթիայ :

« Նորակերտ յօրինեցաւ ճակատ Ս. Եկեղեցւոյս եւ կամարածեւ բացմամբ ներքին միջնորմոյ երեքին տաճարք խառնեցան ի մի ի Հայրապետութեան ամենայն Հայոց Տ. Տ. Մակա-

բայ Ս. Կաթողիկոսի եւ ի Պատրիարքութեան Կ. Պոլսոյ Տ. Յա-
րութիւն Վեհապետեան Ս. Արքեպիսկոպոսի, ընտրելոյն ի Պատ-
րիարքութիւն Ս. Երուսաղէմի : 1888. ՌՅԼԷ :»

Բ Ե Ր Ա

16. Ս. Երրորդութիւն

Անցեալ դարուն սկիզբներէն կը յիշուի Բերայի մէջ Ս. Աստուածածին անուն եկեղեցի մը, որ հաւանօրէն Ս. Երրոր-
դութիւն եկեղեցւոյն տեղը կը բարձրանար : 1814ին, երբ կը
նորոգուի Քաաղգիւղի Ս. Թագաւոր եկեղեցին, Բերայի Հայերը
կը դիմեն Աբրահամ Պատրիարքին այս նորոգութեան ձեռնար-
հելու համար, որովհետեւ շատ ատենէ ի վեր եկեղեցին այրե-
լով, աւեր եւ անշէն մնացած էր : Վերջապէս 1838ին եկեղե-
ցին կը կառուցուի ժամանակին ամիրաներուն ջանքով եւ Ստե-
փաննոս Պատրիարք կ'օժէ զայն նոյն տարւոյ Յունիս 18ին : Ե-
կեղեցւոյն վրայ դանուած արձանագրութիւնը տողէ մը կը բաղ-
կանայ, որ հետեւեալն է .

« Ի Պատրիարքութեան Տեառն Ստեփաննոս Արքեպիսկո-
պոսի Հայոց ՌՄՁԷ :»

Բ Ե Ր Ա

17. Ս. Յարութիւն

Այս եկեղեցւոյն կից էր անցեալ դարուն վերջերը Բերայի
Ազգ. Հիւանդանոցը : Ս. Յարութեան տաճարը փայտաշէն էր
նախ : Քանի մը տարի առաջ Էստեան Յովհաննէս եւ Մկրտիչ
էֆէնտիները քարաշէն եկեղեցի մը եւ դպրոց մը կառուցին
նոյն հողին վրայ, բոլորովին իրենց ծախքով, ինչ որ կ'երեւայ
հետեւեալ արձանագրութենէն .

« Եկեղեցիս տեառնագրեալ յանուն եւ ի փառս Սրբոյ Յա-

բութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ողորմութեամբն Աստուծոյ յայս նուագ ի հիմանց շինեցաւ բովանդակ արդեամբք եւ ծախիւք Յովհաննէս եւ Մկրտիչ Գ. Էսաեան երկուց հարազատաց ի հայրապետութեան Հայոց Տ. Տ. Մկրտիչ Խրիմեան Ս. Կաթողիկոսի եւ ի Պատրիարքութեան Կ. Պոլսոյ Տ. Մատթէոս Իզմիրլեան Ս. Արքեպիսկոպոսի յամի Տեառն 1895 եւ տոմարական թուականին ազգիս ՌՅԽԳ—ՌՅԽԳ : »

«Ես եմ յարութիւն եւ կեանք : »

Բ Ե Ր Ա

18. Ս. Գրիգոր Լուսաւորիչ

Բանկալթիի գերեզմանատան մէջ 1865ին շինուած այս փայտաշէն եկեղեցին արձանագրութիւն չունի :

Ֆ Է Ր Ի Գ Ի Ի Ղ

19. Ս. Վարդան

Այս եկեղեցին ալ արձանագրութիւն չունի : Հողը 1858 ին Ֆէյթուլլահ անուն Ասորիէ մը նուիրուելով , եկեղեցին շինուած է 1860—61ին : Օծումը կատարուած է 1861 Ապրիլ 30ին :

Հ Ա Մ Ա Ղ Գ Ա Յ Ի Ն Ա Ն Կ Ե Լ Ա Ն Ո Յ

20. Ս. Ասուածածին

Խասգիւղի եւ Բերայի բարձունքին վրայ Կայսերական հրամանով կառուցուած Համազգային Անկեղանոցի մէջ Հայոց եւ Յունաց յատուկ երկու եկեղեցիներ ալ շինուած են : Հայոց եկեղեցին օծուած է յանուն Ս. Աստուածածնի՝ 1898 Մայիս 17ին : Այդ եկեղեցւոյն մէջ մնայուն կերպով կը պաշտօնավարէ հայ եկեղեցական մը :

Պ Է Շ Ի Ք Թ Ա Շ

21. Ս. Ասոււածաժիւն

Պէշիքթաշի եկեղեցին կը յիշուի ԺԸ. դարէն : Դարուս սկիզբները փայտաշէն շինուած է եւ 1838ին քարուկիր կառուցուած՝ Պալեան կարապետ ամիրայի « ձեռամբ եւ արդեամբ » : Ահաւասիկ արձանագրութիւնը .

« Սուրբ եկեղեցիս Ասոււածամօր կուսին շինեցաւ ի 1838 ձեռամբ եւ արդեամբ Պերճահամբաւ կարապետ ամիրայի Պալեան Արքունի Ճարտարապետի , զորոյ տարածամ մահ ի 1866 ողբասցէ միշտ ազգն Հայոց որ վայելեաց զանչափ նորա երախտիս եւ Եկեղեցին մաղթեսցէ զանսպառելի կեանս երկնից » :

Յ Ր Թ Ա Ք Ի Ի Ղ

22. Խնդրակատար Ս. Ասոււածաժիւն

Այս եկեղեցին նախ կառուցուած էր յանուն Ս. կիրակոսի , սակայն Յովհաննէս Կոլոտ 1726—27ին նորոգ կառուցած է զայն եւ օծումը տեղի ունեցած է կարապետ կաթողիկոսի ներկայութեան , ինչպէս կը պատմէ Ինճիճեան : Կարապետ Պատրիարքի օրով այս եկեղեցին կը նորոգուի եւ օծումը փառաւոր հանդէսով տեղի կ'ունենայ 1824 Դեկտեմբեր 15ին : Եկեղեցւոյն դրան վրայ հետեւեալ տողը միայն գրուած է .

« Ես եմ գուռն կենաց . 1825 » :

Գ Ո Ի Ր Ո Ի Չ Է Շ Մ Է

23. Ս. Խաչ

Կաղզուանցի Չաքարիա Պատրիարք 1797ին ձեռնարկած է նորոգել , մեծ մասամբ իր ծախքով , Գուրու Չէշմէի Ս. Նշան

եկեղեցին : Շինութիւնը աւարտելով , 1798ի սկիզբները , եկեղեցւոյն օծումը տեղի ունեցած է Փետրուար 28ին յանուն Ս. Խաչի : Այս եկեղեցին նորոգուած է 1834ին եւ օծումը կատարուած է նոյն տարւոյ Նոյեմբեր 16ին : Արձանագրութիւն չկայ :

Ր Ո Ւ Մ Է Լ Ի Հ Ի Ս Ա Ր

24. Ս. Սանդուխտ

Անցեալ դարուն վերջերը շինուած էր արդէն Բումէլի Հիսարի եկեղեցին , յանուն Սրբուհի Սանդուխտի : 1856ին , Յակոբոս Պատրիարքի օրով նորէն կառուցուած է Ճանիկ ամիրայի կտակին համաձայն՝ Մուպահեաճեան Յակոբ աղայի ձեռքով : Օծումը տեղի ունեցած է նոյն տարուան Յուլիս 29ին : Արձանագրութիւն չունի :

Պ Օ Յ Ա Ճ Ը Գ Ի Ի Ղ

25. Ս. Երից Մանկանց

Այս եկեղեցին կառուցած է Միսաք ամիրա , 60 տարիի չափ առաջ , փայտաշէն : Հիմէն շինուած է քարակիր 15 տարիի չափ առաջ եւ օծուած է 1885 Սեպտեմբեր 8ին : Արձանագրութիւն չկայ եկեղեցւոյն վրայ :

Ս Թ Է Ն Ի Ա

26. Ս. Յովհաննէս Կարապետ

Այս փոքրիկ եկեղեցին ալ կառուցած է Միսաք Ամիրան 1857 ին : Արձանագրութիւն չունի :

Ե Է Ն Ի Գ Ի Ի Ղ

27. Ս. Ասուածածին

Հ. Ինճիճեան 1796ին կը գրէ թէ Եէնի գիւղի մէջ Հայերը ունին Ս. Ասուածածին անուանով եկեղեցի մը : 1834ին այս եկեղեցին կը նորոգուի եւ Յովհաննէս Պատրիարք կ'օծէ զայն Յունիս 24ին : Արձանագրութիւն չկայ :

Պ Է Օ Յ Ի Ի Ք Տ Է Ր Է

28. Ս. Հռիփսիմէ

Այս եկեղեցւոյն հիմնադիրներն են Գէորգ պէյ եւ Կարապետ պէյ Գարաքէհեա , թէեւ շինութեան ատենը , եկեղեցւոյն մօտ գտնուած աղօրիքին հայ գործաւորներն ալ մասնակցած են շինութեան ծախքերուն : Ահաւասիկ եկեղեցւոյն դրան վրայ գտնուած արձանագրութիւնը .

«Եկեղեցիս Ս. Հռիփսիմեայ շինեցաւ յամի Տեառն 1848 Արղեամբք երկուց ազնուազարմ ու ազգասէր եղբարց վսեմ. Գէորգ պէյի Կարապետ պէյի Գարաքեհեա :»

Պ Է Յ Ք Օ Ղ

29. Ս. Նիկողայոս

Պէյքօզի Ս. Նիկողայոս եկեղեցին կը յիշէ Ինճիճեան որ 1796էն առաջ այցելած է Պէյքօզ : 1834ին Ստեփաննոս «Աղաւնի» Պատրիարքի օրով նորոգուած , եւ օծուած է նոյն տարուան Սեպտեմբեր 16ին : Եկեղեցւոյն դրան վրայ արձանագրութիւն չկայ :

Գ Ա Ն Տ Ի Լ Լ Ի

30. Ս. Երկոսասան Առաքեալ

Այս եկեղեցին կառուցուած է 1846ին, եւ Ստեփաննոս Պատրիարք օծած է զայն նոյն տարին, Սեպտեմբեր 22ին: Զապաճի Բարսեղ աղա Ղազարոսեանի ջանքով վերջերս հիմէն նորոգուած է: Արձանագրութիւն չկայ:

Գ Ո Ի Զ Կ Ո Ի Ն Ճ Ո Ի Ք

31. Ս. ԼՈՒՍԱԼՈՐԻՅ

Այս եկեղեցին հիմնած է 1835ին Յովհաննէս ամիրա Սէրվէրեան, Սկիւտարի Ճեմարանին բարերարը: Ստեփաննոս «Աղաւնի» Պատրիարք նոյն տարին օծած է զայն Մայիս 11ին: Յետոյ նորոգուած է 1861ին, ինչպէս կ'երեւայ հետեւեալ արձանագրութենէն.

«Տաճար Աստուծոյ յանուն Սրբոյ Լուսաւորչի հաստատեալ յամի Տեառն 1835, յարքունի հարտարապետ Յովհաննէս ամիրայէ Սէրվէրեան եւ ի հիմանց նորոգեալ ջանիւք ժառանգաց հիմնադրին, արդեամբք Ազգիս եւ մասնաւոր նպաստիւք Շալճեան Պետրոս Աղայի յամի Փրկչին 1861.»

Ս Կ Ի Ի Տ Ա Ր (Ս Է Լ Ա Մ Ի Է)

32. Ս. ԽԱՅ

Ս. Խայ եկեղեցին 1697 ին հիմնած է Տ. Արրահամ քահանայ, որուն գերեզմանը կը գտնուի եկեղեցւոյ աջակողմեան բակի պարտէզին մէջ: Յովհաննէս Կոլոս Պատրիարքը 1727 ին նորոգած է այս եկեղեցին, որ նորէն կառուցուած է 1830 ին, ժողովրդային հանգանակութեամբ, Կարապետ Պատրիարքի օրով: Ահա արդի արձանագրութիւնը.

«Ողորմութեամբն Աստուծոյ չքնաղ կառուցաւ եկեղեցիս Սուրբ Խայի ի Պատրիարգութեան Տեառն Կարապետի Արքեպիսկոպոսի. յարդեանց ազգիս Հայոց եւ ջանացողութեամբ

աստուածասէր իշխանապետաց, որոց ամենեցուն ընդ մասնաւոր հոգարարձուի շինութեանս տացէ Տէր զուարճանալ յերկնաւոր եկեղեցին ընդ անմահից հրեշտակաց: Յամի Տեառն 1830 Սեպտեմբեր 27:»

ՍԿԻԻՏԱՐ (ԵԷՆԻ ՄԱՀԱԼԼԷ)

33. Ս. Կարապետ

Վանեցի Զաքարիա վարդապետ շինած է այս նշանաւոր եկեղեցին ժէ: դարուն եւ Յովհաննէս Կոլոտ Պատրիարք նորոգած է զայն 1727 ին: (Ս. Կարապետի դիմացը կառուցուած է նոյն ատենները Ս. Երուսաղէմի Պոլիս դանուող միաբաններուն համար վանք մը: Երուսաղէմի Պատրիարք Գրիգոր Շըղթայակիր երբ Պոլիս եկաւ 1736-ին, այս վանքին մէջ նոր սենեակներ շինել տուաւ: Այս վանքին տեղին վրայ շինուեցաւ յետոյ Ճեմարանը): 1844ին նորոգուած, 1887ին այրած եւ 1888ին վերստին նորոգուած է Ս. Կարապետ եկեղեցին, Ունճեան եղբայրներուն ծախքով, ինչպէս կ'երեւայ սա արձանագրութենէն.

«Տաճար Աստուծոյ յանուն Սրբոյ Կարապետին
Նորոգեալ ի Պատրիարքութեան Տեառն Աստուածաբոյ
Սրբազան Արքեպիսկոպոսի, 1844 Օգոստ. 6:»

«Եկայք կերայք ի հացէ իմմէ եւ արբէք զգինի իմ

«Զոր խառնեցի ձեզ:

«Որ դայ առ իս ո՛չ քաղցիցէ եւ որ հաւատայ յիս

«Մի՛ երբէք ծարաւեսցի:»

«Տաճարս Աստուածային յանուն Սրբոյն Կարապետի՝ հրկիզաւ յամին 1887 յՕգոստոսի 2 եւ վերանորոգեալ պայծառացաւ յամին 1888 ի Յունիսի 12 ի Հայրապետութեան ամենայն Հայոց Տ. Տ. Մակարայ Ս. Կաթուղիկոսի եւ ի Պատրիարքութեան Կ. Պոլսոյ Տ. Յարութիւն Ս. Արքեպիսկոպոսի:

արդեամբ եւ ծախիւք Աստուածասէր Ունճեան Մաթուս եւ Արիկ հարազատաց ի յիշատակ հոգելոյս ծնողաց իւրեանց կարասեալի եւ Թագուհւոյ Ունճեանց . ՌՅԼԶ. »

Գ Ա Տ Ը Գ Ի Ի Ղ

34. Ս. Թագաւոր

Առաջին անգամ 1814ին կը գտնենք այս եկեղեցւոյն յիշատակութիւնը : Այդ տարին « նորոգ կը շինուի » այս եկեղեցին եւ փառաւոր հանդէսով կ'օծուի Յուլիս 4ին, Արրահամ Պատրիարքի օրով : Յետոյ 1858ին հիմէն կը կառուցուի նորէն, ինչպէս կ'երեւայ հետեւեալ արձանագրութենէն .

« Ողորմութեամբն Աստուծոյ ի հիմանէ կառուցաւ Սուրբ Թագաւորի Տաճարս արդեամբք Մեծապատիւ մահտեսի կարասեալեաց ի Մուրատեան կարնեցւոյ ի յաւերժական յիշատակ Ազնուական իւրոյ Ազգատոհմին : Ի Հայրապետութեան Տ. Տ. Մատթէոսի Արրազնագոյն կաթողիկոսի ամենայն Հայոց եւ ի Պատրիարքութեան կոստանդնուպոլսոյ Տեառն Յակոբայ Արրազան Արքեպիսկոպոսի, յամի Տեառն 1858 Սեպտ. 30 : »

Գ Ա Ր Թ Ա Լ

35. Ս. Նշան

Գարթալի Ս. Նշան եկեղեցին դարուս սկիզբները խարխուլ վիճակի մէջ ըլլալով Պէզճեան ամիրա կառուցած է զայն իր ծախքով : 1857ին նորէն կը կառուցուի այս տաճարը, որուն դրան վրայ հետեւեալը գրուած է .

« Ողորմութեամբն Աստուծոյ կառուցաւ տաճարս Ս. Նշանի արդեամբք ազգիս Հայոց եւ առատանուէր օժանդակութեամբ Քրիստոսասէր հարազատաց Նորատունկեան Սիմոնի, Յակոբայ եւ Մահտեսի Գրիգորի, ի Պատրիարքութեան Տ. Յակոբայ Ա. Արքեպիսկոպոսի յամի Տեառն 1857 Սեպտ. 1 : »

Ա. Լ. Է Մ Տ Ա. Ղ. Ի

36. Ա. ՆԵԱՆ

Ահաւասիկ այս եկեղեցւոյն արձանագրութիւնը .

« Նորոգեցաւ ի հիմանց հրաշագործ եկեղեցիս Սուրբ Նշա-
նի արդեամբք ազգիս Հայոց ի Պատրիարքութեան Տեառն Ստե-
փաննոսի Սրբազան Արքեպիսկոպոսի . 1835 Յունիս 15 . »

Գ Ը Ն Ա Լ Ը Կ Ղ Զ Ի

37. Ա. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՅ

1855 Յուլիս 8 ին տեղի ունեցաւ այս եկեղեցւոյն հիմե-
րուն օժման հանդէսը եւ 1857 Սեպտեմբեր 22 ին ալ եկեղեց-
ւոյն օծումը , զոր կատարեց Յակոբ Պատրիարք : Ահա՛ արձա-
նագրութիւնը .

« Կառուցաւ Սուրբ եկեղեցիս յանուն Սրբոյն Գրիգորի
Լուսաւորչին , ի Պատրիարքութեան Կ. Պոլսոյ Տեառն Յակո-
բայ Արքեպիսկոպոսի , յամի Տեառն 1857 Սեպտ. 22 . »

Ա Յ Ս Թ Է Ֆ Ա Ն Օ

39. Ա. ԱՏԵՎԻԱՆՈՒ

Այս եկեղեցին կառուցած է Վառոդապետ Սիմօն ամիրա
Տատեան 1826 ին . յետոյ իր որդին Տատեան Պօղոս պէյ նորէն
չինած է զայն 1845 ին : Օծումը տեղի ունեցած է 1844 Յու-
նիս 13 ին , Աստուածատուր Պատրիարքի օրով : Ահաւասիկ ինչ
որ գրուած է եկեղեցւոյն գրան վրայ .

« Ողորմութեամբ Տեառն Աստուծոյ կառուցաւ տաճարս
յանուն Սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի , յատուկ ջանիւք
եւ արդեամբք հանգուցեալ Սիմօնի Առաքելի Տատեան , յամի
Տեառն 1826 , զոր վերօսին նորոգ շինութեամբ ի հիմանէ
պայծառացոյց նորին բարեժառանգ եւ մեծահաւատ ազգասէր
որդի արքունի Վառոդապետ Պօղոս Սիմօն Տատեան ի յիշատակ
իւր եւ նախնեաց իւրոց յամի Տեառն 1843 : »

Մ Ա Ք Ր Ի Գ Ի Ի Ղ

38. Ս. Աստուածածին

Ահաւասիկ արձանագրութիւնը .

«Կառուցաւ յանուն Մնուկ Ս. Աստուածածնայ եկեղեցիս արդեամբ Տատեան Ազնուազարմ Յովհաննէս պէյի, յամի Տեառն 1844 Ապրիլ 7.»

Ա Ղ Ա Տ Լ Ը

40. Ս. Աստուածածին

Այս եկեղեցւոյն հիմնարկութիւնը տեղի ունեցած է 1835 Յուլիս 28 ին, Ստեփաննոս «Աղաւնի» Պատրիարքին օրով: Յովհաննէս ամիրա Տատեան ի յիշատակ իր հօրը՝ Տատ Առաքէլ ամիրային, առաւ շինութեան բոլոր ծախքերը: Օծումը կատարուած է 1837 Ապրիլ 25 ին:

Գ Ա Ջ Լ Ը Չ Ե Մ Է, Ե Է Տ Ի Գ Ո Ի Լ Է Է Դ Ո Ի Ր Ս (Ա Ջ Գ. Հ Ի Ի Ա Ն Դ Ա Ն Ո Յ)


41. Ս. Փրկիչ

Ա Ջ Գ. Հիւանդանոցին հետ շինուեցաւ այս փայտաշէն եկեղեցին ալ, 1832—33 ին: Արձանագրութիւն չունի:

Չ Է Յ Թ Ի Ն Պ Ո Ի Ր Ն Ո Ի

42. Ս. Յակոբ

Այս մատուռը շինուած է Ս. Յակոբայ վանքին մէջ, 1832ին, Ա Ջ Գ. Հիւանդանոցէն հինգ վայրկեան հեռու: Հիւանդանոցի 1848—52 ի Հոգարարձութեան միջոցին այս մատուռը ընդարձակեց Տատեան Պօղոս պէյ, իր աներձագին՝ Գափամաճեան Անտոն աղայի ձեռքով: Պալեան Կարապետ ամիրա նորոգեց եւ զարդարեց զայն 1859 ին: Արձանագրութիւն չունի:



ԱՐՄԱՇՈՒ

Դ Պ Ր Ե Վ Ա Ն Ք Ը

Արմաշու Չարխափան Ս. Աստուածածին վանքին առաջին հիմնարկութիւնը թէպէտ հաստատուն արձանագրութեամբ վկայուած չէ, այլ աւանդութեանց և մնացեալ յիշատակաց ուսումնասիրութեամբ կը ցուցուի թէ եղած է 1611 թուին, Սուլթան Ահմէտ Ա. Խնքնակալին կայսրութեան ատեն, և Դաւիթ Վաղարշապատցի կաթողիկոսին և Գրիգոր Կեսարացի Պատրիարքին ժամանակ:

1. ԹԱԴԵՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ, Նուիրակն Ս. Էջմիածնի եղած է Արմաշու վանքին հիմնադիրը և Արմաշու վիճակին առաջին առաջնորդը, իրեն ներքեւ ունենալով Նիկոմիդիա, Ատարազար, Կեյվէ, Բազար, Սէօլէօզ, Կիւրլէ, Պանարմա, Պալըքէսէր, Քիրմասթի և Պիղա իրենց թեմերով: Արմաշու վանքը եղած է միանգամայն ուխտատեղի բոլոր հայ հաւատացելոց Կոստանդնուպոլսոյ, Ադրիանուպոլսոյ, Փիլիպպուպոլսոյ, Պրուսայի, Չմիւռնիոյ, Պիլէճիկի, Կուտինայի, Գաղատիոյ, և Իկոնիոյ նահանգներուն:

2. Հիմնադրէն ետքը իբր 60—70 տարի առաջնորդի անուն չեմք գտնել, այլ 1661 Մայիս 23 ին Քէօմիւրճեան Երեմիա չէլէպիի ձեռօք գրուած յիշատակարան մը կը վկայէ թէ Արմաշու Չարխափանի վանքը արդէն նշանաւոր ուխտատեղի մը եղած էր և սեփական միարանութիւն ունէր:

3. ՄԱՐԿՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՈՆՏԷՐ, եօթնեւտասներորդ դարուն վերջերը երկարատեւ պաշտօնավարութիւն ունեցաւ:

4. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ , ութեւտասնեւ-
րորդ դարուն սկիզբը 25 տարւոյ չափ պաշտօնավարեց եւ
1720 ին Չարխափանին տաճարը նորոգեց :

5. ԱՆՏՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐՄԱՇԵՑԻ եւ Արմաշու միարան մի-
ջոց մը պաշտօն վարեց , այլ 1741 ին անկարութեան պատճա-
ռով պաշտօնէ հանուեցաւ :

6. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՐԵՏԱՑԻ , 1741 էն սկսելով
10 տարւոյ չափ պաշտօնավարեց , վանքին մէջ իբր փոխա-
նորդ պահելով Արմաշեցի Անտօն վարդապետը :

7. ԱԹԱՆԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻ , 1752 ին պաշ-
տօնի անցաւ եւ միայ մինչեւ իւր մահը ի 1766 : Նշանաւոր
նորոգութիւններ կատարեց վանքին մէջ եւ շինեց մեծ աղբիւրը
որ ցարդ կը մնայ :

8. ԱԻԵՏԻՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ , 1766 էն 1780 պաշտօն վարեց ,
եւ իւր օրով 1771 Փետրուար 6 ին վախճանեցաւ Արմաշեցի
Անտօն վարդապետը :

9. ՊԵՏՐՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՂԱՓԱՆՑԻ , ծանօթ երգարանը , պաշ-
տօնի կոչուեցաւ իւր խոր ծերութեան մէջ ի 1780 , եւ թէպէտ
Պատրիարքարանն ուղեց յետոյ փոխադրել զնա ի Պանաղրմա ,
որ Արմաշէ նոր զատուած էր , այլ չուղեց երթալ եւ իւր ձեռ-
նասուն Յովակիմ եպիսկոպոսի ձեռօք կառավարուեցան վանքն
ու վիճակը մինչեւ իւր մահը 1784 Մարտ 20 ին : Այս միջոցին
շինուեցան Նիկոմիդիոյ Առաջնորդարանը եւ Նուիրակառուներ
որ այսօր օրիորդաց վարժարան եղած է :

10. ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ , Կոստան-
դնուպոլսեցի , Կաղզուանցի Չաքարիա Պատրիարքի ձեռնա-
սուն , անմիջապէս Արմաշու եւ Նիկոմիդիոյ առաջնորդ ընտ-
րուեցաւ , այլ միայն 1786 ին Յովակիմ եպիսկոպոսը հեռացնել
տալով պաշտօնի կրցաւ ձեռնարկել : Առաջի կը սկսի Արմաշու

համար նոր շրջան մը կանոնաւոր միաբանութեան եւ ուսումնարանի հաստատութեամբ : Տաճարն ի հիմանէ նորոգուեցաւ եւ վանքը նորէն շինուեցաւ ընդարձակ եւ հոյակապ , ինչպէս նաեւ վանական նոր աշակերտութիւն մը սկսաւ Չաքարիա Պատրիարքի հովանաւորութեամբ եւ Բարթողիմէոս առաջնորդի աշխատութեամբ : Շինութիւնք եւ հաստատութիւնք հազիւ 1797 ին վերջացան , այլ եօթը տարի ետքը 1804 ին վանքն ու եկեղեցին , ուսումնարանն ու մատենադարանն պէտք ունեցան նորոգութեան , եւ Բարթողիմէոս արքեպիսկոպոս հինգ տարի եւս վշտալից եւ տառապազին կեանքէ ետքը վախճանեցաւ ի Նիկոմիդիա 1809 Մարտ 25 աւագ հինգշաբթի օր , 60 տարեկան , եւ թաղուեցաւ եկեղեցւոյ բակը :

11. ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵԻԴՈԿԻԱՑԻ , 1809 Մայիս 16 ին անուանուեցաւ , այլ առանց իրիք արգիւնաւորութեան միւս տարին հրաժարեցաւ եւ Պրուսայու առաջնորդութեան անցաւ :

12. ՊՕՂՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՂԱՐԱԽՕԶԵԱՆ , Տէրէվէնքցի , Չաքարիա Պատրիարքի ձեռնասուն , եւ Արմաշու երկրորդ շրջանին իրապէս հիմնադիր ճանչցուած , Բարթողիմէոսի աշխատութեանց բոլորովին անհետանալէն ետքը : 1787 էն Պրուսայու առաջնորդութիւնը կը վարէր , եւ 1810 Յուլիսին փոխանակեց զայն Կարապետ եպիսկոպոսի հետ , եւ Արմաշու եւ Նիկոմիդիոյ առաջնորդութիւնը ստանձնեց , բայց 1811 տարւոյ վերջերը Կարապետ Պրուսայէ ալ մեկնեցաւ , եւ բացառիկ կարգադրութեամբ Ղարախօջեանն Պրուսայի ալ առաջնորդ եղաւ Արմաշու ու Նիկոմիդիայն պահելով : Պաշտօնի անցնելէն 10 տարի յետոյ ստացաւ վերաշինութեան հրովարտակը 1820 Մարտին , եւ չորս ամսուան մէջ վերաշինեց եկեղեցին , եւ միւս տարին վանքը նորոգեց եւ ուսումնարանն ալ բացաւ , եւ շարունակ վանուց զարգացումը աճեցուց : Վախճանեցաւ յԱրմաշ 74 տարեկան ի 6 Օգոստոսի 1825 եւ թաղուեցաւ Չարխափանի պատկերին առջեւ :

13. ՍՏԵՓԱՆՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԱՔԱՐԵԱՆ , ԱՂԱԻՆԻ մականուամբ աւելի ծանօթ , Պրուսացի , եւ Ղարախօջեանի երիցա-

գոյն եւ սիրելագոյն ձեռնասոււնը , որուն շարունակ գործակիցն էր եղած , եւ միայն երկու տարի առաջ Պանարմայի եւ Զմիւռնիոյ առաջնորդութեանց էր գացած , յաջորդեց անմիջապէս 1825 Սեպտեմբերին Արմաշու եւ Նիկոմիդիոյ առաջնորդութեան մէջ . մինչ Պրուսայի առաջնորդութիւնն արուեցաւ միւս ձեռնասոււն Մերօնեան Պետրոս եպիսկոպոսին : Աղաւնին ուսումնարանի զարգացման ջանքերը կրկնապատկեց , ի նորոյ շինեց վանքին փառաւոր Առաջնորդարանը եւ Միարանութեան թաղը եւ հիւսիսային հիւրանոցը՝ որք ցարդ կը մնան , նախկին ուսումնարանը եւ մնացեալ հիւրանոցները որք 1888 ի հրգեհին այրեցան , ջրաղացն նոր թուրով եւ առուով , եկեղեցւոյ խաչկալներն ու զարդերը , վճարելով նաեւ Ղարախօջեանի շինութիւններէ մնացած պարտքերը : Առանց իւր հաստատուն պաշտօնը թողու երկու անգամ կոստանդնուպոլսոյ Պատրիարք եղաւ , առաջ ութը տարի 1831 է 1839 եւ յետոյ տարի մը եւս 1840 է 1841 : Վանքին մէջ իւր փոխանորդները եղան թաքթաքեան Պօղոս վարդապետ յետոյ եպիսկոպոս , Սինանեան Յակոբ վարդապետ եւ Մաղաքեան Ստեփան վարդապետ : Պատրիարքութենէ ելնելէն յետոյ նոր զարկ տուաւ վանական վարժարանին , այլ մահուանէ հինգ տարի առաջ տկարութեան պատճառաւ գրեթէ գործէ քաշուեցաւ : Վախճանեցաւ ի 6 Ապրիլի 1853 , 76 տարեկան , եւ թաղուեցաւ Նիկոմիդիոյ եկեղեցւոյ բակը :

14. ՄԱՏԹԷՈՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ԶՈՒԽԱՃԵԱՆ , կոստանդնուպոլսեցի . որ 1844 է 1848 պատրիարքութիւն էր վարած , Նիկոմիդիոյ եւ Արմաշու առաջնորդ ընտրուեցաւ 1853 Մայիս 11 ին Արմաշու միարանութենէ չլինելով : Բայց իւր առաջնորդութիւնը կարճ եղաւ եւ արդիւնք ալ չունեցաւ , զի ոչ միայն պարագայք դժուարին էին , այլ եւ վանքէն հեռու մնաց , եւ 1854 Նոյեմբեր 9 ին Կ. Պոլիս դարձաւ եւ հրաժարական տուաւ , որ Դեկտեմբեր 14 ին ընդունուեցաւ : Քանի մը տարի ետքը 1858 ին Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուեցաւ եւ 1865 Օգոստոս 22 ին վախճանեցաւ ի Ս . Էջմիածին :

15. ՊՅՂՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԹԱՔԹԱՔԵԱՆ, Պրուսացի, Ղարախօջեանի ձեռնասուռն, Զմիւռնիոյ առաջնորդ եղած ատեն Արմաշու եւ Նիկոմիդիոյ առաջնորդ ընտրուեցաւ նախորդին հրաժարականին ընդունուելուն օրը, եւ հրովարտակ անուեցաւ, բայց ինքը միջոց մը վարանելէն ետքը պաշտօնը չընդունեցաւ, եւ ընտրութիւնը ապարդիւն մնաց: Սակայն Թաքթաքեան կանուխէն յոյժ արդիւնաւոր եղած էր վանքին համար, 1823 է 1831 իրրեւ փոխանորդ Ղարախօջեանի եւ Աղաւնիի եւ 1841 է 1844 դարձեալ իրրեւ փոխանորդ Աղաւնիի. եւ յետոյ ալ միշտ, մանաւանդ 1863 է 1869 իւր պատրիարքութեան ժամանակ, պաշտպան լինելով վանքին շահերուն: Վախճանեցաւ ի Զմիւռնիա 1874 ին. 75 տարեկան:

16. ՍՏԵՓԱՆՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՂԱՔԵԱՆ, Ատարաղարցի, Աղաւնիի ձեռնասուռնը, 1855 Յունիսար 27 ին տեղապահ անուանուեցաւ տակաւին վարդապետ եղած ատեն, 1856 Սեպտեմբեր 6 ին բուն առաջնորդ եղաւ, եւ 1860 Յունիս 2 ին եպիսկոպոս ձեռնադրուեցաւ: Վերջին տարիներու մէջ խանգարուած վանքը վերստին ծաղկեցաւ Մաղաքեանի Զանիւք, կարեւոր նորոգութիւններ եղան, եւ մանաւանդ ուսումնարանի զարգացման մտադրութիւն եւ աշխատանք չպակսեցան: Ազգային խնդիրներու համար կազմուած յանձնաժողովոյն նախագահ անուանուելով 1861 Հոկտեմբեր 18 ին Կ. Պոլիս հասաւ, բայց երեք օր ետքը Պատրիարքութեան տեղապահ ընտրուեցաւ, եւ այդ պաշտօնը վարեց երկու տարի մինչեւ 1863 Հոկտեմբեր 15, եւ ազգային կանոնադրութեան պետական հաստատութիւնը ընդունեցաւ եւ նախագահեց նոր Պատրիարքի ընտրութեան, որ եղաւ վերոյիշեալ Թաքթաքեան Պօղոս Արքեպիսկոպոս: Տեղապահութենէն ետքը երկու տարի եւս պաշտօնավարեց եւ Արմաշու վանքին զարգացման նոր ձեռնարկներու գլուխ եղաւ, ինչպէ՞ս են ուսումնարանի նոր ծրագիր, ապարանի բացում, Յոյս անուանով գրական հանդէսի հրատարակութիւն, եւ հոգային ստացութեանց եւ հասութից աճումն: Զարխափանի տաճարը 1820 ին

հապճեպ շինուած լինելուն վտանգուած էր, Մաղաքեան զայն քակեց նոր եւ փառաւոր շինելու համար, այլ այդ ձեռնարկը անկատար մնաց, զի համաճարակ քօլէրա ախտէն վարակուելով վախճանեցաւ ի Պարտիզակ 1865 Օգոստոս 29 ին, 62 տարեկան եւ թաղեցաւ անդէն:

17. ԵՓՐԵՄ ՎԱՐԳԱՊԵՏ ՀԱՎԼՈՒՃԵԱՆ, Պրուսացի, Ղարախօջեանէ սարկաւազ ձեռնադրուած: եւ Մաղաքեանի փոխանորդ, յաջորդեց միւս տարին 1866 Մայիսին Միաբանութեան ընտրութեամբ լոկ վանահայրական պաշտօնին մէջ. որովհետեւ Միաբանութեան առաջարկութեամբ եւ թաքթաքեան Պատրիարքի հաւանութեամբ Արմաշու վանքը՝ Նիկոմիդիոյ վիճակէն զատուեցաւ, իբր թեմ պահելով միայն Արմաշ եւ Խասկալ գիւղերը: Աստի կը սկսի Արմաշու վանքին երրորդ եւ նոր շրջանը, վիճակային խնդիրներէն ազատելով լոկ ուսումնական եւ կրթական զարգացման ծառայելու համար: Այդ նպատակին գործիչներն էին Ալեքսանեան Գէորգ եւ Աշըքեան Խորէն վարդապետները, որոց քաջալերիչ եւ հովանաւոր էր Եփրեմ վանահայրը: Այլ սա արդէն տկարացեալ լինելով, դեռ եպիսկոպոսական ձեռնադրութիւն չստացած վախճանեցաւ յԱրմաշ 1868 Յուլիսին, 66 տարեկան:

18. ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ, Չէնկիլէրցի, Մաղաքեանի ձեռնասուն, վանահայր ընտրուեցաւ Միաբանութեան քուէով 1868 Օգոստոսին, տակաւին վարդապետ եղած ատեն, եւ 1869 Սեպտեմբերին եպիսկոպոս ձեռնադրուեցաւ: Իւր օրով Արմաշու վանքը ծաղկեալ վիճակ մը ստացաւ, բարեկարգեցաւ ժառանգաւորաց վարժարանը, խորհուեցաւ գիշերօթիկ վարժարանի մը բացումը, եւ նոր Տաճարին շինութիւնը ամենայն փութով յառաջ տարուեցաւ: Դժբաղդաբար Ալեքսանեան վանահայրը հիւժական ախտէ բռնուելով հազիւ իւր վերջին օրերուն մէջ տաճարն օծեց եւ կանխեց իւր ձեռնասունները ձեռնադրել եւ վախճանեցաւ 1872 Նոյեմբեր 28ին, 38 տարեկան եւ թաղուեցաւ տաճարին մօտ:

19. ԽՈՐԷՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՇԸԳԵԱՆ, Քէրէմէթցի, Մազաքեանի ձեռնասուն, վանահայր ընտրուեցաւ Միաբանութեան քուէով 1872 Օգոստոսին դեռ վարդապետ եղած ատեն, եւ 1873 Ապրիլին եպիսկոպոս ձեռնադրուեցաւ: Ինքն աշխատեցաւ պահպանել եւ լրացնել եւ կատարելագործել այն ամէն բարեկարգութիւններն ու ծրագիրները, որք իւր նախորդին օրով սկսան, եւ որոց ինքն գործակից էր եղած: 1873ին Ս. Ղեւոնդեանց աօնին Ս. Ղեւոնդեանց գիշերօթիկ վարժարանը բացուեցաւ, եւ քանի մը տարի ամենայն ինչ փայլուն կերպով յառաջացաւ: Այլ 1878 ի ելեւմտական տաղնապներ, ինչպէս եւ նախընթաց ձեռնարկներէ մնացած պարտքեր, վանական գործոց ընթացքը խանգարեցին, Հանդէսի հրատարակութիւնը դադրեցաւ, գիշերօթիկ վարժարանը փակուեցաւ, ժառանգաւորաց վարժարանը ամփոփուեցաւ եւ միաբանութիւնն քալ մասամբ ցրուեցաւ: Ի լրումն ազեաից 1888 Սեպտեմբեր 27 ին հրդեհ մըն ալ Արմաշու գիւղին մէկ մասին հետ վանքին գրեթէ կէսը այրեց եւ ոչնչացուց, բայց երկու օր ետքը Սեպտեմբեր 29 ին Աշըքեան վանահայր Կ. Պոլսոյ Պատրիարք ընտրուեցաւ, եւ Հոկտեմբեր 17 ին Կ. Պոլիս հասնելով պաշտօնի գլուխը անցաւ, եւ առանձինն կերպով իւր հոգածութեանց առարկայ ըրաւ Արմաշու վանքը:

20. ՄԱՂԱՔԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ, Կոստանդնուպոլսեցի, տարի մը ետքը ստանձնեց Արմաշու վանահայրական պաշտօնը: Խորէն արքեպիսկոպոսի պատրիարքութեան առաջին տարին որոշուեցաւ եկեղեցական վարժարան մը բանալ, եւ առ այս պատրաստական Յանձնաժողով մը կազմուեցաւ, որ յետոյ հաստատուն Խնամակալութեան փոխուեցաւ, եւ յետքննութեանց եւ նախապատրաստութեանց յաջողեցաւ բանալ եկեղեցական վարժարանը Արմաշու վանքին մէջ, որ այս աթիւր ԴՊՐԵՎԱՆԻ անունն ալ ստացաւ, եւ աստի սկսաւ Արմաշու համար չորրորդ եւ նոր շրջան մը: Օրմանեան եպիսկոպոս

1888 Դեկտեմբերին Յանձնաժողովին նախագահ անուանուեցաւ, 1889 Յունիսին Դպրեվանքին վերատեսուչ ընտրուեցաւ, եւ Սեպտեմբերին վանահայրական եւ վերատեսչական պաշտօնները ստանձնեց, եւ Սեպտեմբեր 18 ին Դպրեվանուց բացումը կատարուեցաւ : Արմաշու Դպրեվանքը սկսաւ հետզհետէ պայծառանալ, վանքին նշանաւոր նորոգութիւններէն զատ, տաճարն ալ ներսէն եւ դուրսէն վայելչապէս նորոգուեցաւ եւ զանգակատուն աւելցաւ, ընդարձակ քարուկիր ուսումնարան մը կառուցուեցաւ . երեքյարկանի հիւրանոց մը, հիւրանոցի եւ շերամատան յարմար ընդարձակ շէնք մը, փուռ մը եւ կատարելագործեալ ջրաղաց մը նորէն շինուեցան, ջրուղին երկաթեայ խողովակներով նորուեցաւ, նոր թթաստաններ անկուեցան եւ շերամասերմի պատրաստութեան ընդարձակ գործ բացուեցաւ : Վանական բարեկարգութեան եւ ուսումնական զարգացման մեծ զարկ տրուեցաւ, եւ եկեղեցական բարձրագոյն ուսմանց ծրագրով եւ եօթնամեայ շրջանով 1889 և 1896 երկու դասարաններ աւարտեցին : 1896 Նոյեմբերին Օրմանեան Սրբազան Կ. Պոլսոյ Պատրիարք ընտրուեցաւ, եւ Դպրեվանուց շարունակութիւնը եւ զարգացումը ապահովելու աշխատեցաւ :

21 . ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐԵԱՆ, Կոստանդնուպոլսեցի, որ 1890 և սկսելով նախորդին գործակիցն էր եղած, անմիջապէս նորա յաջորդն եղաւ, զեռ վարդապետ ըլլալով, եւ 1898 Հոկտեմբերին եպիսկոպոս ձեռնադրուեցաւ : Դպրեվանքին վանական եւ ուսումնական բարեկարգ ընթացքը կատարելապէս կը շարունակէ մինչեւ ցայսօր, եւ Խնամակալութիւն եւ վերատեսուչ Իսերեան Սրբազան կաշխատին եւս քան զեւս արդիւնաշատ ընել զայն : Իբրեւ յատուկ ձեռնարկ կրնամք յաւելուլ որբոց եւ քահանայացուաց կրթութեան համար Դպրեվանքի կողմէ տարուած մասնաւոր խնամքը :

ԱՐՄԱՇՈՒ ԳՊՐԵՎԱՆՔԸ Կոստանդնուպօլսոյ Պատրիարքութեան անունը կը կրէ՝ եւ անոր հետ ներքին կերպով կապուած է : Պատրիարքն իբր Միաբանութեան պալատի նկատուելուն , տեղական վանահայրը Փոխ - վանահայր կը կոչուի : Պատրիարքին նախագահութեամբ եւ վերատեսչին եւ երկու եկեղեցականաց եւ հինգ աշխարհականաց անդամակցութեամբ կազմուած Խնամակալութիւն մը Դպրեվանքի վարչութեան եւ մատակարարութեան կը հսկէ :

Դպրեվանքին նպատակն է եկեղեցականութեան փափաք ունեցող երիտասարդները սոյն կոչման համար կրթիչ եւ պատրաստել : Ընդունուելու համար գոնէ 18 տարեկան ըլլալու է : Աշակերտք առաջին տարւոյ վերջը դպիր , երրորդ տարւոյ վերջը՝ սարկաւազ , իսկ վեցերորդ տարւոյ վերջը արեղայ կը ձեռնադրուին : Ուսմանց ընթացքը վեց տարի է , եւ եօթներորդ տարին վարժութեանց համար սահմանուած է , յորմէ հետէ կըրնան պաշտօնի կոչուիլ :

Անոնք որ կուսակրօն եկեղեցականութեան յօժարութիւն չեն ունենար , ազատ են մեկնիլ . եւ վերատեսչութիւնն ալ կարձակէ անոնք որ բարոյական կամ ուսումնական տեսակէտէն կատարեալ ընդունակութիւն չեն ցուցներ : Երրորդ տարին լրացնելով մեկնողները քահանայութեան եւ նախակրթարանաց վարժապետութեան բաւական ըլլալու չափ ուսում ստացած կը լինին :

Ուսումնարանին տեսչական եւ ուսուցչական պաշտօնները կը վարեն վերատեսուչն եւ ուրիշ վարդապետներ , աշխարհական ուսուցիչներ ալ կը գործածուին , որոց մէջ միշտ կը գըտնուին կարող տաճկաբան մը եւ գաղղիացի մը :

Ծրագիրը կը պարունակէ առաջին երեք տարիներու մէջ երկրորդական ուսմանց ամբողջ դասերը , լեզուաց եւ պատմութեանց , բնական գիտութեանց եւ ուսողութեանց ճիւղերով , եւ յատուկ մտադրութեամբ եկեղեցական եւ կրօնական եւ աստուածաշնչական հմտութեանց : Վերջին երեք տարիներու ծրագիրը կը պարունակէ լեզուաց մէջ կատարելագործութիւն , կրօնից պատմութիւն , մատենագրական ընթացք ըն-

դարձակօրէն , արամարանութիւն եւ փիլիսոփայութիւն , եւ աստուածարանական գիտութիւններ՝ ներածական եւ պատմական , ծիսական եւ դաւանական , քննադատական եւ քարոզչական ճիւղերով :

Գպրեվանուց շրջանաւարտները իրենց ընթացքը կը փակեն քննական երկասիրութեամբ մը , եւ ազգային եւ եկեղեցական դպրութեանց եւ գիտութեանց վկայեալ մասնագէտի իրաւունք կը ստանան :

Գպրեվանուց եկամուտները կը կազմեն հողային արտադրութիւնք , շերամասերմի հասոյթ , ուխտաւորութեանց արդիւնք , եւ յատուկ բարերարութիւնք՝ որք եղած են մանաւանդ շինութեանց համար : Խնամակալութիւնն , եւ ի դիմաց Խնամակալութեան բազմերախտ Ունճեան Արիկ էֆէնտին , փութացած է միշտ Գպրեվանուց հասոյթներուն պակասը լրացնելով , անոր կանոնաւոր ընթացքը երաշխաւորել : Առաջին տարիներուն մէջ Գարակէօմրիւկի եկեղեցիէն ալ մաս մը արդիւնք կը հայթայթուէր , որ քանի տարիներէ ի վեր բոլորովին զազրած է :

ԳՊՐԵՎԱՆՈՒՑ ՍԱՆԵՐԷՆ կուսակրօն եկեղեցականութեան մտնողներն եղած են ցարդ .

1. Տ. Բարդէն Մ. վ. Կիւլէսէրեան , Այնթապցի . Տեղապահ Մշոյ .
2. Տ. Խոսրով Մ. վ. Պէհրիկեան , Ջարացի . Տեղապահ Տրապիզոնի .
3. Տ. Ջաւէն Մ. վ. Տէր Սղիայեան , Պաղտատցի . Տեղապահ Կարնոյ .
4. Տ. Մուշեղ Մ. վ. Սերօբեան , Աղանպէկցի . Առաջնորդ Արարկիրի .
5. Տ. Սմբատ Մ. վ. Սաատէթեան , Ատաբաղարցի . Տեղապահ Շապին Գարահիսարի .


6. Տ. Աղան Ծ . վ . Համամեան , Ապուշեխցի . Տեսուչ ուսումնարանի Դպրեվանուց .
7. Տ. Մաշթոց վ . Փափազեան , վանեցի . Թեմական հովիւ Պոսթընի .
8. Տ. Թաթուլ վ . Դուրեան , Կոստանդնուպոլսեցի . Տեղապահ Պանարմա - Պալլըքէսէրի .
9. Տ. Փառէն վ . Մեղքոնեան , Կլայեցի . Տեղապահ Աղերդի .
10. Տ. վահրիճ վ . Շահլամեան , Կիւմիւշխանացի . Օգնական առաջնորդութեան վանայ .
11. Տ . Թորգոմ վ . Պիլիճեան , Պարտիզակցի . Փոխտեսուչ ուսումնարանի Դպրեվանուց .
12. Տ. Գնէլ վ . Գալէմքեարեան , Կ . Պոլսեցի . Տեղապահ Ճանիկու .
13. Տ. Տիրայր վ . Մարգարեան , Կ . Պոլսեցի . Փոխտեսուչ որբոց դասարանի Դպրեվանուց .
14. Տիր . Խաչատուր Սրկ . Նարոյեան , Մշեցի .
15. Տիր . Քերովրէ Սրկ . Օտապաշեան , Սերաստացի .
16. Տիր . Տիգրան Սրկ . Գոնտոլեան . Մարսուանցի .
17. Տիր . Յովհան Սրկ . Փէրտահճեան , Ամասիացի .
18. Տիր . Նփրեմ Սրկ . Գալէնտէրեան , Նէնիճեցի .
19. Տիր . Բարունակ Սրկ . Նսայեան , Ասլանպէկցի .
20. Տիր . Գառնիկ Սրկ . Դուրեան , Կ . Պոլսեցի .
21. Տիր . Խաչիկ Սրկ . Խաչատուրեան , Տրապիզոնցի .

Դպրեվանուց աշակերտութեան մտնողներուն թիւը մինչեւ 1897 տարւոյ վերջը 80 է աւելի եղած է : Աստուծոյ մի մասը զանազան տկարութեանց եւ անյարմարութեանց համար ուսումնարանէ արձակուած է , մեծ մասն ալ երրորդ կամ չորրորդ տարին լրացնելէ ետքը կամովին մեկնած է , եւ այժմ թէ մայրաքաղաքիս եւ թէ գաւառաց մէջ ուսուցչութեան պաշտօն կը վարէ եւ հաւանաբար քահանայութիւն ալ կըն-

դունի, ինչպէս մէկ մը արդէն ձեռնադրուեցաւ: Անցեալ Օգոստոսին տասն աշակերտներ չորրորդ տարւոյ ընթացքը վերջացնելով իրենց տեղերը մեկնեցան եւ ուսուցչութեան սկսան:

Այս տարւոյ աշակերտներուն թիւը 50 է. 32 ընծայացուներ սարկաւագներով մէկտեղ երկու դասարանի բաժնուած, եւ 18 պատրաստական դասարանի որբեր:

ՔԱՀԱՆԱՅԱՑՈՒՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ալ յատուկ օգուտ մը կընծայէ Դպրեվանքը: Ասոնք ձեռնադրութիւննին որոշուելէ յետոյ վեց ամիսէ մէկ տարի միջոցի չափ Դպրեվանքին մէջ կը մնան եւ հայերէն լեզուի եւ կրօնից եւ ծիսից մէջ կը զարգանան յատուկ դասերով եւ գործնական վարժերով: Մինչեւ ցարդ քսանի չափ քահանայացուներ այսպէս կրթուած են, եւ այս փորձը մեծապէս օգտակար եղած է: Դպրեվանուց վարչութիւնը այդ գործը դիւրացնելու համար, ուսեստի եւ պահեստի եւ ուսման բոլոր ծախուց համար միայն հարիւր դահեկան ամսական վճարում սահմանած է, եւ փափաքելի էր որ բոլոր քահանայացուներ օգտուէին այդ կարգադրութենէն:



Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻՆ ՇՈՒՐՁԸ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԱՌՁԵԻ

ՆԱԽԱԴԱՏ ԱՏԵԱՆ. — Պատրիարքարանի ձեռնհասութեան վերաբերեալ դատերը, որոնք գլխաւորաբար ամուսնական են, կամ ամուսնական կապէն յառաջ եկած նաժարայի դատեր, Կ. Պոլսոյ մէջ ինչպէս գաւառները, կը քննուին Դատաստանական Խորհուրդներու կողմէ, որոնք կը վճռեն իրր Նախագատատեան :

ԽՆԴՐԱԳԻՐ. — Դատ բացողը պէտք է զիմէ յատուկ խընդրագրով : Այս խնդրագիրը կրնայ կատարութեան կողմէ յանձնարարեալ արզուհաշ մը ըլլալ, ինչպէս կրնայ Կ. Պոլսոյ մէջ Պատրիարքական փոխանորդին, կամ գաւառներու մէջ Առաջնորդին ուղղուիլ եւ անկէ մակագրուիլ :

Խնդրագիրը պէտք է պարունակէ երկու կողմին անունը, մականունը, բնակութիւնը եւ հպատակութեանց ինչպէս նաեւ խնդրուած բանին ինչ ըլլալը եւ ինչ արժէք ունենալը :

ՁԵՌՆՀԱՍՈՒԹԻՒՆ. — Կինը կարող է իր ամուսնին դէմ դատ բանալ կա՛մ ընտանեկան բնակավայրին կա՛մ ամուսնին գըտնուած տեղւոյն Դատաստանական Խորհուրդին առջեւ. իսկ այրը պարտաւոր է դատ բանալ ընտանեկան բնակավայրին Դատաստանական Խորհուրդին առջեւ :

ՓՈՒԱՆՈՐԴ. — Երկու դատարող կողմերը կրնան իրենց դատին պաշտպանութեան համար փոխանորդ կարգել. իսկ դատարանը, ուզած ժամանակ, կրնայ անձամբ հարցաքննել երկու կողմերը :

ԿՈՉՆԱԳԻՐ . — Կոչնագիրները երկու օրինակ կը գրուին եւ Պատրիարքարանի կամ Առաջնորդարանի բարապանը անոնց մէկ օրինակը կը հաղորդէ դատի կոչուող անձին , Թաղական Խորհուրդներու եւ կամ ի հարկին՝ մխթարին ձեռամբ :

Տեղը յայտնի չեղող անձին ուղղուած կոչնագիրը լրագիրներու միջոցաւ կը հրատարակուի :

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ . — Դատավարութիւնները դանփակ կ'ըլլան . երկու կողմերու տաներէց քահանային ներկայութիւնը պարտաւորիչ է դատավարութեան ժամանակ :

Վկայութիւններ բերելու կամ պաշտօնական արձանագրութիւններէ ապացոյց ներկայացնելու համար պատկանեալ կողմին հարկ եղած պայմանաժամը կը տրուի . իսկ եթէ այդ արձանագրութիւնները՝ պէտք ըլլալով հանդերձ՝ երկու կողմէն մէկը չկարենայ ձեռք ձգել , Ատեանը ուղղակի հարկ եղած տեղէն պաշտօնագրով բերել կու տայ զանոնք :

Եթէ փորձ-քննիչներու քննութեամբ հասկցուելու կէտեր պատահին , անոնց կարծիքը կը հարցուի :

Երկու կողմը միանգամայն , կամ երկու կողմերէն մէկը կրնան գրաւորապէս պահանջել որ ժողովին այս ինչ անգամը իրենց դատաստանէն ձեռնպահ մնայ , զոր օրինակ եթէ երկու կողմերէն մէկուն հետ ազգականութիւն կամ մօտ խնամութիւն ունենայ , եւ կամ ուղղակի կամ անուղղակի նիւթական շահ ունենայ գործին մէջ , եւայլն , եւայլն :

Եթէ երկու կողմէն մէկուն կամ վկայի մը երգում ընել տալու հարկ տեսնուի , ո՛ր կէտերուն վրայ եւ ի՛նչ կերպով ըլլուելիքը պէտք է կանխաւ որոշուի եւ բացայայտ կերպով գրի առնուելէ ետքը գործադրուի :

ՈՐՈՇՈՒՄ ԵՒ ՎՃՌԱԳԻՐ . — Որոշումները պէտք է պատճառարանեալ եւ եկեղեցական օրէնքներու վրայ հիմնուած ըլլան : Վճռագիրները առ առաւելն պէտք է 15 օրէն պատրաստուին :

Դատաստանական Խորհուրդներու կողմէ տրուած վճիռները՝ Կ. Պոլիս Ս. Պատրիարքին եւ գաւառներու մէջ Առաջնորդներու կամ փոխանորդներու կ'ուղղուին տեղեկագրի ձեւով :

Վճռագրին վաւերացեալ օրինակը Կ. Պոլիս Պատրիարքա-

կան փոխանորդին եւ գաւառներու մէջ առաջնորդին կամ փոխանորդին կողմէ կը հաղորդուի գատապարտեալ կողմին :

Ի ԲԱՅԱԿԱՅՈՒԹԵԱՆ ՏՐՈՒԱԾ ՎՃԻՌ. — Կոչնագրով հրաւիրուած կողմերուն երկուքն ալ եթէ որոշեալ օրը չներկայանան, մինչեւ որ մէկը գայ եւ հակառակ կողմին նորէն կանչուիլը խնդրէ, խնդիրը կը յետաձգուի :

Եթէ կոչնագիրը ստորագրող կողմը որոշեալ օրը չներկայանայ եւ ներկայ եղող կողմը ի բացակայութեան որոշում ուզէ, կրնայ ըստ այնմ որոշում տրուիլ :

Եթէ բացական խնդրարկուն է, այն ատեն խնդիրքը պարզապէս կը մերժուի առանց քննութեան. իսկ եթէ բացական դատելին է, այն ատեն խնդրարկունն պահանջքին օրինաւոր ու արդար ըլլալը քննութեամբ ստուգուելէ ետքը որոշում կը տրուի :

Դատաստանական Խորհրդի ատենապետին կողմէ ուղղուած երեք հարցումներու չպատասխանող կողմը իբր բացակայ կը նկատուի եւ անոր դէմ ըստ այնմ որոշում կը տրուի :

ԳԻՏՈՂԱԳԻՐ. — Ի բացակայութեան տրուած վճռին դէմ՝ պաշտօնապէս հաղորդուած թուականէն սկսեալ 31 օր պայմանաժամի մէջ զիտողութիւն կ'ընդունուի : Հաղորդուած օրուան թուականը, ինչպէս նաեւ զիտողագրին ներկայացուած օրուան թուականը այս պայմանաժամին մէջ չեն :

Երբ Դատաստանական Խորհրդին կողմէ ո՛ր եւ է խնդիր մը կրկին անգամ ի բացակայութեան քննուի, երկրորդ վճիռը կը նկատուի իբր ի ներկայութեան տրուած, եւ այլ եւս կարելի չէ անոր դէմ զիտողագիր ներկայացնել Դատաստանական Խորհրդին :

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ. — Դատաստանական Խորհրդի մը երկու կողմերու ներկայութեան տուած վճիռները եւ այն խնդիրները որոնք կրկին անգամ ի բացակայութեան վճռուած են, կը վերաքննուին տեղւոյն Ազգ. Վարչութեան Խառն Ժողովին մէջ :

Այս վճիռներուն վերաքննութիւնը տեղի կ'ունենայ կա'մ երկու կողմերէն մէկուն գրաւոր խնդրագրին վրայ, եւ կա'մ ուղղակի Ս. Պատրիարքին, կամ գաւառներու մէջ՝ Առաջնորդին հրամանով :

Վերաքննութիւն պահանջելու պայմանաժամը վճաագրին հաղորդուած թուականէն սկսեալ 6 օր է :

Վերաքննութիւն պահանջող կողմը իր այդ խնդիրքը կը մատուցանէ Ս. Պատրիարքին , եթէ Պոլիս է , եւ կամ Առաջնորդին՝ եթէ դաւասի մէջ կը գտնուի :


Խառն ժողովը կա՛մ վճիռը կը հաստատէ , կա՛մ կը ջնջէ զայն , եւ նոր վճիռ մը կու տայ : Եթէ ինչ ինչ կէտերու մասին վերստին քննութեան հարկ տեսնէ , խնդիրը նորէն Դատաստանական Խորհրդին կը դարձնէ :

Վերաքննիչ ատեանին կողմէ ի բացակայութեան տրուած որոշման դէմ դիտողագիր կրնայ մատուցուիլ վճաագրին հաղորդուելէն մինչեւ 31 օր վերջը :

Դատաստանական Խորհրդին մէջ կիրարկուած դատավարական կանոնները վերաքննիչ ատեանին մէջ կը գործադրուին :

Թէ՛ դիտողութեան եւ թէ՛ վերաքննութեան խնդրագիրները որոշեալ ժամանակէն առաջ չեն ընդունուիր . եւ սակայն , եթէ պայմանաժամին մէջ մէկ կողմէն խնդիր ներկայացուած է , միւս կողմն ալ կարող է նոյնը ընել մինչեւ իսկ պայմանաժամը անցնելէն ետքը , եթէ տակաւին խնդիրը քննութեան մէջ է :

Սյս դատավարական կանոնները , զորս կը քաղենք Պատրիարքարանի կողմէ հրատարակուած յատուկ Հրահանգէն , գործադրութեան զրուած են 1893 Մայիս 10էն ի վեր :



ԿՏԱԿԻ, ՆՈՒԷՐԻ ԵՒ ՎԱԳՖԻ

Վ. ԵՐԱՐԵՐԵԱԼ

ՕՐԻՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հետեւեալը կտակաց Հոգարարձութեան ձեռամբ պատրաստուած եւ 1893ին յատուկ տեսրակով հրատարակուած է Պատրիարքարանի կողմէ: Օգտակար կը նկատուի ամբողջապէս արտատպել հոս կտակի, նուէրի եւ վագֆի օրինական պայմաններուն ձեւակերպութեանց վերաբերեալ այս տրամադրութիւնները:

1. — Ամէն մարդ՝ երբ մտքով առողջ է, կրնայ իր ստացուածքէն կտակ ընել թէ՛ բարեգործական նպատակի մը՝ եւ թէ որո՛նց որ ուզէ:

2. — ԿՏԱԿը՝ թէ՛ դատաւորին եւ թէ՛ Պատրիարքարանին կամ Առաջնորդարաններու միջոցաւ կրնայ կատարուիլ:

Առաջին պարագային մէջ՝ կտակարարը դատաւորին ներկայանալով բերանացի կը յայտնէ իր կտակը եւ ըստ այնմ հետեւեալ շէրիյէ կը ստանայ. իսկ երկրորդ պարագային մէջ՝ վկաներու առջեւ կտակագիր մը պատրաստելով, կը ստորագրէ զայն, կը կնքէ եւ վաւերացնել կու տայ կա՛մ Պատրիարքին՝ եթէ Պոլիս կը գտնուի, եւ կա՛մ Առաջնորդին եթէ գաւառի մը մէջ է: Այս կերպով պատրաստուած կտակագիրը ընդունելի ու վաւերական է, եւ կտակարարին մահէն ետքը գործադրութեան կը գրուի:

3. — Կտակուած գոյքը՝ ըստ օրինի՝ պէտք է որ կտակարարին չարժական ստացուածքին եւ սրբ միւլի անշարժ կալուածներուն մէկ երրորդ մասէն աւելի չըլլայ. եթէ աւելի ըլլայ, այդ աւելորդ մասին վերաբերող կտակը ընդունելի ըլլալու համար, կտակարարին մահուանէն ետքը ժառանգորդներուն հաւանութիւնը պէտք է. եթէ երբեք ժառանգորդները չհաւա-

նին, մէկ երրորդէն աւելի մասին համար եղած կտակը չի կրնար վաւերական համարուիլ :

4. — Այն կալուածները՝ որոնք եւլախը մեկգործե եւ աւրագիի եւխրիյե կոչուած տեսակէն են, չեն կրնար կտակուիլ :

5. — Կտակարարը պարտաւոր է կտակակատար մը կարգել, որուն պաշտօնն է գործադրել կտակին տրամադրութիւնները :

6. — Կտակարարը կրնայ իր ուզած անձը կտակակատար կարգել, սակայն կտակին անթերի, լիովին գործադրութիւնն ու յարատեւութիւնը ապահովելու համար, լաւագոյն է կտակակատարի պաշտօնը վերապահել Պատրիարքին, եթէ կտակակատարը Պոլիս կը գտնուի կամ Առաջնորդներուն, եթէ գաւառները կը գտնուի, եւ անոնց յաջորդներուն :

7. — Եթէ կտակագրին կամ հեօճեքը շերիյեին մէջ ըսուած ըլլայ թէ «Այսքան գումար կտակեցի կամ վագֆ ըրի այս ինչ եկեղեցւոյն կամ դպրոցին, կամ վանքին եւ կամ հիւանդանոցին», կտակը ընդունելի չըլլար. այլ պէտք է ըսել. «Այսքան գումար կտակեցի կամ վագֆ ըրի այս ինչ եկեղեցւոյն, կամ դպրոցին կամ վանքին եւ կամ հիւանդանոցին աղփասներուն կամ աղփաս ուսանողներուն կամ հիւանդներուն պէսերն ու կարօտըսիւնները հոգացուելու համար» :

8. — Եթէ մէկը ուզէ իր ստացուածքին մէկ երրորդէն աւելին կամ կէսը եւ կամ ամբողջը յատկացնել բարեգործական հաստատութեան մը, այն պարագային մէջ հարկ կ'ըլլայ կամ նոշերի կամ վագֆի եղանակով ընել, հետեւեալ յօդուածներուն համաձայն :

9. — Եթէ ՆՈՒԷՐԻ եղանակով ընել ուզուի, պէտք է որ նուիրատուն ինք իր ձեռքով յանձնէ նուիրուած իրը կամ գումարը՝ նուիրատու հաստատութեան վերատեսչին, ըստ որում նուիրատուութիւնը լրացած կ'ըլլայ՝ նուիրատուին յանձնելովը եւ նուիրատուին ստանալովը :

10. — Անոնք որ կը փափաքին իրենց ստացուածքին մէկ մասը կամ ամբողջը յատկացնել բարեգործական հաստատու-

թեան մը՝ բայց չեն ուզեր իրենց կենդանութեան ձեռքէ հանել ստացուածքնին, կրնան դիմել ՎԱԳՖԻ դրութեան՝ որ յարմարագոյնն ու ապահովագոյնն է :

11. — Ամէն մարդ կրնայ իր թէ՛ միւլի ստացուածքը, թէ՛ գրամը եւ թէ՛ գործածութեամբ չսպառող շարժական գոյքը՝ ինչպէս գիրքերը, վազֆ ընել՝ հետեւեալ կերպով :

Ա. — Կրնայ իր վազֆին միւթէվէլիութիւնը իր անձին վերապահել՝ որչափ ատեն որ կ'ապրի, եւ մահուանէ ետքն ալ թողուլ իր նշանակած անձերուն :

Բ. — Կրնայ իր վազֆին հասոյթը նոյն իսկ իր անձնական պիտոյքին յատկացնել՝ ցորչափ ապրի եւ մահուանէն ետքը թողուլ բարեգործական հաստատութեան մը :

Գ. — Կրնայ իր վազֆին հասոյթէն բաժին սահմանել իր զաւակներուն, թոռներուն, ազգականներուն եւ օտարներու :

Դ. — Կրնայ իր վազֆին դրամագլուխը աճեցնելու համար պայման դնել որ հասոյթին որոշուած մէկ մասը դրամագլուխին վրայ բարդուի :

Ե. — Կրնայ վազֆը հաստատած պահուն պայման դնելով իրեն վերապահել վազֆին պայմանները փոփոխելու, այս կամ այն հաստատութեան սահմանուած բաժինները աւելցնելու կամ պակսեցնելու իրաւունքը. օրինակի համար, եթէ վազֆի մը հասոյթին կէսը եկեղեցիի մը եւ միւս կէսն ալ դպրոցի մը յատկացուած եւ ըստ այնմ հեօճեքը շերիյե ալ առնուած ըլլայ, վազֆին միւլիկը կրնայ եկեղեցիին ինկած բաժինը աւելցնել, զեղչելով դպրոցին բաժինը. նոյնպէս, եթէ վազֆին ամբողջ հասոյթը մէկ նպատակի միայն սահմանուած ըլլայ կրնայ ուրիշ մէկ կամ զանազան հաստատութեանց սահմանել. հետեւաբար, եթէ հիւանդանոցի մը համար վազֆ մը հաստատուած ըլլայ, եւ պարագաներու բերմամբ այդ հաստատութիւնը կարօտութիւն չունենայ, այն ատեն կրնայ վազֆի հասոյթը՝ աւելի կարօտ եւ յարմար ուրիշ բարեգործական հաստատութեան մը սահմանել :

Զ. — Վազֆ ընողը կրնայ վազֆին պայմանները փոփո-

խելու իրաւունքը իրեն յաջորդող միւթէվէլլիներուն ալ վերապահել կամ ոչ :

12. — Վագֆը մշտնջենաւորութեան սահմանուած ըլլալուն պատճառաւ , անոր յատկացուած բուն ինչքը ո՛ր եւ է կերպով չի կրնար զեղչուիլ , ծախուիլ եւ չքացուիլ , այլ պայմանները միայն կրնան փոփոխուիլ՝ երբ պարագաներու բերմամբ կամ բարեգործական հաստատութեանց պահանջմամբ կամ փոփոխմամբ այդպիսի հարկ մը առաջ գայ :

13. — Ինչպէս կը հասկցուի այս բացատրութիւններէն , մէկը իր ստացուածքէն որոշուած գումար մը բարեգործական հաստատութեան մը վագֆ ըրած ատեն , եթէ նոյն վագֆին միւթէվէլլիութիւնը՝ ինչպէս նաեւ պայմանները փոխելու իրաւունքը՝ իր կենդանութեան իր անձին վերապահէ եւ հասոյթն ալ իր անձնական պիտոյքին սահմանէ , վագֆ եղած գումարը՝ իր կենդանութեան ձեռքէն չի կրնար առնուիլ , այլ կը մնայ իր մատակարարութեան աակ եւ մահուանէն ետքը միայն կը գանձուի իր թողած գոյքերէն եւ կը յանձնուի յաջորդ միւթէվէլլիին՝ որ նոյնպէս պարտաւոր է վագֆին պայմանները նոյնութեամբ գործադրել :

14. — Դրամ վագֆ ընելու պարագային մէջ հետեւեալ եղանակը պէտք է տեղի ունենայ .

Վագֆ մը վաւերական եւ օրինաւոր ըլլալու համար՝ վագֆ ընողը նախ իր ուզած անձը առժամանակեայ միւթէվէլլի-գայմագամ կը կարգէ , եւ անոր հետ դատաւորին ներկայանալով , կը յայտարարէ ըրած վագֆը , գումարին քանակութիւնը , միւթէվէլլիութիւնը որո՛ւ վերապահած ըլլալը , եւ վագֆ եղած գումարը նոյն միւթէվէլլի-գայմագամին արդէն յանձնած ըլլալը . միւս կողմէ միւթէվէլլի-գայմագամն ալ կը հաստատէ թէ վագֆ եղած գումարը ի՛նք ստացած է : Այս գործողութենէն ետքը , վագֆ ընողը՝ դարձեալ դատաւորին առջեւ նահանջելով իր ըրած վագֆէն կ'ուզէ ջնջել զայն եւ ետ կը պահանջէ իր դրամը , իսկ միւթէվէլլի-գայմագամը չի հաւանիր՝ դրամին վագֆ եղած ըլլալը պնդելով : Այն ատեն երկուստեք դատաւորին վճռին կը դիմեն : Դատաւորը՝ հետեւելով Շէրիաթի տրամադրութեանց ,

կը վճռէ վագֆին օրինաւորութիւնն ու վաւերականութիւնը . դատաւորին այս վճիռը կ'արձանագրուի դատարանին մէջ եւ կը տրուի հեօճեքը շերիյե՝ որ վագֆիյե ալ կ'ըսուի , եւ այս կերպով վագֆը հաստատուն եւ անջնջելի կ'ըլլայ :

Վագֆը՝ այս կերպով հաստատութիւն ստանալէ ետքը , եթէ վագֆ ընող անձը վագֆին միւթէվէլլիութիւնը իրեն վերապահած է , միւթէվէլլի-գայմագամին ձեռքէն կը ստանայ վագֆ եղած գումարը , եւ այսպէս կ'արձանագրուի դատարանին մէջ եւ անմիջապէս կը դադրի միւթէվէլլի-գայմագամին պաշտօնը :

Այս կերպով ձեռք բերուած եւ Ֆէթ վախանէէն ալ վաւերացած հէօճէթին տրամադրութիւնը օրինաւոր ըլլալով , ո՛ր եւ է պատճառաւ չի կրնար ջնջուիլ եւ եթէ երբեք վագֆ ընողին ժառանգորդներուն կողմէ վագֆին նկատմամբ ո՛ր եւ է դիտողութիւն տեղի ունենայ եւ դատ բացուի , անլսելի կը մնայ ամէն դատարանի առջեւ :

15. — Էւնչագը մեվգուֆե եւ արագիի եւիւրիյե կոչուած կալուածները՝ ինչպէս չեն կրնար կտակուիլ , նոյնպէս ալ չեն կրնար վագֆ ըլլալ . մի միայն սրբ միւշի կոչուած կալուածներն են որ կրնան թէ՛ կտակուիլ եւ թէ՛ վագֆ ըլլալ :

16. — Եթէ մէկը ուզէ սրբ միւշի կալուած մը վագֆ ընել , նոյնպէս դատաւորին ներկայանալով կը յայտնէ իր կամքն ու պայմանները եւ հեօճեքը շերիյե կը ստանայ :

17. — Սրբ միւշի վագֆ ընող անձը եթէ ուզէ իր կենդանութեան իրեն վերապահել նոյն կալուածին հասոյթը , պէտք է որ դատաւորին ներկայանալով ըսէ . « Այս ինչ սրբ միւշի կալուածս այսինչ բարեգործական հաստատութեան միւթէվէլլին ծախեցի » : Նոյն հաստատութեան միւթէվէլլին ալ կամ ի հարկին փոխանորդը՝ պէտք է ըսէ . « Այս ինչ սրբ միւշի կալուածը այս ինչ բարեգործական հաստատութեան վագֆի գրամովը գնեցի՝ ի հաշիւ նոյն հաստատութեան վագֆին , եւ փոխարէնը վճարելու սխարտաւոր եմ : » Այն ատեն , նոյն վագֆին միւթէվէլլին կամ փոխանորդը նոյն կալուածը — որ այլ եւս սրբ միւշի չէ՝ այլ վագֆ , — կը ծախէ վագֆ ընողին՝

ինատեքեյնի եղանակով, եւ այս կերպով ունեցած պահանջքը պարտքին հետ կը հաշուակցի եւ թեւեւիւզ կու տայ գնողին, որ առաջ ծախողն էր. ահա այս կերպով վագֆ ընողը վարձակալ կ'ըլլայ իր կալուածին, ուզած կերպովը կը գործածէ զայն, եւ երբ անգաւակ վախճանի՝ այն ատեն մահիւնը կը մնայ իր վագֆին, ինչպէս որ ազգային ուրիշ հաստատութեանց (եկեղեցի, դպրոց, հիւանդանոց) եւ Երուսաղէմի միւսքիսնա վագֆներու մասին այս օրինակ գործողութիւն տեղի կ'ունենայ:

18. — Վագֆ ընողը թէեւ կրնայ ուզած անձը միւթէվէլլի կարգել իր վագֆին, սակայն վագֆը վտանգէ զերծ պահելու եւ անոր անխափան շարունակութիւնը ապահովելու համար լաւագոյն է որ վագֆ ընողը իր մահուանէն ետքի ժամանակին համար, ատենին Պատրիարքը միւթէվէլլի կարգէ՝ եթէ ինք Կ. Պոլիս է, եւ կամ Առաջնորդը՝ եթէ գաւառի մէջ կը գրտնուի, ինչպէս նաեւ անոնց յաջորդները. որովհետեւ Պատրիարքն ու Առաջնորդները իրենց գործակից ունին Ազգային Ժողովներ, Տնտեսական Խորհուրդ եւ Կտակաց Հոգաբարձութիւն. Պատրիարքը մանաւանդ, այդ պաշտօնական մարմիններուն հետ միասին հսկող ու պաշտպանն է ազգային այնքան հաստատութեանց վագֆներուն եւ կտակներուն, ու Պատրիարքարանը ունի այս մասին կանոնաւոր արձանագրութիւն, օրինաւոր տոմարներ եւ կանոններ. հետեւաբար, այսպիսի վերատեսչութեան մը տակ տեղի ունեցած մատակարարութիւն մը չի կրնար բաղդատուիլ մէկ կամ երկու մասնաւոր անձերու միջոցով կատարուած մատակարարութեան հետ:



ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԿԱՐԳ ՄԸ ՀԱՍՈՅԹՆԵՐԸ

ԿՈՆԴԱԿՆԵՐ

Պատրիարքարանը կը գանձէ գաւառային վիճակներու Մուգաթային 20 0/0ը, երբ Կոնդակ կը տրուի Առաջնորդի մը, եւ 10 0/0ը երբ Կոնդակ կը տրուի Առաջնորդական Տեղապահի մը կամ Պատրիարքական փոխանորդի մը. իսկ Առաջնորդական Պերաքի ստացման համար 500 դրուչ եւ Առաջնորդական Տեղապահի էմրը Աշիի ստացման համար 250 դրուչ: Նոյնպէս Գաւառական Վարչութեանց վաւերացման Կոնդակին համար՝ վիճակին Մուգաթային 10 0/0ը. իսկ Թաղական Խորհուրդներու վաւերացման Կոնդակէն թաղին Քանչէլէրի տուրքին 10 0/0ը, որ կ'իջնէ 5 0/0ի երբ վաւերացած Թաղական Խորհուրդը առկ ժամեայ է:

Վ.ԿԱՅԱԳԻՐՆԵՐ ԵՒ ԱՐՏՕՆԱԳԻՐՆԵՐ

Պատրիարքարանը կը գանձէ ժառանգական վկայագրի համար, եթէ ժառանգութեան քանակութիւնը որոշ ըլլայ, այդ քանակութեան վրայ 2 0/0. եթէ վկայագրի ստացման համար դատավարութիւն տեղի ունեցած ըլլայ Պատրիարքարանի մէջ 2,5 0/0. իսկ եթէ ժառանգութեան քանակութիւնը որոշ չէ, ժառանգութեան եւ անձին կարեւորութեանը համեմատութեամբ, իւրաքանչիւր ժառանգորդէ 25, 50, 100, 200 դրուչ:

Մնուկներու, մկրտութեանց, վախճանմանց, փոխանորդութեանց եւ այս կարգի վկայագիրներէ, ինչպէս նաեւ պաշտօնական կնիքներու վաւերացումներէ 50 դրուչ. իսկ անձնական արժանիքի ու վարժի վկայագիրներէ 20 դրուչ:

Պոլսէն դուրս գանուող ազգայիններու ամուրիութեան վկայագիրներէն եւ Պոլսէն դուրս գանուող Պոլսեցիներու ամուրիութեան հրամանագիրներէն, իրենց կարողութեան համեմատութեամբ, 50, 100, 150 դրուչ:

Անուսնակիսն վկայագրի համար, նշանախօսութեան աստիճանին համեմատութեամբ, 25 կամ 50 դրուշ:

Գանձանակի արժուագրի (տարին անգամ մը), 50 դրուշ:

Պատրիարքարանէ վաւերացուած դասագիրներու արժուագիրներէ, 50 դրուշ:

Ազգային հաստատութեանց հաշիւներուն վաւերացման առթիւ՝ այդ հաստատութեան հասոյթներու համեմատութեամբ 25 կամ 50 դրուշ:

Հանգանակութեան ժաղաւինեալ տոմարի համար, քանակութեան 2⁰/₁₀ը: (Հանգանակութեան ժաղաւինեալ տոմարին գինն է 20 դրուշ):

ԱՌՈՒՆՍԵՆ ԵՒ ԻՆԹԻԳՍԷՆ

Պատրիարքարանը կը գանձէ կալուածական առուծախի իշխուխապերներէ մինչեւ 5000 դրուշ արժէք ունեցող կալուածին համար՝ պաշտօնական գնահատումը հիմ բռնելով, քաշկւիշէ 10 դրուշ եւ 1000ին 5. Իսկ 5000 դրուշէն վեր եղողներուն համար քաշկւիշէ 20 դրուշ եւ 1000ին 5:

Ինքիզաշի եւ իսքիղշաշի համար մինչեւ 5000 դրուշ արժէք ունեցող կալուածէն քաշկւիշէ 10 եւ 1000ին 2¹/₂, իսկ 5000 դրուշէ վեր եղող կալուածէն, քաշկւիշէ 20 դրուշ, եւ 1000ին 2¹/₂:

Կալուածական վկայագրի մը թուականը եթէ վեց ամիս անցնի եւ նորոգուելու պէտք տեսնուի, կալուածին կարեւորութեան համեմատ 5, 10 եւ 20 դրուշ:

Ազգային վագֆներու ֆերաղէն, ինքիզաշէն, քելսիի ինքիզաշէն եւ մահիղշէն՝ գայսիէ, գոյացած հասոյթին վրայ 10⁰/₁₀:

ՆՇԱՆՏՈՒՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՐԱՄԱՆԻ

Նշանախօսութեան համար փեսացուն կողմէ կը վճարուի Պատրիարքարանին հացագիւն, իւղագիւն եւ կոնդակագիւն, իսկ հարսնացուն կողմէ հացագիւն եւ կոնդակագիւն: Երկու կողմերը կը վճարեն հաւասար գումարներ նշանախօսութեան ինչպէս հրամանի համար: Ահա այս վճարմանց զանազան աստիճաններու ցուցակը:

ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ ՎՃԱՐԵԼԻ

	Փետացուին կողմէ		Հարսնցուին կողմէ Հացագին	Երկու կողմէ Կոնդակագին	Փետացուին կողմէ Հրամանագին	Հարսնցուին կողմէ Հրամանագին
	Խաչագին	Հացագին				
Ա. Աստիճան	Ըստ հանոյից	Ըստ հանոյից	Ըստ հանոյից	Ըստ հանոյից	Ըստ հանոյից	Ըստ հանոյից
Բ.	4000	500	4500	20	500	500
Գ.	600	300	900	20	300	300
Դ.	400	200	600	40	200	200
Ե.	300	150	450	40	150	150
Զ.	200	100	300	40	100	100
Է.	150	75	225	40	75	75
Ը.	100	50	150	5	50	50
Թ.	80	40	120	5	40	40
Ճ.	50	25	75	5	25	25
ՃԱ.	Չրի	Չրի	Չրի	Չրի	Չրի	Չրի

Երբ պատահի որ նշանաուութենէ ետքը մէկ կամ միւս կողմէն ու եւ է պատճառաւ մը նշանը ետ ընել հարկ ըլլայ, ըստ որոշման Ազգային Վարչութեան, նշանաուութեան օրը երկուստեք վճարուած գումարին չափ պիտի վճարուի իբր տուգանք Ազգ. Կեդրոնական անտուկին:

Չրի կը կատարուի միայն այն աղջկանց նշանաուութիւնները, որոնց չքաւորութիւնը վկայուած եւ հաստատուած է թաղին Եկեղեցւոյն թաղ. Խորհուրդէն:

ՆԱԽՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԷՋ

Բոլոր ազգային վարժարաններուն մէջ գործադրելի է այսօր Ազգային նախնական կրթութեան Կազմական Կանոնադիրը, որ Սառն ժողովէն վաւերացած եւ գործադրութեան դրուած է 1893 Մարտէն սկսեալ:

Ինչպէս բացատրուած է այդ Կանոնագրին մէջ, նախնական կրթութիւնը երկու աստիճան ունի. Տարրական նախնական կրթութիւն եւ Բարձրագոյն նախնական կրթութիւն: Առաջինը կ'աւանդուի Մանկապարտեզներու, Ծաղկոցներու եւ Տարրական նախակրթարաններու մէջ. երկրորդը կ'աւանդուի Լրացուցիչ դասընթացներու եւ Բարձրագոյն նախակրթարաններու մէջ:

ՄԱՆԿԱՊԱՐՏԷՋ ԵՒ ԾԱՂԿՈՑ. — Մանկապարտեզ կ'ընդունուին 3էն մինչեւ 7 տարու տղաք: Մանկապարտեզը կ'ունենայ երկու բաժանում. վերին բաժանումին մէջ միայն տղաք կը սկսին կարդալու եւ գրելու վարժութիւններ ընել: Ուր որ մանկապարտեզ կազմուած չէ, նախակրթարանը կ'ունենայ ծաղկոց մը, ուր կ'ընդունուին 5 էն 6 տարեկան տղաք. եւ որ կը համապատասխանէ մանկապարտեզի վերին բաժանման:

ՏԱՐՐԱԿԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ. — Ամէն թաղ պարտաւոր է գոնէ տարրական նախակրթարան մը ունենալ, բայց մերձաւոր թաղեր կրնան մէկտեղ պահել մէկ նախակրթարան:

Տարրական նախակրթարանները պարտաւոր են ունենալ հետեւեալ երեք դասընթացները.

Ա. — Տարրական դասընթացք, 7էն 9 տարեկան տղոց համար, 2 տարի:

Բ. — Միջին դասընթացք, 9էն 11 տարեկան տղոց համար, 2 տարի:

Գ. — Բարձրագոյն դասընթացք, 11էն 13 տարեկան տղոց համար, 2 տարի:

Տարրական նախակրթարանին մէջ կ'աւանդուին.

1. Կրօնք. — 2. Բարոյական կրթութիւն (աղջկանց համար առանին սնտեսութեան դասերով) : — 3. Հայերէն ընթերցանութիւն եւ գիր : — 4. Աշխարհիկ հայ լեզու եւ սկզբունք գրաբար հայերէնի : — 5. Տարերք Օսմաներէն լեզուի (միջին եւ բարձրագոյն դասընթացքի մէջ) : — 6. Պատմութիւն : — 7. Աշխարհագրութիւն եւրոպական եւ ասիական Տաճկաստանի (ինչ ինչ օրէնսգիտական եւ սնտեսագիտական գործնական ծանօթութիւններով) : — 8. Տարրական թուարանութիւն եւ տարրական գործնական երկրաչափութիւն : — 9. Տարերք բնական գիտութեանց եւ անոնց կիրառումը առողջապահութեան, երկրագործութեան եւ ճարտարութեան մէջ : — 10. Չեռական աշխատութիւնք (մանչերու եւ աղջկանց) : — 11. Տարերք գծագրութեան եւ երաժշտութեան : — 12. Մարմնամարզ :

Եթէ թաղը ուզէ, կրնայ տարրական նախակրթարանի ծրագրին վրայ աւելցնել Ֆրանսերէն լեզուն :

Երբ տարրական նախակրթարանի մը աշակերտներուն թիւը 50 էն վար է, երեք դասընթացքներու աշակերտներն ալ մէկ սրահի մէջ կը նստին ու միայն մէկ դաստիարակ-ուսուցիչ կամ դաստիարակ-վարժուհի կ'ունենան : Սակայն երբ աշակերտներու թիւը աւելի բազմաթիւ ըլլայ, կամ երբ թաղը ուզէ, կարելի է դասընթացքները եւ դասընթացքներու առաջին ու երկրորդ կարգերը բաժնել առանձին սրահներու, յատուկ դաստիարակ-ուսուցիչով : Այսպէս տարրական նախակրթարան մը կրնայ ունենալ մինչեւ 6 դասարան :

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ ԵՒ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴԱՍՆԹԱՅՔ. —

Բարձրագոյն նախակրթարանները երեք տարւոյ ընթացք ունին եւ կ'աւանդեն .

1. Քրիստոնէական վարդապետութիւն եւ պատմութիւն Հայ. եկեղեցւոյ : — 2. Բարոյագիտութիւն : — 3. Հին եւ նոր հայերէն, սկզբունք գրագիտութեան եւ պատմութիւն հայերէն մատենագրութեան : — 4. Օսմաներէն լեզու եւ շարադրութիւն : — 5. Գործնական թուարանութիւն, տարրական գրահաշուի եւ երկրաչափութեան, տնտեսականութեան կանոններ : — 6. Տարերք բնագիտութեան, բնալուծութեան եւ բնական պատմութեան : — 7 Առողջաբանութիւն : — 8. Համառօտ սնտեսագիտութիւն եւ իրագիտական պիտանի ծանօթութիւնք : — 9. Ընդհանուր պատմութեան գլխաւոր ժամանակները եւ նոր ժամանակներ : — 10. Աշխարհագրութիւն բնական, քաղաքական եւ սնտեսական : — 11. Ֆրանսերէն

ամ ուրիշ եւրոպական լեզու մը : — 12. Գծագրութիւն : — 13. Երա-
ժրշտութիւն : — 14. Արհեստական կրթութիւն փայտի եւ երկաթի վրայ
(մանչերու) : — 15. Ասեղնագործութիւն (աղջկանց) : — 16. Մարմնամարզ :

Բարձրագոյն նախակրթարան մտնելու համար հարկ է
ստացած ըլլալ տարրական նախակրթութեան վկայական :

Երբ թաղ մը չունի բարձրագոյն նախակրթարան , կրնայ
իր տարրական նախակրթարանին վրայ բարձրագոյն նախնական
կրթութեան շրացուցիչ դասընթացք մը աւելցնել մէկ կամ
երկու տարուան ընթացքով : Այսօր մեր վարժարանները ա-
մէնքն ալ տարրական նախակրթարաններ են , եւ չունինք
բարձրագոյն նախակրթարան :

ԿՐԹԱԿԱՆ ԵՐԱԳԻՐ . — Ուսումնական Խորհուրդը պատրաս-
տած է արդէն Մանկապարտէզի եւ Տարրական նախակրթա-
րաններու կրթական Մրադիրը , որ Ազգ. Կեդր. Վարչութենէն
վաւերացուած եւ տպագրուած է 1897ին , եւ ուր պարզուած
ու բացատրուած են աւանդելի առարկաներուն մանրամասնու-
թիւնները :

ԳԱՍԱԳԻՐՔԵՐ . — Ամէն դասագիրք որ յատկացուած է ազգ.
վարժարաններուն , պէտք է անցնի Ուսումն. Խորհուրդի
քննութենէն եւ վաւերանայ Ս. Պատրիարքին կողմէ : Պատ-
րիարքարանէ չվաւերացուած դասագիրքերը չեն կրնար գործա-
ծուիլ Ազգ. վարժարաններու մէջ :

ՈՒՅՈՒՑՁԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ . — Ոչ ոք կրնայ ուսուցչական
պաշտօն վարել առանց ուսուցչական վկայականի , Կեդրոնա-
կան Ուսումն. Խորհուրդէն տրուած եւ Ս. Պատրիարքէն
վաւերացուած :

Ամէն տարի , Կեդր. Ուսումն. Խորհուրդը կը կազմէ Քննիչ
Յանձնաժողով մը , առաջնակարգ ուսուցիչներէ բաղկացեալ ,
որ Յունիս եւ Յուլիս ամիսներուն մէջ գումարուելով կը ստու-
գէ ուսուցչական վկայական ստանալու համար ներկայացող
անձերու արժանաւորութիւնը եւ իր քննութեանց արդիւնքը
տեղեկագրով մը կը մատուցանէ Ուսումն. Խորհուրդին :

18 տարեկան չեղող այրը եւ 16 տարեկան չեղող կինը

չին կրնար ներկայանալ ուսուցչական վկայական ստանալու քննութեան :

Ուսուցչութեան թեկնածուն պէտք է Քննիչ Յանձնաժողովին դիմէ գրաւորապէս եւ ներկայացնէ . 1. Իր մկրտութեան վկայականը , 2. Իր դպրոցական վկայագիրը , 3. Իր բնակած թաղին Աւագերէցին եւ Թաղական Խորհուրդին վկայութիւնը՝ վարքի եւ բարքի մաքրութեան մասին : Եթէ կ'ուզէ դաստիարակ ուսուցչի վկայական ստանալ , որուն համար հարկ է երկու տարի վարած ըլլայ օգնական-դաստիարակի պաշտօն , պէտք է ներկայացնէ . 1. Իր օգնական ուսուցչութեան վկայականը , 2. Բարուք ծառայութեան վկայական մը իր պաշտօնավարած դպրոցներու վարիչներէն , Ամէն պարագայի մէջ ընտրելին պէտք է ներկայացնէ նաեւ համառօտ տեղեկագրութիւն մը իր անցեալ զբաղմանց եւ պաշտօնավարութեանց վրայ : Իսկ եթէ գաւառացի է , Աւագերէցներու եւ Թաղ . Խորհուրդներու վկայութիւնները պէտք է հաստատուած ըլլան իրենց վիճակին Ազգ . Վարչութենէն կամ Առաջնորդէն : Առանց այս վկայութիւններուն կարելի չէ ընդունուիլ քննութեանց :

Քննիչ Յանձնաժողովը, Ուսուցչութեան Ընտրելեաց 1894ի Հրահանգին համաձայն , գրաւոր , բերանացի եւ գործնական քննութիւնները կատարելէ ետքը իր քննութեանց արդիւնքը կը հաղորդէ տեղեկագրով մը Ուսումն . Խորհուրդին , որ կ'որոշէ վերջնապէս արժանաւորները եւ կու տայ անոնց վկայականները :

Վկայականները չորս կարգ են .

Ա. — Օգնական-ուսուցչի կամ օգնական-վարժուհիի :

Բ. — Դաստիարակ-ուսուցչի կամ դաստիարակ-վարժուհիի :

Գ. — Օգնական մասնագէտ-դասատուի կամ օգնական մասնագէտ-ուսուցչուհիի :

Դ. — Մասնագէտ-դասատուի կամ մասնագէտ-ուսուցչուհիի :

Մասնագիտական ուսուցչութեան վկայականներ կրնան արուիլ Կրօնագիտական ուսման , Դպրութեանց , Ուսողական եւ Բնական գիտութեանց , Բարոյական գիտութեանց , Օսմաներէնի , Եւրոպական լեզուներու , Գծագրութեան , Հայ-Եկե-

դեցակտն եւ եւրոպական Երաժշտութեան, Զեռարուեստի եւ Մարմնամարզի :

Կրօնագիտական ուսմանց մասնագիտական վկայականի քննութիւնները կը կատարուին Կրօնական Ժողովին կողմէ :

1893ի Կազմական Կանոնագրին եւ 1894ի Հրահանգին համաձայն, 1894 Ապրիլ 1էն մինչեւ 1899 Ապրիլ 1 վկայական ստացած են .

Ա. — Օգնական-ուսուցիչ	39 .	Օգնական - վարժուհի	66
Բ. — Դաստիարակ	» 2 .	Դաստիարակ	» 3
Գ. — Օգն. Մասնագէտ	» 14 .	Օգն. Մասնագէտ	» 18
Դ. — Մասնագէտ	» 4 .	Մասնագէտ	» 6
	<hr/>		<hr/>
	Գումար 59		Գումար 93

Այն ուսուցիչները եւ ուսուցչուհիները որոնք 1894էն առաջ վկայուած են, պարտաւոր են նոր քննութիւն անցընել ըստ 1894ի Հրահանգին, որ կը տրամադրէ թէ 1898էն վերջը այդ հին վկայագիրները պիտի կորսնցնեն իրենց արժէքը : Սակայն Հրահանգին այս արամագրութիւնը գեռ վերջնական կերպով գործադրութեան դրուած չէ Ուսումն. Խորհուրդին կողմէ : Այդ հին վկայագիրները արուած են 1886 Մարտ 1էն մինչեւ 1894, հետեւեալ կերպով .

Ա. կարգի	33	այր եւ	30	կին	=	63
Բ. »	40	» »	49	»	=	89
Գ. »	71	» »	80	»	=	151
	<hr/>		<hr/>			<hr/>
	144		159			303

1894էն ետքը արուած առժամեայ վկայականները եթէ չեն փոխանակուած օրինաւոր նոր վկայականներով, կորսնցուցած են իրենց արժէքը, 1898էն սկսեալ :

Մանկապարտէզներն ու ծաղկօցները կը յանձնուին դաստիարակ-վարժուհիի մը խնամքին որ կրնայ իրեն օժանդակ ունենալ օգնական-վարժուհիներ :

Տարրական նախակրթարաններու մէջ կրթութիւնը կ'աւանդուի դաստիարակ-ուսուցիչներու եւ դաստիարակ-վարժուհիներու, օգնական-ուսուցիչներու եւ օգնական-վարժուհիներու ձեռքով, որոնք մնայուն պաշտօնեաներն են վարժարանին :

ՏԱՐԵԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ . — Տարրական նախակրթարաններու մէջ , ամէն տարի , վերամուտին , աշակերտները կը քըննուին Տեսուչ-գաստիարակին կողմէ եւ իրենց կարողութեան համաձայն կը բաշխուին երեք դասընթացքներու բաժանմանց մէջ : Բարձրագոյն նախակրթարաններու տարեկան քննութիւնները կը կատարուին գալրոցական տարւոյն վերջը :

ՇՐՋԱՆԱՒԱՐՏԻ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ . — Տարրական եւ բարձրագոյն նախակրթարաններու շրջանաւարտ աշակերտներն ու աշակերտուհիները պէտք է ներկայանան վիճակին Ուսումն . Խորհուրդին կողմէ յատկապէս կարգուած Քննիչ Յանձնաժողովին , որուն առջեւ բերանացի եւ գրաւոր քննութեանց ենթարկուելէ եւ իրենց կարողութիւնը հաստատելէ յետոյ կը ստանան վկայական՝ Տարրական կամ Բարձրագոյն նախնական կրթութեան , Ուսումն . Խորհուրդէն վաւերացուած :

Այս կանոնը 1893ին Ռէթէոս էֆէնաի Պէրպէրեանի ատենապետած Ուսումն . Խորհուրդին օրով առաջին անգամ գործադրուած եւ հետեւեալ արդիւնքը ունեցած է .

Գում Գարու Պէզճեան վարժարանէն	7	շրջանաւարտ մանչ
Սամաթիոյ Սահակեան	» 3	» »
» Նունեան	» 3	» աղջիկ

13

1894 , 95 եւ 96ի շրջաններուն մէջ շրջանաւարտի քննութիւն տեղի չունեցաւ . իսկ 1897ին այս կանոնին գործադրութեան ձեռնարկուելով նորէն , Պէշիքթաշի Մաքրուհեան վարժարանէն միայն 5 շրջանաւարտի վկայական տրուեցաւ , 3 աղջիկ 2 մանչ : 1898ի շրջանին՝ շրջանաւարտի քննութեանց արդիւնքը եղաւ հետեւեալը .

Մաքրի գիւղ , Արամեան վարժարան	7	շրջանաւարտ աղջիկ
» » » » »	5	» մանչ
Բերա Էսսեան	» 10	» աղջիկ
Սամաթիա Նունեան	» 5	» »
Օրթագիւղ Հափսիմեան	» 4	» »
Գատըր գիւղ Արամեան	» 3	» »
Տան մէջ ուսած	» 1	» »

35

Այսպէս 1893էն մինչև 98ի վերջը ունեցած ենք Ուսումնական Սորհուրդէն վկայեալ 53 շրջանաւարտներ երկու սեռէ :

Կ. ՊՈԼՍՈՅ ԹԱՂԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ. — Կ. Պոլսոյ մէջ ունինք 46 թաղային վարժարաններ՝ որոնցմէ վեցը փակ են. — Այս վեց փակ վարժարաններն են էյուպի Ս. Աստուածածին, Սթէնիայի Ս. Կարապետ, Գանտիլլիի Ս. Առաքելոց, Ազատլըի Տատեան, Սալմաթումբուքի Ս. Թաղէոս եւ Բարթողիմէոս, եւ Նաուր Գարուի Վառվառեան վարժարանները : Մնացեալ 40 վարժարաններէն գրեթէ ամէնքն ալ երկսեռ են. անոնցմէ երկուքը՝ Բերայի Նարեկեանը եւ Բանկալթիի Լուսաւորչեանը Մանկապարտէզներ են : Մնացեալները Տարրական նախակրթարաններ են, իրենց մէջ ունենալով Մանկապարտէզ կամ Ծաղկոց : Քանի մը թաղերու մէջ աղջկանց համար յատուկ շէնքեր կան թէև, սակայն զանոնք մանչերու վարժարանին միացած կը ներկայացնենք հոս : Հետևեալ ցուցակը, զոր կը քաղենք Ուսումնական Սորհուրդին հրատարակած վիճակացոյցէն, կը ներկայացնէ այդ 40 վարժարաններուն 1899 Յունուար 1ին ունեցած վիճակը :

	ՎԱՐԺԱՐԱՆ	Թ Ա Ղ	Աւսուցիչներ	Ուսուցիչ		Ամսական ծախս Դրուց
			եւ	Աւսուցչուհի	Ուսուցչուհի	
1	Պէգնեան - Լուսաւորչեան	Գում - Գարու	585	45	4	5000
2	Ս. Մեսրոպեան	Կէսիփ - Փաշա	249	8	3	3450
3	Պողոսեան - Վառվառեան	Գում. Գարուի դուրս	467	5	4	4480
4	Առաքելոց - Հայկանուշեան	Եէնի - Գարու	471	7	3	4950
5	Սահակեան - Նունեան	Սամաթիա	344	11	7	4400
6	Ներսէսեան	Ալթր - Մերմեր	22	1	—	300
7	Խորէնեան	Նարթ - Գարու	53	3	—	4000
8	Ս. Փ. Որբանց	Եէսի - Գուլէ	238	11	4	5150
		Գումար	1826	61	22	22430

	<i>Փոխադրեալ</i>	1826	64	22	22430
9 Տասեան	Մաքրիզիւղ	185	6	5	3990
10 Գարամանեան	Այ - Սքէճանօ	48	4	—	250
11 Լեւոնեան - Վարդանեան	Թօփ - Գարու	74	3	4	1250
12 Ս. Ոսկեանց	Գարակէօմբիւկ	44	3	—	1000
13 Պէզնեան	Էլուպ - Տէճքէրսար	34	4	—	380
14 Խորէնեան	Պալաք	447	6	2	2400
15 Ս. Ներսէսեան	Խապիւղ	230	6	6	1860
16 Ս. Մեսրոպեան	Գասրմ - Բաշա	32	4	—	350
17 Էսաեան	Բերա, Թագսիմ	363	17	7	8200
18 Նարեկեան Մանկապարսէզ	» Կալաքա Սարայ	108	—	4	1000
19 Լուսաւորչեան Մանկաբոս.	» Բանկալքի	48	—	1	300
20 Արեւիկունեաց	» Տօլապ Տէրէ	123	2	2	1200
21 Ս. Մեսրոպեան	Ֆերիզիւղ	55	—	3	720
22 Ս. Լուսաւորչեան	Ղալաքիա	154	9	2	3300
23 Մաքրունեան	Պէշիքբաշ	187	8	4	3800
24 Ս. Թարգմ. Հոփսիսեանց.	Օրբազիւղ	106	6	5	2000
25 Ս. Թարգմանչաց	Քուրու Չէսէ	36	3	4	960
26 Ս. Թաղէսեան	Բումէլի - Հիսար	48	4	—	330
27 Երից Մանկանց	Պօլանք գիւղ	10	4	—	400
28 Մամիկոնեան	Եէնի գիւղ	20	4	—	360
29 Ս. Հոփսիսեանց	Պէօլիւֆ - Տէրէ	14	4	—	600
30 Ս. Մեսրոպեան	Եէնի մահալլէ	28	4	4	615
31 Ս. Նիկողոսեան	Պէյֆօզ	15	4	—	200
32 Ս. Լուսաւորչեան	Քուզկուրնուզ	48	4	—	550
33 Ներսէսեան - Երմոնեան	» Ինասիյէ	186	7	7	3200
34 Ս. Խոչ	Սկիւսար - Սէլամիյէ	355	14	9	5000
35 Ճեմարան - վարժարան	» Պաղար Պաշի	135	4	2	1600
36 Արամեան	Գասրգիւղ	179	14	5	6500
37 Պէզնեան	Գարբալ	88	3	3	940
38 Ս. Ներսէսեան	Գրնալք	50	3	4	1000
39 Թաղային նախակրթարան	Էք - Մէյսան	28	4	—	315
40 Ս. Նեան	Ալէմ Տաղի	45	4	—	300
	<i>Գումար</i>	4923	184	93	77300

1899 Յունուար 1ին Կ. Պոլսոյ հայ նախակրթարանները, մանկապարտէզները եւ ծաղկոցները յաճախող 4923 տղոց 2877ը մանչ եւ 2046ը աղջիկ էին :

1899 Յունուար 1ի այս վիճակացոյցէն դուրս կը մնային մայրաքաղաքիս պետական, ինչպէս նաեւ այլ եւ այլ հայ ու օտար վարժարաններ յաճախող ուսանողները, որոնց թիւն էր 1550, հետեւեալ ստորարաժանուամով .

- Ա. — Պետական վարժարաններ յաճախող 250
- Բ. — Այլ եւ այլ » » 400 մանչ, 100 աղջիկ
- Գ. — Օտար » » 300 » 500 »

Բերայի Արուեստանոցը կը յաճախէին 54 ուսանողուհի եւ կը պաշտօնավարէին 6 ուսուցչուհիներ :

Սասգիւղի Գալֆահեան Որբանոցը կը գտնուէին 39 սահուհի, 3 մայրապետ եւ 2 ուսուցիչ :

Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՅ ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐՈՒՆ
ՆՈՒԱՄԵԱՅ ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱՑՈՅՑԸ

	ՎԻՃԱԿ 1897 Յունվ. 1ի	ՎԻՃԱԿ 1898 Յունվ. 1ի	ՎԻՃԱԿ 1899 Յունվ. 1ի
Աշակերտ եւ Աշակերտուհի	3825	4483	4923
Ուսուցիչ	44	175	184
Ուսուցչուհի	58	74	93
Ամսական ծախս (դրուց)	58.383	63.953	77.300



ՂԱԼԱԹԻՈՅ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Ղալաթիոյ Կեդր. Վարժարանը բացուած է 1886 Փետրուար 1ին : Նոյն տարւոյ Յունուար 1էն սկսեալ Կեդր. Վարժարանի Խնամակալութեան յանձնուած է Ղալաթիոյ կալուածներու մատակարարութիւնը , սնտուկին բոլոր պարագերը վճարուելէ ետքը : 1886 Յունուար 1ին ընտրուած Խնամակալութիւնը վերահաստատուած է հինգ տարի ետքը իր պաշտօնին մէջ , եւ վերջնապէս հրաժարած է 1896ին : Նոյն թուականին կազմուած է արդի Խնամակալութիւնը որուն անդամներն են .

Յակոբ Էֆէնտի Էսսեան , Ա.սեկւապէս	
Յովհաննէս » Մուրատեան , Ա.սեկւադպիր	
Մաքսուտ » Հարենց , Գաւազապէս	
Մկրտիչ » Ա.սասեան	
Յակոբ » Յակոբեան	
Յովսէփ » Եուսուֆեան	
Տոքթ. Սիմոն » Սեդրոսեան	

Այս Խնամակալութեան յանձնուած է Ղալաթիոյ նախակրթարանին հոգը , նոյնպէս Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյն եւ Ղալաթիոյ թաղին կալուածներուն մատակարարութիւնը :

Կեդր. Վարժարանի ուսմանց ընթացքը հինգ տարւոյ տեւողութիւն ունի եւ հետեւեալ առարկաները կ'աւանդուին . հայերէն , օսմաներէն , ֆրանսերէն , անգլիերէն , կրօնագիտութիւն , պատմութիւն , աշխարհագրութիւն , ուսողութիւն , քննական գիտութիւններ , իմաստասիրութիւն , ֆալսափական սկսեալութիւն , իրաւագիտութիւն , տնտեսագիտութիւն , եւ այլն :

Կեդր. Վարժարանը ցարգ ունեցած է 70 շրջանաւարտ , որոնցմէ 18ը 1890—91ի շրջ. ն մէջ . 91—92ի շրջանին մէջ շրջանաւարտ չէ ունեցած , նոյն տարին վարժարանը Ե. Գասարան շունենալուն համար . 92—93ի շրջանին մէջ ունեցած է 12 շրջանաւարտ . 93—94ի շրջանին մէջ ունեցած է 10 շրջանաւարտ : Այսպէս մինչեւ 1894 տարւոյ վերջը Կ Կր. վարժա-

րանը ունեցած է 40 շրջանաւարտ, որոնք «Դպրութեանց եւ Գիտութեանց պատկաւոր»ի աստիճանին արժանացած են (բացի մէկէն)։ 1894 տարւոյ Սեպտեմբերին նոր դրութիւն մը կ'ընդունուի եւ Դ. եւ Ե. դասարանները կը բաժնուին «Դպրութեանց» եւ «Գիտութեանց» ճիւղերուն, 94—95ին Կեդր. Վարժարանը կ'ունենայ 12 շրջանաւարտ «Դպրութեանց» ճիւղին մէջ եւ 6 շրջանաւարտ «Գիտութեանց» ճիւղին համար։ 95—96ին 9 շրջանաւարտ «Դպրութեանց» ճիւղին համար եւ 3 շրջանաւարտ «Գիտութեանց» ճիւղին համար։

Այս 70 ընթացաւարտներէն մէկ մասը Եւրոպայի մէջ կ'ուսնին հիմայ բժշկութիւն, իրաւագիտութիւն, ուսողութիւն, երկրաչափութիւն, ճարտարապետութիւն, եւ այլն։ Անոնցմէ ոմանք Համալսարաններէ վկայուած են արդէն։ Ուրիշներ կառաւարական պաշտօնի մտած են, կամ պաշտօնեայ են հանրային հաստատութեանց մէջ։ Կարեւոր մաս մըն ալ կը զբաղի ուսուցչութեամբ եւ վաճառականութեամբ։

Կեդր. Վարժարանը ունի այս տարի (1899—1900ի շրջան) երեք դասարան միայն 16 ուսուցիչով։ Աշակերտներուն թիւն է՝ Սեպտեմբեր 15ին՝ 56, հետեւեալ կերպով բաժնուած երեք կարգերու մէջ. Ա. Դասարան 26, Բ. Դասարան 12, եւ Գ. Դասարան 18։

Ա. Դասարանը ընդունուելու համար, աշակերտները պէտք է գրաւոր քննութիւն անցընեն հետեւեալ առարկաներուն վրայ. Հին եւ նոր հսակարանի պատմութիւն, աշխարհաբար շարադրութիւն, գրաբարե աշխարհաբար եւ աշխարհաբարե գրաբար քարգնանութիւն, օսմաներկն ուղղագրութիւն եւ ընթերցում, ֆրանսերկն ուղղագրութիւն, օսմաներկեկ եւ ֆրանսերկեկ հայերկն եւ փոխադարձ քարգնանութիւն, քուարանութիւն (չորս գործողութիւն, կոստրակներ, երեքի կանն, մեդրական դրութիւն), երկրաչափութիւն (գիծերու, անկիւններու եւ շրջանակներու վրայ գործնական գիտելիք), պատմութիւն (արեւելեան ժողովուրդներու, Յունաց եւ Հռոմայեցոց վրայ ծանօթութիւնեք), սարրական աշխարհագրութիւն քնական եւ ֆաղափական։

Աշակերտի մը տարեկան թոշակն է Լ. 0. 12, վեցամսեան կանխիկ վճարելի: Այն ծնողքները, որոնք շատ համեստ դիրք ունենալով կարող չեն վճարել ամբողջ թոշակ, վստահելի վկայութիւններէ յետոյ՝ կիսաթոշակ կրնան տալ իրենց զաւակները, վեցամսեան միշտ կանխիկ:

Իսկ այն աշակերտները որոնց բոլորովին աղքատ ու անկարող ըլլալը Ա. զգ. Պատրիարքարանի կողմէ կը վկայուի, ձրի կ'ընդունուին. սակայն Խնամակալութիւնը իրեն վերապահած է աղքատ ուսանողներու մէջ ընտրութիւն ընել եւ մուտքի քննութեան մէջ բաղդատաբար յաջողագոյն հանդիսացողները ձրի ընդունիլ վարժարան:



Ս Ա Ն Ա Ս Ա Ր Ե Ա Ն Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն

ՀԻՄՆԱԳԻՐ ԿՏԱԿԱՐԱՐԸ ԵՒ ԿՏԱԿԱԿԱՏԱՐՆԵՐԸ. — Սանասարեան վարժարանը հաստատուած է Էրզրում 1881ին, քաղաքին Մայր Եկեղեցւոյն կից բնդարձակ պարտէզի մը մէջ, շնորհիւ բարեյիշատակ Մկրտիչ Սանասարեանի, որ անոր դոյութիւնն ու յարատեւութիւնը ապահոված է իր նուիրած ու կտակած դրամագլուխով (կալուած, արժեթուղթ, եւ այլն): Այս դրամագլուխը վարժարանին անձեռնմխելի սեպհականութիւնը կը կազմէ: Սանասարեանի 1886 Յուլիս 10ի կտակագրին համաձայն կտակակատարներն են.

- Վսեմ. Պ. Կարապետ Եզեանց
- Պ. Գէորգ Եւանգուլեանց
- Պ. Լեւոն Տիգրանեանց (վերջը հրաժարած):

ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ. — Վարժարանին գործերը կը վարեն.

- Ա. Կ. Պոլսոյ Խնամակալութիւնը, Սրբազան Պատրիարքին նախագահութեամբ:
- Բ. Էրզրումի Տեղական Հոգաբարձութիւնը, Թեմական Առաջնորդին նախագահութեամբ:
- Գ. Վարժարանին վերատեսուչը:

Գ. Վարժարանին Ուսուցչական Մասնաժողովը , վերատեսչին ատենապետութեամբ :

Կ. ՊՈԼՍՈՅ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ . — Այս Խնամակալութեան պաշտօնն է հոգ տանիլ վարժարանին անշարժ ստացուածքին եւ արժեթուղթերուն պահպանման եւ արդիւնաւորման , բարեփոխել եւ վաւերացնել Տեղական Հոգարարձութեան կողմէ ներկայացուած տարեկան ելեւմտացոյցը , քննել եւ վաւերացրնել հաշիւները , հսկել Տեղական Հոգարարձութեան գործառնութեանց վրայ եւ ընդհանրապէս պաշտպան հանդիսանալ վարժարանին նիւթական եւ բարոյական շահերուն :

Արդի Խնամակալութիւնը հետեւեալ կերպով կազմուած է .

Ա.մեմ. Տ. Տ. Մաղաքիա Օրմանեան ,

Պատրիարք Կ. Պոլսոյ , Նախագահ

Վսեմ. Արիկ էֆէնտի Ունճեան

Վսեմ. Գարրիէլ » Նորատունկեան

Գրիգոր » Կիմիւշկերտան

Վսեմ. Յովհաննէս » Նուրեան

Պատրիկ » Կիւլպէնկեան

Վահան » Էսաեան

ՏԵՂԱԿԱՆ ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԻՒՆ . — Այս Հոգարարձութեան պաշտօնն է խնամք տանիլ վարժարանին ընդհանուր բարեկարգութեան , վարժարանի գոյքերուն պահպանութեան , պատրաստել ելեւմտացոյցը , որոշել ուսուցիչներու վարձքերը , աշակերաններու թոշակները , ընտրել ձրիավարժ աշակերանները եւ Յւրոպա զրկուելիք սաները , կատարել ծախքերը ըստ ելեւմտացոյցին եւ ընդհանրապէս հսկել վարժարանին նիւթական մատակարարութեան վրայ :

Էրզրումի տեղական Հոգարարձութեան արդի անդամներն են .

Տ. Զաւէն Մ. Վ. Տ. Նդիաեան ,

Առաջնորդական-Տեղապահ Կարնոյ , Նախագահ

Առաքել էֆէնտի Աւետիսեան
 Դանիէլ » Խարաճեան
 Կարապետ » Տէր Ազարեան , Գանձապետ

Փոխանորդներ

Չաքար էֆէնտի Խէրբէզեան
 Գէորգ » Փամպուղեան
 Աստուածատուր » Շիրինեան

Վարժարանին ներկայ տեսչութեան երեք անդամները , որոնք Սանասարեանի սաներն են , ըստ իր կտակին՝ իրաւամբ անդամ են այս Հոգաբարձութեան :

ՎԵՐԱՏԵՍՈՒՉ . — Վերատեսուչը , զոր կ'ընտրէ կ. Պոլսոյ Խնամակալութիւնը եւ որ կը հաստատուի Պատրիարքական պաշտօնազրով , պետն է վարժարանին ներքին վարչութեան . իր պաշտօնն է հոգ տանիլ վարժարանին օրէնքներուն եւ կանոններուն անթերի դորձադրութեան , ընտրել եւ արձակել ուսուցիչները , հսկել անոնց պաշտօնավարութեան , աշակերտներուն վարժութեանց եւ ընդհանրապէս վարժարանին կարգապահութեան վրայ , եւ այլն :

Հիմայ վարժարանին տեսչութիւնը կը վարեն , իրենց արժուած հրահանգին համաձայն հաւաքական պատասխանատուութեամբ՝ Մկրտիչ Սանասարեանի երեք սաները .

Գէորգ էֆէնտի Արուլեան
 Յովսէփ » Մատաթեան
 Սարգիս » Սողիկեան

Ասոնք իրենց մասնագիտական ուսմանց ընթացքը հիմնադիր-բարերարին ծախքով կատարած են գերմանական համալսարաններու մէջ եւ յատկապէս Ենայի Համալսարանին Մանկավարժական ճիւղին մէջ պատրաստուած են ուսուցչական կոչման :

ՈՒՍՈՒՑՁԱԿԱՆ ՄԱՄՆԱԺՈՂՈՎ . — Ուսուցչական Մասնաժողովը կը բաղկանայ վարժարանին բարձրագոյն երեք դասա-

բաններուն գիտութեանց եւ լեզուներու ուսուցիչներէն, վերատեսչին ատենապետութեամբ:

Ուսուցչական Մասնաժողովին պաշտօնն է որոշել վարժարանին մէջ աւանդելի ուսմանց նիւթերն ու արհեստները, կազմել աւանդելի առարկաներու եւ արհեստներու մանրամասն ծրագիրը, ընտրել վարժարանին մէջ կարգացուելիք դասագիրքերը, եւ այլն:

ՎԱՐՃԱՐԱՆԻՆ ԾՐԱԳԻՐԸ. — Սանասարեան վարժարանի նպատակն է դաստիարակել հայ մանուկները Հայ Առաքելական Ս. Եկեղեցւոյ ոգւոյն եւ կանոններուն համաձայն, աւանդել անոնց ընդհանուր կրթութիւն եւ ուսում, եւ կրթել զանոնք արհեստներու (métier) եւ արհեստագիտութեան (industrie) մէջ:

Վարժարանը ունի երկու բաժին. Ա. Ուսումնական եւ Բ. Արհեստագիտական:

Ա. — Ուսումնական բաժինը իր ծրագրով կը համապատասխանէ գերմանական միջնակարգ վարժարաններուն (Realschule), եւ ունի մէկ նախապատրաստական եւ վեց վարժարանական դասարան՝ իւրաքանչիւրը մէկ տարուան ընթացքով: Ուսմանց առարկաներն են.

1. Կրօնք. — 2. Եկեղեցական պատմութիւն. — 3. Հայերէն. — 4. Տաճկերէն. — 5. Գաղղիերէն. — 6. Գերմաներէն. — 7. Պատմութիւն. — 8. Աշխարհագրութիւն (քնական, ֆաղափական, առեւտրական եւ ուսումնական). — 9. Բնական գիտութիւնք (քննապատմութիւն, սարքաւորութիւն եւ քննաքննութիւն). — 10. Ուսողութիւն (քուսքաւորութիւն, գրահաշիւ, երկրաչափութիւն, եռանկիւնաչափութիւն եւ տրիանգլաչափութիւն). — 11. Գծագրութիւն. — 12. Գեղագրութիւն. — 13. Երգ. — 14. Դաշնակ (կամաւոր). — 15. Զութակ (կամաւոր). — 16. Մարմնամարզ:

Բ. Արհեստագիտական բաժինը ունի չորս տարուան ընթացքի Ուսանելի արհեստներն են Կահագործութիւն եւ Կոպղարարու-

թիւն՝ իրենց ճիւղերով հանդերձ : Արհեստաւոր աշակերտները պարտաւոր են միանգամայն պարապիլ հետեւեալ ուսմանց .

1. Կրօնք . — 2. Եկեղեցական պատմութիւն . — 3. Հայերէն . — 4. Տաճկերէն . — 5. Եւրոպական լեզու մը (զոր կ'ընտրէ Ուսուցչական Ժողովը) . — 6. Առեւտրական աշխարհագրութիւն . — 7. Թուարանութիւն . — 8. Երկրաչափութիւն . — 9. Տոմարակալութիւն . — 10. Բնապատմութիւն . — 11 Բնաբանութիւն . — 12. Տարրաբանութիւն . — 13. Փայտի եւ երկաթի արհեստաբանութիւն . — 14. Արհեստագիտական գծագրութիւն . — 15. Երգ :

ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ . — Ուսումնական բաժնի նախապատրաստական դասարանին մէջ ընդունուելիք աշակերտը պէտք է

Ա. Ըլլայ 11—13 տարեկան , ուշիմ եւ առողջ :

Բ. Ունենայ սա ծանօթութիւնները . — Հայերէն վարժ կարգալ , ընթեռնլի կերպով գրել , Քերականութեան Մասունք քանին գիտնալ , թելագրութիւն մը գրի առնել՝ առանց ուղղագրական խօշոր սխալներու , եւ թուարանական շորս գործողութիւնները վարժ կերպով կատարել :

Արհեստագիտական բաժնին մէջ ընդունուելիք աշակերտը պէտք է

Ա. Ըլլայ 13—15 տարեկան , ուշիմ եւ առողջ :

Բ. Ունենայ այն ծանօթութիւնները՝ որոնք Ազգ. վարժարաններու յատուկ կազմական կանոնագրով սահմանուած են Տարրական նախակրթարաններու համար :

Վարժարանը ընդունուելիք ամէն աշակերտ պէտք է ներկայացնէ իր ծննդեան ու մկրտութեան , պատուաստի ու առողջութեան վկայականները , ինչպէս եւ Օսմանիյե քեզքերեսիւն :

Թէ՛ Ուսումնական եւ թէ՛ Արհեստագիտական բաժնի իւրաքանչիւր զիշերօրիկ աշակերտի համար , պէտք է իբր տարթոշակ վճարուի 20 Օսմ , ոսկի , որ կը պարունակէ աշակերտին սնունդի , հագուստի , լուացքի ու մաքրութեան , բժիշկի ու դեղի ,

ուսման ու դասագիրքերու եւ այլ ուսումնական պիտոյքներու ծախքերը :

Թէ՛ Ուսումնական եւ թէ՛ Արհեստագիտական բաժնի իւրաքանչիւր ցորեկօթիկ աշակերտի համար, պէտք է իբր տարեթոշակ վճարուի 6 Օսմ. ոսկի, որ կը պարունակէ միմիայն ուսման եւ ցերեկուան ճաշի ծախքերը :

Իւրաքանչիւր նորեկ գիշերօթիկ աշակերտի համար, պէտք է վարժարանի արկղին յանձնուի միանուագ 3 Օսմ. ոսկու պահեստի գումար մը, իբր աշակերտին ճանապարհածախք՝ երբ ընթացաւարտ ըլլայ եւ կամ եթէ ո՛ր եւ է պատճառաւ հարկ գատուի վարժարանէն արձակել զինքը : Պահեստի գումարին ամբողջը կամ մնացորդը ետ կը արուի՝ երբ աշակերտը մեկնի վարժարանէն : Ըստ Կանոնագրին՝ վարժարանը պէտք է ունենայ առ նուազն 30 ձրիավարժ գիշերօթիկ աշակերտ :

ՈՒՍՈՒՑՁԱԿԱՆ ՄԱՐՄԵՆ. — Հիմայ վարժարանին ուսուցչական մարմինը կը բաղկանայ, երեք տեսուչներէն զատ, հայերէնի, Ֆրանսերէնի, տաճկերէնի, ուսողութեան, բնական գիտութեանց, արուեստագիտութեան վեց մասնագէտներէ եւ երեք օգնական ուսուցիչէ, որոնցմէ մէկը մատակարար է եւ երկուքը կառավարիչ : Արհեստական բաժինը ունի կահագործութեան եւ կոպղարարութեան համար մէյ մէկ ուսուցիչ : Վարժարանը ունի նաեւ այցելու բժիշկ մը եւ քարտուղար մը :

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ. — Վարժարանին Ուսումնական բաժինը 1899 Յուլիսին ունէր 166 աշակերտ հետեւեալ բաշխմամբ .

Գիշերօթիկ ձրիավարժ	32
Ցորեկօթիկ »	5
Պոպովեան պաշտպանեալ	10
Մասուրեան »	12
Ճանրմեան »	1
Ժամհարեան »	1
Պոլսոյ Արհեստանոցի Խնամակալութենէն պաշտպանեալ	3
Բազուցի բարեսէրներէ »	42
Չանազան թոշակաւօր գիշերօթիկ	16
» » ցորեկօթիկ	44

Վարժարանին Արհեստագիտական բաժինը ունէր 1899 Յուլիսին 14 աշակերտ :

ԸՆԹԱՑԱԽԱՐՏՆԵՐԸ . — Սանասարեան վարժարանը ցարդ ունեցած է Ուսումնական բաժնէն 75 ընթացաւարտ , որոնց 12ը 1890—91ի շրջանին , 23ը 1891—92ի շրջանին , 17ը 1892—93ի շրջանին , 12ը 1893—94ի շրջանին եւ 11ը 1894—95ի շրջանին : Ասոնցմէ 25ը ուսուցչական պաշտօն կը վարեն զանազան քաղաքներու մէջ , 15ը արտասահմանի գիտական , արհեստական եւ գեղարուեստական բարձրագոյն հաստատութեանց մէջ կ'ուսնին մէյ մէկ մասնագիտութիւն , մէկ քանին կառավարական պաշտօնեաներ են , եւ մնացեալները կը պարապին առեւտուրով եւ արհեստով :

Արհեստագիտական բաժնէն Սանասարեան վարժարանը ցարդ ունեցած է 9 ընթացաւարտ , ամէնքն ալ գաւառացի , որոնցմէ 4ը կոպղարարութիւն ուսած են , 1ը հիւսնութիւն եւ 4ը կահագործութիւն : Ասոնցմէ մէկը վարժարանին Արհեստանոցին մէջ կահագործութեան վարպետի պաշտօն կը վարէ եւ միւսները արհեստական գործերով կը զբաղին զանազան տեղեր :



ՅՈՎՍԷՓ ԻԶՄԻՐԵԱՆՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԸ

ՄՐՑԱՆԱԿԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ . — Բարեյիշատակ Յովսէփ Իզմիրեանց , բնիկ Ղալարցի , իր 1884 Ապրիլ 3 թուակիր կտակագրով 10,000 ռուպլի նուիրած է ազգին եւ սահմանած է որ տոկոսը , տարեկան 600 ռուպլի , Կ. Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանի միջոցաւ իրր մրցանակ պարգեւ տրուի ամէն տարի ազգային գրականութեան եւ պատմութեան վերաբերեալ լաւագոյն երկասիրութեանց հեղինակներուն :

ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎ . — Այս կտակին գործադրութեան համար 1887ին Ազգ. Կեդր. Վարչութեան Խաան ժողովը Մնայուն Յանձնաժողով մը կազմած է «Յովսէփ Իզմիրեանց Գրական Յանձնաժողով» անունով , որուն անդամներն են .

Ամեն. Տ. Տ. Մաղաքիա Օրմանեան

Պատրիարք Կ. Պոլսոյ, Նախագահ

Գեր. Տ. Գէորգ Եպ. Երէցեան

Գեր. Տ. Եղիշէ Եպ. Դուբեան

Արժ. Տ. Յովհաննէս Ա.Քհ. Մկրեան, Ասեկադպիր

Վսեմ. Գարրիէլ էֆ. Նորատունկեան, Ասեկապետ

Վահան » Էսաեան, Գանձապետ

Տօքթ. Վահրամ » Թորգոմեան

ՄՐՅԱՆԱԿԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ. — Իզմիրեանց Մրցանակը հաստատուած է յանուն մեր Ս. Թարգմանիչներուն՝ Սահակայ եւ Մեսրոպայ, եւ կը բաշխուի Ս. Սահակայ եւ Մեսրոպայ տօնին օրը, ամէն տարի, Կ. Պոլիս :

Մրցանակի ներկայացած երկասիրութիւնները պէտք է վերաբերին հայ լեզուագիտութեան կամ պատմութեան, ինչպէս ազգային լեզուի եւ գրականութեան քննութիւն, բանասիրական հետազօտութիւններ, ազգային հին եւ նոր կեանքէ առնուած թատերագութիւններ, եւ այլն : Կրնան ըլլալ աշխարհաբար կամ գրաբար, ձեռագիր կամ տպագիր (*), եւ կ'ընդունուին ո՛ր երկրին մէջ ալ գրուած ըլլան : Ներկայացուած աշխատասիրութիւնները ետ չեն տրուիր :

Մրցանակի չեն կարող մասնակցիլ օտար լեզուներէ թարգմանութիւններ, դասագիրքեր, ամէն մրցանակաբաշխութեան թուականէն երկու տարի առաջ տպուած երկասիրութիւններ, արդէն վարձատրուած աշխատութեանց երկրորդ եւ յաջորդ տպագրութիւնները :

Մրցանակը կրնայ ամբողջ տրուիլ, եթէ արժանի գործեր գտնուին, կամ քանի մը մասի բաժնուիլ : Եթէ ո եւ է տարւոյ մը մէջ մրցանակի արժանի երկեր չներկայանան, պարգեւի գումարը պիտի յատկացուի հին հայ մատենագրութիւններէ մէկը տպագրելու :

Մրցանակի համար զրկուած երկասիրութիւնները ամէն տարի առ առաւելն մինչեւ Յունուար ամսուան առաջին օրը պէտք է ներկայացուին Ս. Պատրիարք Հօր : Լրագիրներու միջոցաւ ամէն տարի տեղեկութիւններ կը հրատարակուին թէ՛ ներկայացուած եւ թէ՛ վարձատրուած երկասիրութեանց վրայ :

(*) Տպագիրները երեք օրինակ կը ներկայացուին Յանձնաժողովին :

ՄՐՑԱՆԱԿԻ ԱՐԺԱՆԱՑԱԾ ԵՐԿԵՐ . — 1887էն ի վեր Յանձնա-
ժողովին ներկայացած են 73 երկասիրութիւններ , որոնցմէ 24ը
արժանացած են մրցանակի եւ զանազան քանակութեամբ պար-
գեւներ ընդունած :

ԷՐՁՐՈՒՄԻ ԵՒ ՄՇՈՅ ԱՂՋԿԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ . — Յովսէփ
Իզմիրեանց Գրական Մրցանակի մը հաստատութեան համար
կտակած 10,000 բուպլիէն զատ կտակած է 10,000 բուպլի ու-
րիչ գումար մըն ալ , որուն տոկոսը , 600 բուպլի , յատկացու-
ցած է Էրզրումի կամ Մշոյ աղջկանց վարժարանին :

Այս նպաստը տասը տարի Էրզրումի աղջկանց վարժարա-
նի արհեստական ճիւղին սահմանելէ ետքը՝ Յովսէփ Իզմիրեան-
ցի Գրական Յանձնաժողովը, նկատելով որ Մշոյ աղջկանց վար-
ժարանը փակուած է եւ ժողովուրդը անկարող է հոգալ իր
աղջկանց կրթութեան ծախքը՝ 1897 Սեպտ. 1 է սկսեալ այդ
նպաստը յատկացուց Մշոյ աղջկանց վարժարանին , որ հիմայ
« Յ. Իզմիրեանց Օրիորդաց վարժարան » անունը կը կրէ :

Վարժարանին վերատեսչութիւնը յանձնուած է Մշոյ Ա-
ռաջն . Փոխանօրդինս Մշոյ Կրօնական եւ Քաղաքական ժողով-
ները ամէն վեց ամիսը անգամ մը Կ. Պոլսոյ Յանձնաժողովին
կը ներկայացնեն վարժարանին վիճակացոյցը :

Վարժարանը ունէր 1899 Յուլիսին վեց ուսուցիչ եւ ու-
սուցչուհի եւ 209 աշակերտուհի :


ԳՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՅԱՆՁՆՈՒԱԾ ՆՈՐ ԳՈՐԾԵՐ . —
Ա.գգ. Կեդր. Վարչութիւնը 1899ին Յովսէփ Իզմիրեանց Գրա-
կան Յանձնաժողովին յանձնեց նաեւ հետեւեալ գործերը .

1. Վանայ Սանդխտեան աղջկանց վարժարանին մատակա-
րարութիւնը՝ հանգուցեալ Սանասարեանի կողմէ թողուած
նպաստով :

2. Շահնազարեան վարժարանի գոյքերուն մատակարա-
րութիւնը՝ յատկացնելու համար զանոնք հանգուցեալ Շահնա-
զարեան Կարապետ վարդապետի կտակին գործադրութեան :

3. Աստուածատուր Զունդի կտակին գործադրութեան հըս-
կողութիւնը :

ՔՈՐԾԻ ՄԱՐԴՈՑ ՀԱՄԱՐ



ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆԸ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ. — Երկրագործական Դրամատունը (Չրասք պանգասը), որ Առևտրական նախարարութեան հրահրութեան տակ կը գտնուի, հիմնուած է երկրագործներու դրամ փոխ տալու, շահու տրուելիք դրամներ ընդունելու (*) եւ երկրագործութեան վերաբերեալ դրամական գործառնութեանց միջնորդ ըլլալու համար:

Դրամատան կեդրոնական վարչութիւնը կ. Պոլսոյ մէջ է, եւ վիշաշեքներու ու աւանդներու, ինչպէս նաեւ բաւական քանակութեամբ դրամագլուխ ունեցող զազաններու կեդրոններուն մէջ ալ մասնաճիւղեր ունի:

Ինչպէս կեդրոնին, նոյնպէս մասնաճիւղերուն մէջ, տնօրէնին կը գործակցի վարչական ժողով մը, որ կ'որոշէ ըլլալիք փոխառութիւնները, գրաւներու վաճառումը, եւայլն:

ՓՈԽԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ. — Երկրագործ չեզոքը չի կրնար դրամ փոխ առնել Երկրագործական Դրամատունէն:

Երկրագործ կը համարուին. 1. Արաի, այդիի կամ պարտէզի տէր ըլլալով, զանոնք իրենց ընտանիքին անդամներուն աշխատութեամբ մշակողները. 2. Հասոյթը հողաաւերջ հետ կիսելու պայմանաւ աշխատող օրթագահները. 3. Ուրիշին հողը վարձելով մշակող կամ մշակել տուողները. 4. Իրենց հողերը ուրիշներուն վարձու կամ միւլրապայի տուողները:

Երկրագործ մը այս չորս դասակարգէն որու ալ պատ-

(*) Դրամատան հնչուն դրամ աւանդ ձգողներուն 4% տոկոս կը տրուի: Երեք ամիսէն պակաս պայմանաժամով եւ կամ առանց պայմանաժամի գրամատուն յանձնուած գումարներուն համար տոկոս չի տրուիր:

կանի Երկրագործական Դրամատուներն զրամ փոխ առնելու իրաւունք ունենալու համար՝ անհրաժեշտ պայման է որ իր հոգարեքին տասանորդ վճարելով հանդերձ, նաև Դրամատան հաշուոյն հիսսեի մեկնաժի վճարէ:

Երկրագործներուն՝ արքունական տուրքէ եւ ուրիշ հարկերէ Պետական Մատուկին պարտական ըլլալը արգելք չէ Դրամատուներն իրենց ըլլալիք փոխատուութեան:

Դրամատուներ երկու պայմանով փոխատուութիւն կ'ընէ.

1. Մէկ տարիէն մինչեւ տասը տարի պայմանաժամով, սա պայմանով որ ամէն տարի տոկոսին եւ զրամագլուխին ի հաշիւ որոշ գումար մը հատուցուի:

2. Երեք ամիսէն մինչեւ մէկ տարի պայմանաժամով: Այս պարագային տոկոսն ու զրամագլուխը միասին, կամ տոկոսի մասնակի վճարմամբ զրամագլուխը պայմանաժամին կը հատուցուի:

Երկրագործական Դրամատուներ իր փոխ տուած գումարներուն համար 6 0/0 տոկոս կ'առնէ եւ միանգամ ընդ միշտ 10/0 տուրք մը կը գանձէ Դիւանական ծախք (րեսուր գայսիյե) անունով:

Պայմանաժամի երկարաձգում եւ կամ մասնավճարներութիւն վրայ յաւելում ձեռք բերելու համար ամէն գործառնութիւն առանց ո եւ է ծախքի կը կատարուի:

Փոխատուն պարտաւոր է իր անշարժ կալուածովը ապահովելու պարտքին հատուցումը: Եթէ կալուածը սրբ վիւշի է, գրաւի կը դնէ զայն (թերհիւն): Եթէ մուգաքաւաղը վազօ է, հողը վեփաքէ փերաղ կ'ընէ եւ վրան գանուած չէնքերն ու ծառերը գրաւի կը դնէ: Իսկ եթէ կալուածը արագիի կմիրիէ է, կամ քախսիսարի տեսակէն արագիի մեկգուփե, վեփաքէ փերաղ կ'ընէ: Բեհնի եւ վեփաքէ փերաղի հետ պէտք է նաև վեփաքէրը սկզբիկ մը, զոր փոխատու կալուածատէրը կու տայ Դրամատան մասնաճիւղի գլխաւոր պաշտօնեային՝ արտօնելով զայն իր կալուածը ուրիշին ծախել եւ փոխարէնով իր պարտքը գանձել, եթէ ինք չվճարէ պայմանաժամին:

Երկրագործ մը իրր ապահովութիւն կրնայ ցոյց տալ կալուած մը որուն կէսին կամ կէսէն աւելիին բաժնետէր (հիսս-

սեփար) է. իսկ երբ կէսէն պակաս է իր բաժինը, չի կրնար, եթէ միւս բաժնետէրերը՝ փոխառուին երաշխաւորելով՝ իրենց բաժինները գրաւ չտան Դրամատան:

Անշարժ կալուած չունեցող երկրագործներու երաշխաւորով մը կրնայ գրամ փոխ տրուիլ Դրամատունէն, պայմանաւոր այդ երաշխաւորը կալուածատէր ըլլայ եւ իր կալուածով կամ կալուածներով ապահովէ ըստ օրինի փոխ տրուելիք գումարին հատուցումը:

Բացառիկ պարագաներու մէջ, Կեդրոնական վարչային ժողովին որոշմամբ եւ Կայս. կառավարութեան հաւանութեամբ, կարօտ գիւղացիներու սերմնացու հայթայթելու համար, առանց գրաւի, եւ միայն գիւղացիներուն փոխադարձ երաշխաւորութեամբ ալ գրամ փոխ կը տրուի:

Երբ իբր ապահովութիւն ներկայացուած կալուածները արտ կամ ամբողջովին քարուկիր կալուած եւ կամ ապահովագրուած շէնքեր են, ըլլալիք փոխառութիւնը անոնց քուսն արժեքին կէսին չափ պէտք է ըլլայ. իսկ երբ այրելի շէնքեր, կամ այգիի եւ պարտէզի պէս միշտ նոյն վիճակին մէջ չմնալու ենթակայ կալուածներ են, $\frac{1}{3}$ ին եւ կամ $\frac{2}{5}$ ին չափ միայն փոխ գրամ կը տրուի անոնց տէրերուն:

Երկրագործական Դրամատան մաւնածիւղերը, երբ 15000 ոսկիէ աւելի գրամագլուխ ունին, առ առաւելն 15000 դրուշ, երբ 10էն 15000 ոսկի գրամագլուխ ունին՝ 10000 դրուշ, եւ երբ 10000 ոսկիէ պակաս գրամագլուխ ունին, 5000 դրուշ միայն կրնան փոխ առ ձեռք առնի:

ՓՈՒՍՏՈՒՈՒԹԵԱՆ ՁԵՒԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ. — Դրամ փոխ առնել ուղող երկրագործը պէտք է յանձնէ Դրամատան մասնաճիւղերուն:

1. Իբր ապահովութիւն ներկայացուցած անշարժ կալուածին վերաբերեալ պաշտօնական վաւերաթուղթերը:

2. Կալուածական տուրքը մինչեւ ո՛ր տարին հատուցած ըլլալը հաստատող ընկալագիրը:

3. Իր թաղէն կամ գիւղէն ձեռք բերուած վկայագիր մը, որ հաստատէ թէ իբր ապահովութիւն ցոյց տուած կալուածը

իրն է, թէ ինք կենդանի է եւ կը վերաբերի երկրագործ դասուն: Այս վկայագիրը տպուած է եւ ձրիարար կը տրուի Երկրագործական Դրամատան մասնաճիւղէն. միւթարը կը լեցնէ բաց թողուած տեղերը եւ իրր գրողչէք 40 փարա միայն կը տրուի իրեն: Այս վկայագիրները 40 փարա դրոշմատուրքի ենթարկուած են:

Դրամատան վարչական ժողովը կ'որոշէ ըլլալիք փոխատուութեան քանակութիւնը:

Ապա փոխառութեան մուրհակ մը խմբագրուելով, փոխառուին կամ, եթէ կայ, երաշխաւորին կողմէ եւս կը ստորագրուի կամ կը կնքուի եւ մուգաւիշաք մուշարրիւրիին կողմէ կը վաւերացուի: Այս վաւերացման համար պէտք է վճարուի 5 դրուշ, եթէ փոխառութիւնը 5000 դրուշէ պակաս է, 12 1/2 դրուշ՝ 5000է մինչեւ 10000 դրուշ, եւ 25 դրուշ՝ 10000 դրուշէ վեր եղածներուն համար:

Գրուի կամ վեփաեկե փերաղի համար հարկ եղած օրինանական գործողութեանց կատարումէն ետքը, դրամը կը վճարուի փոխառուին եւ քասարրուֆի պաշտօնական թուղթերը կը մնան Դրամատան քով, մինչեւ որ այդ պարտքը հատուցուի:

Գրուի դրուած կամ վեփաեկե փերաղ եղած կալուածներու կալուածային տուրքերը եւ ինարեի ու մուգաքաւի պարտքերը չվճարուած, գործողութիւնը կրնայ կատարուիլ. այդ գործողութեան համար ո եւ է ծախք չ'առնուիր:

ՊԱՅՄԱՆԱԺԱՄԻՆ ԱՆՎՃԱՐ ՄՆԱՑԱԾ ՊԱՐՏՔԵՐ. — Երբ փոխառու երկրագործը պայմանաժամին իր պարտքը չվճարէ, Դրամատունը գործադիր պաշտօնեային (ինարա մեմուրը) կը դիմէ, որ առանց վճռագրի իսկոյն ազդարարադիր մը (իխպար-նամե) կը դրկէ պարտականին կամ երաշխաւորին՝ որով երկու ամսուան նոր պայմանաժամ մը կը տրուի իրեն: Եթէ այդ պայմանաժամին աւարտելուն նորէն չվճարուի պարտքը, գրուի դրուած կամ վեփաեկե փերաղ եղած կալուածը իսկոյն աճուրդի կը դրուի եւ ըստ օրինի կը ծախուի: Վաճառումին արդիւնքը կը յատկանայ վագֆի ինարեներուն, մուգաքաւաներուն, կալուածային տուրքին եւ մնացեալէն կը վճարուի Դրամատան

պահանջքը, որ կը գերադասուի բոլոր միւս պահանջատէրե-
րուն առնելիքէն: Ասկէ զատ Դրամատունը վար կը դնէ 10/0
միջնորդչէք մը եւ ազգարարագրի ծախքերը: Եթէ ո եւ է
գումար աւելնայ, կը յանձնուի պարտականին կամ երաշխաւո-
րին: Իսկ եթէ պարտքին վճարման չբաւէ, մնացեալը կը պա-
հանջուի անոնցմէ:

Երկրագործական Դրամատան կողմէ աճուրդի հանուած
կալուածի մը եթէ գուրսէն գնող չգտնուի, Դրամատան վար-
չութիւնը իր հաշուոյն կը գնէ այդ կալուածը, պայմանաւ որ
տուած գինը չանցնի իր պահանջքի գումարը: Այս պարագային
նոյն կալուածին տէրը մինչեւ մէկ տարի կրնայ ետ առնել զայն,
եթէ իր պարտքը ամբողջովին վճարէ:

Պարտականին եւ երաշխաւորին կողմէ Դրամատան դէմ
բացուած ո եւ է զատ չի կրնար արդիւնել աճուրդի եւ վաճառ-
ման գործողութիւնը:

ՊԱՅՄԱՆԱԺԱՄԻ ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄ. — Պայմանաժամի երկա-
րաձգում կը արուի. 1. Եթէ պատերազմ ծագելով, պարտական
եզող անձը պատերազմի վայրը գտնուի: 2. Եթէ իր բերքը
երաշտութենէ, ողողումէ, պաճարախտի համաճարակէ եւ ա-
սոնց նման ո եւ է ուրիշ արկածէ փասուի: Ասանկ պարագա-
ներու մէջ Դրամատան վարչութիւնը քննութիւն կը կատարէ,
եւ եթէ պարտական եզող անձին ցոյց տուած պատճառները
իրաւացի գտնէ պէտք եղածին չափ պայմանաժամ կու տայ:

Տասը տարիէն պակաս ժամանակի համար դրամ փոխ առ-
նողը, եթէ ուզէ պայմանաժամը տասը տարուան վերածել, իր
պահանջումը կրնայ ընդունուիլ:

Եթէ պարտականը կամ երաշխաւորը մեռնի, ազգարարա-
գրով արուած երկու ամսուան պայմանաժամի միջոցին՝ ժա-
ռանգորդները կրնան չորս ամսուան նոր պայմանաժամ մը ձեռք
բերել:



Տ Ո Կ Ո Ս Ի Օ Ր Է Ն Ք Ը

1303 Մարտ 22 ին (Քրիստոսի թուական 1887) հրատարակուած տոկոսի օրէնքը կը տրամադրէ թէ՛ այդ թուականէն սկսեալ Թուրքիոյ մէջ տոկոսի ամէնէն բարձր սակն է սարիև հարիւրին ինը, այսինքն ամիսը հարիւր դրուշին երեսուն փարայ (Յօդ. 1) :

Երբ գումար մը անտոկոս փոխ առնուած է առանց պայմանաժամի, եւ պարտականը չուզեր կանաւորապէս տոկոս վճարելու հաւանիլ, կարելի է տոկոսաւորի վերածել զայն, բոթքսօ մը ընելով, կամ ազերսագիր մը տալով դատաւորին :

Փոխատուութեան պայմանաժամը որչափ ալ երկար ըլլայ, տոկոսին քանակութիւնը պէտք չէ դրամազլխին քանակութեանէն աւելի ըլլայ : Դատաւորին արգիլուած է վճել դրամազլուխը անցնող տոկոսները (Յօդ. 4) :

Փոխ առնուած գումարի մը բազադրեալ տոկոս քալեցնելը արգիլուած է օրէնքէն, ի բաց առեալ երբ երկուստեք համաձայնութիւն գոյացած ըլլայ երեք առաջին տարիներուն համար տոկոսները դրամազլխին վրայ աւելցնելու, եւ այս ալ այն պարագային ուր պարտականը երեք տարի ո եւ է վճարումը քան չէ փոխ առնուած գումարին ի հաշիւ (Յօդ. 5) :

Երբ հարիւրին 9էն աւելի տոկոսի պայմանագիր ըլլայ պարտականին եւ պահանջատէրին միջեւ, պայմանագրուած ապօրէն տոկոսը պիտի վեղչուի հարիւրին 9ի (Յօդ. 3) :

Երբ պարտականը վաշխային (ֆանիշ, usuraire) տոկոս վճարած է, իրաւունք ունի հաշուակցելու՝ ցորչափ ամբողջապէս վճարած չէ պարտքը, նոյն իսկ եթէ հաշիւները փոխադրուած եւ նոր մուրհակներ արուած ըլլան : Բայց վճարուած վաշխային տոկոսները ետ չեն պահանջուիր, եթէ պարտքը ամբողջովին կարգադրուած է եւ երկուստեք գործողութիւնները զադրած են (Յօդ. 6) :



ՎԱԳՖ ԿԱԼՈՒԱԾՆԵՐՈՒ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՓՈՒԱՆՑՈՒՄԸ

Երբ ինւարեքեյնչի վագֆ կալուածի մը տէրը (միւրքե-
ւարըֆ) վախճանի, այդ կալուածը կը փոխանցի իր մանչ եւ
աղջիկ զաւակներուն հաւասարապէս. կալուածը մահչիւղ կ'ըլ-
լայ, եթէ բնաւ զաւակ չունենայ:

Այս ժառանգական փոխանցումին անձուկ սահմանը ըն-
դարձակելու համար երեսուն տարիի չափ յառաջ քելսիի ին-
քիզալի օրէնքը հրատարակուեցաւ, որուն ուժով վագֆ կալ-
ուած մը ոչ միայն զաւակներուն, այլ եւ ուրիշ մօտաւոր ազ-
գականներու ալ կը փոխանցի: Բայց որպէս զի վագֆ կալուա-
ծին ժառանգական փոխանցման սահմանը ընդարձակի, պէտք
է զիմել Տէֆթէրհանէի պաշտօնատան, կատարել տալ քելսիի
ինքիզալի օրինական գործողութիւնը, վճարելով պահանջուած
տուրքը՝ որ 3⁰/₁₀ է: Այս գործողութեամբ միայն վագֆ կալ-
ուածը քելսիի ինքիզալը կ'ըլլայ:

Պէտք չէ սակայն շփոթել քելսիի ինքիզալ եղած կալ-
ուածը սրբ վիւղ կալուածին հետ, ինչ որ կ'ընէ ընդհանրա-
պէս ժողովուրդը, ըսելով թէ «Վագֆ կալուածը միւրքի վե-
րածած է»: Թելսիի ինքիզալ եղած կալուածը ժառանգա-
կան յատուկ փոխանցում մը ունի որ տարբեր է սրբ վիւղի
փոխանցումէն, եւ հետեւեալն է.

1. Եթէ հանգուցեալը բողած է մանչ եւ աղջիկ զաւակ-
ներ, անոնք հաւասարապէս կը ժառանգեն «քելսիի ինքիզալ-
ը» վագֆ կալուածը. իսկ եթէ մէկ մանչ եւ կամ մէկ աղ-
ջիկ միայն բողած է, բացարձակապէս անիկա կ'ըլլայ ժա-
ռանգորդ:

2. Եթէ հանգուցեալը զաւակ չունի, իր մանչ կամ աղ-
ջիկ զաւակն մանչ կամ աղջիկ զաւակները, այսինքն իր բոռ-
ները, հաւասարապէս ժառանգորդ կ'ըլլան. իսկ եթէ ասոնցմէ
մէկը միայն բողած է, բացարձակապէս անիկա կ'ըլլայ ժա-
ռանգորդ:

Եւ յաջորդաբար,

3. Հայրը եւ մայրը հաւասարապէս :

4. Հարազատ եղբայրը եւ քույրը » :

5. Համահայր եղբայրը եւ քույրը » :

6. Համամայր եղբայրը եւ քույրը » :

Եթէ միայն հայր կամ միայն մայր գտնուի, երկուքնուն գալիք բաժինը մէկը կ'առնէ ամբողջապէս: Նոյնը կըլլայ նաեւ երբ միայն եղբայր կամ միայն քույր գտնուի:

7. Վերջապէս էրիկէն կնոջ եւ կնոջմէն էրկան կը փոխանցի:

Այս եօթը աստիճաններուն վրայ գտնուող ժառանգորդները ըստ կարգի միայն ժառանգական իրաւունքի կրնան տիրանալ, անանկ որ երբ առաջին աստիճանի ժառանգորդ (զաւակ) կայ, երկրորդ աստիճանի ժառանգորդները (թոռ) կը զրկուին, երբ երկրորդ աստիճանի ժառանգորդ կայ, երրորդ աստիճանի ժառանգորդները (հայր եւ մայր) կը զրկուին, եւ այսպէս յաջորդաբար: Երբ եօթներորդ աստիճանի ժառանգորդ (ամուսին) չգտնուի, կալուածը վանդիւղ կ'ըլլայ:

Եթէ հանգուցեալը ունեցած է քանի մը զաւակ, որոնցմէ մէկը իր կենդանութեան ամուսնացած, զաւակներ ունեցած եւ իրմէ առաջ մեռած է, այդ զաւակները ծնողին տեղ կ'անցնին ու անոր բաժինը իրենք կ'առնեն, եւ հաւասարապէս կը բաժնեն իրենց միջեւ:

ՕՐԻՆԱԿ. — Գրիգոր կը մեռնի, թողով իր զաւակը՝ Յովհաննէսը, եւ իր հանգուցեալ Մովսէս զաւակին զաւակները: Գրիգորին թողած կալուածին կէսը կը տրուի Յովհաննէսին եւ մնացած կէսը՝ որ Մովսէսի բաժինը պիտի կազմէր, եթէ կենդանի ըլլար, կը բաժնուի իր երկու զաւակներուն միջեւ որոնք կը ստանան մէյ մէկ քառորդ:

Էրիկը իր կնոջմէն եւ կինը իր էրիկէն կը ժառանգէ ամբողջ կալուածը երբ վեցերորդ աստիճանի ժառանգորդ չգտնուի: Երբ երրորդ, կամ չորրորդ, կամ հինգերորդ, կամ վեցերորդ աստիճանի ժառանգորդներու հետ հանգուցեալը կը թողու նաեւ ամուսին մը՝ այդ ամուսինը կը ստանայ կալուածին $\frac{1}{4}$ բաժինը եւ մնացեալը միայն կը փոխանցի վերոյիշեալ ժառանգորդներուն: Իսկ երբ առաջին եւ երկրորդ աստիճանի ժա-

աանգորդ ունի հանգուցեալը, այսինքն զաւակ եւ թոռ, ամուսինը բան մը չի ժառանգեր :

ՕՐԻՆԱԿ . — Հանգուցեալը կը թողու հարազատ եղբայր մը , քոյր մը եւ իր կինը : Իր թողած կալուածին $\frac{1}{4}$ ը կը ստանայ իր կինը , եւ մնացեալ $\frac{3}{4}$ ը հաւասարապէս կը բաժնուի իր եղբորն ու քրոջը միջեւ :



ԱՐԱՋԻԻ ԷՄԻՐԻԷՆԵՐՈՒ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

Արագիի Կեփրիէներու ժառանգական փոխանցումը հետեւեալ օրէնքին համաձայն կը կատարուի .

1. Եթէ հանգուցեալը բողած է մանչ եւ աղջիկ զաւակներ, անոնք հաւասարապէս կը ժառանգեն արագիի Կեփրիէն, իսկ եթէ մէկ մանչ կամ մէկ աղջիկ միայն բողած է, շացարձակապէս անիկա կ'ըլլայ ժառանգորդ :

2. Եթէ հանգուցեալը զաւակ չունի , իր զաւկին մանչը եւ աղջիկը կը ժառանգեն հաւասարապէս :

Եւ յաջորդաբար ,

3. Հայրը եւ մայրը հաւասարապէս .

4. Հարազատ եւ համահայր եղբայրները հաւասարապէս :

5. Հարազատ եւ համահայր քոյրերը »

6. Համամայր եղբայրները »

7. Համամայր քոյրերը »

8. Եւ եթէ այս ժառանգորդներէ ոչ ոք զտուի՝ ամուսինը կը ժառանգէ ամբողջապէս :

Այս ութը աստիճաններուն վրայ գտնուող ժառանգորդները ըստ կարգի միայն ժառանգական իրաւունքի կրնան տիրանալ , անանկ որ երբ առաջին աստիճանի ժառանգորդ կայ , երկրորդ աստիճանի ժառանգորդները կը զրկուին , եւ այսպէս յաջորդաբար : Միայն թէ հանգուցեալ զաւկի մը զաւակները իրենց հօր տեղը կը բռնեն եւ իրենց մեծ հօր ժառանգութենէն կ'առնեն այն բաժինը՝ զոր իրենց հայրը պիտի առնէր եթէ կենդանի ըլլար :

Երբ երրորդ կամ չորրորդ կամ հինգերորդ կամ վեցերորդ կամ եօթներորդ աստիճանի ժառանգորդներու հետ հանգուցեալը կը թողու նաեւ իր ամուսինը՝ սա կը ստանայ արագիին $\frac{1}{4}$ բաժինը եւ մնացեալը միայն կը փոխանցի վերոյիշեալ ժառանգորդներուն։ Իսկ երբ առաջին եւ երկրորդ աստիճանի ժառանգորդ ունի հանգուցեալը, այսինքն զաւակ եւ թոռ, ամուսինը բան մը չի ժառանգեր արագիէն։

Ինչպէս կ'երեւայ այս բացատրութիւններէն, արագիի եւ միւրիկներու եւ քելսիի ինքիզայ եղած վազճ կալուածներու ժառանգական փոխացման սկզբունքները գրեթէ միեւնոյն են։ միակ տարբերութիւնը որ կայ եզրայրներու եւ քոյրերու ժառանգութեան իրաւունքներուն կը վերաբերի, ինչ որ շատ զիւրաւ երեւան կ'ելլէ պարզ բաղդատութեամբ մը։

Կ Ա Լ Ո Ւ Ա Մ Ա Կ Ա Ն Տ Ո Ւ Ր Ք Ը

1290 Մարտ 1էն ի վեր (Քրիստոսի թուական 1874) կալուածական տուրքը սկսած է գանձուիլ կալուածներու արժէքին վրայ 4 առ հազար, եւ կալուածային հասոյթներէն 4 առ հարիւր։ Այս զրութիւնը տեւած է մինչեւ 1295 տարւոյ վերջը։

1296 Մարտ 1էն սկսեալ, կալուածային հասոյթի տուրքը վերցուած է եւ կալուածական տուրքը բարձրացած է հազարին 8ի՝ հասութարեր բոլոր կալուածներուն համար։ Իսկ սեփականատէրին բնակութեան յատկացած կալուածները ենթարկուած են հազարին 4ի՝ երբ իրենց արժէքը 20,000 զրուչէն պակաս է, եւ հազարին 8ի՝ երբ արժէքնին 20,000 զրուչ եւ անկէ վեր է։

1303ին հասութարեր կալուածներու տուրքը բարձրացած է հազարին 8էն հազարին 10ի։

1304ին 20,000 զրուչէն պակաս արժող եւ սեփականատէրի բնակութեան յատկացուած կալուածներու տուրքը բարձրացած է հազարին 4էն հազարին 5ի։

Մշակուած հողերը՝ գաւառներուն մէջ կը վճարեն 4 առ հազար, որովհետեւ ենթարկուած են նաեւ տասանորդի տուրքին. իսկ Կ. Պոլսոյ մէջ իրր հասութարեր կալուած կը վճարեն 10 առ հազար, առանց ենթարկուած ըլլալու տասանորդի տուրքին:

1300 թուականէն սկսեալ գանձուած կալուածային տուրքերուն վրայ աւելցած է այդ տուրքին քանակութեան հարիւրի մէկը, կրթական նախարարութեան օգտին: Այս կրթական տուրքը (մեարիֆ) 1303ին իջած է հարիւրին 5ի:

Հատուցման եղանակին գալով, մինչեւ 1299 տարւոյն վերջը անվճար մնացած տուրքերը կարելի է վճարել քասպիկի արժեթուղթով, այսինքն հաշուակցիլ այդ տարիներու յատուկ սերկիներով, կամ 100 դրուչի փոխարէն 25 դրուչ հնչուն դրամ վճարելով: Նոյնպէս ամսաթոշակի տէրերը իրենց եւ իրենց կարգ մը ազգականներուն կալուածական տուրքերը պիտի կրնան հատուցանել իրենց անվճար մնացած ամսաթոշակներով:

Իսկ 1300էն մինչեւ 1314 Փետրուարի վերջը անվճար մնացած կալուածական տուրքերը, 1899 Յուլիս 30ի պաշտօնական զեկոյցին համաձայն, հետեւեալ եղանակով կրնան վճարուիլ.

Ա. Մինչեւ 1315 ելմտական տարւոյն Փետրուարի վերջը (1900 Փետր.) հարիւրին 50 հնչուն դրամ եւ մնացած 50ին համար ալ կառավարական պաշտօնատուներուն յատուկ ամսաթոշակ, որուն անունով որ ըլլայ եւ ո՛ր տարիին ալ վերաբերի:

Բ. Եթէ այդ յեանեալ տուրքերը մինչեւ 1315 տարուան վերջը չհատուցուին, 1316ի Մարտէն մինչեւ Փետրուարի վերջը հարիւրին 75 հնչուն դրամ եւ մնացած 25ին համար ամսաթոշակ:

Գ. Եթէ 1316 տարուան մինչեւ Փետրուարի վերջը այդ տուրքերը անվճար մնան, ա՛լ այնուհետեւ հնչուն դրամով միայն պիտի կրնան հատուցուիլ:

Գալով 1315 տարիէն սկսելով բանած եւ բանելիք կալուածական տուրքերուն, եթէ բանած տարւոյն մէջ հատու-

ցուին, հարիւրին 50ին համար հնչուն գրամ եւ մնացածին համար ալ նոյն տարուան յատուկ ամսաթոշակ պիտի ընդունուի: Իսկ յաջորդ տարիին մնացած կալուածական տուրքերուն համար հարիւրին 75ը հնչուն գրամ եւ մնացածը ամսաթոշակ պիտի ընդունուի. եթէ երկրորդ տարիին մէջ ալ չհատուցուի, այն պարագային ամբողջութեամբ հնչուն գրամով պիտի հատուցուի:

Կրթական տուրքը ենթակայ չէ այս պայմաններուն եւ ըստ առաջնոյն հնչուն գրամով պիտի գանձուի:

1899 Օգոստոս 1է սկսեալ Ելեւմտական նախարարութիւնը ըստ այս զեկոյցին կը գանձէ տուրքերը:

ԴՐՈՇՄԱՏՈՒՐՔԻ ՕՐԷՆՔԸ

Ա . Մ Ա Ս

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏՅԵԼԻՔ

Յօդուած 1. — Դրոշմատուրքի ենթակայ են. ֆոխատուութեան ու ֆոխառութեան գործողութեանց, ընկերութեանց եւ ուրիշ պայմանադրութեանց ու յանձնառութեանց վերաբերեալ գրի առնուած ամէն տեսակ մուրհակներ, ֆոխանակագիրներ, ի հրամանի եւ կամ բերողին հատուցանելի սյունիքներ, ստացագիրներ եւ անդորրագիրներ. աւանդի վկայագիրներ (սերթիֆիկատներ սերթո). ընկերութեանց կամ ուրիշ բաժնեթուղթեր եւ պարտաթուղթեր. չէքեր. վաճառականներու միջեւ առնուած տրուած եւ ուրիշ անհամարներու միջեւ ֆոխանակուած ամէն տեսակ մուրհակներ, կառավարական սնտուկներու, դիւաններու, եւ գանձային ու կառավարական ուրիշ պաշտօնեաներու տրուած յանձնառութեանց թուղթեր եւ ստացագիրներ. անձնական գործերու համար գանազան պաշտօնէութեանց գրուած ծանուցագիրներ, տեղեկագիրներ եւ խնդրագիրներ. Շէրիֆ դատարաններէն տրուած ամէն տեսակ հիւանդներ, վճարագիր-

ներ, ժառանգուած գոյքերու եւ անոնց թաժանման պաշտօնա-
կան ցուցակներ (գասաւաճ սեփերի) եւ Շէրի վերաբերեալ ու-
րիշ վաւերաթուղթեր, արտօնագիրներ, դատաւորական հրա-
մաններ, արձանագրութեանց վերաբերեալ եւ ուրիշ իշխու-
խապերներ, ամսականի, սեփերի եւ ուրիշ թոշակներու վե-
րաբերեալ ընկալագիրներ. քաղաքային (հուզուզ) եւ աւելար-
րական դատարաններէ եւ ուրիշ ժողովներէ տրուած ո՛ր եւ է
վճիռ պարունակող տեղեկագիրներ եւ վճագիրներ. կառավա-
րութեան պաշտօնատուներէն անհատներու տրուած թուղթե-
րու, մուրհակներու եւ արձանագրութեանց օրինակներ, կա-
ռավարութեան եւ անհատներու միջեւ փոխանակուած պայ-
մանագրութիւն պարունակող մուրհակներ, ամէն տեսակ ազ-
գարարագիրներ, անցագիրներու համար տրուած իշխուխապեր-
ներ. ամէն տեսակ բեռնագիրներ. ապահովագրական մուրհակ-
ներ (սիկուրքա բոլիչա սեփեր). եւ վերջապէս Օսմանեան
կայսրութեան դատարաններուն ու ժողովներուն առջեւ իբր
ապացոյց ներկայացուելու ենթակայ բոլոր մուրհակներն ու
լրագիրները :

Յօշուած 2. — Բացառապէս ազատ պիտի կացուցուին
գրոշմի տուրքէն. Պաշտօնատուներէն, գանձարաններէն եւ կա-
ռավարութեան սնտուկներէն՝ մէկզմէկու եւ անհատներու
տրուած իշխուխապերները, սերկիները, սուրեքները եւ ու-
րիշ մուրհակներ, ինչպէս նաեւ կարօտեալներու, ազքատնե-
րու, վարժարաններու, ազօթատեղիներու ու բարեգործա-
կան հաստատութեանց տրուած նպաստի իշխուխապերները .
նաեւ մարդու մը ազքատութիւնը հաստատելու համար տրուած
վկայագիրները եւ օրինագանցութեանց (գաւպահաք), յանցանք-
ներու (նիւնհա) ու ոճիրներու (նիւնայեք) վերաբերող տեղե-
կագիրները (ւսազպաքա) ու վճագիրները. գիտութեանց յատ-
կացեալ պարբերական հրատարակութիւնները. եւ պաշտօնեա-
ներու հրատարագիրներն ու արձակուրդի խնդրագիրները (*):

(*) Դրոշմի այս օրէնքէն հսրը հրատարակուած Յաւելուածի մը երկ-
րորդ յօդուածը հետեւեալը կը տրուուի.

« Պաշտօնատուներուն, կառավարական սնտուկներուն ու
պետական ինչքերու վարձակալներուն կողմէ տրուող այն ստա-

Յօդուած 3. — Դրոշմի աւարքը երկու կարգի բաժնուած է: Աստնցմէ առաջինը որոշեալ տուրֆն է, որ կը պատկանի այս կանոնագրին կցուած ցուցակով տեսակները ցոյց տրուած թուղթերուն, երկրորդը հաւեւեւաստական է, որ թուղթերուն ու մուրհակներուն պարունակած գումարներուն քանակութեանցը համեմատ կը դրուի, եւ որ որոշուած է հետեւեալ կերպով.

100 դրուչէն մինչեւ 1000 դրուչի համար եղած մուրհակներէն՝ 20 փարա պիտի առնուի, իսկ 1000 դրուչէն մինչեւ 2000 դրուչ եղածներէն՝ 1 դրուչ, 2000 դրուչէն մինչեւ 10,000 դրուչ եղածներէն՝ ամէն մէկ 2000 դրուչին ու կոտորակներուն համար մէյ մէկ դրուչ, 10,000 դրուչէն մինչեւ 100,000 դրուչ եղածներէն՝ ամէն մէկ 5000 դրուչին ու կոտորակներուն համար $2\frac{1}{2}$ դրուչ, 100,000 դրուչէն աւելի եղած գումարներէն՝ քանակութիւնը ո՛րչափ որ ալ եղած ըլլայ, իւրաքանչիւր 10,000 դրուչին ու կոտորակներուն համար 5 դրուչ պիտի առնուի:

Համեմատական դրոշմատուրքի ենթակայ են. Ամէն տեսակ պարտագիրներ, ի հրամանի գրուած մուրհակներ, հնչուն դրամի հեղուակներ, փոխանակագիրներ, վաճառականներու եւ ուրիշներու միջեւ առնուած ծախուած մուրհակներ, փոխառութեանց հեօնեքներ (իտալեկ սեկեսի), ժառանգուած դոյքերու եւ անոնց բաժանման պաշտօնական ցուցակներ (գաւառ սեֆփերի), եւ վերջապէս որոշեալ դրոշմատուրքերու ցուցակին մէջ

ցագիրներն ու անդորրագիրները, որոնք ամէն տեսակ հարկերու ու տուրքերու գանձուած ըլլալը կը հաստատեն, ինչպէս նաեւ առ հասարակ բոլոր հարկատուներուն անպարտութեանը վերաբերող ամէն տեսակ անդորրագիրները, հիմայ գործադրութեան մէջ գտնուող դրուցի օրէնքին երկրորդ յօդուածին տրամադրութեան բարեփոխմամբ, Տասը փարանց դրուցատուրքի պիտի ենթարկուին, երբ հազիւ մինչեւ հարիւր դրուցի գումար մը կը պարունակեն, եւ հարիւր դրուցէն աւելի գումար պարունակողները՝ քան փարանց դրուցատուրքի պիտի ենթարկուին, հարկատուներուն կողմէ հասուցուելու պայմանաւ:

ցոյց տրուած թուղթերէն տարբեր ըլլալով, որոշ արժէքի մը կամ գումարի մը համար գրուած ամէն տեսակ մուրհակներ, Առաջին, երկրորդ, երրորդ եւ ալ աւելի օրինակներով շինուած փոխանակիրներէն եւ առեւտրական ուրիշ մուրհակներուն հրապարակի վրայ շրջաբերուած օրինակները միայն կ'ենթարկուին դրոշմատուրքի. սակայն միւս օրինակներէն մէկուն համար դրոշմի տուրք տրուած ըլլալը՝ պատճառ մը չպիտի կրնայ նկատուիլ՝ շրջաբերութեան մէջ գտնուած օրինակին չդրոշմուելուն:

Յօդուած 4. — Երբ մուրհակի մը խմբագրութեանը պատճառ եզոզ գործառնութեան մէկէ աւելի գումարներ վերաբերութիւն ունին եւ կը յիշատակուին մուրհակին մէջ, խմբագրութեանը էապէս պատճառ եզոզ գումարին համեմատութեամբ է որ մուրհակը կ'ենթարկուի դրոշմի տուրքին:

Յօդուած 5. — Երբ մուրհակի մը մէջ յիշատակուած գործառնութիւնը՝ քանի մը պարագայ միանգամայն պարունակելու ըլլայ իր մէջ, այլ սակայն այդ մուրհակին խմբագրութեան բուն նպատակը այդ պարագաներէն միայն մէկը եղած ըլլայ, դրոշմի տուրքը մի միայն նոյն պարագային տեսակէտով պիտի առնուի. իսկ եթէ նպատակը՝ նոյն պարագաներուն ամէնքը եւ կամ մէկ քանին միանգամայն կը պարունակէ, այն ատեն ամէնէն աւելի տուրք տալ տրամադրող պարագան հաշիւի պիտի առնուի, եւ յիշեալ մուրհակը՝ այս հաշուով պիտի ենթարկուի դրոշմի տուրքին:

Յօդուած 6. — Օտար երկիրներու վրայ քաշուած փոխանակագիրները երրորդ յօդուածին մէջ ճշգրտած աստիճաններուն համաձայն պիտի ենթարկուին դրոշմի տուրքին, հազարին կէսի հաշուով տրուելու պայմանաւ: Անգլիական ոսկին 25 Փրանք եւ Օսմանեան ոսկին 23 Փրանք պիտի հաշուուին. իսկ ուրիշ տեսակ դրամներ՝ փոխանակագիրը քաշուած օրուան հրապարակի արժէքովն պիտի հաշուուին: Այս տեսակ փոխանակագիրներ գործածուելու համար թուրքերէն եւ Փրանսերէն թուանշաններով թուագրեալ դրոշմներ տպել պիտի տրուին:

Յօդուած 7. — Օտար երկիրներու մէկէն միւսին վրայ

քաշուած այն փոխանակագիրները՝ որոնք Օսմանեան երկիրներուն մէջ՝ միայն պիտի չըջարեին, երրորդ յօդուածով որոշուած աստիճաններուն համեմատ, հազարին միայն մէկ քառորդ տուրքի պիտի ենթարկուին:

Յօդուած 8. — Ապահովագրութեանց մուրհակներէն անուելիք գրոշմի տուրքը՝ ապահովագրուած դումարէն չպիտի գանձուի, այլ ապահովագրութեան համար իրր վարձք տրուած գումարէն, 100 դրուշին 20 փարա ըլլալու պայմանաւ:

Յօդուած 9. — Դրոշմի տուրքին հատուցումն ու գանձումը՝ երկու կերպով կ'ըլլայ. 1. Որոշուած տուրքին վճարմամբ՝ թուղթին գրոշմուելովը: 2. Թուղթին վրայ գրոշմ փակցուելով:

Բ. Մ Ա Ս

ԴՐՈՇՄՈՒԻ, ՊԷՏԷ ԵՂԱԾ ԹՈՒՂԹԵՐ

Յօդուած 10. — Կայսերական Ֆերմանով բաժնի վրայ կազմուած եւ կազմուելիք ամէն տեսակ ընկերութեանց թէ՛ առժամեայ եւ թէ՛ վերջնական բաժնեթուղթերը՝ անուանական գրամագլխէն որչափը որ հատուցուած է, նոյն չափով մէկ անգամի համար 1 0/0 հաշուով գրոշմի տուրքի պիտի ենթարկուին:

Յիշեալ ընկերութեանց հրապարակ հանելիք պարտաթուղթերը՝ առժամեայ եւ կամ վերջնական մուրհակներու անուանական քանակութենէն միայն հազարին կէս դրուշ տուրքի պիտի ենթարկուին: Բոլոր այն Օսմանեան ընկերութիւնները որոնք օտար երկիրներու մէջ հրապարակ հանած պարտաթուղթերնուն տուրքը՝ 1308 Մարտ ամսէն ի վեր հատուցած չեն, պիտի կրնան օգտուիլ այս օրէնքին տրամադրութիւններէն:

Կ. Պոլսոյ Սակարանին մէջ արձանագրուած եւ չըջարեութեան հանուած օտար փոխառութեանց մուրհակներուն, բաժնեթուղթերուն եւ պարտաթուղթերուն անուանական քանակութիւններէն որչափը որ հատուցուած է, նոյն չափին համեմատ պիտի առնուի գրոշմի տուրքը, 1 0/0 հաշուով: — Կայսերական Ֆերմանով գրոշմի տուրքէ ազատ կացուցուելու

պայմանաւ կազմուած եւ կազմուելիք ընկերութիւններէն՝ ըստ առաջնոյն տուրք չպիտի առնուի, ցորչափ տեւեն անոնք :

Բոլոր այն անանուէն (անօնիս) ընկերութիւնները, — որոնց դրամագլուխը աւելցած է իրենց բաժնեթուղթերուն գանձմամբը, եւ կամ դրամագլուխն ու պարտաթուղթերը դրոշմի տուրքէ ազատ կացուցուած ընկերութեան մը հետ միանալովն, — հարիւրին մէկ դրոշմի տուրք պիտի վճարեն՝ այս կերպով իրենց նախնական դրամագլխին վրայ աւելցուած մասին համար :

Երբ յիշեալ անանուէն ընկերութիւններէն մէկուն պայմանաժամը երկարաձգուի, առջի պայմանաժամը լրացածին պէս, նախնական դրամագլխին քանակութեան վրայ նորէն 1 0/0 հաշուով դրոշմի տուրք պիտի գանձուի, եթէ կայսերական կառավարութիւնը պէտք չտեսնէ դրոշմի տուրքէ ազատ կացուցանել այդ ընկերութիւնը :

Յօդուած 11. — Զրիարար պիտի դրոշմուին ընկերութեանց այն բաժնեթուղթերն ու պարտաթուղթերը, որոնցմէ առաջ հրապարակ հանուած առժամեայ մուրհակները արդէն ենթարկուած են դրոշմի տուրքին :

Գ . Մ Ա Ս

ՈՐՈՇԵԱԼ ԴՐՈՇՄԱՏՈՒՐԷԸ

Յօդուած 12. — Անհատներու միջեւ փոխանակուած անգորրագիրներն ու ստացագիրները, գրաւոր կերպով պատրաստուած կամ բերանացի կերպով դատարանին առջեւ արձանագրել տրուած փոխանորդագիրները, չէքերը, ղեկուցագիրները (իխպարնամե), բեռնագիրները, նաւողչէքի պայմանագիրները, փոխադրութեանց մուրհակները, աւանդի եւ երաշխաւորութեանց մուրհակները, վաճառականներու եւ անհատներու միջեւ փոխանակուած պայմանագիրները, առեւտրական եւ քաղաքային խնդիրներու վերաբերեալ ամէն տեսակ ընկերութեանց պայմանագիրները, խնդրագիրները, եւ փոխանակագիր ու արժեթուղթ գնելու եւ վաճառելու վերաբերեալ ցուցակները (պօնսո), ծանօթագիրները (նօթա), հաշուեցուցակները ընթացիկ հաշիւները եւ լրագիրները . անհատներու կողմէ հրատա-

րակուած աղղերը եւ վերջապէս այս կանոնագրին կցուած ցուցակին մէջ ցոյց արուած թուղթերուն ամէնքն ալ՝ որոշեալ զրոշմատուրքի պիտի ենթարկուին, ըստ այդ ցուցակին :

Համեմատական տուրքի ենթակայ եղող պարտամուրհակներուն տակը կամ ետեւը գրուելիք երաշխաւորութեանց նըկատմամբ եղած որոշման համաձայն, վարձակալութեան պայմանագիրներու մէջ ըլլալիք երաշխաւորութեանց վարձու գումարին համեմատական զրոշմ պիտի փակցուի, երբ այդ գումարը 20,000 զրուշէն աւելի չէ. իսկ 20,000 զրուշէն աւելի գումարի համար եղած երաշխաւորութեանց՝ առ հասարակ տասնական զրուշնոց զրոշմ պիտի փակցուի եւ ոչնչացուի :

Պարտամուրհակներէն՝ ըստ առաջնոյն նշանակուած գումարին համեմատական զրոշմատուրք պիտի առնուի, սակայն այն պարտամուրհակները՝ որոնց գումարը 20,000 զրուշէն աւելի չէ, եւ որոնց տակը կամ ետին երաշխաւորութեան արձանագրութիւն մը կայ, երաշխաւորութեան համար ենթակայ են նոյնքան զրոշմատուրքի, որքան փակցուած է արդէն բուն մուրհակին մէջ, պարտականին կողմէ՝ իր պարտքին համեմատութեամբ. եւ երբ մուրհակին պարունակած գումարը 20,000 զրուշէն աւելի ըլլայ, գրուած երաշխաւորութեանց համար, որոշեալ տուրքերու ցուցակին համեմատ առ հասարակ տասնական զրուշնոց զրոշմ պիտի փակցուի եւ ոչնչացուի :

Յօդուած 13. — Ստացագիրներու համար, զրոշմի տուրքին հատուցումը՝ զրամը գանձողին պիտի պատկանի. կառավարական պաշտօնատուներու հետ փոխանակուած թուղթերու համար պէտք եղած զրոշմի տուրքը պիտի հատուցուի անձաներուն կողմէ : Այս կանոնագրին մէջ մի առ մի յիշատակուած այն մուրհակները՝ որոնց համար զրոշմատուրք չէ վճարուած, մասնաւոր հատուածով որոշուած գրամական տուրգանքին պիտի ենթարկուին :

Դ. Մ Ա Ս

ԴՐՈՇՄՆԵՐԸ

Յօդուած 14. — Դրոշմը (քանդա փուշը) կրնայ գործա-

ծուիլ՝ թէ՛ համեմատական տուրքի ենթակայ թուղթերուն համար, եւ թէ՛ որոշեալ տուրքի ենթականերուն համար:

Յօդուած 15. — Օտար երկիրներու մէջ եւ կամ Օսմանեան Կայսրութեան այն երկիրները, ուր գրոշմի տուրքը ի գործ դրուած չէ, ըստ այս օրէնքին տրամադրութեան՝ խմբագրուած եւ կամ շրջաբերութեան հանուած ամէն տեսակ թուղթեր, մուրհակներ եւ պարտամուրհակներ՝ երբ այս օրէնքը գործադրուած տեղ մը հասնելու ըլլան, ըստ 19րդ յօդուածի տրամադրութեան, պարտաւորիչ կերպով պիտի գրոշմուին. հակառակ պարագային մէջ, գրոշմ չկրող մուրհակներու կարգը պիտի գասուին:

Յօդուած 16. — Արեւելեան Բումէլիի գրոշմ կրող թուղթերը՝ Օսմանեան Կայսրութեան ուրիշ վիշալեքներուն մէջ գրոշմի տուրքէ զերծ են. միայն թէ պայմանեալ է որ՝ այդ թուղթերը նոյն վիշալեքին մէջ խմբագրուած ըլլան. Կայսրութեան բոլոր նահանգներուն յատկացեալ գրոշմը կրող թուղթերն ալ՝ Արեւելեան Բումէլիի մէջ զերծ պիտի ըլլան գրոշմի տուրքէ:

Յօդուած 17. — Դրոշմները՝ մասնաւոր ցուցակին համեմատ, տարբեր աստիճաններով ու յատուկ ձեւերով պիտի յօրինուին. եւ երբ՝ պարունակած գումարին կարեւորութեանը պատճառաւ, կարելի չըլլայ մէկ գրոշմ գանել գումարին համապատասխանող, պէտք եղածին չափ գրոշմ պիտի աւելցուի անոր, եւ լրացուի:

Յօդուած 18. — Դրոշմները՝ պէտք է որ մուրհակներուն կնքուած եւ կամ ստորագրուած ժամանակը փակցուին: Եւ մէկ գրոշմը երկու անգամ չգործածուելու, եւ մուրհակի մը գրոշմը կնքուած եւ կամ ստորագրուած ժամանակ փակցուած ըլլալը յայտնի ըլլալու համար, պէտք է որ կնիքին, կամ ստորագրութեան, եւ կամ թուականին մէկ մասը՝ գրոշմներուն վրայ գրուած ըլլան, անոնց գիրերը բոլորովին զեղծանելու պայմանաւ: Դրոշմները բազմաթիւ ըլլալու պարագային մէջ իսկ՝ նմանապէս ամէն մէկ գրոշմի մէկ մասին վրայ պիտի գրուին կամ թուականը, կամ կնիքը, եւ կամ ստորագրութիւնը. եւ այս կերպով պիտի ոչնչանան անոնք: Այս եղանա-

կով, այսինքն թուականին, կամ կնիքին եւ կամ ստորագրութեան մէկ մասովը ոչնչացած գրոշմ չկրող մուրհակները՝ ըստ օրինի. չգրոշմուած կը նկատուին :

Յօդուած 19. — Վաճառականներու եւ ուրիշներու միջեւ անուած եւ ծախուած բոլոր մուրհակներէն՝ անոնք որ Օսմանեան կայսրութեան երկիրներուն մէջ հատուցուելու պայմանաւ խմբագրուած են, առաջին անգամ ո՛ր անձին որ ձեռքը անցնին, այն անձը՝ զեռ այդ մուրհակները չընդունուած, չփոխանցուած եւ կամ չհատուցուած, եւ վերջապէս տակաւին վրան գործողութիւն մը չկատարուած, պարտաւոր է գրոշմ փակցնել անոնց վրայ, եւ ըստ 18^{րդ} յօդուածի, փակցուած գրոշմները կնիքով կամ ստորագրութեամբ ոչնչացնել :

Յօդուած 20. — Երբ Օսմանեան երկիրներու կամ օտար երկիրներու մէջ հատուցուելու պայմանաւ, Օսմանեան երկիրներէն փոխանակագիր եւ կամ նմանօրինակ վաճառականական ուրիշ թուղթեր քաշուելու ըլլան, քաշուած միջոցին եւ քաշուած տեղն իսկ, 18^{րդ} յօդուածով ցոյց տրուած պայմաններուն համաձայն գրոշմ պիտի փակցուի անոնց վրայ :

Յօդուած 21. — 100 գրուչէն պակաս եզող գործողութեանց համար՝ իւրաքանչիւրը 10 փարանոց գրոշմներ պիտի գործածուին :

Ե . Մ Ա Ս

ՊԱՏԺԱԿԱՆ ՏՐԱՄԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յօդուած 22. — Արգիւտուած է ո՛ր եւ է անձի, ընկերութեան, կամ գրամատան, եւ կամ պաշտօնատան՝ չգրոշմուած կամ գրոշմ չփակցուած փոխանակագիրներ, չէքեր, ընկալագիրներ եւ վաճառականներու ու անհատներու միջեւ շրջաբերութեան մէջ դանուած ուրիշ տեսակ մուրհակներ քաշել, կամ ընդունիլ, կամ փոխանցել կամ վճարել, եւ կամ իրեն կամ ուրիշի մը հաշուոյն գանձել : Ասկէ զատ, երբ այս օրէնքին արամագրութեանցը համաձայն չգրոշմուած եւ կամ գրոշմ չփակցուած մուրհակներ եւ ուրիշ թուղթեր դատարաններու, ժողովներու, շրջանակներու, եւ կամ պաշտօնական տեղեր ներ-

կայացուելու ըլլան, այդ ներկայացումը ինչ կերպով որ ալ եղած ըլլայ, եւ ներկայացնողները ինչ դասէ ալ եղած ըլլան, պաշտօնեայ՝ թէ պարզ անհատ, գրոշմի տուրքը հատուցանելու պարտական են. միանգամայն, եթէ համեմատական տուրքի ենթակայ տեսակէն ըլլան այդ մուրհակները, անոնց պարունակած գումարին $3\frac{0}{10}$ ինչ չափ գրամական տուգանք կ'առնուի. իսկ եթէ որոշեալ տուրքի ենթակայ տեսակէն ըլլան, կէս Օսմանեան ոսկիէն մինչեւ 3 Օսմանեան ոսկի գրամական տուգանք կ'առնուի: Միայն թէ յիշեալ թուղթերուն վերաբերող դատերուն քննութիւնները շարունակուելով հանդերձ, առանձինն վճիռ կը տրուի՝ գրամական տուգանքին գանձման համար: Դատարաններուն կողմէ քննուելիք դատերուն պատկանող մուրհակներէն առնուելիք գրամական տուգանքները՝ նոյն դատարանին պիտի պատկանին. եւ գրոշմի տուրքն ալ՝ առանձինն գանձուելով՝ գրոշմ պիտի առնուի եւ նոյն մուրհակին պիտի փակցուի. եւ գրամական տուգանքին քանակութիւնը՝ փակցուած գրոշմներուն վրայ նշանակուելով ու թուագրուելով՝ տակի կողմը՝ նոյն դատարանին, կամ ժողովին, կամ պաշտօնէութեան եւ կամ պաշտօնական շրջանակին կնիքովը պիտի կնքուի: Միայն թէ վարչութիւնէն ձեռք անցուած, եւ կամ գատ բացուելով՝ ի ներկայութեան դատարանի երեւան հանել տրուած անգրոշմ թուղթերու գրամական տուգանքները՝ այս վճռէն բացառութիւն մը ըլլալով, վարչութեան կը պատկանին:

Յօդուած 23. — Նախընթաց յօդուածով որոշուած գրամական տուգանքին հատուցումը՝ կը պատկանի նախ մուրհակը ստորագրողներուն, երկրորդ փոխանակագիրը քաշող, ընդունող եւ փոխանցողներէն ամէն մէկուն: Ըստ օրինի գրամական տուգանք հատուցանելու պարտաւորուած անձերու իւրաքանչիւրը՝ միւսներուն կողմէ հատուցուիլ պէտք եղած տուրքին ու տուգանքին ամբողջ գումարին հատուցմանը մասին՝ առանձին առանձին, եւ միանգամայն մէկզմէկու համերաշխաբար պատասխանատու են: Դրոշմի տուրքն ու գրամական տուգանքը՝ նախ մուրհակը ներկայացնող անձին կողմէ կը հատուցուի կանխիկ, եւ անիկա ալ յետոյ՝ այդ տուրքն ու տուգանքը որոնց

որ կը պատկանի, անոնց ամէն մէկէն՝ փոխադարձ երաշխաւորութիւններնէն օգտուելով եւ պահանջելու իրաւունքը կ'ունենայ: Այդ տուրքերուն ու տուգանքներուն եւ պահանջման համար տեղի ունենալիք դատերը՝ նոյն տուգանքը վճարող դատարանին առջեւ պիտի բացուին:

Աւանդներու, սպահովագրեալ նամակներու եւ հեռագիրներու ստացագիրներուն փակցուելիք դրոշմները՝ եթէ այս օրէնքին համաձայն ոչնչացած չեն, ատոնցմէ աւնուիլ պէտք եղած տուգանքը՝ նոյն դրոշմը ըստ օրինի չոչնչացնող նամակատան կամ հեռագրատան պաշտօնեային ամսականէն վար դըրուելով՝ Ընդհ. Պարտքի Վարչութեան պիտի դրկուի: Եւ այս կերպով գանձուելիք դրամական տուգանքը՝ պիտի բաժնուի ըստ արամագրութեանց այն հրահանգին, որ կը վերաբերի փախցուած ապրանքի տեղեկարարներուն տրուելիք վարձատրութեանց:

Յօդուած 24. — Վարչութեան կողմէ տրուելիք տուգանքին հատուցմանը մասին ընդդիմութիւն պատահելու պարագային մէջ, վարչութիւնը՝ դատարաններու պիտի դիմէ. եւ եթէ, ըստ նախընթաց արամագրութեանց, տուրք եւ տուգանք հատուցանելու հարկադրուած անձը զայն վճարելու ընդդիմանայ, այդ տուրքն ու տուգանքը՝ դատարանին միջոցաւ պիտի գանձուին իրմէ, նոյն իսկ եթէ թուղթը ներկայացնողը այդ թուղթին վրայ հիմնուելէ հրաժարի: Երբ դատավարեալը օտարահպատակ ըլլայ՝ իրեն դէմ բացուելիք դատը կը տեսնուի այն դատարանին առջեւ ուր կը տեսնուին իր պատկանած տէրութեան հպատակներուն քաղաքային իրաւունքի վերաբերեալ դատերը:

Յօդուած 25. — Դատարաններու եւ ժողովներու նախագահները, անդամները եւ կառավարական ուրիշ ո՛ր եւ է պաշտօնեայ որ ըստ այս օրէնքի արամագրութեանց գանձելի տուրքն ու տուգանքը պահանջելու եւ գանձելու մասին իրենց պարտականութիւնը չեն կատարած, օրինապէս աւնուելիք այդ տուգանքին երեքպատիկը պիտի առժեն:

Յօդուած 26. — Անձնական խնդիրներու համար ուղղակի զանազան պաշտօնէութեանց գրուած ծանուցագիրները,

տեղեկագիրներն ու խնդրագիրները՝ երբ գրույմ չկրող թուղթերու վրայ գրուած ըլլան, նոյն պաշտօնեաներուն կողմէ չընդունուելով պիտի մերժուին. եւ երբ ընդունուելու ու տեղ մը յանձնարարուելու ըլլան ատոնք, եւ վրանին ուրիշ գործողութիւն մը կատարուի, յանձնարարող ու նոյն գործողութիւնը կատարող պաշտօնեաներուն իւրաքանչիւրէն կէս կէս Օսմանեան սուկի տուգանք պիտի առնուի:

Յօդուած 27. — Այս օրէնքին հրատարակութենէն երեք ամիս վերջը, գրույմի տուրքը չտուած՝ բաժնեթուղթ եւ պարտաթուղթ հրապարակ հանող բնկերութիւններէն՝ առանց գրույմի հրապարակ հանուած թուղթերուն տուրքէն դատ, առանց պարունակած գումարին 3 0/0 ք տուգանք պիտի առնուի ի բնեցմէ, եթէ ատոնք համեմատական տուրքի ենթակայ տեսակէն ըլլան. իսկ եթէ որոշեալ տուրքի ենթակայ տեսակէն ըլլան, անոնց մէջ նշանակուած խնդրին ընդարձակութեանն ու կարեւորութեանը համեմատ, 1/2 Օսմանեան սուկիէն մինչեւ 3 Օսմանեան սուկի տուգանք պիտի առնուի:

Յօդուած 28. — Չգրույմուած եւ կամ գրույմ չփակցուած փոխանակագիրներ ու շրջարեութեան մէջ գանուած վաճառականական եւ ուրիշ թուղթեր կայսերական Առեւտրական Օրինագրքին 76րդ եւ 78րդ յօդուածներուն մէջ յիշատակուած փոխարձակ երաշխաւորութեանց առաւելութիւնը չեն կրնար վայելել, այսինքն զանոնք փոխանցողները՝ երաշխաւորութենէ կ'ազատին. եւ փոխանակագիր մը ուղղուած անձին կողմէ չընդունուելու պարագային մէջ, զայն ներկայացնողը՝ անոր արժէքը միմիայն զայն քաշողէն կրնայ պահանջել եւ դատ բանալ անոր դէմ. իսկ ընդունուելու պարագային մէջ, զայն ներկայացնողը անոր արժէքը միայն քաշողէն ու ընդունողէն կրնայ պահանջել եւ անոնց դէմ դատ բանալ. իսկ երբ զայն քաշող անձը՝ անոր փոխարէնը ընդունող անձին զրկած ըլլալը ապացուցանէ, այս կերպով ինքզինքը ազատած կ'ըլլայ, եւ հետեւաբար ներկայացնողը՝ այս պարագային միմիայն ընդունողէն կրնայ պահանջել անոր արժէքը:

Յօդուած 29. — Երբ այն տեղերուն մէջ, ուր, ըստ այս կանոնագրին, գրույմի օրէնքը գործադրելի է, չգրույմուած կամ

դրոշմ չփակցուած թուղթերուն վրայ՝ առնուելու եւ ծախուելու բնդունակութիւն ունեցող փոխանակագիրներ, հեւլարէ սեփականներ եւ վաճառականներու միջեւ շրջաբերուած ուրիշ մուրհակներ գրուած են, տակաւին իրենց պայմանաժամը չհասած, եւ տակաւին առաջին փոխանցման գործողութիւնը չկատարուած, ներելի պիտի ըլլայ առոնց վրայ դրոշմ փակցնել. այլ սակայն այս պարագային մէջ՝ առոնց վրայ փակցուելիք դրոշմը՝ ըստ օրինի փակցուել պէտք եղած դրոշմին երեքպատիկը արժէք ունեցող դրոշմ պիտի ըլլայ:

Յօդուած 30. — Օրինական չափէն պակաս դրոշմուած, եւ կամ օրինական չափէն պակաս դրոշմ փակցուած մուրհակներուն՝ դրոշմի պակասը որչափ որ ըլլայ, լրացուելէ յետոյ, դրամական տուգանքը միայն պակաս փակցուածին համեմատ պիտի առնուի:

Յօդուած 31. — Կեղծ դրոշմ եւ դրոշմի կնիք շինողները եւ գիտնալով զանոնք վաճառողները ու քչելու ջանացողները՝ Կայսերական Պատժական Օրէնքին 149րդ յօդուածին առաջին հատուածին տրամադրութեանը համեմատ, տասը տարիէն աւելի չըլլալու պայմանաւ, առժամեայ թիապարտութեան, եւ կամ բերդարգելութեան պատժին պիտի ենթարկուին: Իսկ զիտակցարար, գործածուած դրոշմ գործածողները, ըստ յիշեալ յօդուածի վերջին հատուածին տրամադրութեան, երեք տարի կը բանտարկուին:

Յօդուած 32. — Դրոշմատուրքի վարչութիւնը՝ Մաքսային վերատեսչութեան հսկողութեանը տակ գտնուելով, Կ. Պոլսոյ մէջ եւ գաւառները, դրոշմի կնիքն ու դրոշմները որ տեղեր որ պիտի գտնուին, այդ տեղերը՝ նոյն վարչութեան կողմէ պիտի ազդարարուին լրագիրներու միջոցաւ: Իսկ այս օրէնքը տակաւին չգործադրուած տեղեր, խմբագրուած թուղթերու ու մուրհակներու մասին 15րդ յօդուածին տրամադրութիւնները ի գործ պիտի դրուին:

Յօդուած 33. — Դրոշմատուրքի վերաբերեալ գործողութիւնները իրենց յատուկ վարչութեան յանձնուած ըլլալով, ընդհանուր գատախազներուն պաշտօնն է օրէնքին հակառակ տեղի ունենալիք դէպքերը՝ տիրող օրէնքներուն եւ կանոններուն

րուն համաձայն քննել, ու քաղաքական դատարաններու առջեւ պաշտպանել: Դրոշմատուրքի այս օրէնքին տրամադրութեանց գործադրութեանը համար՝ Քաղաքապետական եւ Ոստիկանական շրջանակներու պաշտօնեաները պիտի օգնեն նոյն վարչութեան: Սակայն սա կայ որ, այս օրէնքին տրամադրութեանցը հակառակ դէպքերու առթիւ ինչպէս որ բնակարաններէն ներս մտնել չի ներուիր արդէն, այնպէս ալ՝ չդրոշմուած թուղթ կը կրէ ըսելով մէկու մը վրան չի կրնար խուղարկուիլ, եւ գանուելիք թուղթերը չեն կրնար գրաւուիլ:

Յօդուած 34. — Այս օրէնքին գործադրութեան հսկելու պաշտօնը՝ Ելեւմտական նախարարութեան յանձնուած է:

Յօդուած 35. — Այս օրէնքը՝ 6 Սէֆէր 1300 տարւոյ, եւ 5/17 Դեկտեմբեր 1882 տարւոյ թուականները կրող դրոշմի օրէնքին տեղը պիտի անցնի, 13 Բամազան 1311 տարւոյ, եւ 8/20 Մարտ 1310 տարւոյ թուականէն սկսեալ:

ՅՈՒՑԱԿ ՈՐՈՇԵԱԿ ԴՐՈՇՄԱՏՈՒՐՔԵՐՈՒ

ԹՈՒՂԹԵՐՈՒ ՏԵՍԱԿԸ

	Ղ.Փր.
Դատարաններէ եւ ժողովներէ տրուած այն ամէն վճռագիրներն ու տեղեկագիրները, որոնք որոշ գումարի չեն վերաբերիր, նոյնպէս վարչական ժողովներէն՝ Կ. Պոլիս կամ ուրիշ տեղեր ուղղուած եւ գործի տէրերուն ձեռքը յանձնուած ամէն տեսակ տեղեկագիրներ	10
Դրաւորապէս ներկայացուած եւ կամ ի ներկայութեան դատարանին արձանագրուած փոխանորդագիրներ	10
Արձանագրութեանց օրինակներ	3
Զեկուցագիրներ, բեռնագիրներ, նաւօղջէքի պայմանագիրներ եւ փոխադրութեանց մուրհակներ	10
Անհատներու միջեւ փոխանակուած անդորրագիրներ (իւրա) եւ ստացագիրներ (ւնագրուէ)	20
Թղթատարական եւ հեռագրական ստացագիրներ	10
Աւանդագիրներ (եւանէք սեկեւշէրի)	3
Երաշխաւորութեան մուրհակներու, առեւտրական	


պայմանագիրներու , հաշտարար կարգադրութեան հաւանագիրներու (<i>foiևքօւևկսօ</i>) , վաճառականներու եւ անհատներու միջև փոխանակուած պայմանագիրներու , եւ առեւտրական ու քաղաքային (<i>հուզուզ</i>) խնդիրներու վերաբերեալ ընկերութեանց պայմանագիրներու ամէն մէկ օրինակը	10	Ղր Փր.
Յոսա կայսերական գահայլց մատուցուելիք ազերսագիրները	2	
Պարզ խնդրագիր	1	
Արձանագրութեան , անցագրի , եւ ուրիշ իշխուխապերներ , վարձակալութեան պայմանագիրներ	1	
Արտօնագիր	10	
Դատաւորական հրամաններ (<i>միւրասեղե</i>)	20	
Լրագիրներ եւ անհատներու կողմէ եղած ազդեր	2	
Չէք	20	
Գաւնպիօ եւ կամ սեհիւնի թուղթեր գնելու եւ վաճառելու յատուկ ցուցակներ (<i>պօսոսո</i>) , նօթա ըսուած պաշտօնական երկառղներ , հաշուեցուցակներ եւ հաշուընթացներ	20	
Անձնական գործերու համար պաշտօնապէս գրուելիք յայտագիրներ եւ անդեկագիրներ	3	
Ամէն տեսակ բողոքագիրներու (<i>քօօքեւքօ</i>) իւրաքանչիւր օրինակը	2	
Երկաթուղւոյ իշխուխապերներ	20	

ՅՈՒՑԱԿ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԴՐՈՇՄԱՏՈՒՐՔԵՐՈՒ

1 էն մինչև	100	դրուշ	10	Ղր. Փր.
101 »	1000	»	20	
1001 »	2000	»	1	
2001 »	4000	»	2	
4001 »	6000	»	3	
6001 »	8000	»	4	
8001 »	10000	»	5	
10001 »	15000	»	7	20

				Ղ.Ր.Փ.Ր.
15001	»	»	20000	10
20001	»	»	25000	12 20
25001	»	»	30000	15
30001	»	»	35000	17 20
35001	»	»	40000	20
40001	»	»	45000	22 20
45001	»	»	50000	25
50001	»	»	55000	27 20
55001	»	»	60000	30
60001	»	»	65000	32 20
65001	»	»	70000	35
70001	»	»	75000	37 20
75001	»	»	80000	40
80001	»	»	85000	42 20
85001	»	»	90000	45
90001	»	»	95000	47 20
95001	»	»	100000	50
100001	»	»	110000	55

Եւ իւրաքանչիւր տասը հազար զրուշի ու կոտորակներուն համար՝ հինգ զրուշ պիտի գանձուի :



ՕՍՄԱՆԵԱՆ ԹՂԹԱՏԱՐՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿԱՏՈՒՆՆԵՐ . — Մայրաքաղաքիս եւ արուարձաններուն հետեւեալ թաղերը եւ գիւղերը նամակատուներ կան .

Կ. ՊՈԼԻՍ, ՈՍԿԵՂՋԻՒՐ ԵՒ ԲԵՐԱ

Սօուզ Չէօմէ	Հայրենի Օղլու
Ազ-Սէրայ	Գասրմ Փաւա
Ֆարսին	Ղալաթիա (Բէրեհմայէ Բազար)
Մահմուտ Փաւա	Ղալաթիոյ կամուրջ
Տիրէֆլէր Արասը	Ղալաթիա
Եէնի-Ճամի	Թօփ Խանէ
Սիրէէնի	Բերա (Տէօրք եօլ աղլը)
Էյուպ	Բերա (Թէփէ պաւը)
Ազապ Գարու	Բերա (Բանկալթի)

ՎՈՍՓՈՐԻ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԳԻՒՂԵՐԸ

Պէժիֆրաւ	Էմիրկեան
Օրբագիւղ	Եէնիգիւղ
Գուրուշէճէ	Թարապիա
Արնաւուսգիւղ	Պէօյիւֆսէրէ
Պէպէֆ	Սարը-Եար
Բուսէլի-Հիսար	Բուսէլի-Գավաֆ

ՎՈՍՓՈՐԻ ԱՍԻԱԿԱՆ ԳԻՒՂԵՐԸ

Անասօլու-Գավաֆ	Գանսիլի
Պէյֆօզ	Զէնկէլֆէօյ
Բաւա-Պահշէ	Պէյլէրպէյ
Գանլընա	Սկիւսար
Անասօլու-Հիսար	

ՄԱՐՄԱՐԱՅԻ ԵԶԵՐՔՆԵՐԸ ԵՒ ԿՂԶԻՆԵՐԸ

Սէլիմիյէ	Մեծ-կղզի
Հայսար-Փաւա	Հէյպէլի
Գասըգիւղ	Գընալը
Էրէնիֆօյ	Մաֆրիգիւղ
Գարբալ	Այ-Սթէֆանօ
Բէնիֆ	

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ . — Պէտք է գրել նամակին նասցէն շատ յստակ կերպով եւ մեկանով : Սոհեմութիւն է պահարանին ետեւը գրել ձեր իսկ հասցէն . այս կերպով , եթէ այն անձը՝ որուն ուղղած էք ձեր նամակը , չգանուի՝ թղթատարութիւնը կը վերադարձնէ ձեզի ձեր նամակը , որ այսպէս կորսուելու վտանգէն զերծ կը մնայ :

Թղթատարական Միութեան (իփփիհաս , Union Postale) մէջ գանուող երկիրներուն համար 15 կոամ կամ աւելի պակաս կշռող նամակի մը վրայ պէտք է դնել 1 դրուշի թղթադրոշմ . 15 կոամէն աւելի կշռող նամակներուն վրայ . իւրաքանչիւր 15 կոամի կամ աւելի պակաս քանակութեան համար պէտք է աւելցնել 1 դրուշի թղթադրոշմ :

Նոյնպէս Թուրքիոյ ներքին թղթատարութեան մէջ նամակները ենթակայ են 1 դրուշ թղթադրոշմի՝ իւրաքանչիւր 15

կռամի համար : Բացառիկ են նաև հանդիսաները . այս պարագային՝ 20 փարայի թղթադրոշմ միայն պէտք է փակցնել :

Եթէ նամակի մը վրայ թղթադրոշմ չգնելով յանձնած ենք թղթատարին , թղթատարութիւնը տեղը կը հասցնէ զայն եւ նամակը ընդունողը կը հարկադրուի վճարել կրկինը . իսկ եթէ գրուած թղթադրոշմը պէտք եղածէն պակաս է , պակաս մասին միայն կրկինը կը վճարէ :

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ՔԱՐՏԵՐ (Cartes postales) . — Պարզ թղթատարական քարտի մը գինն է 20 փարա , իսկ վճարեալ պատասխանով թղթատարական քարտերու գինը 1 զրուշ :

ՏՊԱԳԻՐՆԵՐ (Էվրագը մաքսուա , imprimés) . — Հետեւեալները սպազիրներու կարգը դասուած են եւ զեղչուած գիներով կը շրկուին . շրագիրներ եւ պարբերականներ , կազմուած կամ անկազմ գիրքեր , տեսրակներ , երաժշտական հասուածներ , այցախարհեր , սպագրական փորձեր (ձեռագրով կամ առանց ձեռագրի) , վիւնագրուիւններ , շուսանկարներ , պատկերներ , գծագրուիւններ , յատկագիծեր , աշխարհագրական քարտուկներ , ցուցակներ , զանազան ազդեր , եւ ընդհանրապէս քոչոր ինչ որ սպագրուած է :

Թղթատարական Միութեան մէջ գանուող երկիրներուն համար 50 կռամ կամ աւելի պակաս կշռող տպագիրներուն կը վճարուի 10 փարա . 50 կռամէ աւելի կշռող տպագիրներուն վրայ անձնիւր 50 կռամի կամ աւելի պակաս քանակութեան համար պէտք է աւելցնել 10 փարա :

Նոյնպէս Թուրքիոյ ներքին թղթատարութեան համար տպագիրները ենթակայ են 10 փարա թղթադրոշմի , իւրաքանչիւր 50 կռամի : Երբ ծրարը 30 կռամէ պակաս կը կշռէ , 5 փարա միայն կը վճարուի : Ծովեզերեայ քաղաքներու համար անձնիւր 75 կռամի 10 փարա կ'առնուի :

2000 կռամէ աւելի կշռող կամ 45 սանթիմէթրէ աւելի երկայնութիւն , լայնութիւն կամ թանձրութիւն ունեցող ծրարներ չեն ընդունուիր : 10 սանթիմէթր տրամագիծ եւ 75 սանթիմէթր երկայնութիւն ունեցող պլորուած տպագիրներ կ'ընդունուին :

Եթէ տպագրի մը վրայ բնաւ թղթադրոշմ գրուած չէ ,

չի զրկուիր . եթէ պակաս գրուած է , կը զրկուի եւ պակաս գրուածին կրկինը կ'առնուի ընդունողէն :

Երբ տպագիրներու ծրար մը կը պարունակէ նամակ կամ ձեռագիր նօթագրութիւններ , չի յանձնուիր , եւ ետ կը զրկուի : Բացառութիւն . 1. Գրի մը հեղինակը կրնայ ձօն մը գրել գրիին վրայ . 2. Ղրկողը կրնայ ստորագրել եւ իր հասցեն գրել ձեռքով . 3. Գիւտերու ցուցակի մը կամ ուրիշ նմանօրինակ գրուածքի մը վրայ կարելի է փոխել կամ աւելցրել քուսակներ կամ քառեր . 4. Կարելի է գիծ փաշելով աւշադրութիւն գրուել մասնաւոր հասցուածի մը վրայ . 5. Ներելի է սպագրական սխալները ձեռքով ուղղել , եւն :

ԳՈՐԾԻ ԹՈՒՂԹԵՐ (էվրագը մեքսալիհե, papiers d'affaires) . — Գործի թուղթեր կը կոչուին բոլոր այն թուղթերը , գրուած կամ գծագրուած , որոնք անմիջական թղթակցութեան մը նկարագիրը չունին . ինչպէս դասավարուքեան թուղթեր , վկայագիրներ , կաշուածագիրներ , փոխանակագիրներ , բեռնագիրներ (ֆոկէշիմեքո), հաշուեցուցակներ (ֆարուրա) , տպահովագրական ընկերութեանց վերաբերեալ կարգ մը թուղթեր , ձեռագիր երաժշտական հասցուածներ , գիրտերու ձեռագիրներ եւ շրագիրներու յսկացուած ձեռագիրներ՝ անչնսարսար դրկուած , եւայլն , եւայլն :

Թղթատարական Միութեան մէջ գտնուող երկիրներուն համար գործի թուղթերէ կը ստացուի 1 զրուշ՝ 1 կռամէ մինչեւ 200 կռամ կշող ծրարներէ : Իսկ 200 կռամէ աւելի կշող ծրարները ենթակայ են տասնական փարա յաւելուածի՝ ամէն 50 կռամի յաւելման : Թուրքիոյ ներքին թղթատարութեան համար նոյն բանն է :

Եթէ գործի թուղթերու վրայ բնաւ թղթագրոջմ գրուած չէ , չեն զրկուիր . եթէ պակաս գրուած է , կը զրկուին եւ պակաս գրուածին կրկինը կ'առնուի ընդունողէն :

Ծրարներու մէջ նամակ կամ նօթագրութիւն չպարունակելու , ինչպէս ծրարներու ծանուցութեան եւ ընդարձակութեան պայմանները գործի թուղթերու համար ալ տպագիրներու յար եւ նման են :

ՎԱՃԱՌՔԻ ՆՄՈՑԵՆԵՐ (էմքասի քիւնարիյե նիւնուլեկի-

րի, échantillons des marchandises). — Վաճառքի նմոյշ կը նկատուին ապրանքի մը այն փոքրիկ մասերը որոնք կը ծառայեն ապրանքին տեսակը եւ յատկութիւնը ճանչցնելու, եւ որոնք ինքնին չեն կրնար առուտուրի առարկայ ըլլալ իրենց փոքր քանակութեան պատճառաւ: Այսպէս են ցորենի հասիկներ, սերմեր, պղպեղ, աշիւր, քեյի սերուկներ, բամպակ, բուրդ, երկաթ, գիւղիկ, կերպաս, ասուրի, եւ այլն, եւ այլն: Հեղուկներն ալ, ինչպէս յաղերը, եւ այլն, կրնան զբրկուիլ իրր նմոյշ, ի բաց առեալ Ռուսիա, Պարսկաստան, Ամերիկա, Մեծն Բրիտանիա:

Թղթատարական Միութեան համար վաճառքի նմոյշներէն կ'առնուի 20 փարա, 1 կռամէն մինչեւ 100 կռամ, եւ 100 կռամէն վեր իւրաքանչիւր 50 կռամի 10 փարա: Եթէ նմոյշին ծանրութիւնը 350 կռամը անցնի, կամ եթէ 30 սանդիմէթր երկայնութենէ, 20 սանդիմէթր լայնքէ եւ 10 սանդիմէթր թանձրութենէ աւելի ըլլայ, կը մերժուի:

Թուրքիոյ մէջ վաճառքի նմոյշներուն համար նոյն բանն է, սա տարբերութեամբ որ մինչեւ 2000 կռամ կ'ընդունուին: Ծովեզերեայ քաղաքներուն համար անձնիւր 75 կռամի համար 10 փարա աւելի կ'առնուի, փոխանակ 50 կռամի: Եթէ նմոյշին ծանրութիւնը 250 կռամը անցնի, անձնիւր 50 կռամի համար 20 փարա կ'առնուի մինչեւ 2 քիլոկրամ:

Եթէ վաճառքի նմոյշի մը վրայ թղթապրոշմ դրուած չէ, չի զրկուիր: Եթէ պակաս դրուած է, կը զրկուի եւ պակաս դրուածին կրկինը կ'առնուի ընդունողէն:

ԹԱՆԿԱԳԻՆ ՆԻԻԹԵՐ. — Արգիլուած է թղթատարի յանձնել շյանձնարարուած սովորական ցամակներու մէջ արծաթ եւ ոսկի առարկաներ, գոհար, մետաղ դրամ եւ քղրադրամ, մասխի եկեքակայ քանկագիւն նիւթեր, եւ այլն:

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ (Թահիւս, recommandation). — Թղթատարի միջոցաւ փոխադրելի բոլոր առարկաները, ինչպէս նամակներ, թղթատարական քարտեր, տպագիրներ, գործի թուղթեր, ապրանքի նմոյշներ կրնան յանձնարարուիլ:

Յանձնարարեալ առարկաներու համար պէտք է վճարել նախ ինչ որ պիտի վճարուէր՝ եթէ յանձնարարեալ չըլլային:

յետոյ միօրինակ կերպով պէտք է վճարել 1 դրուշ իրր յանձնարարման գին :

Յանձնարարեալ առարկաներու համար, յանձնարարման պահուն իսկ պէտք է վճարել փոխադրութեան բոլոր ծախքը :

Երբ յանձնարարեալ նամակ մը կորսուի, եթէ կը վերաբերի թղթատարական Միութեան, 50 ֆրանք փոխարինութիւն կը վճարուի թղթատարութեան կողմէ, իսկ եթէ վերաբերի Թուրքիոյ ներքին թղթատարութեան՝ 200 դրուշ :

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ՋԵԿՈՒՑԱԳԻՐ (Passe իշնուխապերի, avis de réception). — Ընդունելութեան զեկուցագիր կը կոչուի թուղթ մը՝ զոր կը ստորագրէ այն անձը որուն ուղղուած է նամակը եւ որով կը հաստատուի թէ նամակը իր ձեռքը հասած է : Ընդունելութեան զեկուցագիրը՝ ընդունողէն ստորագրուելէ ետքը կը վերագարծուի նամակը զրկողին :

Ընդունելութեան զեկուցագիրներու, թէ՛ թղթատարական Միութեան չըջանակին եւ թէ՛ Թուրքիոյ համար, պէտք է վճարել միօրինակ կերպով 1 դրուշ, յանձնարարման համար վճարուած 1 դրուշէն զատ :

ԴՐԱՄԻ ԵՒ ԱՐԺԷՔԱՒՈՐ ՆԻԹԵՐՈՒ ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ. — Թղթատարական միութեան մէջ գանուած երկիրներուն համար Օսմանեան թղթատարութիւնը չ'ընդունիր աւանդ (կւսակք), ոչ ալ թղթատարական փոխանակագիր (mandat de poste) :

Թուրքիոյ ներքին թղթատարութեան մէջ ընդունուած է դրամի եւ արժէքաւոր նիւթերու փոխադրութիւնը առանցի ձեւին տակ : Այս պարագային՝ թղթատարական վարչութիւնը կը ստանայ քանկագին նիւթերու համար արժեքին համաձայն սակագին մը, իսկ հասարակ նիւթերու համար ծանրութեան չափով սակագին մը : Այս սակագինը հինգ աստիճան է, հեռաւորութեան հիկ շրջանակներու համաձայն՝ որոնք հետեւեալներն են .

Ա. Երջուակ . — Կ. Պոլիս եւ չըջակաները . կը վճարուի արժեքաւոր նիւթերու համար, 1 էն 1000 դրուշի՝ 2¹/₂ դրուշ . 1000 դրուշէն 2000 դրուշի՝ 5 դրուշ, եւ ամէն 1000 դրուշի 2¹/₂ դրուշ : Ծանրութիւն ունեցող նիւթերու համար 1 էն 500 կրամի՝ 2¹/₂ դրուշ, եւ 501 էն 1000 կրամի՝ 5 դրուշ, եւ ամէն 500 կրամի 2¹/₂ դրուշ :

Բ. Շրջանակ . — Պրուսա , Գասթէմունի , Այտըն , Ատա-
նա , Ճէպէլի-Լիպնան , Հալէպ , Գոնիա , Շքոտրա , Կարմիր ծովի
եզերքներ , Պէնկագի , Պիղա , Արշիպեղազոսի կղզիներ :

Վերոյիշեալ վայրերը կը փոխադրուին արժեքաւոր նիւթեր .
1էն 250 դրուշ՝ $2\frac{1}{2}$ դրուշի , 251 էն 500՝ 3 դրուշի , 501 էն
1000՝ 7 դրուշի , առկէ վեր հազարներու համար իւրաքանչիւ-
րին վրայ կ'աւելնայ $3\frac{1}{2}$ դրուշ : Ծանրութիւն ունեցող նիւ-
թեր . 1է 100 կրամ՝ $2\frac{1}{2}$ դրուշի , 101էն 250 կրամ՝ 3 դրուշի ,
251էն 500՝ 4 դրուշի , եւ 501էն 1000 կրամ՝ 7 դրուշի՝ եւ իւ-
րաքանչիւր 500 կրամի՝ $3\frac{1}{2}$ դրուշ յաւելում :

Գ. Շրջանակ . — Գամասկոս , Էրզրում , Հիճազ , Էնգա-
րէ , Սըվազ , Գոսսիա , Մանասթըր , Եէմէն , Տիարպէքիր , Խար-
բութ :

Արժեք : 1 էն 250 դրուշ՝ 3 դրուշի , 251էն 500՝ 4 դրուշի ,
501էն 1000՝ 6 դրուշի եւ իւրաքանչիւր 1000ի վրայ 5 դրուշ
յաւելում : Ծանրութիւն . 1էն 100 կրամ՝ 3 դրուշի , 101էն 250
կրամ՝ 4 դրուշի , 251էն 500՝ 6 դրուշի , 501էն 1000՝ 10 դրու-
շի , եւ իւրաքանչիւր 500ի վրայ 5՝ դրուշ յաւելում :

Դ. Շրջանակ . — Վան , Պիթիա , Մուսուլ :

Արժեք . 1էն 250 դրուշ՝ $3\frac{1}{2}$ դրուշ , 251էն 500՝ 5 դրուշի ,
501էն 1000՝ 8 դրուշի եւ իւրաքանչիւր 1000ի վրայ $6\frac{1}{2}$ դրուշ
յաւելում : Ծանրութիւն . 1 էն 100 կրամ՝ 3 դրուշի , 101 էն
250՝ 5 դրուշի , 251էն 500՝ 8 դրուշի , 501էն 1000՝ 13 դրու-
շի՝ եւ իւրաքանչիւր կրամի վրայ $6\frac{1}{2}$ դրուշ յաւելում :

Ե. Շրջանակ . Պաղտատ , Պասրա :

Արժեք : 1էն 250 կրամ՝ 4 դրուշի , 251էն 500՝ 6 դրուշի ,
501էն 1000՝ 10 դրուշի , եւ իւրաքանչիւր 1000ի վրայ 8 դրու-
շի յաւելում : Ծանրութիւն . 1էն 100 կրամ՝ 4 դրուշի , 101էն
250՝ 6 դրուշի , 251էն 500՝ 10 դրուշի , 501էն 1000՝ 16 դրուշի՝
եւ իւրաքանչիւր 500ի վրայ 8 դրուշ յաւելում :

Ծովեզերեայ քաղաքները 1000ին 2 դրուշ կ'աւնուի , իսկ
երկաթուղի բանած քաղաքները 1000ին 3 դրուշ : Ասոնց մէջ
երբեք ծանրութիւնը նկատողութեան չ'աւնուիր :

ՕՏԱՐ ԹՂԹԱՏԱՐՆԵՐ

ԱՆԳՎԱԿԱՆ ԹՂԹԱՏԱՐ

Ղալաթիա, Քարափէօյ, Եէնի խան :

Բաց է առաւօտեան 8 1/2 էն մինչեւ իրիկուան 6. կիրա-
րակիները 9 1/2 էն 10 1/2 առտուն եւ 3 էն 4 կէս օրէն ետքը :

Թղթասարական փոխանակագիր կ'ընդունուի Մեծն Բրի-
տանիոյ, Մայթայի, Ճիպրայթարի, Կիպրոսի Միացեալ-Նահան-
գաց, Քանաթայի, Հնդկաստանի եւ Բրիտանական գաղթակա-
նութեանց համար :

Թղթասարական մեծ ծրարներ (Colis postaux) կ'ընդու-
նուին, ամէն հինգշաբթի, Մեծն Բրիտանիոյ, Մայթայի եւ Կիպ-
րոսի համար :

ԱՒՍՏՐՈՒԱԿԱՆ ԹՂԹԱՏԱՐ

Կեդրոնատեղի Ղալաթիա, Եօրկաներլար փողոց, Գամօնօ
խան. — Մասնաճիւղեր, Բերա, 438, Բասաժ Օրխան-
բալի մօս, եւ Պոլիս, Գամօնօ խան :

Նամակ, տպագիր, եւ այլն կ'ընդունուին բովանդակ Եւրո-
պայի համար. նոյնպէս Փոքր Ասիոյ ծովեզերեաց քաղաքնե-
րուն, Արշիպեղապօսի կղզիներուն համար, եւ այլն :

Թղթատարական մեծ ծրարները պէտք չէ կշռեն 3 քիլոկ-
րամէ աւելի եւ ունենան 60 ասնդիմէթրէ աւելի երկայնու-
թիւն, լայնք եւ թանձրութիւն :

Կ'ընդունուին նաեւ քղթասարական փոխանակագիրներ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԹՂԹԱՏԱՐ

Ղալաթիա, Վօլփօսա փողոց, քիւ 29, — Մասնաճիւղ
Պոլիս, Հավուզու խան :

Բաց է առաւօտեան եւրօպական ժամը 8 էն մինչեւ իրիկ-
ուան 6. կիրակիները առտուն 9 էն 11 եւ կէս օրէն ետքը 2 էն 4 :

Կարելի է գերմանական թղթատարին դրամ յանձնել եւ
թղթատարական փոխանակագիր մը ստանալով զրկել Գերմա-
նիա, Աւստրիա, Պէլճիզա, Պուլկարիա, Եգիպտոս, Միացեալ-
Նահանգներ, Յունաստան, Իտալիա, Ռուսմանիա, Չուիցերիա,
Թունուզ, եւ այլն, եւ այլն, ի բաց առեալ Անգլիա, Ֆրանսա,
Ռուսիա եւ Թուրքիա :

Թղթատարական մեծ ծրարներ կ'ընդունուին . որոնք կը զրկուին Քէօթէնճէի շողենառով , շարաթր երկու անգամ , երեքշարթի (եւրոպական ժամը 9ին , կէս օրէն առաջ) եւ շարաթ (եւրոպական ժամը 2ին , կէս օրէն ետքը) :

ՅՐԱՆՍԱԿԱՆ ԹՂԹԱՏԱՐ

Կեդրոնատեղի , Վօյվոսա փողոց , Ղալաթիա . — Մասնաճիւղեր , Բերա , 15—16 , Բատաժ Օսիանգալ եւ Պոլիս , Գամօնիսո խան :

ՌՈՒՍԱԿԱՆ ԹՂԹԱՏԱՐ

Կեդրոնատեղի , Քիրէն գափու , Ղալաթիա . — Մասնաճիւղ , Պոլիս , Պահնէ գափու փողոց , Մաֆսին դիմացը :

Բոլոր այս թղթատարութիւնները զրեթէ նոյն գիներով կը փոխադրեն նամակները , ապագիրները , եւ այլն , եւ այլն . եւ այդ գիները համաձայն են Միջազգային Թղթատարութեան գիներուն , որոնց վրայ խօսած ենք (Տե՛ս էջ 247 էն 251) :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ը

ՀԵՌԱԳՐԱՏՈՒՆՆԵՐԸ . — Մայրաքաղաքիս մէջ եւ արուարձանները գտնուած նամակատուններէն (*) մեծ մասը հեռագրատուն են նաեւ : Անոնցմէ շատը թէ՛ թուրքերէն եւ թէ՛ ֆրանսերէն հեռագիր կ'ընդունին . մէկ քանին թուրքերէն միայն կ'ընդունին : Կան հեռագրատուններ որոնք գիշեր ցորեկ բաց են :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆ . — Ա . Միեւնոյն նահանգին (Վիլայէթ) երկու հեռագրական կայաններուն միջեւ քաշուած հեռագրի մը իւրաքանչիւր բառի գինն է 20 փարա . ասկէ զատ 100 փարայի յաւելուածական տուրք մը կ'առնուի իւրաքանչիւր հեռագրի համար :

Բ . Երկու տարրեր նահանգներու հեռագրական կայաններուն միջեւ քաշուած հեռագրի մը իւրաքանչիւր բառի գինն է 1 զրուչ . ասկէ զատ 5 զրուչի յաւելուածական տուրք մը կ'առնուի :

Գ . Եւրոպական եւ Ասիական Թուրքիոյ քաղաքներէն եւ Արշիպեղագոսի կղզիներէն հետեւեալ տեղերը զարնուելիք հեռագիրներուն իւրաքանչիւր բառին համար կը գանձուի .

(*) Տե՛ս էջ 246—247 :

	Սովորական նամբով		Թեկնեսո Շիրայի ընդօրինակ բեղով		Օսեսայի ընդօրինակ բեղով	
	Ֆր.	Սնդ.	Ֆր.	Սնդ.	Ֆր.	Սնդ.
Ալճերիա		67		67	1	19
Անգլիա		71		71	1	19
Աւստրիա (Եւրոպական Թուրքիայէն)		34		44		98
» (Ասիական Թուրքիայէն եւ Արշիպեղազոսի կղզիներէն)		46		46	1	00
Բորթուկալ		69		69	1	22
Փերմանիա		55		58	1	00
Ջուիցերիա		51		51	1	05
Թունուզ		67		67	1	19
Իտալիա		48		48	1	14
Լիւքսէնպուրկ		60		60	1	05
Հոլանտա		60		60	1	05
Հունգարիա (Եւրոպական Թուրքիայէն)		34		44	0	98
» (Ասիական Թուրքիայէն եւ Արշիպեղազոսի կղզիներէն)		46		46	1	00
Ճիպրայթար		69		69	1	22
Մալթա		69		69	1	30
Նորվեկիա		72		72	1	08
Շուէտ		69		69	1	05
Պելճիզա		60		60	1	05
Պուլկարիա		38		54	0	99
Ռումանիա (Եւրոպական Թուրքիայէն)		26		51	0	73
» (Ասիական Թուրքիայէն եւ Արշիպեղազոսի կղզիներէն)		43		51	0	73
Սերպիա (Եւրոպական Թուրքիայէն)		27		51	1	00
» (Ասիական Թուրքիայէն եւ Արշիպեղազոսի կղզիներէն)		38		51	1	00
Սպանիա		65		65	1	17
Տանիմարզա		60		60	1	00
Տրիպոլիա (Ափրիկեան)		88		88	1	40
Ֆրանսա		56		56	1	08

ՉԱՆԱՉԱՆ ՏԷՐՈՒԹԵԱՆՑ ԴՐԱՄՆԵՐ

Հոս կը զնենք պետութեանց զանազան ոսկի եւ արծաթ դրամներուն կշիռները եւ արժէքները : Ֆրանսա ընդունած է աասնորդական մեղրական դրութիւնը եւ Պէլճիգա, Չուիցերիա, Յունաստան նոյն դրամական դրութիւնը ընդունած են 1865, 1878 եւ 1885 ի դրամական դաշնակցութեանց մէջ : Յունաստանի մէջ 1 սրախւնիկ կը համապատասխանէ 1 ֆրանկին եւ կը ստորաբաժնուի 100 շեքքայի, ինչպէս ֆրանկը կը ստորաբաժնուի 100 սանքիւի : Սպանիա, Իտալիա, Պուլկարիա, Ռումանիա, Սերպիա նոյն դրամական դրութիւնը ի դորձ կը զնեն : Սպանիոյ մէջ ֆրանքը կը կոչուի քեսքա, Իտալիոյ մէջ շիրա, Պուլկարիոյ մէջ շիվ (որ կ'արժէ 100 սոփիլիսի), Ռումանիոյ մէջ շեօ (որ կ'արժէ 100 սլանի), Սերպիոյ մէջ սիկար (որ կ'արժէ 100 քարա) :

Թ Ա Ի Ր Բ Ի Ա

ՄԵՏԱՂ	ԴՐԱՄՆԵՐ	ԿՇԻԹ ԿՂԱՄ	ԱՐԺԷՔ		ԱՐԺԷՔ	
			ՉՐՈՂ	ՓՐՂ	Ֆրանք	Սնդ
Ոսկի	Հիկոս ոսկիկոց	36,082	500	—	143	92
Ոսկի	Երկու ֆուկէս ոսկիկոց	18,044	250	—	56	96
Ոսկի	Մէկ ոսկիկոց	7,216	100	—	22	78
Ոսկի	Կէս ոսկիկոց	3,608	50	—	11	39
Ոսկի	Քառորդ ոսկիկոց	1,804	25	—	5	70
Արծ.	Մէնիսիէ	24,055	20	—	4	44
Արծ.	Կէս մէնիսիէ	12,028	10	—	2	22
Արծ.	Քառորդ մէնիսիէ	6,014	5	—	1	11
Արծ.	Երկու դրուցոց	2,405	2	—	0	44
Արծ.	Մէկ դրուցոց	1,203	1	—	0	22
Արծ.	Կէս դրուցոց	0,601	0	20	0	11

Ա Ն Գ Լ Ի Ա.

Մեծագ.	ԴՐԱՄՆԵՐ	ԿՇԻՌ Կում	ԱՐԺԷՔ		ԱՐԺԷՔ	
			Շիլին	Քէն	Ֆրանք	Մնդ.
Ոսկի	Անգլիական ոսկի	7,988	20	—	25	22
Ոսկի	Կէս անգլիական ոսկի	3,994	10	—	12	61
Արծ.	Գրառւն	28,276	5	—	5	81
Արծ.	Կէս գրառւն	14,138	2	6	2	91
Արծ.	Շիլին	5,655	1	—	1	16
Արծ.	Կէս շիլին	2,828	—	6	0	58

Ա Ի Ս Տ Ր Ի Ա.

Մեծագ.	ԴՐԱՄՆԵՐ	ԿՇԻՌ Կում	ԱՐԺԷՔ	
			Ֆրանք	Մնդ.
Ոսկի	4 Քրիսթիցնց	43,96	47	44
Ոսկի	1 Քրիսթից (Տիւֆա)	3,49	11	85
Ոսկի	8 Ֆիորին	6,452	20	—
Ոսկի	4 Ֆիորին	3,226	10	—
Ոսկի	20 Քուրոն	6,775	21	—
Ոսկի	10 Քուրոն	3,387	10	50
Արծ.	2 Ֆիորին	24,690	4	94
Արծ.	1 Քուրոն(100Քրոյձէր)	5,—	0	93
Արծ.	1 Ֆիորին	12,315	2	47
Արծ.	1/4 Ֆիորին	3,086	0	62

Գ Ն Ր Մ Ա Ն Ի Ա.

Մեծագ.	ԴՐԱՄՆԵՐ	ԿՇԻՌ Կում	ԱՐԺԷՔ		ԱՐԺԷՔ	
			Մարք	Ֆէն	Ֆրանք	Մնջ.
Ոսկի	Կրկին ֆրոնէն	7,965	20	—	24	69
Ոսկի	ֆրոնէն	3,982	10	—	12	35
Ոսկի	5 Մարք	1,991	5	—	6	17
Արծ.	5 Մարք	27,777	5	—	5	56
Արծ.	2 Մարք	11,111	2	—	2	22
Արծ.	1 Մարք	5,555	—	100	1	11
Արծ.	1/2 Մարք	2,777	—	50	0	56

Ռ Ո Ւ Ս Ա Ս Տ Ա Ն

Մեծագ.	ԴՐԱՄՆԵՐ	ԿՇԻՌ Կամ	ԱՐԺԷՔ		ԱՐԺԷՔ	
			Բու.պլ.Կապէկ	Ֆրանք	Մնդ.	Մնդ.
Ոսկի	Բօլ էմբէռեալ	12,903	40		40	—
Ոսկի	Կէս Բօլ էմբէռեալ	6,452	5		20	—
Ոսկի	Հինգ Բու.պլի	—	5		20	—
Արծ.	Բու.պլի	—		100	4	—
Արծ.	1/2 Բու.պլի	10,		50	2	—
Արծ.	1/4 Բու.պլի	5,		25	1	—
Արծ.	20 Կապէկ	3.6			—	40

Ֆ Ր Ա Ն Ս Ա

Մեծագ.	ԴՐԱՄՆԵՐ	ԿՇԻՌ Կամ	ԱՐԺԷՔ		ԱՐԺԷՔ Ոսկի դրամ	
			Ֆրանք	Մնդ.	Ղրուշ	Մնդ.
Ոսկի	Հարիւր Գրանկնոց	32,258	100	—	440	—
Ոսկի	Յիսուն Գրանկնոց	16,429	50	—	220	—
Ոսկի	Քսան Գրանկնոց	6,452	20	—	88	—
Ոսկի	Տասը Գրանկնոց	3,226	10	—	44	—
Ոսկի	Հինգ Գրանկնոց	1,612	5	—	22	—
Արծ.	Հինգ Գրանկնոց	25,	5	—	22	—
Արծ.	Նրկու Գրանկնոց	10,	1	86	8	80
Արծ.	Մէկ Գրանկնոց	5,	0	93	4	40
Արծ.	Կէս Գրանկնոց	2,5	0	46	2	20
Արծ.	Քսան սանթիմնոց	1,	0	19	—	88

Պ Ա Ր Ս Ա Ս Տ Ա Ն

Մեծագ.	ԴՐԱՄՆԵՐ	ԿՇԻՌ Կշիռ	ԱՐԺԷՔ		ԱՐԺԷՔ	
			Ղրան	Ֆրանք	Մնդ.	Մնդ.
Ոսկի	Նրկու բուման	5,7	20		17	66
Ոսկի	Մէկ բուման	2,85	10		8	83
Ոսկի	Կէս բուման	1,425	5		4	42
Արծ.	Ղրան	10	1		0	92
Արծ.	Բանապլաս	5,20	1/2		0	46
Արծ.	Ապասի	2,08	1/4		0	23

Ճ Ա Ր Ո Ն

Մեծագ.	ԳՐԱՄՆԵՐ	ԿՆԻՌ Կում	ԱՐԺԷՔ	
			Ֆրանք	Սնդ.
Ոսկի	20 ԵԷԳ	33,33	403	33
Ոսկի	10 ԵԷԳ	16,67	51	67
Ոսկի	5 ԵԷԳ	8,33	25	83
Ոսկի	2 ԵԷԳ	3,33	10	33
Ոսկի	1 ԵԷԳ	1,67	5	17
Արծ.	1 ԵԷԳ (100 ՍԷԳ)	26,936	5	39
Արծ.	50 ՍԷԳ	12,5	2	22
Արծ.	20 ՍԷԳ	5	0	89
Արծ.	10 ՍԷԳ	2,5	0	44
Արծ.	5 ՍԷԳ	1,25	0	22

ՄԻՍՏԵՍԱԼ, ՆԱՀԱՆԳՆԵՐ

Մեծագ.	ԳՐԱՄՆԵՐ	ԿՆԻՌ Կում	ԱՐԺԷՔ		ԱՐԺԷՔ	
			Տոլար	Սնդ.	Ֆրանք	Սնդ.
Ոսկի	Կրկին արձուեղում	33,436	20		403	65
Ոսկի	Արձուեղում	16,718	10		51	83
Ոսկի	Կէս արձուեղում	8,359	5		25	91
Ոսկի	Երեք տոլարեց	5,045	3		15	55
Ոսկի	Քառորդ արձուեղում	4,179	2 ^{1/2}		12	95
Ոսկի	Տոլար	1,672			5	48
Արծ.	Տոլար	26,729		100	5	34
Արծ.	Կէս տոլար	12,5		50	2	50
Արծ.	Քառորդ տոլար	6,25		25	1	25
Արծ.	Քսան սէնք	5, —		20	1	—
Արծ.	Տայմ	2,5		10	0	50

Հ Ն Գ Կ Ա Ս Տ Ա Ն

ՄԵՏԱՂ	ԴՐԱՄՆԵՐ	ԿՇԻՌ ԿՈՍՄ	ԱՐԺԷՔ		ԱՐԺԷՔ	
			ԲՈՒՐԻ ԱՆՆՈՍ	ՖՐԱՆՔ	ՄԵՂ.	
Ոսկի	Մօհիւր	11,66	45		36	83
Ոսկի	$\frac{2}{3}$ Մօհիւր	7,77	40		24	55
Ոսկի	$\frac{1}{3}$ Մօհիւր	3,89	5		12	28
Արծ.	Բուրքի	11,66	—	46	2	38
Արծ.	$\frac{1}{2}$ Բուրքի	5,83	—	8	1	49
Արծ.	$\frac{1}{4}$ Բուրքի	2,91	—	4	0	59
Արծ.	$\frac{1}{8}$ Բուրքի	1,46	—	2	0	30

Ա Պ Ա Հ Ո Վ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ԻՆՁ Է ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ . — Ապահովագրուիւնը պայմանագրութիւն մըն է որով ապահովագրողը կը ստանձնէ հատուցանել այն նիւթական վնասը զոր նախատեսուած դէպք մը կրնայ պատճառել ապահովագրողին, այս վերջինին կողմէ վճարուած որոշ գումարի մը փոխարէն որ կը կոչուի ապահովագիւն (prime d'assurance) : Ապահովագրական մուրհակը (police d'assurance), զոր ապահովագրողը կը յանձնէ ապահովագրուողին, կը հաստատէ անոնց միջեւ տեղի ունեցած այս պայմանագրութիւնը :

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ . — Ապահովագրութիւնը, մանաւանդ եւրոպայի մէջ, բազմաթիւ պարագաներու համար ի գործ կը դրուի, որոնցմէ ոմանք դեռ չեն գործադրուիք մեր մէջ . ինչպէ՞ս պատերազմի, կարկուտի, կայծակի, պաճարախտի վնասներուն դէմ, սնանկութեանց դէմ, հիւանդութեանց դէմ, եւ այլն, կատարուած ապահովագրութիւնները . Թուրքիոյ մէջ գլխաւորաբար երեք տեսակ ապահովագրութիւն ի գործ կը դրուի՝ հրդեհի դէմ, որուն նպատակն է դրամական

հատուցում առնել երբ ապահովագրուած շէնքերն ու կարասի-
ները այրին, ծովային արկածներու դեմ, որով կ'ապահո-
վագրուին նաւերն ու ծովի ճամբով փոխագրուած ապրանք-
ները, եւ կեանքի վրայ, որ կրնայ տեղի ունենալ բազմազան
ձեւերով, օրինակի համար ապահովագրուողը կրնայ պայման
գնել որ ապահովագրուած գումարը՝ որոշ պայմանաժամէ մը
ետքը, ինք ստանայ, կամ իբր մահուան պարագային՝ իր ըն-
տանիքին վճարուի, եւայլն :

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԾՍՄ. ՕՐԷՆՔԸ. — Ծովային ապահո-
վագրութիւնը միայն նախատեսուած է Օսմանեան Առեւտրական
Օրինագրքին մէջ. հրգեհի դէմ եւ կեանքի վրայ ապահովագ-
րութեանց մասին օրինական արամագրութիւններ չկան : Եթէ
անհամաձայնութիւն ծագի, ապահովագրական մուրհակը
միայն կրնայ ծառայել իբր հիմ այդ մասին արուելիք դա-
տական վճիռներուն, դէթ իր այն արամագրութիւններով, ո-
րոնք անհամաձայն չեն Օսմանեան օրէնագրութեան ընդհանուր
սկզբունքներուն :

Աւելորդ չէ ուրեմն ամփոփել հոս քանի մը ընդհանուր
կանոններ, որոնք կը գանուին գրեթէ բոլոր ապահովագրական
մուրհակներուն մէջ :

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՈՂԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Եթէ երբեք
ապահովագրուողը, վտանգին հաւանականութիւնը նուազեց-
նելու կամ անոր առարկան փոխելու նպատակու, կեղծ յայ-
տարարութիւն մը ընէ կամ բան մը ծածկէ, ապահովագրու-
թիւնը կրնայ չեղեալ նկատուիլ : Պէտք է ուրեմն ճշգրիտ տե-
ղեկութիւններ տաք այն առարկային վրայ զոր կ'ուղէք ապա-
հովագրել, յայտնելով թէ ձե՞ր հաշուոյն թէ ուրիշի հաշուոյն
կը գործէք :

Ապահովագրուողը պէտք է փութայ ապահովագրիւնը վճա-
րելու, որովհետեւ ընդհանրապէս ընդունուած պայման մըն է
թէ հրգեհի դէմ եւ կեանքի վրայ ապահովագրութեան պարա-
գային, ապահովագնին անվճար մնացած ըլլալը կրնայ չեղեալ
նկատել տալ պայմանագիրը :

Երբեմն կրնայ պատահիլ որ ապահովագրութեան պայմա-
նաժամը չաւարտած վճանգը կրնայ ծանրանալ, ինչպէս, օ-

ըինակի համար, երբ չորս կողմը բաց ամեն մը քով փայտէ
տուն մը շինուի: Ապահովագրութեան պէտք է անմիջապէս ծա-
նուցանէ այս պարագան ապահովագրողին, եւ վտանգին այս
ծանրացման հետեւանքը կ'ըլլայ ապահովագնին ալ յաւելումը:

Երբ արկած մը պատահի, ապահովագրութեան պարտքն է
նախ իր ձեռքէն եկած բոլոր միջոցները ի գործ դնել անոր
ծաւալումը արգիլելու համար: Արկածէն ետքը, իր պարտքն է
առանց չափազանցութեան, ճշգրիտ կերպով իր կրած վնասը
յայտնել:


ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Ապահովագ-
րողին գլխաւոր պարտականութիւնն է հատուցանել ապահո-
վագրութեան կրած վնասը: Կեանքի ապահովագրութեան մէջ,
ճշգուած գումարը վնասին կատարելապէս համարժէք կը նկա-
տուի եւ ամբողջապէս կը վճարուի: Իսկ հրդեհի դէմ եւ ծո-
վային ապահովագրութեանց մէջ, արկածէն ետքը, հարկ է
դնանաւել տեղի ունեցած վնասը, որովհետեւ ապահովագրու-
թեան մուրհակին մէջ ճշգուած գումարը չի վճարուիր ամբող-
ջապէս, եթէ ապացուցուի թէ ապահովագրուած առարկան
նուազ արժէք ունէր վնասը պատահած միջոցին: Հետեւաբար
խոհմութիւն է միշտ ապահովագրել առարկաները իրենց բուն
արժէքով, եւ ո՛չ աւելի:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ. — Երբ ապահովագրութիւն մը
պիտի ընել տաք, առաջին բանը որուն պէտք է խորհիք, պա-
տուաւորութիւնն է այն ընկերութեան որուն հետ պիտի գոր-
ծէք: Եւ սակայն, — մէկ կողմ թողլով կեանքի ապահովագ-
րութիւնը ուր ընկերութեան ներկայացուցիչը շատ աննշան դեր
մը ունի, — հրդեհի եւ ծովային ապահովագրութեանց մէջ
շատ կարեւոր է ընկերութեան գործակալին պատուաւորու-
թիւնը: Հետեւաբար պէտք է ջանաք ընտրել անանկ գործա-
կալներ, որոնց բարոյականին վրայ ապահով ըլլաք, որովհե-
տեւ անտեղի գծուարութիւններ յարուցանող բծախնդիր գոր-
ծակալ մը միշտ վտանգաւոր է, որքան ալ մեծ ըլլայ իր ներ-
կայացուցած ընկերութեան վարկը:

Երբ կեանքի վրայ ապահովագրութիւն մը պիտի ընէք,
քննեցէ՛ք մայրաքաղաքիս մէջ կեանքի վրայ գործ ընող ապա-

հովազրական ընկերութիւնները, անոնց կազմակերպութիւնը, անոնց դրամագլուխին գործածման եղանակը, եւ այլն. յաճախ ընկերութեան մը հնութիւնը իր բարւոք վարչութիւնը հաստատող պարագայ մըն է: Ընկերութիւնը ընտրելէ ետքը, որոշեցէ՛ք թէ կեանքի ապահովագրութեանց համար կիրարկուած զանազան եղանակներէն ո՞րը ամէնէն աւելի կը յարմարի ձեր ընկերական դիրքին, ձեր տարիքին, եւ նիւթական միջոցներուն: Եթէ կ'ուզէք այդ մասին աւելի ճիշդ եւ որոշ գաղափար մը կազմել, ղիմեցէ՛ք ապահովագրական խնդիրները լաւ ուսումնասիրած ձեռնհաս անձի մը. ի հարկին վարձք մըն ալ վճարեցէ՛ք անոր եւ լաւ մը բացատրել տուէք ամէն կէտերը: Այս կերպով, երբ ներկայանաք ապահովագրողին, աւելի գիտակցութեամբ պիտի կրնաք ճշդիւ ձեր ապահովագրութեան պայմանները, եւ պիտի ճանչնաք թէ ի՞նչ պարտքեր կը ստանձնէք, ի՞նչ իրաւունքներու փոխարէն:

Եւ երբ ապահովագրութիւնը կատարէք, կէտ առ կէտ գործադրեցէ՛ք ապահովագրական մուրհակին ձեր վրայ դրած պարտքերը. այդ կերպով միայն պիտի կրնաք օր մը, դուք կամ ձեր ժառանգորդները, ձեր իրաւունքներուն համար սլ խստապահանջ ըլլալ ապահովագրողին հանդէպ:



ԸՆՏԱՆԻՔԻՆ ՀԱՄԱՐ



ՆՈՐԱԾԻՆՆԵՐՈՒ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

Մանուկը, ծնած վայրկեանէն, մանրամասն եւ ուշադիր խնամքներու պէտք ունի, որոնք մեծ անձնութիւնի եւ յարատեւ արթնութիւն կը պահանջեն: Նորածինը աշխարհք կու գայ անկատար, անկարող, միշտ խնամակալի մը կարօտ իր ամէն պիտոյքներուն համար, եւ այդ խնամքներէն կախում ունի իր ֆիզիզական եւ բարոյական կեանքը ապագային մէջ: Որքա՞ն փափուկ է ուրեմն մօր մը պաշտօնը, զոր շատեր օտարներու կը յանձնեն, տգէտներու, անօրտններու շատ անգամ, եւ որուն հետեւանքը կ'ըլլայ մանկան թշուառութիւնը իր մարմնին ու մտքին առողջական վիճակին խանգարումովը, որ երբեմն կը տեւէ բոլոր կեանքին մէջ:

Ահա՛ այս չարիքներուն դարման մը տանելու փափաքով հոս կ'ուզենք ամփոփել մանկատաժութեան մէկ քանի էական պայմանները:

ՄԱՆԿԻՒՆ ԱՐԳՈՒՋԱՐԳԸ

ԼՈԳԱՆՔ. — Ամէն առտու պէտք է տղան 30—35 աստիճան տաք ջուրը մտցնել տաշտի մը մէջ, շէն 4 բոպէ միայն, եւ ոտայի ճերմակ աճառով աղէկ մը լուալ: Զուրէն հանուելուն պէս՝ պէտք է ֆանէլայի մէջ փաթթել, աղէկ մը չորցնել, եւ շուտ մը հազուեցնել:

ՊԷՏԲԵՐԸ. — Տղան միշտ կ'ազատտի իր բնական պէտքերուն պատճառաւ: Հետեւարար պէտք է անկողինը թեփով լեցուած ըլլայ, որպէս զի ստէպ թեփը փոխուի: Սակայն փորձով հաստատուած բան մըն է որ մանուկը քունին մէջ չ'աղ-

տառեր, հետեւարար արթուն մայր մը՝ որ շարունակ իր զտ-
կին վրայ կը հակէ, պէտք է, տղան արթննալուն պէս, անոր
թեւերը քակէ, հանէ զայն անկողնէն եւ տակը ամանով ծակ
անկողնի մը վրայ դնէ: Այսպէսով կանոնաւորութեան կը
վարժեցնէ զայն, եւ շատ մը աղտեղութեանց ու դժուարու-
թեանց առաջքը կ'առնէ:

ՄԱՔՐՈՒԹԻՒՆ. — Տղուն առտուան լողանքէն զատ, պէտք
է քսանըչորս ժամուան մէջ, շէն 4 անգամ մաքրել անոր ծնուն-
դական անդամները ջուրին մէջ թաթխուած բարակ լաթով մը
կամ մաքուր բամբակի կտորով մը զոր պէտք է նետել մէկ
անգամ գործածելէ յետոյ: Երբեք սպունդ գործածելու չէ, որով-
հետեւ քանի մը անգամ գործածուած բան մը երբեք չի կրնար
շատ մաքուր ըլլալ: Տղուն մարմնին բոլոր մասերն ալ, աչքերը,
ոունգերը, ականջները պէտք է մասնաւոր խնամով մաքրել պօ-
ռիֆի ջուրով: Հարկ եղած ատեն գլխուն մաշկն ալ աճառով
մաքրելու է, որովհետեւ աղտերը հոն ժողվուելով մորթային
հիւանդութեանց պատճառ կ'ըլլան: Լուացքէն յետոյ մարմնին
բոլոր ծալքերը չորցնելու համար փոշի ցաննելու է, poudre
d'amidon կամ poudre de riz, եւ կամ poudre lycopode որ
լաւագոյնն է, բայց ճերմակեղէնները կը դեղնեցնէ:

ԶԳԵՍ. — Մեր մէջ, սովորութիւն է տղան փաթթել,
պլորել, կաշկանդել շատ մը լաթերու մէջ, ինչ որ կատարե-
լապէս հակառակ է մարմնին առողջապահութեան: Այս մասին
շատ անգամ գրուած, բայց կարեւորութիւն տրուած չէ, ո-
րովհետեւ մեր չգիտցած բաները մնալի ընդհանրապէս գէշ կ'ե-
րեւան:

ԽԱՆՁԱՐՈՒՐ. — Տղուն խանձարուրը պէտք է բաղկանայ
հետեւեալ մասերէն. կակուղ կսաւե կամ քարակ պաքիսքե
շապիկ մը, ֆանեղայե կամ քրիֆոյե ֆորաւակիկ (եէլէկ) մը,
քիֆէե ֆորաւակիկ մը վրայէն, կսաւե շոր մը, սակը քամ-
պակե ֆառակուսի շաք մը, քուրդե խորձուձ (խուցախ
պօխնասի) մը: Ետպիկը քոթանակին թեւերուն մէջ անցընե-
լով, ամէնէն առաջ այդ երկուքը մէկէն պէտք է հազցնել, անոր
վրայէն քիֆէ քոթանակը հազցնել, որուն թեւերը աւելի լայն
ըլլալու են եւ երեքը մէկտեղ իրարու վրայ բերելով կոճկելու

է. Շորը եւ լաթը պէտք է ոտքերէն մինչեւ անութները ելլին, բազուկները դուրս ձգելով: Սրունգներն ալ պէտք է իրարմէ զատել, շորին մէկ մասը երկուքին մէջ դնելով: Յետոյ ծալլելու է խորձունձը ոտքերուն վրայէն դէպ ի վեր, եւ երկուքովերէն իրարու վրայ բերելու է:

ՄԱՆԿԻԿԻՆ ԲՈՒՆԸ ԵՒ ԶԱՐԹՈՒՄԸ

Մանկիկը իր մօրը կամ ստնաուին անկողինը պէտք չէ պառկի: պէտք է օրորոց մը ունենայ սենեակի մը մէջ, որ առողջապահական օրէնքներու համապատասխան է:

ՕՐՈՐՈՑ . — Պէտք է օրորոցը խորունկ ըլլայ, որպէս զի տղան վար չիցնայ, եւ բարձր ոտքերու վրայ կենայ, որպէս զի կատուն կամ շունը չմօտենան անոր, եւ օդի յորձանքներու ենթակայ չըլլայ: Բարակ շղարչէ վարագոյր մը պէտք է ծածկել օրորոցին վրայ, որպէս զի տղան մաքուր օդ չնչէ միշտ: Պէտք է օրորոցը կարելի եղածին չափ լոյս տեղ դնել, եւ սենեակին օդը փոխել մեղմօրէն:

Օրորոցին մէջ դնելու է երկու անկողին, վրան մամլաթ (մուշամպա) մը կամ թաղիք (ֆէշե) մը, եւ անոր վրայ սաւան մը: Բարձին մէջ աղէկ կ'ըլլայ վարսակի կճեպ մը կամ ձիու մազ լեցնել:

ՍԵՆԵԱԿ . — Սենեակին մէջ շատ կարասի դնելու չէ: Սենեակը ոչ թէ կրակարանով (մանկալ) այլ ջերմոցով (զօպա) տաքցնելու է, մէջը միայն փայտ վառելով: Սենեակին ջերմութիւնը ձմեռը 18—20 աստիճանը անցնելու չէ, ամառն ալ 18—25, եւ ջանայու է այս բարեխառնութիւնը միշտ միօրինակ պահել:

ԲՈՒՆ . — Տղան պէտք է իր անկողնին մէջ մէյ մը մէկ քովին, մէյ մը միւս քովին պառկեցնել: Կաթ ուտելէն ետքը եթէ կռնակի վրայ պառկի ու փսխէ, ետ եկած կաթը կրնայ մօլոր երթալ եւ զինքը խեղդել: Քնացնելու համար մանուկը օրելու չէ, որովհետեւ կը վարժուի, եւ շարունակ կ'ուզէ: Թող տալու է որ ինքնիրեն քնանայ: Պէտք չէ նաեւ ոչ կատարեալ լուսութիւն պահել, ոչ ալ ստասիկ աղմուկ հանել սենեակին մէջ: Պէտք է ըստ սովորականին խօսիլ, քալել, դուռ-

ները , պատուհանները բանալ զօցել , որպէս զի վարժուի այդ տեսակ շշուկներու մէջ անվախ քնանալու : Ազէկ կ'ըլլայ նաեւ տղան շատ կանուխ պառկեցնել , եւ առտուն շատ կանուխ հանել :

Տղան կաթ ուտելէն ետքը կը քնանայ ընդհանրապէս , եւ նորէն կաթ ուտելու համար կ'արթննայ : Եթէ ուտելու որոշեալ ժամուն չարթննայ , պէտք չէ արթնցնել . թող տալու է որ ինքնիրեն արթննայ : Սակայն երբ մանկիկը քանի մը ամսուրըլլայ ալ կը սկսի աւելի պակաս քնանալ . ոչ գիրկը առնելու է , ոչ ալ երգերով քնացնել աշխատելու է : Պէտք է թողուլ օրօրօցին մէջ եթէ ժամանակէն առաջ արթննայ . շատ անգամ նորէն կը քնանայ ինքնիրեն , եթէ անհանգիստ չէ կամ բանի մը պէտք չունի : Չմեօր շատ անգամ մտելէն կ'արթննայ . պէտք է ոտքերը ազէկ փաթթել տաքցնելու համար :

Եթէ տղան պոռայ , լոյ , պատճառ մը ունի . պէտք է փնտռել այդ պատճառը :

ՄԱՆԿԻԿԻՆ ՊՏՈՅՏՆԵՐԸ

ԴՈՒՐՍ ՀԱՆՅԼ . — Ամառը տղան կարելի է դուրս հանել 8 կամ 10 օրուան ըլլալէ ետքը , տաքէն պատասպարելով առտուն կամ իրիկունը . իսկ ձմեռը մէկ ամսուր ըլլալէն ետքը , կէս օրին : Այս պատճանները անհրաժեշտ են ազատ շնչել տալու համար տղուն :

Առաջին մանկութեան մէջ , բնական է որ սլառկած դիրքով կը պատի տղան , իսկ յետոյ զրկուած . ջանալու է սակայն մէյ մը մէկ կողմէն , մէյ մը միւս կողմէն զրկել , որպէս զի մարմինը չծօի : Շատ բժիշկներ պզտիկ կառքերը վնասակար կը նկատեն տղուն վեց ամիսէն առաջ :

ՔԱԼՅԼ . — Տղուն լաթերը պէտք է բաւական լայն ըլլան , որպէս զի ուզած շարժումը ընէ , եւ ուզած առարկաները կարենայ բռնել : Տարու մը ըլլալէն ետքը գետինը դնելու է գորգի մը վրայ , եւ թողուլ է որ ուզածին պէս շարժի , անշուշտ վրան հսկելով : Քալիլու կառքերը , անիւները , ամէնքն ալ վնասակար են . պէտք է տղան ինքնիրեն ոտք ելլէ :

ՊԱՏՈՒՍԱՍՏՈՒՄ

Տղան ծնելէն 3—4 ամիս ետքը պէտք է պատուաստել տալ . աւելի առաջ կարելի է պատուաստել , եթէ ծաղկախաթ համաճարակ կայ . 10 տարին անգամ մը պէտք է կրկնել պատուաստը ինչ ամսու մէջ ալ ըլլայ :

Գ Ի Ն Յ ՈՒ Մ

Անշուշտ աւելորդ է ըսել թէ դիեցման լաւագոյն կերպն է քնակարանը , այսինքն մօրը կաթով դիեցումը :

Գրեթէ ամէն մայր , որ հիւանդ չէ , կրնայ իր զաւկին կաթ տալ , յանձն առնելով փոքրիկ զոհողութիւններ , եթէ խորհի որ իր զաւկին ամէնէն օգտակար սնունդը , անոր առողջութեան պիտաւոր պայմանը՝ իր կաթն է . Սակայն կաթնատու մայրը պէտք է զգուշութիւններ ունենայ , որոնց զանցս ութնէն կրնան մեասներ առաջ գալ իր մանկիկին համար , եւ զորս պիտի բացատրենք համառօտ կերպով .

1. Կաթ տուող կին մը պէտք չէ սեղմէ իր քոռակն ստինքը ճնշելու չափ :
2. Դիեցումէն ետքը պէտք է ստինքը լուալ , չորցնել եւ բարակ լաթով մը ծածկել :
3. Կաթ տալէն առաջ հարկ է ստինքը լուալ պոռիֆեջուրով :
4. Կաթնատու կինը պէտք է կանոնաւոր եւ հանգարտ կեանք վարէ :
5. Ամէն օր մէկ երկու ժամ շրջագայելով օդ առնելու է :
6. Աշխատութիւնը չափաւորելու է որ չյոգնի :
7. Կանուխ պառկելու , եւ կարելի եղածին չափ գիշերը քիչ կաթ տալու է , որպէս զի աղէկ քնանայ :
8. Լոգանք ընելու է :
9. Դիւրամարս կերակուրներ ուտելու է , ընդհանրապէս միս եւ բանջարեղէն , որոնց հետ քիչ մը ջրախառն գինի , կամ գարեջուր խմելու է , որ կաթը կը շատցնէ կ'ըսեն . Իսկ ուրիշ ատեններ պարզ ջուր : Բնաւ սգելից ըմպելիք , եւ կարելի եղածին չափ քիչ թէյ , սուրճ , եւայլն :

ԿԱԹՈՒՆ ԶԱՓԸ. — Պէտք է շափով կաթ տալ տղուն կանոնաւորապէս. այս կերպով տղան ոչ անօթի մնալով կը պոռայ, ոչ ալ ստէպ ուտելով անմարսողութիւն կ'ունենայ:

Այս կանոնաւորութիւնը անմիջապէս չի գործադրուիր, սակայն կամայ կամայ պէտք է տղան վարժեցնել հետեւեալ կանոնին.

Առաջին մէկ քանի ամիսները պէտք է 24 ժամուան մէջ 8 անգամ կաթ տալ. ցորեկը 2 կամ 3 ժամը անգամ մը, իսկ գիշերը 2 անգամ միայն. 4 ամսու ըլլալէն ետքը 6 կամ 7 անգամ կը բաւէ. 6 ամսու ըլլալէն ետքը 6 անգամի պէտք է իջեցնել. Երկրորդ վեցամսեային մէջ գիշերը 1 անգամ եւ 3 կամ 4 անգամ ցորեկը, եւ մէկ անգամ ալ ապուր մը:

Դիեցումը պէտք է տեւէ ամէն անգամ 15էն 20 վայրկեան, 7էն 10 վայրկեան իւրաքանչիւր ստինքէն:

ԳԻՆՏՈՒՄԷՆ ԵՏՔԸ. — Չափաւոր ուտող տղան գոհ կ'երեւայ, չի պոռար եւ կը քնանայ. Եթէ կաթը շատ կերած է ետ կու գայ, ինչ որ անվնաս բան մըն է, բայց ասիկա պէտք չէ շփոթել փախելու հետ. Կլթիկը (ըշգըրըգ) գէշ նշան մը չէ, ընդհակառակը կ'ըսեն թէ առողջութեան նշան է:

ԿՈՎԻ ԿԱԹՈՎ ԳԻՆՏՈՒՄ

Երբ մայրը բացառիկ պատճառներով չի կրնար անուցանել իր զաւակը, ստնտուի մը յանձնելէ աւելի աղէկ է կովի կաթով անուցանել զայն, աղէկ հսկելով թէ՛ ամաններու մաքրութեանը, թէ՛ կաթին տեսակին, եւ ուշադրութեամբ ի գործ գնելով հետեւեալ զգուշութիւնները.

ԿԱԹԸ ՊԱՀԵՆՈՒ ԵՂԱՆԱԿԸ. — Արուեստական դիեցումը կրնայ կատարելապէս օգտակար ըլլալ տղուն, եթէ կաթը աղէկ պահուի, որովհետեւ ամէն վտանգ կրնայ առաջ գալ կաթին աւրուելէն:

ԿԱԹԸ ԱՄՂԱՑՆԵԼ. — Կաթը անաղարտ պահելու միակ միջոցը զայն ամլացնելն (stériliser) է, որ շատ մը միջոցներով կը կատարուի, սակայն ամէնէն գիւրին եւ գործնական կերպերը հետեւեալներն են.

1. Կաթը եփ հանել, եւ բերանը անմիջապէս փակել:

2. Մեծ ամանի մը մէջ գնել մէկ քանի շիշ կաթ բերան-
 նին շաւքիկէ խիցով մը փակուած եւ ամանին մէջ ջուր լեց-
 նել մինչեւ շիշերուն կաթ պարունակած տեղը . յետոյ սաստիկ
 կրակի մը վրայ եռացնել զայն մինչեւ երեք քառորդ , եւ վար
 առնելով թողուլ որ պողի : Ասոնց համար մասնաւոր գործիք-
 ներ կան պատրաստ շիշերով մէկ տեղ , որոնք stérilisateur
 կը կոչուին :

ՋՈՒՐԻՆ ՉԱՓԸ . — Կովին կաթը զօրաւոր ըլլալով , կարելի
 չէ զայն անխառն տալ նորածնին , ուստի պէտք է անոր մէջ
 եռացած ջուր խառնել հետեւեալ կերպով .

Առաջին տասնըհինգ օրերուն՝ 1 մաս կաթի մէջ գնե-
 լու է 3 մաս ջուր : Անկէ մինչեւ երկու ամիս՝ կէսը կաթ , կէ-
 սը ջուր : Ետոյ 3 մասը կաթ , 1 մասը ջուր : Երբ վեց ամսու
 ըլլայ , առանց ջուրի :

ԾԾԱԿ . — Ծծակով (պիպոռն) տրուած կաթը միեւնոյն օ-
 րէնքներով պէտք է ջամբել եւ նոյնչափ անգամ , որքան մօրը
 կաթը . ջանալու է միայն որ 37 աստիճան տաքութենէն վեր
 կամ վար չըլլայ , եւ առանց խողովակի ծծակ մը պէտք է ընտ-
 րել զոր աղէկ մը լուալու է ամէն անգամ տաք ջուրով :

ԿԱԹԻՆ ՉԱՓԸ . — Ծծակով տրուելիք կաթին չափն է հե-
 տեւեալը , որուն պէտք է կարելի եղածին չափ համաձայնիլ :

Առաջին օրը 3 կուամ ,
 երկրորդ օրը 15 կուամ ,
 երրորդ օրը 40 կուամ ,
 Չորրորդ եւ Հինգերորդ օրը 55 կուամ ,
 Առաջին ամիսը ամէն անգամ. 60 կուամ 600 կուամ 24 ժամուան մէջ

Երկրորդ, երրորդ	»	»	70	»	700	«	»
Չորրորդ, հինգերորդ	»	»	100	»	800	»	»
Վեցերորդ	»	»	120	»	900	»	»
Եօթներորդ	»	»	150	»	1000	»	»

Մինչեւ վեցերորդ ամիսը տղան պէտք չէ կաթէն զատ որ
 եւ է բան մը ուտէ , բայց վեցերորդ ամիսէն ետքը հարկ է ի-
 րեն թեթեւ ուտելիքներ տալ որպէս զի քիչ քիչ կաթէն կըրտ-
 րելու պատրաստուի : Իրեն տրուելիք ապուրներն են .

Թարխոֆա կաթով եւ ջրով եփած : Յօրենի ալիւր կաթով եւ ջուրով եփած : Կարմրած հաց կաթով կամ միսի ջուրով եփած : Արարոյ կաթով եփած : Ֆառիկ շաքիւ , ֆուլ սը պիեկեւ , եւ այլն : Պէտք է այս ուտելիքները կարելի եղածին չափ թեթեւ ըլլան , եւ մէջի հատիկները հալած :

ՏՂԱՆ ԿԱԹՎՆ ԿՏՐԵԼ

Տղան կաթէն կարելու համար եօթներորդ ամսուան մէջ՝ առտուան մէկ ժուժ կաթին տեղ տալու է երկու զգալ վերոյիլեալ ապուրներէն , միեւնոյն բանը նաեւ իրիկունը :

Ութերորդ եւ իններորդ ամսուան մէջ՝ հացով եփած արգանակ մը տալ ցորեկը . կարելի է վրան հաւկիթ մըն ալ կոտրել :

Տասներորդ ամսուն , գիշերը ծծակը կտրել եւ զգալով կաթ տալ :

Տասնմէկերորդ եւ տասերկուերորդ ամսուն՝ օրը երեք ապուր տալ :

Երբ մէկ տարու ըլլայ , միսի ջուրի կամ հաւկիթի գեղնուցի մէջ եփած հաց :

Տասնըջորսերորդ ամսուն՝ քիչ մը միս տալ :

Տասնըութերորդ ամսուն՝ կաթէն կտրել : Մինչեւ երկու տարու միսը եւ բանջարեղէնը զգուշութեամբ տալ :

Երրորդ տարին երբ մտնէ ա՛լ կրնայ մասնակցիլ մեծերու կերակուրներուն , պայմանաւ որ պարզ եւ սննդաւոր ըլլան անոնք :



Մ Ե Ր Խ Ո Շ Ա Ն Ո Ց Ը

Հոս կը դնենք մեր սովորական կերակուրներուն պատրաստութեան եղանակին վրայ կարգ մը տեղեկութիւններ , որոնք կրնան օգտակար ըլլալ մեր ընտանիքներուն :

Մ Ի Ս Ի Ն Բ Ո Վ Դ Բ Ո Ւ Ն Լ Ի Բ Ը Ա Ռ Ն Ի Թ Ի Բ Ի Բ Ն Ե Բ

Ճզմուած բարաքէս (բիւռե)

Պէտք է վեց հատ բաթաթէս ստիկել , կտոր կտոր ընել սա-

նին մէջ, եւ գաւաթ մը ջուր, դգալ մը կարագ դնելով կէս ժամու չափ խաշելու է չափաւոր կրակի վրայ. յետոյ փայտէ գգալով մը ճզմելու, նորէն կրակի վրայ դնելու է եւ կէս անուշի դգալ շաքար, կերածին չափ կարագ եւ կաթ աւելցնելով եփելու է մինչեւ որ ջուրը քաշէ:

Տապկած բարաթէս

Բաթաթէսները սակել, բարակ բարակ ջարդել, առատ կարագ այրելով մէջը տապկել, յետոյ իւզը քամել, աղել ու անմիջապէս սեղան բերել:

Բարաթէսի սիլմէ

Փոքրիկ բաթաթէսներ առնել, սակել, կամ մեծերը չորս կտոր ընելով աղջուրի մէջ ձգել, յետոյ կարագի մէջ նուռի պէս կարմրցնել. նոյն մեծութեամբ կարուած միսն ալ նուռի պէս կարմրցնելէ յետոյ իրար խառնել, տապակին մէջ մնացած կարագը վրան անցընել, քիչ մը ջուր, աղ, պղպեղ եւ քանի մը հաա ալ դափնիի (shoffin) տերեւ դնելով, քիչ կրակի վրայ եփել. քանի որ ջուրը քաշէ՝ պէտք է քիչ քիչ ջուր աւելցնել, սանին կախարիչը միշտ գոց պահելով:

Բարաթէսի կլորիկ

Բաթաթէսները խաշել, յետոյ վրայի մաշկը հանել, սանդին (հավան) մէջ ծեծել, պարզուած անցընել, մէկ օխայ ծեծուած բաթաթէսին վրայ երեք հաւկիթի դեղինը կտարել, եւ 10 արամ կարագ դնելով շաղուել ու գնդակի ձեւով կլորցնել. Ամանի մը մէջ հաւկիթին ճերմակը դարնել, փրփրեցնելով մէջը թաթխել, յետոյ կալէթայի փոշիի մէջ խոթելով այրած կարագի մէջ տապկել:

Խաւած բարաթէս

Քսան բաթաթէս սակել, ջարդել, սանին մէջ դնել, քիչ մըն ալ աղ, քաւորդի մը չափ խաշել, ջուրը թափել, յետոյ սանին խուփին վրայ քանի մը հաա կրակ դնելով 10 վայրկեանի չափ եփել:

ՄԻՍՈՎ, ՌԱՆՋԱՐԵՂԷՆ (ՊԱՍԹԷ)

Կանկառ (էնկինար)

Կանկառը ստեղծել, վրայի կարծր թերթերը եւ միջուկը հանելով, չորս կտոր ընել, լեմոն ջուրի մէջ նետել, յետոյ միսը կտոր կտոր ընելով իր ճարպովը կարմրցնել՝ 10 կանկառի համար չորս հատ սոխ ջարդելով. յետոյ կանկառները վրան շարել, աղ պղպեղ դնել, եւ վրան միսի ջուր անցընելով վառ կրակի վրայ եփել. կէս եփ ըլլալէ ետքը ժամու մը շափ ալ մաղմաղ կրակի վրայ մեղմիկ եփել :

Այսպէս պէտք է եփել բոլոր բանջարեղէնները, միայն թէ զգու՛մին (խապախ), թարմ լուբիային (քազե ֆասուշեա), պատինճանին (քիթրիճան), շողգամին (շաշկամ) վրայ լոլիկի (թունարեա) ջուր կ'անցընեն, մինչդեռ կարոտին (խերեվիզ), շոմինին (սպաննախ), փրփրեմին (սեւիզօթ), բակլային եւ կանկառին չեն դնել :

Խառն բանջարեղէն (թիւրլիւ)

Ստեպղին, շողգամ, կարոտ, պրաս (քրասա) առնելու, ստեղծելու, լուալու եւ ամէնքն ալ դատ գատ խաշելէ ետքը, կանկառին համար եղածին պէս միսը պաարաստելու եւ անանկ վրան ձգելով առատ ու ճարպոտ մսի ջուր աւելցնելու է, ինչպէս նաեւ աղ, պղպեղ, ու վառ կրակի վրայ կէս եփ ըլլալէ ետքը մաղմաղի վրայ առնելու է, քանի ջուրը քաշէ, մէյ մէկ քիչ մսի ջուր աւելցնելով : Մսի ջուր չգտնուած ատեն կարելի է պարզ գաղջ ջուր աւելցնել :

Ասոր վրայ ոմանք միայն լեմոն կը քամեն, ոմանք ալ լեմոնը հաւկիթով կը խառնեն եւ մաղմաղի վրայ եփելով վրան կ'անցընեն :

Բարլինան սիլմէ

Երկար (ֆեւեր) պատինճանները լուալ, երկու մատ հաստութեամբ լայնքին կլոր կլոր ջարդել, վառ կրակի վրայ իւղով աղէկ մը կարմրցնել. անգին՝ սանի մը մէջ կարմրած միսերը դնել, առատ լոլիկի ջուր լեցնել վրան, պատինճանները շարել, աղ պղպեղ ցանել, քիչ մըն ալ միսի ջուր, եւ սա-

նին բերանը կէս բաց ձգելով մազմազի վրայ եփել, մինչեւ որ ջուրը քաշէ եւ ինք իր իւղովն ալ քիչ մը պճլտայ :

Պատինճանները

Պատինճանները լուալ, երկայնութեանը կտրել կէս մաս հաստութեամբ, իւղով կարմրցնել, նոյնպէս իւղի մէջ բարակ ծեծուած միսը բարակ ջարդուած սոխով կարմրցնել, սանին մէջ կարգ մը միս կարգ մը պատինճան շարել, վրան լոլիկի ջուր անցնել, եւ մազմազ կրակի վրայ եփել :

Բ Ի Լ Ա Ի Ն Ե Բ

Պարսկական բիլալ

Բրինձը լուալու, մաքրելու եւ քամելու է : Բրինձը սանին մէջտեղ դնելու է առանց երեսը տափակցնելու, մէջտեղը փայտէ դգալ մը խօթելու է, եւ սանը չափաւոր կրակի վրայ դնելու : միտի կամ հաւու կամ եթէ չկայ, պարզ ջուրը եփ հանելով սանին մէկ քովէն լեցնելու է առանց բրինձը տակնուվրայ ընելու, մինչեւ որ փայտէ դգալը մէկ քովին ծոխ : Այս է ջուրին չափը :

Ուրիշ չափ մըն ալ կայ. — Մէկ շերեփ (ֆեփչե) բրինձի՝ երկու շերեփ ջուր : Միայն թէ բրինձներու տեսակին համեմատ ջուրին չափն ալ քիչ շատ կ'աւելնայ կամ կը պակսի : հետեւաբար բիլալ եփողը պէտք է փորձով իր բրինձին որչափ ջուր վերցնելը հասկնայ :

Յետոյ սանին բերանը աղէկ մը գոցելու եւ թող տալու է որ եփի, մինչեւ որ ջուրը քաշելու մօտենալով բիլալին վրայ սկսին ծակափքներ գոյանալ. այն առին մազմազ կրակի վրայ դնելու եւ ջուրը հոն քաշել տալու է :

Այդ միջոցին իւղը այրելու եւ տաք տաք բրինձին վրայ անցընելու է. վրան քթանէ մաքուր լաթ մը ծածկելու եւ սանը փակելու է իր կափարիչովը. Տ վայրկեանէն դգալին կոթովը շուրջէն դէպի կեղրոնը երեք անգամ խառնելու է, նորէն գոցելու եւ երեք չորս վայրկեան ետքը այս անգամ փայտէ դգալով աղէկ մը խառնելու եւ մազ դգալով (ֆեալկիտ գաշըգ) հատիկ հատիկ ընելու է :

Պուլկարական բիլաւ

Գառնուկին թոքերը աղէկ մը մանրելու եւ անոնց երեքին մէկ ծանրութեամբ բրինձ լուալու է . յետոյ քիչ մը մազի չափ բարակ սոխ , կոտեմ (քերե օթու) , աղ , պղպեղ իրարու խառնելով , ու գառնուկին շապիկը բանալով մէջը լեցնելու է , քիչ մը իւզ , քիչ մըն ալ ջուր աւելցնելով , չորս կողմէն ժողվելու , բարակ դերձանով մը կապելու եւ փուռը զրկելու է :

Թռչունով բիլաւ

Պարզ ջուրով բիլաւ եփէ՛ առանց իւղի : Փոքրիկ թռչունները իւղով տապկէ , քիչ մը լոլիկի ջուրով եւ իւղով սանին մէջ 20 վայրկեանի չափ պճլտացուր , յետոյ թացանը (սաւցան) քամելով թռչունները բիլաւին մէջ խառնէ՛ , անդին թացանը եփէ՛ մինչեւ որ կէս մնայ , եւ բիլաւին վրայ անցո՛ւր :

ՏՈՒՄԱՆԵՐ

Սլականջի (սիսիս) Տոլմա

Կէսը խեփորով (գապուրֆ) , կէսը ստկուած երկու հարիւր հատ սլականջ առնել , խեփորներուն վրան մաքրել , լուալ , առանց իրարմէ զատելու բանալ , մէջի մազը կտրել , եւ վազած ջուրն ալ ամանի մը մէջ ժողվել :

Ամէն մէկ խեփորով սլականջի համար մէյ մէկ սոխ կտրել կլոր կլոր , եւ ձէթին մէջ կարմրցնել մինչեւ որ դեղնի , 120 տրամ բրինձ եւ միւս 100 հատ ստկուած , կտրտուած սլականջները մէջը դնելով մէկտեղ տապկել , յետոյ գինձ (ֆիշնիշ) , պիստակ (ֆլուսըիս) , աղ , պղպեղ , ազտագեղ , կոտեմ աւելցնելով խառնել ու վար առնել որ պաղի :

Ամէն մէկ սլականջի մէջ առածին չափ լեցնելու է այս խառնուրդէն , գոցելու է եւ քով քովի սանին մէջ շարելէ ետքը վրանին պնակ մը ու պնակին ալ վրայ մաքուր քար մը դնելու է : Յետոյ , սլականջներէն վազած ջուրը լեցնելու է վրան , մինչեւ որ սլականջներուն վրան գոցուի : Եթէ ջուրը չբաւէ , պարզ ջուր պէտք է աւելցնել : Անկէ ետքը , սանը փակելով պէտք է եփել չափաւոր կրակի վրայ :

Որքի տերեւով միսէ տոլմա

Շատ թարմ ու բարակ տերեւներ ընտրելով խաշել , յետոյ պաղ ջուրէ անցընել :

Միսին կակուղ տեղէն զատելով ջիղերը եւ մորթը հանել , բարակ ծեծել , աղ , պղպեղ եւ միսին մէկ չորրորդին չափ հացի միջուկ կամ խաշուած , ծեծուած բաթաթէս եւ կամ բրինձ աւելցնել , մէկ կամ եթէ հարկ ըլլայ՝ աւելի հաւկիթով թրել , մէկ խոշոր կաղինէն քիչ մը աւելի առնել եւ տերեւով փաթթել ու սանին տակ շարել , տերեւին ծայրերը տակի կողմը բերելով , չափաւոր կրակի վրայ եփել :

Ճիշդ տոյսպէս կ'ըլլայ նաեւ դդումի եւ պատինճանի տոլման : Միայն թէ պէտք է կանխաւ դդումին կամ պատինճանին մէջը փորել եւ պատինճանին միջուկը խառնել բրինձին հետ՝ առանց հաւկիթի :

Որքի տերեւով եւ ձէրով տոլմա

Սոխը պէտք է շատ բարակ ու պզտիկ ջարդել եւ աղով ճզմել . անոր կէսին չափ բրինձ դնել , աղել , պղպեղել , բրինձին մէկ քառորդին չափ ազատպեղ եւ քիչ մըն ալ թարմ առանուխ (անակ) դնելով խառնել , յետոյ մէկ կաղինի չափ տերեւի մը մէջ դնել , փաթթել , քով քովի շարել միշտ տերեւին ծայրերը վար , տակն ու վրան տերեւ դնելով եւ աւելի վրան ալ պնակ մը ծածկելով քիչ կրակի վրայ եփել :

Տոլմաներու գլխաւոր պայմանն է կարելի եղածին չափ պզտիկ տերեւի մէջ , փաթթել եւ այնպէս՝ որ չտարտղնի :

ԲԱՍՔԻՆԵՐ

Լուբիայի բլափի

Լուբիան առջի իրիկուընէ լուալ , թրջել , հետեւեալ օրը կէս եփ ընել , ազատպեղը բարակ կտրել , մէկ կամ երկու սըխտոր ջարդել , ստեպղինն ալ կտրել ու սանի մը մէջ լեցնել , վրան աղ , պղպեղ , ձէթ եւ ճզմուած լոլիկի ջուր աւելցնել , պաքսիմատը ծեծելով վրան անցընել եւ շատ քիչ կրակի վրայ դնել մինչեւ որ եփի : Ասոր մէջ կարելի է նաեւ սլականջ աւելցնել :

Սլակահոցով լոյիկի բլաֆի

(Թօմարէսի միսիա բլաֆիսի)

Լոյիկները կէս հարիւրամէթր հաստութեամբ կլոր կլոր կտրել, ափսէի մը մէջ կարողաւ շարել, ամէն մէկ կտորին վրայ մէյ մէկ սլականջ բանալ, քիչ մը ձեծած սխտոր, ազատգեղ եւ լոյիկի ջուր լեցնել, նորէն լոյիկները, սլականջները եւ ազատգեղ շարել, ու անոնց վրայ ալ ձէթը լեցնել, պաքսիմաթի փոշի անցընել, տակը վրան կամաց կրակով եփել:

ՏԱՊԿԱՆԾՆԵՐ (Թավա)

Որ եւ է բան մը տապկելու համար կը գործածուին ձէթ, իւղ եւ միտին ջուրին վրայէն առնուած իւղը: Բան մը տապկելու գլխաւոր պայմաններէն մէկն է տապակը շատ չխճողել, զոր օրինակ 10 ձուկ պարունակելու չափ մեծ տապակի մը մէջ 7 ձուկ միայն դնելու է որպէս զի աղէկ տապկուի: Յետոյ իւղը կամ ձէթը աղէկ մը այրելու է: Նախ կրակը պէտք է չափաւոր ըլլայ, եւ յետոյ աւելնայ որպէս զի երեսը կարմրի:

Տապկած սլակահոց (Միսիա քավասը)

Սլականջները տապակը դնելէ քառորդ մը առաջ, մէջով դուրսով աղէկ մը ալիւրի մէջ թաթխելու, եւ լաթի մը վրայ շարելու է, տապակը դնելու միջոցին վրան քիչ մը օղի սրակելու եւ առատ իւղի կամ ձէթի մէջ մէկ քանի հատը մէկտեղ տապկելու է շարունակ տապակը թօթուելով, որպէս զի ուռին: Կարելի է նաեւ հաւկիթով ու ալիւրով խառն շոհի (ւաշեզ) մէջ թաթխել: Ծովէն ելած բաներ տապկելու համար փայտի կտորուանք գործածելու է փոխանակ ածուխի, որպէս զի ուռին եւ մէջերնին կակուղ մնայ:

Տապկած բոբ (ձիլէր քավասը)

Ոչխարին կամ գառնուկին թոքերը մեծ մատի հաստութեամբ երկայնութեանը ջարդել, աղ, պղպեղ ցանել, ալիւրը թաթխել, եւ կարագի մէջ երկու երեսն ալ Յական վայրկեան եփել, յետոյ ապուրի մը դգալ ալիւր, ափ մը մանրուած թարմ ափս, շերեփ մը միտի ջուր եւ շերեփ մը ճերմակ գինի դնել, եւ

խառնելով եփել մինչեւ որ թանձրանայ : Թոքերը մէկիկ մէկիկ պնակին մէջ շարել , թացանին վրայ տպուրի մը դգալ բարակ կարտուած ազատգեղ աւելցնել եւ խառնելով վրան անցընել :

Տապկած պասիննան (Բաթլինան քավասը)

Կլոր պատինճանները պէտք է կէս հարիւրամէթր հաստութեամբ երկայնութեանը կարտել , եւ վառ կրակի վրայ կարմրցնել :

ԿՍՍԿՍՐՍՆԵՐ (Սկարա)

Կասկարաները պէտք է եփել երկու մատ կայծ կրակի վրայ որուն տակը տաք մոխիր գանուի :

Ոսրէ եւ կսին (Սրիսիա վէ քարաֆ)

Ոսորէներուն մէյ մէկ խեփորը հանել , պաքսիմաթի փոշին ձէթով խառնել , բարակ ազատգեղ , աղ , պղպեղ զնել , ոսորէները զատ զատ կասկարային վրայ շարել , երբոր եփելն , անմիջապէս պատրաստուած թացանը վրան անցընել , եւ մինչեւ որ գեղնի եփել : Կերուած միջոցին վրան լեմոն անցընելու է :

Ոչխարի կողիկ (Բիւլպասը)

Նախ կողիկները ձեւի դի'ր , աւելորդ միտերը հանէ' , տապարին հակառակ կողմովը թեթեւ մը ծեծէ' առանց տապարը վերցնելու որ թել չտայ , ոսկորները մէկուկէս մատի չափ մաքրէ' , շուրջի թելերը սուր դանակով կտրէ' , աղ , պղպեղ ցանէ' , քիչ մը ձէթ քսէ' , տաք կասկարային վրայ դի'ր , մէկ կողմը 4 եւ միւս կողմը 3 վայրկեան թող եփի :

Պաֆսիմասով կողիկ

Կողիկները պատրաստելէ յետոյ հալած կարագի , յետոյ պաքսիմատի փոշիի մէջ թաթխել ու այնպէս կասկարային վրայ շարել իրարմէ հեռու . 4 ական վայրկեան եփել երկու կողմն ալ . կարելի է նաեւ ասոնք տապակի մէջ եփել 8 վայրկեան :

Ձուկերու կասկարա

Ձուկերը մաքրել, աղել, երկու ժամ ետքը վրանին ձէթ քսելով կասկարային վրայ եփել: Քիչ խաշած հաւկիթի մը դեղ- նուցին հետ ձէթ եւ լեմոն խառնել, բարակ ազատգեղ աւել- ցընելով ձուկին վրայ անցընել:

Թուղթի մէջ Արքայաձուկ (պարպունիա)

Օխա մը արքայաձուկի համար 5 պճեղ սխտոր ծեծել, 80 տրամ ճերմակ գինիով խառնել, շուրջը երկու մատ վեր դար- ձած հասա թուղթի մը մէջ ձէթ լեցնել ու թուղթին ամէն կողմը անով ծեփելով, մաքրուած, լուացուած ձուկերը մէջը շարել, եւ սխտորով գինին ալ վրան անցընել: Քիչ մը թարմ լոլիկ եփելով ջուրը քաշել աալ • երբ քիչ մը թանձրանայ, պա- ղեցնել եւ բարակ մը ձուկերուն վրայ քսել, վրան ալ բարակ ազատգեղ ու պաքսիմատի փոշի ցանել, եւ յետոյ թուղթով մէկտեղ ափսէի մը մէջ չափաւոր կրակի վրայ եփել:

Պասիննան պէյէնսի

Առանց միսը թել թել ընելու, կակուղ տեղէն քառակու- սի ձեւով կտրել, աղ, պղպեղ ցանել իր իւզովը տապկել, մէկ քանի հատ սոխ ջարդել լոլիկի ջուրով վրան անցընել, սանին բերանը աղէկ մը գոցելով նախ չափաւոր կրակի, յետոյ մաղմաղի վրայ եփել:

Պատինճանները վառ կրակի վրայ եփել, ձեռքով ստկել, ամանի մը մէջ լեցնել, փայտէ դգալով զարնել, աղ ցանել եւ քիչ մը կարագով մաղմաղին վրայ դնել • քառորդի մը չափ թող մնայ առանց եփ ելլելու, յետոյ միսը վրան անցընել:

Հ Ա Ի Կ Ի Թ Ն Ե Ր

Իւղի մէջ հաւկիթ

Խորունկ տապակի մը մէջ իւղը աղէկ մը այրէ', մէջը հաւկիթ մը կտարէ'. իւղը եթէ աղէկ այրած է անմիջապէս հաւկիթին ճերմակը կ'եփի եւ ուռելով դեղինին շուրջը կը պա- տէ. մէկ վայրկեանի մէջ ճերմկուցը նուռի պէս կը կարմրի: Անմիջապէս մաղ դգալով առնելու տաք պնակի մը դնելու է,

յետոյ ուրիշ մըն ալ, այսպէս կարգաւ մէկիկ մէկիկ եփելէ
ետքը, աղը պղպեղը կը ցանեն:

Պանիրով հաւկիթ

Ամանի մը մէջ ճարպոտ միսի ջուր գնել, մէջը ֆաշեր
կամ ֆաշկավաշ պանիրը բարակ բարակ ջարդել, կամ բուշուռ
պանիրին փտոր փտոր մէջը մանրել, վրան հաւկիթ կոտրել:

Հաւկիթի կալանօց (ձըլպըր)

Սոխը ջարդելով քիչ մը կարմրցուր, յետոյ քիչ մը ջուր
գնելով տասը վայրկեան եփէ՛, հաւկիթը զա՛րկ, աղ, պղպեղով
մէջը լեցո՛ւր խառնէ՛, մէկ եփ մը ելլելէ ետքը վար ա՛ն: Պնա-
կի մը տակը կարմրած հաց շարելով հաւկիթը վրան անցո՛ւր:
Ջուրը պէտք է հացերը թրջելու շափ առատ ըլլայ:

Լոլիկով հաւկիթ

Ամանի մը մէջ կէս ըրած ու հաստ միջուկը հանուած լո-
լիկները շարել, քիչ մը միսի ջուր եւ իւղ գնել, բերանը գո-
ցել կամաց կրակի վրայ իր շոգիովը եփել, յետոյ վար առնե-
լով ամէն մէկ լոլիկին մէջ՝ մէյ մէկ հաւկիթ կոտրել ու եփել,
վրան կամ ֆաշեր կամ հոշանճայի պանիրի տաշուկ անցընել:

ԿԼՈՐԻԿՆԵՐ (Քէօճքէ)

Հալէպ ֆէօճքէսի

Միսին ջիղերը հանէ՛, բարակ ծեծէ՛, խաշած բաթաթէսն
ալ ծեծէ՛, հաւկիթին դեղնուցին հետ շաղուէ՛, ծեծած միսին
խառնէ՛, ազատգեղ, կոսեմ, աղ, պղպեղով խառնէ՛, երկու
ժամ թող մնայ, յետոյ ձեռքիդ մէջ կլորցո՛ւր, ալիւրը թաթխէ
եւ իւղի մէջ տապկէ՛:

Սուճուզ ֆէօճքէսի

Մէկ օխտ բարակ ծեծուած միսի համար պէտք է 10 տրամ
աղ, 5 տրամ պղպեղ, 2 տրամ ծեծուած միսակ (գարանժիշ), 4
տրամ ծեծուած քեմոն (ֆիւլիոն), 10 տրամ սխաորի ջուրին,
որոնց պարզ ջուր խառնելու եւ անով շաղուելու է, 24 ժամ ձգե-
լու է, նորէն շաղուելու է. յետոյ ձեռքիդ մէջ տափակցնելով

երկու երեսնալ մէյ մէկ վայրկեան վառ կրակի վրայ եփելու է :

Եթէ երչիկ շինել ուզես , այս խառնուրդին մէջ պէտք է աւելցնես 50 տրամ հալած միսի իւղ , եւ անով շաղուելէ յետոյ մորթի մէջ լեցնես կարելի եղածին չափ սեղմ , եւ մէջ տեղերն ալ 100 տրամ խողի ճարպի կտորուանք եւ 6 հատ խոշոր պղպեղ թխմելով , առանց արեւի հովտա տեղ մը կախես :

Մ Ի Ս Ի Կ Ո Ն Կ Ո Ղ (Ժ Ե Լ Է)

Հինգ օխա եզի ուղք (իւնճիգ) , եւ անոր ոսկորները , եւ երկուք ու կէս օխա եզի կակուղ միսը աղել , խաշել եւ վերայի ճեփը առնել , 150ական տրամ պրնաս (քրասս) , ստեպղին եւ սոխ , քիչ մը կարոս , ազատգեղ աւելցնել եւ կամաց կրակի վրայ դնել մինչեւ որ միսը եփի , յետոյ ջուրը քամել եւ նորէն եփել մինչեւ որ մէկ երրորդ մասը մնայ մեծ սանի մը մէջ : Հետեւեալ օրը այդ սառած ջուրին երեսի մասը առնել , ամանին տակը մնացած մրուրը հանել , եւ նորէն մինչեւ որ թանձրանայ վառ կրակի վրայ եռացնել , ամանի մը մէջ լեցնել հարկ եղած ատեն գործածելու համար :

Մ Ա Կ Ս Ա Ռ Օ Ն Ի Ն Ե Ր

Ի Տ ա յ ա կ ի ա ն մ ա ֆ ա ո ճ ի

500 տրամ ջուրի մէջ 70 տրամ մաքառօնին խաշէ՛ . աղը , պղպեղը դի՛ր , եւ քիչ կրակի վրայ 20 վայրկեանի չափ եփէ , աղէկ մը քամէ մինչեւ որ բնաւ ջուր չմնայ , յետոյ սանին մէջ ա՛ռ 70 տրամ միսի ջուրը եւ խաշէ մինչեւ որ քաշէ՛ 20 տրամ քարւեհանս եւ 20 տրամ կոխըյեռ բարակ տաշէ , կէսը մաքառօնին վրայ լեցուր , եւ սանը թօթուելով խառնէ , մնացած 10 տրամ պանիրը կարագով դարձեալ վրան լեցուր ու նորէն թօթուէ : Եթէ պանիրը տաքութենէն բոլորովին հալած չէ , սանը նորէն կրակին վրայ դիր , եւ երկու ապուրի դգալ միսի ջուր աւելցուր . եթէ միսի ջուր չգանուի , պարզ ջուրով ալ կ'եփի :

Փ ու ո ի մ է ջ մ ա ֆ ա ո ճ ի

Մաքառօնին վերայիշեալ կերպով եփելէ ետքը , պաղեցո՛ւր ,

ափսէի մը մէջ մէկ դանակի կռնակի չափ կարագ քսէ՛, մաքառօնին բրդաձեւ լեցուր, վրան 20 տրամ քարմեհնան եւ կէս ապուրի դգալ ծեծած պաքսիմատ խառնելով անցուր, 10 տրամ կարագ այրելով նորէն վրան անցուր, կամաց կրակի վրայ դի՛ր, տափարակ բանով մը ծածկէ՛, եւ կափարիչին վրայ ալ կրակ լեցուր: Տասը վայրկեանէն վրան կը կարմրի:

Մանրամիսով (գըյմալը) մաքառօնի

Վերոյիշեալ կերպով մաքառօնին խաշել, քամել, եւ իւղով կամրցնել, յետոյ կարգ մը մաքառօնի կարգ մը տապկած մանրամիս շարել սանին մէջ, աղ, պղպեղ ցանել, բերանը դոցել, եւ ժամ մը մաղմաղի վրայ դնել:

Հ Ե Ր Ի Ս Ա. (Կէշկէկ)

Եզի միսին կակուղ տեղէն մաս մը կամ սագ մը (գազ) խաշել մէկ ժամու չափ, առջի իրիկուընէ թրջուած ցորեն դնել պէտք եղածին չափ եւ երկուքը մէկէն եռացնել, աղն ալ դնելով մինչեւ որ միսը թել թել ըլլայ, յետոյ թակով (թոզմազ) ծեծել մինչեւ որ միսը հալի, վրան այրած կարագ անցընել, կինամոն (թարչին) կամ պղպեղ ցանել:

Ա Ն Ո Ւ Շ Ե Ղ Է Ն Ն Ե Ր

Լեղի նուսով (Անը պասէմ) բռէմայի տապկած

Ամանի մը մէջ 5 հաւկիթ, 150 տրամ ալիւր, 320 տրամ կաթ դիր, եւ իրար խառնելով, խառնելով եփէ՛ մինչեւ որ թանձրանայ: Յետոյ 50 տրամ շաքարի փոշի, 15 տրամ ծեծուած լեղի նուշ, 6 հաւկիթի դեղնուց եւ քիչիկ մըն ալ աղ աւելցուր: Ափսէի մը մէջ կարագ քսէ, եւ այսպէս շինուած քոէման երկու մատի հաստութեամբ մէջը լեցուր: Պաղելէն ետքը ամէնքը մէկ ձեւով կտրտէ, վրան հաւկիթի ճերմկուց՝ յետոյ պաքսիմատի փոշի քսէ, եւ վառ կրակի վրայ տապկէ, ետքը իւղը քամէ, շաքարի փոշի ցանէ վրան, ու լաթի վրայ շարելով տաք տաք սեղան հանէ:

Քուէմա

Երեք քուէմայի գաւաթ լեցուն կաթ ա՛ռ, սանի մը մէջ ե-
ռացուր, վեց հաւկիթի դեղնուց եւ 12 տրամ շաքար դիր մէջը
եւ ազէկ մը իրար խառնէ, բարակ պարզունակէ (ֆեալկիր) մը
քամէ եւ վեց գաւաթի մէջ լեցուր, երեսի փրփուրը առ, գա-
ւաթները մինչեւ կէսը քիչ եռացող ջուրի մէջ կամաց կրակի
վրայ դիր, ամէնուն վրայ կրակով լեցուն կափարիչ մը ծածկէ,
քառորդ մը ետքը նայէ. եթէ եփած է, գաւաթները պաղ ջուրի
մէջ նստեցուր:

Եթէ կ՛ուզես որ վրան այրած շաքար (ֆառանեշ) կապէ,
փոքրիկ տապակի մը մէջ 4 տրամ շաքարի փոշի դգալով խառ-
նելով այրէ՝ մինչեւ որ շաղանակի գոյն ստանայ. յետոյ գա-
ւաթ մը ջուր լեցուր եւ խառնէ, հաւկիթին դեղնուցը կաթին
մէջ դրած ատենդ աս ալ մէկտեղ դիր:

Պիսփիւի

6 հաւկիթի դեղնուց ա՛ռ գատ ամանի մը մէջ, եւ ճեր-
մըկուցն ալ գատ ամանի մէջ, մէկ լեմոն մը բարակ տաշէ եւ
70 տրամ շաքարով հաւկիթին դեղնուցին մէջ լեցուր. մէկ
քանի վայրկեան փայտէ դգալով խառնէ, յետոյ ճերմկուցը
զարկ եւ դեղնուցին մէջ լեցուր. 35 տրամ ալիւրով երկու ա-
պուրի դգալ ծփացած (չաշգաննըշ) կաթ աւելցուր, թիթեղէ
կաղապարներու մէջ լեցուր, վրան բարակ շաքար ցանէ, փու-
ռը դրկէ:

Ծիրանով բասթա

200 տրամ ալիւրը 17 հաւկիթով կայծ կրակի (ֆեօզ) վրայ
երերցուր, 90 տրամ բրինձի ալիւր, 170 տրամ հալած կարագ
եւ 25 տրամ բալօղի (ֆիշնեշի գօնեազ) դիր, կամաց կամաց
խառնէ, ափսէ մը իւզոտէ, մէջը ալիւր ցանէ, եւ ամէնը մէջը
լեցուր, եփէ, պաղեցուր: Վրան ծիրանի անուշ անցուր, եւ
պիստակի ու նուշի կոտրտուք լեցուր:

Ֆիսնէ բիրիթի

Ազէկ տեսակ եւ քիչ մը օթեկ (պայաթ) հացը չափաւոր
կտրտելու է, վրայի կարմրած մասը գանակով հանելու է, եւ

իւղի մէջ կարմրցնելու է, իւղը քամելու, եւ սանի մը մէջ կարգ մը շարելու ու վրան բալի (ֆիշնէ) անուշ լեցնելու է մինչեւ չորս կարգ, յետոյ վրան միտի ջուր անցընելով բերանը գոցելու է որ մէկ երկու եփ գայ: Անկէ ետքը մաղմաղի վրայ ջուրը քաշել տալու է: Սեղան բերուած ատեն վրայի կտորները պնակին տակը շարելու է:

Մահալէպի

25 տրամ բրինձը մինչեւ որ հալի խաշելու է, ջուրը լաթէ մը անցընելով մէջը 75 տրամ բրինձի ալիւր հալեցնելու, մաղէ անցընելու եւ 600 տրամ զուտ կաթի խառնելով 120 տրամ ալ շաքար գնելու եւ չափաւոր կրակի վրայ շարունակ մէկ կողմէն խառնելով եփելու է՝ մինչեւ որ թանձրանայ եւ դգալին վրայ կենայ: Յետոյ վար առնելով քիչ մըն ալ խառնելու է:

Էֆմէֆ գաքայիֆ

Առատ ջուրի մէջ կֆմէֆ գաքայիֆին թրջելէ ետքը լաթի մը վրայ դնել որ ջուրը քաշէ: Յետոյ 300 տրամ շաքարը քիչ մը թանձրացնել, եւ տապակի մը մէջ կամաց կամաց գատայիֆներուն կերցընել, կրակը չափաւոր պէտք է ըլլայ, եւ տապակը շարունակ թօթուելու է որ աղէկ եփի: Յետոյ գաքայիֆին մէկ հատը պնակին մէջ կը դրուի, սերը վրան կը շարուի եւ միւս կտորը վրան կը գոցուի:

Թէլ-գասայիֆ

Օխա մը թեյ գաքայիֆին հաստ թելերը զատելով աղէկները լաթի մը վրայ տարածելու է որ խոնաւութիւնը քաշէ: Յետոյ ափսէի մը մէջ երեք մատ հաստութեամբ տեղաւորելու եւ ձեռքով երեսը հաւասարեցնելու է: 150 տրամ իւղը այրելու է եւ գաղջ վիճակի մէջ վրան անցընելով փուռը դրկելու է, անկէ ելածին պէս տաք տաք վրան 250 տրամ օշարակի չափ թանձր շաքար անցընելու է, վրան փակելու եւ 10 վայրկեան ետքը բանալով թող տալու է որ սլաղի: Յետոյ ուզած ձեւովը կը կտրես, եւ ամէն կտորին մէջը դանակով բանալով ծեծուած ու շաքարով շաղուած նուշ, պիստակ, սեր կամ սերկուիլի դոնդող կը դնես:

Թ Ա Յ Ա Ն Ն Ն Ե Բ (Սալցա)

Իւղով քացան

150 տրամ կարագ հալեցնել , վար առնել , առածին չափ չափ ալիւր աւելցնել վառ կրակի վրայ դնել , մինչեւ որ ալիւրը եւ իւղը թանձրանան , եւ խառնել մինչեւ որ գունաւորուի , ու մազմազի վրայ առնելով եփել մինչեւ որ դեղնի :

Ձէթով քացան

Երեք լեմոնի ջուր առնել ամանի մը մէջ , աղ , պղպեղ , մանրուած ազատգեղ , եւ ձէթ դնել , խառնել եւ ձուկի կամ որսի կասկարաներուն վրայ անցընել :

Մայեօնէզ


Մէկ հաւկիթի դեղնուցին 40 տրամ ձէթ դնելու է : Հաւկիթին դեղնուցին նախ սուրճի մը դգալ ձէթ դնելով հալեցնելու է , յետոյ նորէն դնելու է այսպէս մինչեւ որ 40 տրամ ձէթը հատնի , եւ ամէն մէկ ութը դգալ ձէթին՝ մէկ դգալ քացախ աւելցնելու է քիչ մը աղի , պղպեղի հետ :

Ազատգեղով մայեօնէզ

Ազատգեղը հալելու չափ ծեծել , աղ , պղպեղ դնել խառնել եւ կամաց կամաց կերցնելով քանի մը դգալ ձէթի եւ երկու երեք լեմոնի ջուրի հետ խառնել :

Թացանով խեցգետին (Ըսաֆօզ)

Եթէ կարելի է , ծովի ջուրը , ապա թէ ոչ աղի ջուրը եփ հանելու եւ խեցգետինը կոնակի վրայ մէջը դնելու է . քառորդ մը կտքը հանելու եւ տասը վայրկեանի չափ կասկարային վրայ մազմազի դնելու է : Ասոր վրայ անցընելու է ազատգեղով մայեօնէզ կամ ձէթով թացան :



ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ



A series of horizontal dashed lines for writing, consisting of 15 lines.


ՅԻՇԱՏԱԿԱԴՐԱՆ

Handwriting practice lines consisting of a wavy top line and multiple horizontal dotted lines.

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Handwriting practice lines consisting of a wavy top line and multiple horizontal dashed lines.

ବିଦ୍ୟା



ՆՕՐԵՐ



A series of horizontal dashed lines for writing, arranged in a column within a rectangular border.

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ



Մինչև 1 Նոյեմբեր 1899



THE GREAT EASTERN DISPENSARY

SOLE IMPORTERS

11, ROBINSON ROAD, SINGAPORE

Օ Ս Մ Ա Ն Ե Ա Ն

Կ Ա Յ Ս Ր Ո Ւ Թ Ի Ի Ն



Ս Ո Ւ Լ Թ Ա Ն Ք

Օ Ս Մ Ա Ն Ե Ա Ն Հ Ա Ր Ս Տ Ո Ւ Թ Ե Ա Ն


Թուական Գահակաշուքեան

Հինրէթի Բրիտանի

1.	Սուրբան Օսման Ա. Ղազի	699	1299
2.	» Օրխան Ա. Ղազի	726	1327
3.	» Մուրաճ Ա. Ղազի	761	1360
4.	» Պայազիս Ա. Երլսրբմ	791	1389
5.	» Մէհէմմէտ Ա. Չէլէպի	816	1413
6.	» Մուրաճ Բ. Ղազի	824	1421
7.	» Մէհէմմէտ Բ. Ֆարսի	855	1451
8.	» Պայազիս Բ. Ղազի	886	1481
9.	» Սէլիմ Ա. Եալուզ	918	1512
10.	» Սիւլէյման Ա. Գանունի	926	1520
11.	» Սէլիմ Բ. Ղազի	974	1566
12.	» Մուրաճ Գ. Ղազի	983	1574
13.	» Մէհէմմէտ Գ. Ղազի	1003	1595
14.	» Ահմէտ Ա. Ղազի	1012	1603
15.	» Մուսթաֆա Ա.	1026	1617
16.	» Օսման Բ.	1028	1618
17.	» Մուրաճ Գ. Ղազի	1032	1622

Թուրքական Գահակաշուքեան

		Հինրէքի	Քրիստոսի
18.	Սուլթան Իպրահիմ Ա.	1049	1640
19.	» Մէհէմէտս 'Է. Ղազի	1058	1648
20.	» Սիւլէյման Բ.	1099	1687
21.	» Ահմէտ Բ.	1102	1691
22.	» Մուսթաֆա Բ.	1106	1695
23.	» Ահմէտ Գ. Ղազի	1115	1702
24.	» Մահմուտ Ա. Ղազի	1143	1730
25.	» Օսման Գ.	1168	1754
26.	» Մուսթաֆա Գ. Ղազի	1172	1757
27.	» Ապս-իւլ-Համիտ Ա. Ղազի	1187	1773
28.	» Սէլիմ Գ. Ղազի	1203	1789
29.	» Մուսթաֆա 'Է.	1222	1807
30.	» Մահմուտ Բ. Ասիլ	1223	1808
31.	» Ապս-իւլ-Մէնիտ Ա. Ղազի	1255	1839
32.	» Ապս-իւլ-Ազիզ Ա.	1277	1861
33.	» Մուրատ Ե.	1293	1876





ՎԵՀԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ
ԱՊՏ ԻՒԼ ՀԱՄԻՏ Բ.

Խ Ա Ն Ղ Ա Ջ Ի

Բ Ա Ր Ե Խ Ն Ա Մ Կ Ա Յ Ս Ր

34^{րդ} Կայսր Օսմանեան հարսուրեան Եւ
28^{րդ} Կայսր յառմանէ Կոստանդնուպոլսոյ, որդի
Սուլթան Ապս-իւլ-Մէհիս Խանի, ծնեալ 16 Շա-
պան 1258 (10/22 Սեպտեմբեր 1842), քահա-
կալէ ի 11 Շապան 1293 (19/31 Օգոստոս 1876):

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔ

- Ղազի Օսման փառա , Հրամանատար արքունեաց ,
 Ապս-իւլ-Կանի Աղա , Մեծ Ներքինապետ ,
 Հանի Ալի պէյ , Առաջին սենեկապետ ,
 Նուրի փառա , Երկրորդ սենեկապետ ,
 Մէհմէտ պէյ , Սենեկապետ ,
 Բաղըպ պէյ , »
 Էմին պէյ , »
 Մէհմէտ Արիֆ պէյ , »
 Պէֆր Սասըզ պէյ , »
 Ֆաիզ պէյ , »
 Թահսին պէյ , Առաջին քարտուղար ,
 Իզզէթ պէյ , Երկրորդ քարտուղար ու սենեկապետ ,
 Իպրահիմ պէյ , Մեծ Արարողապետ եւ Կայս . Թարգման ,
 Մէհմէտ փառա , Առաջին Թիկնապահ ,
 Շաֆր փառա , Երկրորդ Թիկնապահ ,
 Ալեքսանդր Գարաբէտսորի փառա , Առաջին Թարգմանիչ ,
 Սէֆէրեան Նեան Էֆէնսի , Երկրորդ Թարգմանիչ ,
 Բաթիտ Էֆէնսի , Առաջին Իմամ Վեհափառ Սուլթանին ,
 Ճէվհէր աղա , Առաջին Միւսահիպ ,
 Սագրզ Յովհաննէս Էֆէնսի , Նախարար Կայս . Անձնական
 Գանձուհի ,
 Հանի Աֆիֆ Էֆէնսի , (Դեր-Նախագահ Պետական Խորհուրդի
 օրէնսդիր ճիւղին) , Վերատեսուչ ծախուց Կայս . Կանանոցին ,
 Սիւլէյման փառա , Հրամանատար Կայս . Պալատան Խատէմէ-
 ներու եւ նուագածուներու խումբին ,
 Մալբոնէնի փառա , Բժշկապետ Վեհ . Սուլթանին ,
 Իպրահիմ պէյ , Քարտուղար Կայս . մասնաւոր Արկեղ ,

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ն Ե Ր Ը

- Մեծ-Նպարֆու՝ Խալիլ Բիֆաթ փաշա ,
 Շէյխ-իւլ-Իսլամ՝ Մէհմէտ Ճէլալէտտին Էֆէնսի ,

Պատկան ու Կրօնական գործոց նախարար՝ Ապտիւրրահման փաշա :

Սպարապետ՝ Մէհմէտ Րիզա փաշա :

Ծովային նախարար՝ Հասան Հիւսնի փաշա :

Պետական ետրուրդին նախագահ՝ Մէհմէտ Սայիտ փաշա :

Արտաքին գործոց նախարար՝ Ահմէտ Թէվֆիզ փաշա :

Ներքին գործոց նախարար՝ Մէհմէտ Մէմտուհ փաշա :

Քննակոթարանի միւլէր՝ Մուսթաֆա Ջէքի փաշա :

Էվգաֆի նախարար՝ Ապտուլլահ Ղալիպ փաշա :

Կրթական նախարար՝ Ահմէտ Ջիւհաթի փաշա :

Առեւտրական ու Հանրօգուտ երևութեանց նախարար՝ Մուսթաֆա Ջիհնի փաշա :

Սպարհոսական խորհրդական՝ Մէհմէտ Թէվֆիզ փաշա :

Երկրային նախարար՝ Րէշատ պէյ :

ՄԵԾ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՆԵՐ Կ. ՊՈԼՍՈՅ

Իսթայիլ Րքսիվան փաշա , Բաղաքապետ :

Շէքիզ պէյ , Ոստիկանութեան նախարար :

Սամի փաշա , Նաւահանգիստի Վերատեսուչ :

Նազիֆ փաշա , Մաքրային Վերատեսուչ :

Ալի Րիզա փաշա , Վերատեսուչ Տէֆթէրխանէի :

Հիւսէյին Հասիպ պէյ , Վերատեսուչ Հեռագրատան ու թղթատարատան :

Սէլիմ Մէլիամէ փաշա , Նախարար անտառներու , հանքերու եւ երկրագործութեան :

Հանի Հասան փաշա , Ոստիկանապետ Պէշիքթաշի :

Էսհէմ փաշա , Ոստիկանապետ Կ. Պոլսոյ (վախճանեալ) :

Էնվեր պէյ , Կառավարիչ Բերայի :

Համի պէյ , Կառավարիչ Սկիւտարի :

Ջէշէնէի փաշա , Հրամանատար ջրհանկիր գորքերու :

Հասան Ֆէհմի փաշա , Նախագահ Հաշուակալութեանց Ատեանին :

Թէվֆիզ փաշա , Վերատեսուչ հանգստեան թոշակի Մնտուկին :

Ն Ա Շ Ա Ն Գ Ն Ե Ր Ը

ՀԻՃԱԶԻ ՆԱՀԱՆԳ. — Կուսակալ (վաչի)՝ Ահմէտ Բաթիպ փաշա, Տէֆթէրսար Իպրահիմ էֆէնտի, Մէֆրուպնի՝ Ալի Եումնի պէյ, Մէֆէի էմիր՝ Շէրիֆ Ալիբարէֆիգ փաշա, Նուիրական վայրերու Շէյխ՝ Մէհմէտ Ասիլ փաշա, Մէսինէի հրամանատար՝ Օսման Ֆէրիա փաշա, Ճիսսէի կուսակալի սեղակալ՝ Ճէլալէասին պէյ, Հիճագի նահանգը (վիշաչիք) ունի երկու գաւառ (սանճագ), Մէտինէ ու Ճիասէ, եւ չորս գաւառակ (գազա)։

ԵՒՄԷՆԻ ՆԱՀԱՆԳ. — Կուսակալ՝ Հիւսէին Հիլմի փաշա, Տէֆթէրսար՝ Նիագի պէյ, Մէֆրուպնի՝ էմին էֆէնտի, Ունի չորս գաւառ՝ Սանաա (կեղրոն), Հոսէյսա, Ասիր ու Թաազ, 27 գաւառակ, 75 գիւղախումբ (նահիէ) եւ 1333 գիւղ։

ՊԱՍՐԱՅԻ ՆԱՀԱՆԳ. — Կուսակալ՝ Համաթի փաշա, Մէֆրուպնի՝ Աւրմ էֆէնտի, Ունի չորս գաւառ՝ Պասրա (կեղրոն), Միւնթէֆիգ, Նէճա ու Ամարէ, 9 գաւառակ, 34 գիւղախումբ եւ 197 գիւղ։

ՊԱՂՏԱՏԻ ՆԱՀԱՆԳ. — Կուսակալ՝ Նամըզ փաշա, Տէֆթէրսար՝ Վահիպ էֆէնտի, Մէֆրուպնի՝ Շէվքէթ պէյ, Ունի երեք գաւառ՝ Պաղտաա (կեղրոն), Տիվանիէ ու Քէրպէլա, 17 գաւառակ, 34 գիւղախումբ եւ 47 գիւղ։

ՄՈՒՍՈՒԼԻ ՆԱՀԱՆԳ. — Կուսակալ՝ Հագիմ պէյ, Օզնական Համաթի պէյ, Տէֆթէրսար՝ Ասիմ պէյ, Մէֆրուպնի՝ Մէհմէտ Բէմզի պէյ, Ունի երեք գաւառ՝ Մուսուլ (կեղրոն), Քէրքուք ու Սիւլէյմանիէ, 15 գաւառակ, 25 գիւղախումբ եւ 3331 գիւղ։

ՀԱԼԷՊԻ ՆԱՀԱՆԳ. — Կուսակալ՝ Բաթի փաշա, Օզնական՝ Թէվֆիգ պէյ, Տէֆթէրսար՝ Իպրահիմ Հագըր էֆէնտի, Մէֆրուպնի՝ Շէհապէտտին պէյ, Ունի երեք գաւառ՝ Հայէպ (կեղրոն), Ուրֆա (կառավարիչ (վիսթիսարըֆ) Հիւսէին էֆէնտի) ու Մարաշ (կառավարիչ՝ Արիֆի փաշա), 21 գաւառակ, 45 գիւղախումբ եւ 3476 գիւղ։

ՍՈՒՐԻՈՅ ՆԱՀԱՆԳ. — Կուսակալ՝ Հիւսէին Նագըմ փաշա, Տէֆթէրսար՝ էմին Ալի էֆէնտի, Մէֆրուպնի՝ Մէհմէտ Նէճիպ պէյ, Ունի չորս գաւառ՝ Դամասկոս (կեղրոն), Համա, Հորան ու Քէրք, 18 գաւառակ, 13 գիւղախումբ եւ 1073 գիւղ։

ՊԵՐՈՒԹԻ ՆԱՀԱՆԳ. — Կուսակալ՝ Բէշիա պէյ, Տէֆերսար՝ Էտնէմ էֆէնաթի, Մէֆրուպնի՝ Ֆասիհ պէյ, Ունի հինգ գաւառ՝ Պէրութ (Կեղրոն), Աքեալ, Թարապլուսը Շամ, Լաթաքիա եւ Նապլուս, 16 գաւառակ, 143 գիւղախումբ եւ 3057 գիւղ:

ԹԱՐԱՊԼՈՒՍԸՂԱՐՊԻ ՆԱՀԱՆԳ. — Կուսակալ՝ Մուսթաֆա Հաշիմ պէյ, Տէֆերսար՝ Ահմէտ Թէվֆիգ էֆէնաթի, Մէֆրուպնի՝ Ջէյնէլապէտին Բէշիա պէյ, Ունի շորս գաւառ՝ Թարապլուս (Կեղրոն), Խուսուս, Ճէպէլ ու Ֆիզան, 16 գաւառակ ու 23 գիւղախումբ:

ՊՐՈՒՍԱՅԻ ՆԱՀԱՆԳ (ԵՒԻՏԱՎԷՆՏԻԿԵԱՐ). — Կուսակալ՝ Իպրահիմ Խալիլ պէյ, Օզնական՝ Էսին Բէուֆ պէյ, Տէֆերսար՝ Մէհմէտ Գուտաթ էֆէնաթի, Մէֆրուպնի՝ Սիւլէյման Նազիֆ պէյ, Ունի հինգ գաւառ՝ Պրուսա (Կեղրոն), Էրթողրուլ, Քէօթահեա (Կառավարիչ՝ Ահմէտ Ֆուաա փաշա), Գարահիսարը Սահրպ (Կառավարիչ՝ Ահմէտ Շէրէֆ փաշա) եւ Գարասի (Կառավարիչ՝ Էօմէր Աալի պէյ), 24 գաւառակ, 50 գիւղախումբ եւ 3450 գիւղ:

ԳՕՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳ. — Կուսակալ՝ Մէհմէտ Ֆէրիա փաշա, Տէֆերսար՝ Նէճիպ պէյ, Մէֆրուպնի՝ Ճէմալ պէյ, Ունի հինգ գաւառ՝ Գոնիա (Կեղրոն), Նիյաէ, Պուրտուր, Համիտապաա ու Թէքքէ, 25 գաւառակ, 32 գիւղախումբ եւ 1939 գիւղ:

ԷՆԿԻԻՐԻԻ ՆԱՀԱՆԳ. — Կուսակալ՝ Թէվֆիգ փաշա, Օզնական՝ Բէշատ պէյ, Տէֆերսար՝ Ահմէտ Մուհիտաթին պէյ, Մէֆրուպնի՝ Հաճի Բիֆաթ էֆէնաթի, Ունի հինգ գաւառ՝ Էնկիւրի (Կեղրոն), Գըրչէհրի, Գայսէրի (Կառավարիչ՝ Մէհմէտ Նազըմ փաշա, Օզնական՝ Յակոբ էֆէնաթի), Եողղատ (Կառավարիչ՝ Ահմէտ Էաթիպ պէյ) ու Չորուս (Կառավարիչ՝ Ասաֆ փաշա), 21 գաւառակ, 18 գիւղախումբ եւ 2765 գիւղ:

ԱՅՏԸՆԻ ՆԱՀԱՆԳ. — Կուսակալ՝ Քեամիլ փաշա, Օզնական Հասան պէյ, Տէֆերսար՝ Սէյֆէտաթին պէյ, Մէֆրուպնի՝ Մէհմէտ Խայրի պէյ, Ունի հինգ գաւառ՝ Իզմիր (Կեղրոն), Սարուխան (Մանիսս), Այարն, Մէնթէշէ ու Տէնիզլի, 35 գաւառակ, 50 գիւղախումբ եւ 2787 գիւղ:

ԱՏԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳ. — Կուսակալ՝ Պահրի փաշա : Օգնական՝ Նասրի պէյ : Տէֆթերսար Մուսթաֆա Թէվֆիզ պէյ : Մէֆթուպնի՝ Մահմուտ պէյ : Ունի հինգ գաւառ՝ Ատանա (Կեղրոն) , Մէրսին (կառավարիչ՝ Զիա փաշա) , Ճէպէլը Պէրէքէթ , Գոզան եւ Իչ-իլ , 15 գաւառակ , 21 գիւղախումբ , 1632 գիւղ :

ԳԱՍԹԷՄՈՒՆԻՆԻ ՆԱՀԱՆԳ. — Կուսակալ՝ Էնիս փաշա : Օգնական՝ Ղալիպ պէյ : Տէֆթերսար՝ Մուսթաֆա էֆէնտի : Մէֆթուպնի՝ Րիֆատ էֆէնտի : Ունի չորս գաւառ՝ Գասթէմունի (Կեղրոն) , Պօլու , Չանղըրը եւ Սինոպ , 17 գաւառակ , 27 գիւղախումբ եւ 3712 գիւղ :

ՍԸՎԱԶԻ ՆԱՀԱՆԳ. — Կուսակալ՝ Հաճի Հասան Հիլմի փաշա : Օգնական՝ Արիսթիտի էֆէնտի : Տէֆթերսար՝ Րիֆատ էֆէնտի : Մէֆթուպնի՝ Մազհար պէյ : Ունի չորս գաւառ՝ Սըփազ (Կեղրոն) , Ամասիա (կառավարիչ՝ Բէմալ պէյ , Օգնական Նազարէթ էֆէնտի) , Գարահիսարը Շարգի (կառավարիչ՝ Շիւքրի փաշա , Օգնական՝ Նիքոլաքի էֆէնտի) ու Թօգատ (կառավարիչ՝ Պէքիր փաշա , Օգնական՝ Յակոբ էֆէնտի) , 21 գաւառակ , 227 գիւղախումբ եւ 3042 գիւղ :

ՏԻՂՊՊԷՔԻՐԻ ՆԱՀԱՆԳ. — Կուսակալ՝ Մէհմէտ Սալիս պէյ : Օգնական՝ Վալիէրի էֆէնտի : Տէֆթերսար՝ Օսման Րէմզի էֆէնտի : Մէֆթուպնի՝ Իլիաս Սամի էֆէնտի : Ունի երեք գաւառ՝ Տիարպէքիր (Կեղրոն) , Մարսին եւ Արղընի (կառավարիչ՝ Սայրի պէյ) , 14 գաւառակ , 58 գիւղախումբ եւ 3177 գիւղ :

ՊԻԹԼԻՍԻ ՆԱՀԱՆԳ. — Կուսակալ՝ Մէհմէտ պէյ : Օգնական՝ Անտոն էֆէնտի : Տէֆթերսար՝ Շիւքրի էֆէնտի : Մէֆթուպնի՝ Թահիր էֆէնտի : Ունի չորս գաւառ՝ Պիթլիս (Կեղրոն) , Մուշ (կառավարիչ՝ Մուսթաֆա Րէֆղը փաշա , Օգնական՝ Յակոբ էֆէնտի) , Սղերդ (կառավարիչ՝ Էմին պէյ , ու Կինճ (կառավարիչ՝ Օսման պէյ , Օգնական՝ Ճըրճիս էֆէնտի) , 13 գաւառակ , 30 գիւղախումբ եւ 2107 գիւղ :

ԷՐԶՐՈՒՄԻ ՆԱՀԱՆԳ. — Կուսակալ՝ Շէրիֆ Մէհմէտ Րէուֆ փաշա : Օգնական՝ Սէլիմ Սուսա էֆէնտի : Տէֆթերսար՝ Ֆէրիս պէյ : Մէֆթուպնի՝ Ալի Րիզա էֆէնտի : Ունի երեք գաւառ՝ Էրզրում (Կեղրոն) , Երզնկա (կառավարիչ՝ Հաճի Ասաֆ փաշա

շա, Օգնական՝ Տէլէնտէ էֆէնտի) ու Պայագրիա (կառավարիչ՝ Ալի Շէֆրիֆ փաշա), 20 գաւառակ, 69 գիւղախումբ եւ 2617 գիւղ:

ԽԱՐԲԵՐԳԻ ՆԱՀԱՆԳ (ՄԱՄՈՒՐԷԹ ԻԻԼ-ԱԶԻԶ) . — Կուսակալ Րէուֆ պէյ: Օգնական՝ Յովհաննէս էֆէնտի: Տէֆթէրսար՝ Իպրահիմ էտհէմ պէյ: Մէֆրուպնի՝ էյուպ Սապրի էֆէնտի: Ունի երեք գաւառ՝ Խարբերգ (կեդրոն), Մալաթիա (կառավարիչ՝ Ճէմիլ փաշա) ու Տէրսիմ, 13 գաւառակ, 70 գիւղախումբ եւ 1890 գիւղ:

ՎԱՆԱՅ ՆԱՀԱՆԳ . — Կուսակալ՝ Թահիր փաշա: Օգնական՝ Յովհաննէս Ֆէրիա էֆէնտի: Տէֆթէրսար՝ Իպրահիմ Մազպուլ էֆէնտի: Մէֆրուպնի՝ Ահմէտ Քէշֆի էֆէնտի: Ունի երկու գաւառ՝ Վան (կեդրոն) եւ Հէքքեարի: 13 գաւառակ, 9 գիւղախումբ եւ 1594 գիւղ:

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՆԱՀԱՆԳ . — Կուսակալ՝ Մէհմէտ Գաարի պէյ: Տէֆթէրսար՝ Մուսթաֆա Լէպիպ էֆէնտի: Մէֆրուպնի՝ Րիֆաթ պէյ: Ունի չորս գաւառ՝ Տրապիզոն (կեդրոն), Ճանիկ, Լազիսթան ու Կիւմիւշխանէ (կառավարիչ՝ Մէհմէտ Ճէմալ պէյ, Օգնական՝ Եանքո էֆէնտի), 18 գաւառակ, 24 գիւղախումբ եւ 2738 գիւղ:

ԱՐՇԻՊԵՂԱԳՈՍԻ ԿՂԶԵԱՅ ՆԱՀԱՆԳ . — Կուսակալ՝ Ապէտին փաշա: Օգնական՝ Իզզէթ էֆէնտի: Տէֆթէրսար՝ Ֆէվզի էֆէնտի: Մէֆրուպնի՝ Ահմէտ պէյ: Ունի չորս գաւառ՝ Հոողոս (կեդրոն), Միտիլի, Սազըզ եւ Լէմնաս, 14 գաւառակ, 19 գիւղախումբ եւ 238 գիւղ:

ԿՐԷՏԷԻ ՆԱՀԱՆԳ . —

ԷՏԻՐՆԷԻ ՆԱՀԱՆԳ . — Կուսակալի փոխանորդ՝ Մէհմէտ Արիֆ փաշա: Օգնական՝ Թոտորաքի էֆէնտի: Տէֆթէրսար՝ Սիւլէյման պէյ: Մէֆրուպնի՝ Եաշար էֆէնտի: Ունի վեց գաւառ՝ Էտիրնէ (կեդրոն), Կիւմիւլճինէ (կառավարիչ՝ Հասան Խայրի փաշա), Գըրգքիլիտէ (կառավարիչ՝ Մուսթաֆա Նէշէթ փաշա, Օգնական՝ Տասքալով էֆէնտի), Տէտէ-Աղաճ (կառավարիչ՝ Նուրի փաշա, Օգնական՝ Քալէիսաքի էֆէնտի), Թէքիրտազ (կառավարիչ՝ Րիզա պէյ, Օգնական՝ Սրիրաքի էֆէնտի) եւ Կէլիպօլու (կառավարիչ՝ Իպրահիմ Սարիմ պէյ, Օգնական՝

Անթուան Պիլօր էֆէնարի), 32 գաւառակ, 117 դիւղախումբ
եւ 1979 դիւղ:

ՍԷՂԱՆԻԿԻ ՆԱՀԱՆԳ. — Կուսակալ՝ Հաճի Հասան Բէֆիգ
փաշա: Օգնական՝ Գոնսթանթինիարի փաշա: Տէֆթէրսար՝ Քէ-
մալ էֆէնարի: Մէֆրուպնի՝ Մէհմէտ Արիֆ էֆէնարի: Ունի ե-
րեք գաւառ՝ Սէլանիկ (Կեդրոն), Սէրէզ ու Տրամա, 23 գաւա-
ռակ, 16 դիւղախումբ եւ 1860 դիւղ:

ԳՈՍՈՎԱՅԻ ՆԱՀԱՆԳ. — Կուսակալ՝ Հաֆըզ Մէհմէտ փա-
շա: Օգնական՝ Տանիշ էֆէնարի: Տէֆթէրսար՝ Մէհմէտ Միահաթ
էֆէնարի: Մէֆրուպնի՝ Բամիզ էֆէնարի: Ունի վեց գաւառ՝
Սկիւպ (Կեդրոն), Բրիշթինա, Եէնի Բազար, Իրէք, Թաշ-
լըճա ու Բրէզրին, 12 գաւառակ, 16 դիւղախումբ եւ 3120
դիւղ:

ԵԱՆԵԱՅԻ ՆԱՀԱՆԳ. — Կուսակալ՝ Օսման Ֆէվզի փաշա:
Օգնական՝ Խրիսթիարի էֆէնարի: Տէֆթէրսար՝ Էահէմ էֆէնարի:
Մէֆրուպնի՝ Ապտուլահ Նէճրպ պէյ: Ունի չորս գաւառ
Եանեա (Կեդրոն), Էրկէրի, Բրէվէզա ու Պէրաթ, 15 գաւա-
ռակ, 10 դիւղախումբ եւ 1597 դիւղ:

ՇԲՈՏՐԱՅԻ ՆԱՀԱՆԳ. — Կուսակալ՝ Քեազիմ փաշա: Տէֆ-
թէրսար՝ Ճէմալ պէյ: Մէֆրուպնի՝ Հազըր էֆէնարի: Ունի եր-
կու գաւառ՝ Շքոտրա (Կեդրոն) եւ Տուրաճ, 8 գաւառակ,
10 դիւղախումբ եւ 476 դիւղ:

ՄԱՆԱՍԹՂՐԻ ՆԱՀԱՆԳ. — Կուսակալ՝ Ապտ-իւլ-Քէրիմ փա-
շա: Օգնական՝ Սթէֆանաքի էֆէնարի: Տէֆթէրսար՝ Մէհմէտ
Պէհաէտարին պէյ: Մէֆրուպնի՝ Մէհմէտ Սաարի էֆէնարի:
Ունի հինգ գաւառ՝ Մանասթըր (Կեդրոն), Սէրֆիշէ, Տէպ-
րէ, Իլպէսան ու Կէօրիւճէ, 22 գաւառակ, 34 դիւղախումբ
եւ 1908 դիւղ:

ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԻՐԱԻԱՍՈՒԹԵԱՆԸ
ԵՆԹԱՐԿՈՒԱԾ ԳԱԻԱՌՆԵՐ

ԵՐՈՒՍԱՂԷՄ . — Կառավարիչ՝ Թէվֆիգ պէյ , Ունի 3 գաւառակ , 2 գիւղախումբ եւ 328 գիւղ :

ՊԷՆԿԱԶԻ . — Կառավարիչ՝ Անմէա Թահիր փաշա , Ունի 3 գաւառակ :

ԶՕՐ . — Կառավարիչ՝ Իսմայիլ Զիւնտի պէյ , Ունի 4 գաւառակ , 4 գիւղախումբ եւ 149 գիւղ :

ԻԶՄԻՏ . — Կառավարիչ՝ Մուսա Քեազիմ պէյ , Ունի 4 գաւառակ , 10 գիւղախումբ եւ 938 գիւղ :

ՏԱՐՏԱՆԷՂ (ԳԱԼԱԻ ՍՈՒԼԹԱՆԻՑԷ) . — Կառավարիչ՝ Ճէմիլ փաշա , Ունի 6 գաւառակ , 8 գիւղախումբ եւ 514 գիւղ :

ԶԱԹԱԼՃԱ . — Կառավարիչ՝ Մուսթաֆա Ճէվատ պէյ , Օգնական Լամպիքի էֆէնտի , Ունի 2 գաւառակ , 1 գիւղախումբ , 95 գիւղ :

ԼԻԲԱՆԱՆ . — Կառավարիչ՝ Նաուա փաշա , Ունի 40 գաւառակ եւ 931 գիւղ :

ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

ԵԳԻՊՏՈՍ . — Խաիվ , Ապպաս Հիլմի փաշա :

ԹՈՒՆՈՒԶ . —

ՊՈՍՏԱ . —

ՊՈՒԼԿԱՐԻԱ . — Իւխան , Ֆէրտինանտ իշխան :

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՐՈՒՄԷԼԻ . — Կուսակալ , Ֆէրտինանտ իշխան :

ՍԱՄՈՍ . — Իւխան , Գոսթաքի Վահաննի էֆէնտի :

ԶՕՐԱԲԱՆԱԿԱՑ ՇՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐԸ

Ա. Զօրաբանակ (Կ. Պոլիս) հրամանատար Րէուֆ փաշա :

Բ. Զօրաբանակ (Էսիրնէ) հրամանատար՝ Արիֆ փաշա :

Գ. Զօրաբանակ (Մանասըր) հրամանատար՝ Քեազիմ փաշա :

Դ. Զօրաբանակ (Երզնկա) հրամանատար՝ Զէքի փաշա :

Ե. Զօրաբանակ (Իամասիս) հրամանատար՝ Ճէվատ փաշա :

Ձ. Զօրաբանակ (Պալսաս) հրամանատար՝ Ահմէտ Ֆէյզի
փաշա :

է. Զօրաբանակ (Ելմէն) հրամանատար՝ Ապտուլլահ փաշա :
Թարապուտի զօրաբաժնին հրամանատար՝ Րէճէպ փաշա :
Սէլանիկ եւ Գոսովայի զօրաբաժնին հրամանատար՝ Հիւս-
սէյին Ֆէյզի փաշա :

ՕՏԱՐ ՏԷՐՈՒԹԵԱՆՑ ՔՈՎ ԳՏՆՈՒՈՂ ՕՍՄԱՆԵԱՆ
ԴԵՍՊԱՆՆԵՐԸ

ԱՆԳԼԻԱ. — Մեծ դեսպան՝ Գոսթաքի փաշա Անթոնուլօ :
Խորհրդական՝ Ապա յուլ-Հապ Համիտ պէյ : Առաջին փարսուղար՝
Էահէմ պէյ : Լոնսոնի ընդհանուր Հիւպատոս՝ Էմին Ֆէրճուլ-
լահ էֆէնտի : Լիվրբուլի ընդհանուր Հիւպատոս՝ Մէհմէտ Քեա-
միլ պէյ : Մալթայի ընդհանուր Հիւպատոս՝ Նիքոլա Չալլի է-
ֆէնտի : Պոմպէյի ընդհանուր Հիւպատոս՝ Մէհմէտ Գաարի
պէյ :

ԱՒՍՏՐԻԱ. — Մեծ դեսպան՝ Մահմուտ Նէտիմ պէյ : Խոր-
հրդական եւ ընդհանուր Հիւպատոս՝ Ահմէտ Րէսմի պէյ : Ա-
ռաջին փարսուղար՝ Համաթի պէյ : Բէթթայի ընդհանուր հիւ-
պատոս՝ Իամայիլ Լութֆի պէյ : Թրիեսէի ընդհանուր Հիւպա-
տոս՝ Եուսուֆ Ջէքի էֆէնտի :

ԳԵՐՄԱՆԻԱ. — Մեծ դեսպան՝ Թէվֆիգ փաշա : Խորհրդա-
կան՝ Մորէլ պէյ : Առաջին փարսուղար՝ Ֆուստ պէյ :

ԻՏԱԼԻԱ. — Մեծ դեսպան՝ Մուսթաֆա Րէշիտ պէյ : Խոր-
հրդական՝ Բանճիրի էֆէնտի : Առաջին փարսուղար՝ Յովհաննէս
էֆ. Գույումճեան : Նաբոլիի ընդհանուր Հիւպատոս՝ Մէհմէտ
Էսաա պէյ : Մէսինայի Հիւպատոս՝ Հրանտ պէյ : Ճէնովայի
Հիւպատոս՝ Էօմէր Ճէմալէտաթին պէյ : Վենետիկի Հիւպատոս՝
Եագուպ Գահէն էֆէնտի :

ՀՕՂԱՆՏԱ. — Դեսպան՝ Յովսէփ Միսաք էֆէնտի : Առաջին
փարսուղար՝ Րէշիտ պէյ : Ամսթէրսամի Հիւպատոս՝ Ալի Նուրի
էֆէնտի : Պաքավիայի ընդհանուր Հիւպատոս՝ Էմին պէյ :

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ . — 'Իեսայան' Ալի Ֆէրրուլս պէյ , Առաջին փարսուղար՝ Ալֆրէտ պէյ , Նիւ-Յորքի Հիւպատոս՝ Միւննի պէյ :

ՅՈՒՆԱՍՏԱՆ . — 'Իեսայան' Րիֆաթ պէյ , Առաջին փարսուղար՝ Մազհար պէյ , Արէնֆի եւ Պիրէոնի ընդհանուր Հիւպատոս՝ Իհասն Հիւսնի պէյ :

ՇՈՒԷՏ-ՆՈՐՎԵԿԻԱ . — 'Իեսայան' Շէրիֆ փաշա , Առաջին փարսուղար՝ Սալիհ էֆէնտի :

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ . — Մեծ դեսպան՝ Շէմսէտտին պէյ , Խորհրդական՝ Նասիպ էֆէնտի , Առաջին փարսուղար՝ Սաարէտտին պէյ , 'Իաւրէթի ընդհանուր Հիւպատոս՝ Պէհա պէյ :

ՊԷՆՆԻՆԱ . — 'Իեսայան' Էթիէն Գարաթէոստրի էֆէնտի , Առաջին փարսուղար՝ Ալէքս պէյ , Պախլուկի ընդհանուր Հիւպատոս՝ Միւնիր Արսլան էֆէնտի , Անվերսի Հիւպատոս՝ Տոսիոս էֆէնտի , Ժընէվի ընդհանուր Հիւպատոս՝ Րուսուլ Սայրի էֆէնտի :

ՌՈՒՄԱՆԻԱ . — 'Իեսայան' Հիւսէյին Քեազիմ պէյ , Առաջին փարսուղար՝ Ֆէտան պէյ , Պուրէէի ընդհանուր Հիւպատոս՝ Մուսթաֆա Պահիր պէյ , Կալացի ընդհանուր Հիւպատոս՝ Մանուկ էֆ . Ազարեան , Քէօսթէնէյի ընդհանուր Հիւպատոս՝ Րէֆիգ պէյ :


ՌՈՒՍԻԱ . — Մեծ դեսպան՝ Հիւսէյին Հիւսնի փաշա , Խորհրդական՝ Պէհաէտտին պէյ , Ա . փարսուղար՝ Սէյֆէտտին պէյ , Թիֆլիսի ընդհ . Հիւպատոս՝ Հայտար պէյ , Սեւսայի ընդհ . Հիւպատոս՝ Ֆէյզի պէյ , Թայրանի ընդհ . Հիւպատոս՝ Բանաէլի Լոկատիս էֆէնտի , Կարսի ընդհ . Հիւպատոս՝ Մէհմէտ Ֆուաա պէյ :

ՍԵՐՊԻԱ . — 'Իեսայան' Իպրահիմ Ֆէթի պէյ , Առաջին փարսուղար՝ Մուսթաֆա Ասըմ պէյ , Նիւի ընդհանուր Հիւպատոս՝ Էպուզզիա Նամըզ պէյ , Օզիշէի Փոլս հիւպատոս՝ Մաթակեան Յովհաննէս էֆէնտի :

ՍՊԱՆԻԱ . — 'Իեսայան' Նէճիպ փաշա (վախճանեալ) , Առաջին փարսուղար՝ Ալէքսանար Գարաթէոստրի էֆէնտի , Պարսիկի ընդհանուր Հիւպատոս՝ Էսաա Քէհան պէյ :

ՔԱՐԱՏԱՂ. — Դեսպան՝ Ահմէտ Ֆէվրի փաշա: Առաջին
փարսուղար՝ Նազրմ պէյ:

ՖՐԱՆՍԱ. — Մեծ դեսպան՝ Միւնիբ պէյ: Խորհրդական՝
Նապի պէյ: Առաջին փարսուղար՝ Մուհիթասին պէյ: Բարիզի
ընդհանուր Հիւպատոս՝ Շէտիա Հապիշ էֆէնաթ: Մարսիլիոյ
ընդհանուր Հիւպատոս՝ Իպրահիմ էասէմ պէյ: Պորսոյի
Ընդհանուր Հիւպատոս՝ Րուհի-էլ-Մալիաթի էֆ: Նիսի եւ Թու-
լոնի Ընդհ. Հիւպատոս՝ Գալաֆեան Միհրան էֆ:



ՕՍՄԱՆԵԱՆ ՏԷՐՈՒԹԵԱՆ

Հ Ա Յ Ա Ս Տ Ի Ճ Ա Ն Ա Ի Ո Ր Ն Ե Ր Ը

(Այբուբենական կարգով)

Ա. Է. Զ. Ի. Բ.

(Ամենաբարձր աստիճան)

Աբրահամ փաշա Երամեան, Անդամ Ծերակոյտի, Օսմ. Ակա-
նակուռ, Մճ. 1:

Յարուբիւն փաշա Տասեան, Խորհրդական Արտաքին գործոց
եւ Անդամ Քաղաքական ճիւղին Պետական Խորհրդոյ, Օսմ.
Ականակուռ, Մճ. Ականակուռ, Իֆթիխար Ականակուռ:

Պալա

(Բարձրագոյն աստիճան)

Աբիկ էֆ. Ուննեան, Վաճառական, Օսմ. 2, Մճ. 2:

Ապրոյ էֆ. (Սահակ Ապրոյեան), Անդամ Օրէնսդիր ճիւղին
Պետական Խորհրդոյ, Օսմ. 2, Մճ. 2:

Գաբրիէլ էֆ. Նորասուցեան, Իրաւագէտ Խորհրդական Բ.
Դրան, Օսմ. 1, Մճ. 1:

Գրիգոր էֆ. Խըսրեան, Անդամ Հաշուակալութեանց աստենի,
Օսմ. 2, Մճ. 2:

Յովհաննէս էֆ. Նուրեան, Անդամ Օրէնսդիր ճիւղին Պետա-
կան Խորհրդոյ, եւ Նախագահ Վարչական Խորհրդոյ Երկ-
րագործական Դրամատան, Օսմ. 1, Մճ. 1:

Յովհաննէս էֆ. Սազրզ, Նախարար Կայս. Անձնական Գանձուն, Օսմ. 2, Մճ. 1.

Նւան էֆ. Սէֆէրեան, Երկրորդ Թարգմանիչ Կայս. Պալատան, եւ Տեսուչ Օտար Մամլոյ Դիւանին Արտաքին գործոց Նախարարութեան, Օսմ. 1, Մճ. 1.

Սարգիս էֆ. Համամնեան, Ներկայացուցիչ Վարչ. Ընդհ. Պարտուց առաջի Ռէժիի, Օսմ. 3, Մճ. 1.

Սարգիս պէյ Պալեան, Առաջին Ճարտարապետ Օսմ. Պետութեան, Օսմ. 2, Մճ. 1.

Ուլա Էվվէի

(Առաջին ասիւնանի առաջին դաս)

Աբրահամ էֆ. Ֆրէնկեան, Պատուակալ Գործակատար Պատրիարքարանի, Օսմ. 2, Մճ. 3.

Գէորգ պէյ Երամեան, Նախ. Սեղանաւոր Խալիֆին Եզիպտոսի.

Զարեհ էֆ. Տիլպէր, Անդամ Պետական Խորհրդոյ Օրէնսդիր ճիւղին եւ անդամ Ընդհ. Քննիչ Յանձնաժողովոյ, Օսմ. 1.

Էլիաս էֆ. Զայեան, Անդամ Պետական Խորհրդոյ, Օսմ. 2, Մճ. 1.

Էրամ էֆ. Նախագահ Մանագիտաց Ժողովոյ Անտառաց, Հանքաց եւ Երկրագործական Նախարարութեան, Օսմ. 2.

Միհրան էֆ. Նազաւեան, Արտօնատէր Սապահ լրագրոյ, Օսմ. 2, Մճ. 2.

Միհայէլ էֆ. Խորասաննեան, Բժիշկ Կայս. Պալատան եւ Ուսուցիչ Բժշկական Համալսարանին, Օսմ. 2, Մճ. 1.

Միհայէլ էֆ. Մամիկոնեան, Տնօրէն Թարգմ. սենեկին Սպարապետութեան, Օսմ. 3, Մճ. 2.

Միհայէլ էֆ. Մըսրըլբեան, Խորհրդական Ընդհ. Տնօրէնի Հանրային Պարտուց Վարչութեան. Օսմ. 2, Մճ. 3.

Մկրտիչ էֆ. Սինապեան, Տնօրէն Վիճակագրութեանց Առեւտրական եւ Հանրօգուտ շինութեան Նախարարութեան, Օսմ. 3, Մճ. 3.

- Յարուքիւն էՖ. Զէֆի, Տնօրէն Դիւանին Արքունի կալուածոց
 Կայսերական Անձնական գանձուն, Օսմ. 4, Մճ. 3:
- Յարուքիւն էՖ Մարգարեան, Նախկին Առաջին Քարտուղար
 Օսմանեան Դեսպանատան Պէլկրասի, Օսմ. 4:
- Յովհաննէս էՖ. Ազնաւորեան, Ճարտարապետ Սպարապետու-
 թեան Դրան, Օսմ. 3, Մճ. 2:
- Յովհաննէս էՖ. Ալլահվէրսեան, Նախկին անդամ Հաշուակա-
 լութեանց Ատենի:
- Յովսէփ էՖ. Միսաբեան, Օսմ. Դեսպան Հասէֆ, Օսմ. 2, Մճ. 2:
- Սեպուհ պէյ Մաֆուտ, Սեղանաւոր, Օսմ. 3, Մճ. 2:
- Սէֆէր էՖ. (Հմայեակ Սէֆէրեան), Տնօրէն օտար թղթակ-
 ցութեանց Դիւանին Արտաքին գործոց Նախարարու-
 թեան, Օսմ. 2, Մճ. 2:
- Օհան էՖ. (Յովհաննէս Պաղտատեան), Նախկին Տնօրէն Հպա-
 տակութեանց Դիւանին Արտ. Գործ. Նախարարութ. Մճ. 2:

Պէյլէ պէյի

(Բղեխուրեան ասիհան)

Սավէր փաւա (Անսոն Թընկըրեան) Կայսերական Բննիչ Օսմ.
 Հանրային Պարտուց Վարչութեան և Ռէժիի, Մճ. 1:

Միրիլիվա

(Զօրապետութեան ասիհան)

- Անսան փաւա Նաֆիլեան, Առաջին Վիրահատ Հայտար Փա-
 շայի Հիւանդանոցին, Օսմ. 2, Մճ. 2:
- Գաբրիէլ փաւա Սեւեան, Նախկին անդամ Առողջապահական
 Ժողովոյ Մովային Նախարարութեան, Օսմ. 3, Մճ. 3:
- Սագուպ Արքին փաւա (Յակոբ Աղաչըրաբեան), Նախկին Կըր-
 թական Նախարար Եգիպտոսի:
- Իսկէնսէր փաւա (Կարապետ Իսկէնսէրեան), Բժիշկ Սելանիկի
 Զօրարանակին, Մճ. 4:
- Սսեփան փաւա Արսլանեան, Նախկին Նախագահ Զինուորա-
 կան Բժշկական Ժողովոյ, Մճ. 3:

Միբիմիբան

(Հրամանատարութեան աստիճան)

Պօղոս փառա Նուպարեան, Նախագահ Հնկերութեան Ոստի-
մանց Պէճէրայի (Եգիպտոս) :

Տիգրան փառա Ապրոյեան, Նախկին Նախարար Արտաքին գոր-
ծոց Եգիպտոսի, Մճ. Ականակուս :

Ուլա սանիսի

(Առաջին աստիճանի երկրորդ դաս)

Անտոն էՖ. Ազնաւորեան, Անդամ Ժողովոյ Քաղաքապետու-
թեան, Օսմ. 3, Մճ. 2 :

Անտոն էՖ. Բէմէկեան, Օգնական Կուսակալութեան Պիթ-
լիզի :

Առաքել էՖ. Պէկեան, Նախկին Գործակատար Հայ-Հասակա-
կանաց Պատրիարքարանի :

Ասատուր էՖ. Գուլուսալլեան, Անդամ Մաքսային Ժողովոյ,
Մճ. 4 :

Արամ էՖ. Մարկոսեան, Օգն. Տնօրէն Երկաթուղեաց Վարչու-
թեան եւ Գօմիսէր Արեւ. Երկաթուղ. Հնկ. Մճ. 3 :

Արմենակ էՖ. Կոստանեան, Նախկին Տեսուչ օտար գործերու
Կուսակալութեան Այտրնի նահանգին, Օսմ. 4, Մճ. 3 :

Աւետիս էՖ. Քոլոլեան, Նախկին Փաստաբան Ներքին գործոց
Նախարարութեան, Օսմ. 3, Մճ. 3 :

Գէորգ էՖ. Բագարուս, Տնօրէն Թղթակցութեանց եւ Թարգմ.
Գիւանին Առեւտ. Հանր. շինու. Նախար. Օսմ. 3, Մճ. 4 :

Գէորգ էՖ. Թորգոմեան, Երկր. Մասնագէտ Խորհրդ. Հանր.
Պարտ. Վարչ. եւ Տնօրէն Պրուսայի Շէրամարուծական
վարժ. Օսմ. 4, Մճ. 2 :

Գրիգոր էՖ. Շապանեան, Տնօրէն Վարչութեան Հանրային
Պարտուց Տրապիզոնի, Օսմ. 4, Մճ. 2 :

Գրիգոր էՖ. Քիւրէլեան, Անդամ Պատժական դատարանին Ա.
Ատենին Բերայի, Օսմ. 3, Մճ. 2 :

- ԺօզէՖ էՖ. Ծանցի, Քիմիագէտ Նորին Կայս. Վեհափառութեան, Օսմ. 3:
- Լեւոն պէյ Փափագեան, Նախկին օգնական Տնօրէն Ապահովութեան Մնտուկին:
- Խաչիկ էՖ. Փափագեան, Դիւանապետ Հաշուակալութեան Դիւանի Արտաքին գործոց Նախարարութեան, Օսմ. 3, Մճ. 2:
- Խաչիկ էՖ. Օսեան, Նախկին Պաշտօնեայ Իրաւագէտ Խորհրդականաց Սենեակին Բ. Դրան, Մճ. 3:
- Խնդիր էՖ. Քիւրճեան, Տնօրէն Արձանագրութեան Դիւանի Առեւտ. եւ Հանրօգուտ Շին. Նախ, Օսմ. 3, Մճ. 3:
- Կարապետ էՖ. Գարագաւ, Անդամ Հաշուակալութեան Ատենին Նշեւատական Նախարարութեան:
- Կարապետ պէյ Երամեան, Նախկին Սեզանաւոր Խալիֆին Եղիպտոսի:
- Կարապետ էՖ. Թազուրեան, Նախկին Ընդհանուր Քարտուղար Արեւելեան Բումէլիի Կուսակալութեան, Մճ. 3:
- Համբարձում էՖ. Նազգաւեան, Բժիշկ Կայս. Պալատան եւ Կիւմրուչ-Սուլի Հիւանդանոցին:
- Հրանս պէյ Ապրօ, Օգնական Դիւանապետի Խորհրդականներու Սենեակին Բ. Դրան, Օսմ. 4:
- Մանուկ էՖ. Ազարեան, Ընդհանուր Հիւպատոս Կալացի, Մճ. 2:
- Մասթէոս էՖ. Պալեօզեան, Նախագահ Առեւտրական Սենեակին եւ անդամ Թաղապետ. Ժողովոյ Զմիւռնիոյ, Օսմ. 4:
- Միհրդաս էՖ. Պապեան, Տնօրէն Արձանագրութեանց Դիւանի Օտար Թղթակց. Արտ. Գործ. Նախ., Մէճ. 3:
- Միհրան էՖ. Գալաթեան, Ընդհ. Հիւպատոս Նիսի եւ Թուրնի, Մճ. 2:
- Միհրան էՖ. Միսաֆ, Թարգման Փարոսներու Վարչութեան մէջ:
- Միհայէլ էՖ. Կիւլապեան, Դիւանատան տեսուչ Խորհրդականաց Սենեակին Բ. Դրան, Օսմ. 4, Մճ. 3:
- Մկրտիչ էՖ. Հէֆիմեան, Տեսուչ Անտառաց եւ Հանքաց Կայս. Անձնական Գանձուն Նախարարութեան, Մճ. 3:
